

ՄԿՐՃՈՉ ԱՌԱՄԵՆ

Երեւան

ԿՆԱԿՈՒՄ

ՆՅՐ



891.99 Մ
Ա-91

1933 ՄԵՏՅՐԱՆ

U4U01S № 89



Ա-91

ՄԿՐՏԻԶ ԱՐՄԵՆ

30 MAY 2011

ԱԿ

Handwritten signature

Ս Կ Ա Ո Ւ Տ № 89

Պ Ա Տ Ա Ն Ե Կ Ա Կ Ա Ն Կ Ե Պ

209



4250

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ն Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Ր Ե Կ Ա Ն 1933 Մ Ո Ս Կ Կ Ա

220

Handwritten mark

Handwritten signature

88 2 10 11 11 11

Պատ. խմբագիր՝ Յն. ՉԱՐՆՅ
Տեխն. խմբ. Տ. ԽԱՉԱՆՔՅԱՆ
Շապիկը յիվ նկարները Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ



5310-55

1. Բ Ա Ղ Ա Բ Ո Ւ Մ

1921 թվին մայիսի 3-ին, Լենինական քաղաքի տներից մեկից դուրս յեկավ տասնհինգամյա մի պատանի և մոլորված հայացքով սկսեց շուրջը նայել: Նրան տարրինակ եր թվում, վոր արևն այդքան պայծառ փայլում է և գարուն է արդեն: Գարուն... ուրախ... կայտառ... Այնինչ, ներսում, իրենց տանը, այսոր դարձյալ հաց չկա: Այս արդեն՝ յերրորդ օրն է: Յեթե մի յերկու օր ել այդպես շարունակվի, սովամահ կլինի վողջ ընտանիքը. — տատը, մայրը, քույրն ու յերկու յեղբայրները: Ինքը շատ փորձեց վորևե բանով նրանց ոգնել՝ բան դուրս չեկավ: Աշխատանք չկա, տանից ծախելու վորևե առարկա այլևս չի մնացել... Ահա մի շաբաթ է, վոր նա դպրոց չի գնում: Չի կարողանում սովորել: Սոված է: Բայց ի՞նչ անեն քույրն ու յերկու յեղբայրները, վորոնք բոլորն ել իրենից փոքր են...

Նա հիշում է. — սրանից մի տարի առաջ, կես տարի առաջ, իրենց տան դիմացի զորանոցում ապրում էին հազարավոր գաղթականներ: Այն ժամանակ դեռ կոմունիստները չէին յեկել: Ամեն առավոտ, առանց վորևե մեկին վորևե բան հարցնելու, զորանոցի դռանը կանգնում էին մի ֆուրգոն և յերկու սայլ: Նրանք գալիս էին սանիտարական բաժնից, գիշերվա ընթացքում մեռածների դիակները հավաքելու: Սանիտարական կոմիտեն առաջուց գիտեր, թե մոտավորապես ինչքան մարդ մեռած պիտի լինի, դրա համար ել ամեն առավոտ ուղարկում էր մի ֆուրգոն ու յերկու սայլ: Յերբեմն պատահում էր, վոր սանիտարական կոմիտեն սխալվում էր: Այդ ժամանակ ֆուրգոնը գերեզմանոց գնալուց ու բեռը թափելուց հետո մի անգամ ել էր կանգնում զորանոցի դռանը:

Ի՞նչից էին մեռնում: Մեռնում էին սովից, ցրտից, տիֆից և ուրիշ հիվանդություններից: Չէին մեռնում, այլ խոտի պես նսձվում:



Տեսնելով մեռած Լուսիկին, նա սկսեց գոռալով լաց լինել: Փուրգոնը գնաց:

Իր մայրը միշտ իրենց գգուշացնում էր՝ չգնալ գորանոց, վորովհետև ախիբը վարակիչ հիվանդություն էր: Բայց նա գնում

էր: Գնում էր խաղ անելու փողրիկ Լուսիկի հետ, վորն այնքան սև մազեր ուներ և այնպիսի լավ պատմություններ գիտեր: Նա, որինակ, պատմում էր՝ թե ինչպես մի որ թուրք զինվորները հարձակվեցին իրենց գյուղի վրա և սկսեցին հայերին կոտորել: Բայց իրենց թուրք զրկիցը նրանց թագրեց իրենց ասնը, վորպեսզի զինվորները չգտնեն: Շատ թուրք զրկիցներ նույնպես, թագնում էին հայ զրկիցներին: Բայց յերբ զինվորները նրանց տեղն իմանում էին, համ նրանց էին սպանում, համ էլ նրանց թագնող թուրքերին: Այսպես իրենց տեղն էլ գտան: Հորն ու յեղբորն իսկույն սպանեցին, իսկ ինքն ու մայրը հազիվ փախան...

Այդպիսի բաներ էր պատմում Լուսիկը: Իսկ ինքը զարմանում էր: Միթե լավ թուրքեր էլ կան: Բայց ինչու յեր իմբասպետն ասում, թե բոլոր թուրքերն էլ վատ են: Սուա ե, — բացականչում էր Լուսիկը. — սուա ե: Այ, որինակ իրենց գյուղի բոլոր թուրքերը, — համարյա թե բոլորը լաջ էին: Բարի, խելոք, աշխատավոր գյուղացիներ: Ահմեղն էլ էր լավը. — նա իրենց զրկիցի յերեսան էր: Լուսիկը միշտ նրա հետ էր խաղ անում, բայց յերբ հայ կամավորները նրան սպանեցին, Լուսիկն այլևս մնաց առանց ընկերոջ...

Բայց մի որ Լուսիկը մեռավ: Տղան կանգնած դիտում էր, թե ինչպես Փուրգոնի վրա էին բարձում կանանց, տղամարդկանց, յերեսաների դիակներ: Հետո հանկարծ տեսավ, վոր Լուսիկի մայրը լաց էր լինում և մազերն էր պոկոտում: Հետո յել տեսավ Լուսիկին: Սայլապանը նրան զրել էր իր ուսի վրա, ինչպես բահն են դնում: Լուսիկը փայտի նման ուղիղ ու ձիգ էր, իսկ նրա սև մազերը կախ էին ընկել նրա գլխի յերկու կողմերից: Տեսնելով մեռած Լուսիկին, նա սկսեց գոռալով լաց լինել ու թավալել գետնին: Լուսիկի մայրն ուշաթափվեց: Փուրգոնը գնաց...

Յերկու ժամ հետո Լուսիկը վերադարձավ տուն: Նա չէր մեռել: Նա ցրտից փայտացել էր, բայց դեռ կենդանի յեր յեղբու: Յերբ բոլոր դիակները թափել էին գետնին և սկսել էին գերեզման փորել, Լուսիկն արևի ճառագայթների տակ տաքացել էր ու կենդանացել...

Տեսնելով Լուսիկին, մայրը խելազարվեց: Պար էր գալիս: Իսկ աղան վազեց և ամուր, ամուր համբուրեց իր ընկերուհուն: Լաց յեղավ, խնորեց վոր չմեռնի, չթողնի իրեն մենակ: Լուսիկն էլ լաց յեղավ ու նրանք բաժանվեցին: Հենց նույն գիշերը, Լուսիկն էլ, իր մայրն էլ ախիբից մեռան... Տղան Փուրգոնի յետևից

գնաց գերեզմանատուն, շարունակ լաց լինելով: Ինչքան ցնցեց, ինչքան ձայն տվեց Վուսիկին, նա այլևս չարթնացավ...

Իսկ հետո, յեկնս կոմունիստները... Դադթականներից նրանք, վոր դեռ կենդանի էին մնացել, հաց ստացան: Ճիշտ է, քիչ ստացան, բայց մի կերպ ապրել կարելի էր: Հիվանդներին տեղափոխեցին հիվանդանոց, մյուսներին մի քիչ հագուստ ու վառելիքայտ բաժանեցին, — ինչքան վոր հնարավոր էր:

Նա այս անգամին էլ լաց յեղավ, բայց ավելի դառը և անմխիթար: Նա փողոցում բռնեց մի կարմիր բանակայինի և բարկությամբ լիքն աչքերով հարցրեց, թե ինչու նրանք շուտ չեկան: Յեթե շուտ գային՝ Լուսիկը չեր մեռնի...

Նա սթափվեց: Թողեց հիշելը և շուրջը նայեց: Իսկապես վոր գարուն էր և փայլում էր արևը: Այնինչ, իրենց տանը մի կտոր հաց չկար: Ի՞նչ պետք է անեն...

Անցյալ օրը նա գնաց ընկեր Սիսակի մոտ և ամեն ինչ հայանեց: Կկոտորվեն սովից, ազնիվ խոսք...

Յերկար մտածեց ընկեր Սիսակը և առաջարկեց. — առայժմ ուրիշ ճար չկա. — թող յերեխաները վորբանոցներ մտնեն, իսկ մայրն ու տատը մի կերպ պահեն իրենց գլուխը, մինչև վոր... Դե, էլ ի՞նչ յերկարացնի ընկ. Սիսակը. տղան արդեն տասնհինգ տարեկան է և, ի հարկե, հասկանում է, վոր միշտ այսպես չի մնա: Կամաց-կամաց գործարաններ կբացվեն. գործ կճարվի, գյուղացիները նորից ցանքս կանեն, հաց կճարվի, յերկիրը կվերաշինվի...

Իսկ ի՞նչպես անել, վորբանոց մտնելու համար... Ընկեր Սիսակը մի գրություն չի տա... Վե՛հ, դժբախտաբար ընկեր Սիսակը գրություն տալ չի կարող: Վորբանոցները գտնվում են ամերիկացի քեռիների ձեռքում: Նրանք ուզեն՝ կնդուենն. չուզեն՝ չեն ընդունի: Իսկ յեթե խաթրերին կպչես, կխոտվեն ու կգնան: Կասեն՝ թող պետութունը պահի իր վորբերին: Իսկ պետութունն առայժմ պահել չի կարող: Բժժա... Նեղն են լծում մեզ ամերիկացի քեռիները: Նրանք, որինակ, ասում են. — դուք վորբերի մեջ կոմունիստական մտքեր միք տարածի, մենք էլ ուրիշ մտքեր չենք տարածի: Թող մեծանան, հետո ինչ ուզում են, թող իրենք իրենց խելքով անեն... Ապա թե վո՛չ կխոտվենք, կգնանք: Բժժա... Այդպես են ասում: Այդպես են ասում, բայց ուրիշ կերպ են անում: Մեղանից գաղտնի, հավաքում են բոլոր դաշնակցական վարժապետներին, տանում են իրենց մոտ և ասում են. — վորբերին դաստիարակեցեք ձեր ուզածի նման: Չեն սիրում ամերի-

կացի քեռիները կոմունիստներին: Չեն թողնում, վոր մենք վորբերի մեջ պատկամական կազմակերպություն տարածենք, իսկ իրենք, նրանց բոլորին դարձրել են սկառու: Իսկ սկառուները, ինչպես գիտենք, դեմ են պատկոմներին ու կոմունիստներին: Նրանք պետք է ծառայեն խմբապետներին ու բուրժուաներին...

Նա դուրս յեկավ ընկեր Սիսակի մոտից ընկճված տրամադրությամբ: Ուրեմն՝ ուզեն՝ կընդունեն, չուզեն՝ չեն ընդունի... Ի՞նչ արած... Հարկավոր է փորձել... գուցե ընդունեն: Նա ամենից մեծ յերեխան է և կկարողանա մի կերպ համոզել ամերիկացիներին: Յեթե իրեն ընդունեն, նա հետո իր քրոջն ու յեղբայրներին էլ ընդունել կտա: Լավ կլինի... Նա հառաչեց, շուտ յեկավ, նայեց իրենց դռանը, յերկար նայեց, ապա արագ հեռանալով, քայլերն ուղղեց դեպի Կազաչի Պոստ:

2. ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏՈՒՄ

Կազաչի Պոստը գտնվում է Լենինականից մեկ կիլոմետր դեպի հարավ: Դա համարյա մի փոքրիկ քաղաք է: Նա հիշում է, թե ինչպես իր մանկության տարիներին, իր տատի, քրոջ ու միջնեկ յեղբոր հետ միշտ գնում էր Կազաչի Պոստի մոտերքում զբոսնելու: Այնտեղ, Կազաչի Պոստում կային բազմաթիվ զորանոցներ, վորտեղ ուսուցիչները կար ճաշարան, բաղանիք, մաքրանքի դաշտ... Իսկ հիմա, այնտեղ ապրում են հազարավոր վորբ աղջիկներ: Այնտեղ ապրում են նաև սկառուներ, վորոնց պարտականությունն է՝ պահակ կանգնել ամբողջ Կազաչի Պոստի շուրջը և թույլ չտալ, վոր վորևե մեկն առանց իրավունքի դուրս կամ ներս գնա: Նրանք շատ չար տղաներ են և ահագին փայտեր ունեն ձեռքերում բռնած:

Յե՛վ իսկապես: Յերբ նա մոտեցավ Կազաչի Պոստին, տեսավ թե ինչպես մի սկառու, յերկար փայտը ձեռքին, յետ ու առաջ էր շրջում իր պոստի վրա: Փայտը նրա հասակից մի քիչ յերկար էր և յերեխայի թևի հաստություն ուներ: Սկառուը հագել էր սպիտակ, կարճ շավար և նրա ծնկները մերկ էին: Հագել էր նույնպիսի սպիտակ բլուզ, վորի վրա կապված էր փողկապը: Բազաչի պատկոմների փողկապները կարմիր գույն ունեյին, իսկ

սկառուտինը կապույտ եր: Նա գլխին դրել էր մի այնպիսի գլխաբուխ, վոր բերանքսիվայր շրջած նավակի յեր նման:

Նա մոտեցավ պոստին և կանգնեց: Իրենից բացի, այնտեղ կային բազմաթիվ տղամարդիկ և կանայք, զանազան տեսակ իրերով բեռնավորված: Շատերը թևերի տակ դրել էին լուսամուտի ապակիներ, պատկերազարդ գրքեր, խալիչաներ, վարագույրներ: Բերել էին պղնձի առարկաներ, արձանիկներ, տնային մանր-մունր իրեր: Մեկը բերել էր վոսկեղոծ աթոռներ, վորոնցից մեկի վրա նստել էր և մյուսներն էլ դարսել իր կողքին: Մի ուրիշը բերել էր սեղան և յերեխայի մահճակալ: Շատ մարդիկ կային և շատ առարկաներ: Նա զարմացավ և չէր հասկանում, թե ինչու համար է այդ բոլորը: Փորձեց մի կնոջ հարցնել բայց կինն անխոս շուռ յեկավ ու վոչինչ չպատասխանեց: Ինչ հետո, նույն այդ կինը բարկացած դիմեց սկառուտին.

— Շուտ արեք, մեռանք սպասելով...

Սկառուտը մի րոպե կանգ առավ, ապա նորից շարունակեց քայլել:

— Չի խոսի, — բացատրեց մի մարդ, շատ բան իմացողի տոնով. — յես դրան լավ գիտեմ: Չի խոսի:

Սկառուտը լսեց թե վոչ՝ դարձյալ շարունակեց անվրդով քայլել:

— Անունը չգիտե՞ք, — հարցրեց մի կին:

Այս հարցի վրա մի տղամարդ, ապակիները թևի տակ առաջ անցավ և բոլոր հավաքվածները նայեցին նրան: Նա մոտեցավ սկառուտին և հին բարեկամի տոնով սկսեց.

— Լսիր, Սիոն ջան...

Բայց նա դեռ խոսքը չէր վերջացրել, յերբ սկառուտի փայտն ողում ֆուռաց և թափով իջավ մարդու վրաներին:

— Պոստի վրա ինձ չխանգարե՛լ, — գոռաց սկառուտը և շարունակեց քայլել:

Մարդը կողեկաղ վերադարձավ իր տեղը և այլևս վոչոք վոչինչ չասաց: Միայն մի ծերունի, զայրույթով թքեց:

Հանկարծ, հեռվից սուրոց լսվեց: Միոնը խլիկոտեց ականջները, ապա գոտուց կախ արած իր սուրիչը հանելով, տվեց պատասխան սուրոցը: Հետո շուռ յեկավ դեպի մյուս կողմը և դարձյալ սուրեց: Այդ կողմից լսվեց պատասխան սուրոց:

— Պոստերն են ստուգում, — բացատրեց ամեն ինչ իմացողի նման մարդը. — գլխավոր պոստից սուրոցը պիտի գնա, պտտվի

կազաչի Պոստի շուրջը, վերադառնա նույն տեղը: Յեթե մի տեղ սուրոցն ընդհատվեց՝ նշանակում է պահակը կամ քնել է, կամ իր տեղում չի:

— Ուրեմն ժամը ինն է, — յեզրակացրեց մի ուրիշը: — Ուր վոր է՝ ներս կթողնեն...

Յեվ իսկապես: Մի քանի րոպե անց, յերևաց մի մարդ, վորը դեպի Սիոնի պոստն էր գալիս: «Սկառուտապետը, սկառուտապետը», — շնջացին հավաքվածներն ու իրար խոսնվեցին:



— Դու ինչ ես բերել, տղաս. յես վոչինչ չեմ տեսնում քեզ մոտ:

— Հերթի, — բղավեց Սիոնն ու փայտն սպառնազին շարժեց: Սկառուտապետը, վոր քառասուն տարեկան, ամուր կազմվածքով մարդ էր, մոտեցավ պոստին: Սիոնը պատիվ տվեց և քարացավ: Սկառուտապետը, փոքրիկ ձեռնափայտը խաղացնելով, կանգնեց հերթի մոտ: Նայեց առաջին մարդուն, վորն ուսի վրա դրել էր մի մեծ խալիչա:

— Գնա, — ասաց սկառուտապետը և փայտիկով ցույց տվեց կազաչի Պոստը: Մարդն ուրախացած մտավ պոստից ներս:

— Գնա, — դիմեց սկառուտապետը յերկրորդին:

- Գնա...
- Գնա...
- Մի գնա...

Կինը շվարած նայեց մեկ իր թևի տակ բռնած ափսեններին, մեկ սկառտապետին: Միտնն զգուշութեամբ դուրս հանեց նրան հերթի միջից և շարտեց մի կողմ, իբրև քաղհանված մոլախոտ:

— Գնա, — շարունակեց սկառտապետը: — Մի գնա: Գնա: Այս ի՞նչ ե. — ջուրձակ: Գնա: Մի գնա...

Նա կանգնած եր ամենից վերջում: Յերբ հերթը հասավ նրան, սկառտապետը զարմացած հարցրեց.

— Դու ի՞նչ ես բերել, տղաս. յես վոչինչ չեմ տեսնում քեզ մոտ...

Նա գլուխը կախ արեց և հազիվ շնջաց.

— Յես... վոչինչ չեմ բերել... Յես ուզում եմ ինձ ընդունեք... սկառտ...

— Ս կ ա թ լ տ... Գնա՛նի տարեկան ես...

— Տասնհինգ...

— Վեր թվից ես կոմսոմոլ...

— Կոմսոմոլ չեմ...

— Իսկ պատկոմական վերջ ջոկատի մեջ ես...

— Պատկոմ ել չեմ...

— Ներս յեկ, — հրավիրեց սկառտապետը:

Քիչ մնաց նա ճշար ուրախութեանից: Ճանապարհին, սկառտապետը հայտնեց:

— Սկառտը սուտ չպիտի խոսի: Յեթե սուտ ասեցիր, վոր պատկոմ չես, յես քեզ կծեծեմ... Ու կվոճեմ...

— Ինչո՞ւ պիտի սուտ ասեմ, — մրմնջաց նա, համարձակութեամբ ասած: — Վոր պատկոմ լինեյի, ել ինչո՞ւ պիտի գայի...

Նրանք հասան սկառտանոց, սկառտապետը նրան հանձնեց մի ուրիշին և ասաց.

— Ընդունիր մեռած Վաչագանի փոխարեն: Տուր սրան ութսունինն համարը...

3. ՍԿԱՌՏ ՀԱՍԱՐ ՈՒՔՍՈՒՆԻՆՆ

Մարդը, վոր պետք է ընդուներ իրեն, մի ջոկատապետ սկառտ եր: Նա մտայլ նայեց նրա լղար կաղմվածքին, գրեթե դեմքին և ասաց.

— Լավ: Ս պ ա ս ի ր:

Ա. Ներս գնաց:

Իսկ նա, յերկչոտ ու շփոթված, սկսեց շուրջը նայել: Սկառտանոցը Կաղաչի Պոստի այդ ծայրի ամենավերջին շենքն եր: Նա մի հարկանի սև քարից շինված զորանոց եր: Նա, ինչպես և Վաչագաչի Պոստի բոլոր շենքերը, կանգնած եր առանձին և նրա շուրջը բավականաչափ ազատ տարածութեան կար, ուր մարզանք եյին կատարում և զանազան խաղեր եյին անում սկառտաները: Սկառտանոցից մի քիչ այն կողմ, կանգնած եր շատ փոքրիկ մի շենք, — համարյա մի քարե բուդկա: Նրա մուտքի մոտ հերթ եյին կանգնել մարդիկ, ու կանայք, իրեղեններով միասին: Շենքի դռան մոտ կանգնել եր մի ամերիկացի, ծխամորճը բերանին: Նա վերցնում եր հերթի կանգնածների ձեռից նրանց իրերը, թեթևակի զննում, զննում եր մի կողմ, ապա իր մոտ դիզված հին ու կիսամաշ հագուստներից մի բան ջոկում ու տալիս եր նրան: Վաչոք չեք փորձում բողոքել անարդար առուտուրի դեմ, վորովհետև ամերիկացի քեռին կարող եր խկույն յետ վերադարձնել գնված իրը և նրա տիրոջը վոճեղել Կաղաչի Պոստից: Յեվ այսպիսով, բոլորը հանձնում եյին իրենց խալիչաները, կահ-կարասին, վոսկեղենը, փոխարենն ստանալով մաշված մի վերարկու կամ յերկու կտոր ուրիշ փալաս:

Ջոկատապետը նորից դուրս յեկավ և նրան կանչեց: Նա մտավ ներս: Իսկույն մի այլ սկառտ նրան խտտեց իր զույգ վոտների միջև և սկսեց վոչխարի նման խուզել: Յերբ նա բոլորովին քաջալացավ, նրան տվեցին մաքուր սպիտակեղեն, սկառտական հագուստներ, կոշիկ և ուղարկեցին լողանալու: Նա մտավ մի ուրիշ քարե փոքրիկ շենք: Յերբ հագնվեց, կանգնեց դուշի տակ և ծորակը բացեց, նրա մարմինը սրսփաց անսպասելի ցրտից: Նրան թվում եր, թե ջուրը տաք պիտի լիներ, այնինչ նա պաղ եր սառուցի պես:

Ար կերպ լողանալուց հետո, նա սկսեց հագնվել: Վազուց շատ վաղուց եր, վոր նա նոր շորեր չեք ունեցել. — հոր մահվանից հետո: Հագավ սպիտակեղենը, հագավ բլուզն ու կարճ շալվաքը և մոլորված կանգ առավ փողկապի հանդեպ: Ի՞նչպես կապել... Նա մտամոլոր նայում եր գոտուն, փորի յերկաթի վրա նկարված եր Մասիս սարը, վերեվում գրված եր՝ «Բարձրացիր», իսկ ներքեվում՝ «Բարձրացուր»: Հետո մի կերպ փողկապն ել դրստեց ու դուրս յեկավ: Հանկարծ նրա աչքին ընկավ իր բլուզի

ձախ կրծքի վրա կարած գրպանին Գրպանից քիչ վերև ամրացված եր սև թիթեղի մի փոքրիկ կտոր, սպիտակ թվանշաններով. — 89...

Չեր արել դեռ մի քանի քայլ, լերը իր գլխավերելում լսեց մի խիստ ձայն.

— Սկառնու:

Նա նայեց վերև: Կանգնած եր իրենից տարիքով մեծ մի սկառու և նայում եր իրեն:

— Փողկապն այդպես չեն կապի...



— Տղաներ, լսեցի՞ք, սրա անունն Ութսունինն է...

Նա մոտեցավ և կոպիտ ձեռներով քանդելով կապույտ փառը նրա ոճիքից, նորից կապեց:

— Անունդ ի՞նչ է...

Նա շփոթվեց, գուցե նրան թվաց, թե հարցնում են իր համարը և անվստահ սպասասխանեց:

— Ութսունինն...

Սկառուը քահ-քահ ծիծաղեց և մի քանի ուրիշները նրան նայեցին:

— Տղաներ, լսեցի՞ք, սրա անունն ութսունինն է:

Ահա այսպես յեղավ, վոր հենց առաջին որվանից նրա անունը մնաց սկառու համար Ութսունինն...

4. ԱՌԱՋԻՆ ՏՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Յեվ այսպես, նա արդեն սկառու է: Այժմ այլևս նա չի տարբերվում բոլոր այն մյուսներից, վոր հավաքված են այստեղ կամ գտնվում են իրենց պոստերի վրա: Բայց վճի... Նա տարբերվում է... բոլորը նայում են իր սպիտակ ծնկներին և իմանում են, վոր նրանք առաջին անգամն են արևի յերես տեսնում. — դեռ չեն սևացել: Բոլորը նայում են նրա մոլոր հայացքին և զիտեն, վոր նա դեռ չի վարժվել: Ահա նրան նայող սկառուներից մեկը մոտեցավ:

— Նճր ես ընդունվել:

— Այո: Հենց նոր:

— Նախաճաշ տվի՞ր են քեզ:

— Վ " չ:

Սկառուը գնաց ներս, ապա քիչ հետո նորից դուրս յեկավ:

— Հիմա կտան: Իսկ առայժմ յես քեզ ման կածեմ սկառուտանոցում, վոր ծանոթանաս: Իմ անունս Հրաչ է: Բռնը կարծեմ Ութսունինն է, — ծիծաղեց նա, — ճիշտ է...

— Այո... Այսինքն համարս է ութսունիննը...

— Վնաս չունի, — միևնույն է:

Նրանք մտան ներս:

Նախ՝ մի փոքրիկ միջանցք եր: Միջանցքի յերկու կողմերում բացվում էին մեկական դռներ և մի դուռ ել՝ դիմացը Ութսունինն սկսեց ծանոթանալ: Աջ թևի դուռը պատկանում եր մարզարանին: Յերկու դուռ ել բացվում եր մարզարանի մեջ. — մեկը տանում եր դեպի գրադարան, իսկ մյուսն՝ ընթերցարան: Միջանցքի ձախ թևի դուռը պատկանում եր ճարարանին: Յերկու դուռ ել բացվում եր ճաշարանի մեջ. — մեկը տանում եր դեպի սկառուտապետի սենյակը, իսկ մյուսը՝ խոհանոց:

Մնում եր խորքի դուռը: Յերբ Հրաչը նրա փեղկերը յես հրեց, Ութսունիննի աչքերի առջև բացվեց մի յերկար դահլիճ, չորս շարք կողք կողքի շարված մանճակալներով: Դահլիճի կողքի

պատերի վրա լուսամուտներ կային, իսկ դիմացի պատի վրա նորից մի դուռ կար։ Այդ դուռը տանում էր ավելի չփոքր մի դահլիճ, ուր նույնպես մահճակալներ կային, բայց միայն, յերկու շարքի վրա։ Այդ էր ամբողջ սկառուտանոցը։

Հրաչն Ութսունինին նորից բերեց մեծ դահլիճը և ցույց տվեց նրա մահճակալը։


— Ահա։ Տեսնում ես։ Մահճակալիդ անունն էլ է Ութսունինին։

Յերրորդ ջոկատ։ Ընձուղտ խմբակ...

Ութսունիններ հարցական նայում էր։

— Չես հասկանում։

— Չե՛։



Հրաչն Ութսունինին նորից բերեց մեծ դահլիճը և ցույց տվեց նրա մահճակալը։

— Դե լսիր, մանրամասն բացատրեմ։ Մենք յերկու հարյուր քառասուն սկառուտներ ենք։ Կեց ջոկատ, յուրաքանչյուրի մեջ քառասունն հոգի։ Դու յերրորդ ջոկատումն ես։ Գո, այսինքն մեր ջակատի դրոշակի գույնը կանաչն է։ Ամեն մի ջոկատ ունի չորս խմբակ, գաղաններն ու թռչունների անուններով։ Դու որինակ, Ընձուղտ խմբակումն ես։ Յես էլ...

Ութսունինն անչափ շնորհակալ էր Հրաչից, նրա տված բացատրությունների համար։ Քիչ հետո, յերբ նստեց նախաճաշի, այսինքն սկսեց խմել մի բաժակ կակաոն և մի կտոր հացն ուտել, նա այնքան համարձակությամբ ստացավ, վոր սկսեց Հրաչին զանազան հարցեր տալ սկառուտանոցի մասին։ Այդպես նա փերջացրեց իր նախաճաշը և յերեք որ վոչինչ չուտելուց հետո

բավական կշտացած և տպավորություններից հոգնած պահանջ զգաց հանգստանալու։ Մտավ դահլիճ, ուր վոչվոք չկար և գանձելով իր մահճակալը, փովեց նրա վրա։ Ինչի՞ մասին էր մտածում, — չգիտեր։ Միայն թե, կամաց կամաց նրա քունը տարավ և ինքն էլ չիմացավ, թե ինչպես քնեց։

5. ԱՌԱՋԻՆ ՊՈՍԸ

Ութսունիններ հազիվ էր ընկղմել խորը քնի մեջ, յերբ մեկը նրա վոտքերի տակին ամուր հարվածեց։ Նա վեր ցատկեց տեղից և աչքերը ճմռելով տեսավ իր առջև կանգնած մի ջոկատապետի։ Նրա ուսից կախված փոքրիկ ժապավենների գույնից հասկացավ, վոր դա իրենց ջոկատապետն էր։

— Ցերեկը քնել չի կարելի, սովորիր։ Իսկ հիմա՝ պոստի։ Կերցրու փայտդ ու դուրս յեկ։

Ութսունիններ վերցրեց մահճակալի կողքից, թելե ողակներով կախ արած իր փայտը և դուրս յեկավ։

— Փայտն այդպես չեն բռնի, — նկատեց ջոկատապետը և վերցնելով նրա ձեռքից, ցույց տվեց։

— Իսկ շարքային մարզանք գիտես։

— Գիտեմ..., Մի քիչ... Դպրոցում սովորել եմ...

— Լավ։

Ցերբ դուրս յեկան, դռնից մի քիչ հեռու, սկառուտների մի ամբողջ խումբ արդեն շարք էր կանգնել։ Ութսունիններ միացավ նրանց։ Բոլորի ձախ ուսերից կախված էյին կանաչ ժապավեններ։ Ութսունինն իր ունին նայեց։ Ինքն էլ ունեց։ Տարրորինակ է։ Նոր էր նկատում։

— Չգնատ, բղավեց պետը։ — Ութսունմեկ համար, կգնատ փոխարինելու զանգակատան պոստը։ Ութսունյերկու՝ ճաշարանի մոտ։ Ութսունյերեք դպրոց։ Ութսունչորս՝ մազութի պահեստ։ Ութսունհինգ՝ գերեզմանատան կողմի պատը։ Ութսունվեց՝ ուտելիքների պահեստների պատը՝ Կազաչի Պոստի դրսի կողմից։ Ութսունյոթ՝ փուռ։ Ութսունութ՝ գրասենյակի մոտ։ Ութսունինն...

Չոկատապետը մտածեց։

— Կգնատ հիվանդանոցի պոստը։

Այդպես նշանակվեցին բոլոր քառասուն պոստերը։

118

27-0.82

5310-55

Շարքի մոտ, յերկաթե մի յերկար ձողի ծայրին Փոփուում եր
յեռանկյունի կապույտ դրոշակը. — դա յերկրորդ Ղոկատի դրոշակն
էր: Նշանակում է, պոստի վրա կանգնած է յերկրորդ Ղոկատը:
Հանկարծ հնչեց շեփորը, սկառտները պատիվ տվեցին, իսկ իրենց
Ղոկատապետը, վորի անունը Սմբատ էր, թելով վար քաշեց կա-
պույտ դրոշակը և նրա փոխարեն բարձրացրեց իրենց կանաչ:
Յերրորդ Ղոկատը գնաց փոխարինելու պոստերը: Ձոկատը բա-
ժանվեց չորս մասի և յուրաքանչյուր տաս հոգին գնաց Կաղաչի
Պոստի մի կողմը: Յերբ մի ասանյակը հասավ հիվանդանոցին, Ութ-
սունիննը շարքից դուրս յեկավ, պատիվ տվեց պահակ սկառտին,
պատիվ առավ ու կանգնեց նրա փոխարեն: Յերկրորդ խմբի սկա-
ռտը նրա փոխարեն մտավ շարք և խումբը շարունակեց քայլել, ճա-
նապարհին թողնելով նորանոր սկառտներին և հավաքելով հներին:

Ութսունիննը մնաց մենակ: Կանգնեց իր պոստի վրա, աշ-
խատելով չմոռանալ Հրաչի տված ցուցմունքները: Ինչքան հե-
տաքրքիր է... Ահա նա կանգնած է այստեղ իբրև պահակ, այնինչ
քիչ առաջ, Կաղաչի Պոստի մի ուրիշ կողմում նա կանգնել էր
խեղճ ու շվար: Ահա նա կապել է կապույտ փողկապ և վոչ մի
սկառտ չի համարձակվի իրեն ծեծել, վորովհետև սկառտները
հավասար են...

Հանկարծ նրա սիրտը ճմլվեց հիշողութունից: Տեսնես մայրը
հաց ճարեց իր քրոջ ու յեղբայրների համար... Ութսունիննը
նայեց դեպի հեռուն, ուր յերևում էին քաղաքի փողոցներն ու
շենքերը: Իրենց տունն թւո՞ւմ էր մնաց... Ահա այն յեկեղեցին, վորի
մոտ ապրում են իրենք: Յեկեղեցին կա, իսկ տունը չի յերևում...

Հանկարծ նրա մեջ ցանկութուն առաջացավ թողնել այդ
ամենը, թքել ամեն ինչի վրա և վերադառնալ տուն: Թվաց, թե
այդ ամենը կարճատև խաղ է, վոր անապիտի վերջանա: Սակայն
նայելով իր հագուստին, նա հասկացավ, վոր իր կյանքում տեղի
յե ունեցել մի հսկայական փոփոխութուն և տուն վերադառնալ
այլևս չի կարելի...

Ճանապարհի վրա ավտոմոբիլ յերևաց: Նա գալիս էր դեպի
հիվանդանոց: Ութսունիննը զգաստացավ և սկսեց սպասել: Յերբ
ավտոմոբիլը մտնեցավ, նա փայտը դեմ բռնեց, պահանջելով ան-
ցազիր: Նույն բոպեյին ավտոմոբիլի դռնակը բացվեց, ակնոցա-
վոր մի ամերիկացի հայոցելով դուրս նայեց ու ներս քաշվեց: Ավ-
տոմոբիլն արագ անցավ, առանց կանգ առնելու: Ութսունիննը
հաղիվ մի կողմ ցատկեց և չընկավ նրա տակ:

Հիմա ի՞նչ պատասխան տա... չե՞ վոր ամեն ներս մտնող
պարտավոր է անցաթուղթ ունենալ: Ուզում ե՞ թող ամերիկացի
լինի: Հը... Թե՞ ամերիկացիներին կարելի յե առանց վորևե թղթի:

— Ամերիկացիներին կարելի յե:

Ութսունիննը զարմացած յետ նայեց: Կանգնած էր իրենց
Ղոկատապետ Սմբատը:

— Ամերիկացիներին կարելի յե, — կրկնեց նա: — Մյուս ան-
գամ այդպիսի հիմարութուն չանես: — կբարկանան...

Այս ասելով Սմբատը հեռացավ:

1) Հիվանդանոցի լուսամուտներից նայում էին խալաթ հագած
վորքեր ու վորբուհիներ: Յերկրորդ հարկի մի լուսամուտից լսվում
էին սուր ճիչեր, կարծես այնտեղ մարդ էլին մորթում: Պատի
մոտով անցան գթության յերկու քույրեր և կարճահասակ մի
բժիշկ, վորի մի աչքը կույր էր: Մի անգամ բերեցին յերկու նոր
հիվանդի, իսկ դրանից հետո՝ ելի մեկին: Սակայն և այնպես, դի-
տելու հետաքրքիր բան չկար և շուտով Ութսունինն սկսեց ձան-
ձրանալ: Յերեք ժամ... Յերեք յերկար ժամեր պիտի նա հսկի իր
պոստը, մինչև վոր գան իրեն փոխարինելու: Գոնե վորևե գիրք
ունենար մոտը կամ մեկի հետ խոսեր: Բայց վոչ գիրք է թույլ
տրվում կարգալ պոստի վրա, վոչ ել խոսել: Ի՞նչ պիտի անի նա
յերեք ժամ...

Հետո նորից մտածեց քրոջ ու յեղբայրների մասին: Յեղբայր-
ները փոքր են. — հինգ և տաս տարեկան: Նրանց սկառտ չեն
ընդունի, իսկ Կաղաչի Պոստում տղա վորքեր չկան: Տղաները
գտնվում են քաղաքում և Պոլիգոնում, վորը քաղաքի հյուսիսա-
յին մասում, Կաղաչի Պոստի նման տեղ է... Ուրեմն յեթե ընդու-
նեն ել, այստեղ կարող են ընդունել միայն իր քրոջը: Ի՞նչ արած,
Ութսունիննը միայն նրա՞ համար կխնդրի... Դեռ թող մի քանի
որ անցնի, մինչև վոր հարձար առիթը գա...

Մի գյուղացի մարդ ու կին գալիս էին դեպի հիվանդանոց:
Այս անգամ արդեն, իրոք վոր, ներս չպետք էր թողնել: Սրանք
ել խո ամերիկացիներ չե՞ն: Ութսունիննը պատրաստվեց նրանց
արգելել ներս մտնելու, բայց նրանք հենց իրենք կանգ առան
պոստից քիչ հեռու, չփորձելով նույնիսկ մոտենալ:

— Ի՞նչ էք ուզում, — ցանկացավ հարցնել Ութսունիննը, բայց
հիշեց Միոնի լուսթյունը և ձայն չհանեց: Կինը վախվխելով մո-
տեցավ նրան.

— Յերեսաս հիվանդ եր... Աղջիկս... Ի՞նչպես յեղավ...

— Զգիտեմ, — պատասխանեց Ութսունինը և սկսեց քայլել:
 — Բա վճնց իմանանք, — սրտապնդված հարցրեց մարդը:
 Ութսունինը չպատասխանեց:
 — Ծանր հիվանդ եր, — փղձկաց կինը և աչքերը սրբեց:
 Ութսունինը զգացվեց:
 — Յեա ի՞նչ կարող եմ անել, — բացատրեց նա, — յես պահակ եմ:

— Թող ներս գնանք...
 Ութսունինը վախեցած, իսկույն մերժեց.



Ութսունինը՝ պատրաստվեց նրանց արգելել ներս մտնելու...

— Վոչ, չեմ կարող...
 — Խնդրում ենք...
 — Միք խնդրի... Կվճնդեն ինձ, նորից սոված կմնամ... Զի կարելի...
 — Բա վճնց անենք, — շվարած հարցրեց մարդը՝ Նույն բռնապետին մյուս շենքի մոտից վերադարձան գթության յերկու քույրերը, առանց բժշկի: Ութսունինը ձայն տվեց նրանց.

— Մի տեսեք ի՞նչ են ուզում այս գյուղացիները:
 Քույրերը մոտեցան: Նրանցից մեկի աչքերը կարմրել էին...
 յերևի լացել եր:

— Ի՞նչ եք ուզում, — հարցրեց նա:
 — Մենք վորբուհի Աղունիկ Ոհանյանի ծնողներն ենք: Մեր աղջիկը...

Նրանք դեռ չէին վերջացրել, յերբ կարմրած աչքերով քույրը հեկեկաց և արցունքների միջից հազիվ հայտնեց.

— Մեռավ... Հենց նոր մեռավ...

Սակայն ծնողներն այլևս չլսեցին: «Մեռել ե՞...» գոռացին նրանք և սկսեցին գլխներին խփել: Մյուս գթության քույրը քաշեց կարմրած աչքերով իր ընկերուհու թևից:

— Գնանք, Սիրուշ...

Նրանք գնացին, իսկ գյուղացիները շարունակեցին լաց լինել, ճանապարհի փողոս մեջ նստած...

Հեռվից սուլոց լսվեց: Ութսունինը շտապեց պատասխանել և ապա դառնալով հակառակ կողմը, նույնպես սուլեց: Քիչ հեռո, նա ևս, ստացավ պատասխանը:

Դեռ սուլոցը չէր դադարել, յերբ նորից ջոկատապեսը յեկավ:

— Ի՞նչպես են գործերդ: Վոչի՞նչ: Կսովորես: Իսկ արմնք ովքեր են, — բղավեց նա, մոտենալով գյուղացիներին:

— Նրանց աղջիկը մեռել է, — շշնջաց Ութսունինը:

— Ասոված վողորմի հոգուն: Թող պոստից հեռանան, հետո ելի լաց լինեն: Ո՞վ է խանդարում: Լսում եք, գնացեք, այստեղ չի կարելի: Ամերիկացիները կբարկանան: Գնացեք: Ծնւտ:

Գյուղացիները վեր կացան և լաց լինելով գնացին: Իսկ մի ժամ հետո յեկան կարմիր ժապավենով առաջին ջոկատի սկաուտները և Ութսունինին փոխարինեցին:

Յ. ԱՌԱՋԻՆ ՅԵՐԵԿՈՆ

Սկաուտանոցի մոտ մի շենքում սկսեց աշխատել ելեքտրոմեքենան: Կազաչի Պոստի կրակները վառվեցին: Տուն վերադարձավ պահակ սկաուտների վերջին խումբը և նրանց փոխարեն Կազաչի Պոստն ողակեցին գիշերային պահակները, վոր սկաուտներ չէին, այլ իսկական միլիցիոներներ: Իսկույն հնչեց յերեկոյան շեփորը, հավաքվեցին բոլոր ջոկատների բոլոր սկաուտները, շարք

— Չէք լսում ջոկատապետի ձայնը...

Սկառուտներն արագ հագնվեցին և յերեք ընդհանուր հետո այլևս անկողիները մեջ վոչ վոք չմնաց։ Հարդարելով իրենց մահճակալները, նրանք դուրս յեկան լվացվելու և մարզանքի։ Շատերը գնացին սանդղակ ընդունելու, բայց Ութսունինը չգնաց։ Նրա լղար և հյուսիսային մարմինն սառը ջուրը բոլորովին դուր չեր գալիս։

Մարզարանը լցված էր մարմնի հոտով։ Կիսամերկ սկառուտները շարժում էին իրենց մարմնի անդամները, ձիային առողջ մկանները խաղաղանքով, Ութսունինը անվստահ ներս մտավ և ուրախացավ, վոր վոչ վոք իր վրա ուշադրություն չդարձրեց։ Նա գողտագողի մոտեցավ լուսամուտներից մեկին, վերցրեց նրա գոգից յերկու մարզափայտեր, բռնեց ձեռքերի մեջ և հետևելով մի մեծամարմին սկառուտի շարժումներին, սկսեց կրկնություններ անել։ Նրա յետևում պոսթիկաց մի քանի հոգու քրքիջը և սկառուտներից մեկը բացականչեց.

— Այս կողմը նայեցեք, սկառուտներ, ուզում ե ձեզ գերազանցել։ Յերկրորդ շրջանի մարզանք ե կատարում...

Ութսունինը մարզափայտերը ձեռքից վար դրեց։

— Ինձ վոչ վոք չի սովորեցրել, — շշնջաց նա։

— Յեկ, յես կսովորեցնեմ, — առաջարկեց չար դեմքով մեկը. —

յեկ բոքս խաղանք...

Իսկույն նրա ձեռքերն անցկացրին յերկու ահագին կաշվե ձեռնոցների մեջ, վորոնք լցված էին բրդով և նմանվում էին հսկայական բուռնցքների։ Յերկու սկառուտներ ձեռնոցներն ամուր կապեցին նրա ձեռներին։

— Դե, սկսե՛ք, — առաջարկեց չար դեմքով սկառուտը, վոր նույնպիսի ձեռնոցներ եր հագել. — պաշտպանվիր իմ հարվածներից և ինքդ հարվածիր։

Դեռ Ութսունինը չեր հասկացել, թե ինչու՞ն է բանը, յերբ կաշվե բուռնցքը չբխկալով կպավ նրա քթին և արյունոտվեց։ Բարձրացավ ընդհանուր ծիծաղ։ Ցավից ու վիրավորանքից Ութսունինի աչքերն արցունքով լցվեցին, բայց վրա հասավ յերկրորդ հարվածը, այս անգամ կրծքին։

— Մի, չեմ ուզում, հերիք ե, — ճչաց նա, բայց պատասխանը յեղավ հարվածների մի ամբողջ կարկուտ և սկառուտների հոհոտը։

Ութսունինն արդեն լաց եր լինում։ Հանկարծ մեկը սուլեց։ Չար սկառուտը դադարեց հարվածելուց։ Մի ուրիշը բացատրեց.



Դեռ Ութսունինը չեր հասկացել թե ինչու՞ն է բանը, յերբ կաշվե բուռնցքը չբխկալով կպավ նրա քթին և արյունոտվեց։

— Մի՛րոպե ընդմիջումից հետո կլինի յերկրորդ ուսուցը...
Ութսունինը սարսափեց.

— Չեմ ուզում: Խնդրում եմ: Արձակեցե՞ք ձեռնոցները:
Այդ բոլորներն ներս մտավ Հրաչն ու ձեռնոցների կապերն
սկսեց քանդել:

— Լավ չես պաշտպանվում, — բնորոշեց մեկը: — Բայց վո-
չինչ, կսովորես:

Ութսունինը մարդարանից դուրս յեկավ արցունքոտ և արյու-
նոտ...

8. Ա Ձ Ի Կ Ը

Ութսունինը սրբեց արցունքները, մաքրեց արյունը և գնաց
նորից վազվելու: Յերբ մտավ դահլիճը, — ննջարանը, սրբիչի
համար, այնտեղ վնչ վոք չկար: Նրան դուր յեկավ այդ մենակու-
թյունը: Նա յերկար մնաց ննջարանում կանգնած, չհամարձակ-
վելով պահել անկողնի վրա:

Ինչքան տխուր եր Ութսունինը...! Վերցրին նրանից իր
ազատութունը մի կտոր հացով, իսկ հիմա ձեռ են առնում իրեն
ու ծիծաղում: Հազար անգամ ավելի լավ չէր քաղաքում: Թեև
այնտեղ նա սոված եր, բայց իր դասընկերներից վոչ մեկն իր
վրա ձեռք չեր բարձրացնում...

Այս մտքերի հետ, հանկարծ Ութսունիննի աչքին ընկավ մի
պլակատ, դիմացի պատի վրա, յերկու լուսամուտների միջև կըպ-
ցրած: Գրված եր. — «Հարգիր ընկերոջդ, ծնողներդ, խմբակա-
պետդ, շոկատապետդ, սկառտապետդ և աստծուն»: Ինչպես
չե, հարգիր ընկերոջդ: Լավ հարգեցին իրեն...

Հանկարծ Ութսունինը նկատեց, վոր այդպիսի շատ ուրիշ
պլակատներ կան կայքած լուսամուտների մեջտեղում: Նրանցից
մեկը ասում եր. — «Սկառտը չի գողանում», մյուսը՝ «Սկառտը
սուտ չի ասում», յերրորդը՝ «Յինթարկվիր պետդ հրամանին» և
այլն: Ութսունինն ուզում եր հերթով կարդալ բոլորը, բայց նույն
բոլորներն լսեց, թե ինչպես դրսից իրեն եյին կանչում. — «Ութ-
սունին, այ Ութսունինն, վորտե՞ղ ե Ութսունինը»:

Նա դուրս յեկավ ննջարանից, ճանապարհին մտածելով, թե
եյի ինչ ոչին են ցանկանում բերել իր գլխին: Սակայն այս ան-
գամ ոչին չկար: Բանից դուրս յեկավ, վոր մի յերեխա, — մի
վեց տարեկան աղջիկ, յեկել ե իրեն հարցնելու: Յերբ Ութսուն-
ինը մոտեցավ նրան, նա տխուր նայեց, ապա հեկեկալով թո-
ղեց հեռացավ: Ութսունինը հասավ նրա յետևից:

— Ի՞նչ ես ուզում, այ աղջիկ, — հարցրեց նա:
Յերեխան կանգ առավ և հեկեկանքի միջև հագիվ թոթովեց.
— Վոչինչ չեմ ուզում: Յեղբորս եյի փնտում:
— Ո՞ւր ե յեղբայրդ:
— Չեմ իմանում: Կորցրել եմ:
— Ութսունինը շվարած կանգնել եր: Յերեխան բացատրեց.



Ութսունինը շոյեց նրա մազերը, փորձելով մխիթարել նրան:

— Իմացա վոր նոր սկառտ ե յեկել, ասացի իմ յեղբայրս
ե Դու եյիր...

Նա նորից լաց յեղավ: Ութսունինը շոյեց նրա մազերը,
փորձելով մխիթարել նրան:

— Դե լավ, լաց մի լինի, յեղբորդ ել կգտնես: Յերբ ե կորել:

— Շատ... շատ առաջ... Գոլիգոնում վորը եր... Ամեն ան-
գամ գալիս եր ինձ տեսնելու... Հիմի փախել ե քաղաք, խուժան
ե դարձել:

— Ո՞վ ասաց:

Յես... գիտեմ... տեսել եմ... խուժան ե...

— Անունդ ի՞նչ ե, — հարցրեց Ութսունիննը:

— Աչիկ:

— Ուզում ես, յես քեզ յեղբայր դառնամ:

— Չեմ ուզում, — լաց յեղավ Աչիկը և սկսեց աչքերը տրորել: — դու լավը չես, իմ յեղբայրն եր լավը: Չեմ ուզում...

— Դու գիտես, ճարահատված պատասխանեց Ութսունիննը:

— Յեթե ուզեյիր, յես քեզ յեղբայր կդառնայի, չեյի թողնի, վոր մեծ աղջիկները քեզ ծեծեն, քեզ համար ուտելու բան կբերեյի, յեթե ունենայի...

Աչիկն արցունքները սրբեց, ծուռ-ծուռ նայեց Ութսունիննին, կարծես մտքում կռադատելով նրա առաջարկը, ապա նորից վճռական պատասխանեց.

— Չեմ ուզում: Վոր նորից սկառու ընդունեն, ելի կգամ: Մի անգամ ել յեղբորս կբերեն: Յես գիտեմ...


9. ԻՆՉ Ե ԿԱԶԱՅԻ ՊՈՍԸ

Ութսունիննը գնաց Կազաչի Պոստը շրջելու: Նա ուզում էր տեսնել, թե ինչ է ներկայացնում իրենից այն տեղը, ուր նա ապրելու յեր ով գիտե ինչքան յերկար ժամանակով:

Սկառուանոցից հեռանալով, նա գնաց դեպի ուսուսական մեծ յեկեղեցին, վորի ներսում փոքրահասակ վորդերի մանկապարտեզն էր: Բարձր զանգակատանը նստած էր մի սկառու, վորի պարտականությունն էր կես ժամը մի անգամ զանգը խփել, հայտնելով, թե ժամի քանիսն է: Յեկեղեցու յետում, վորբուհիների ընդհանուր ճաշարանն էր. — մի հսկայական յերկար շենք, իսկ ճաշարանից այն կողմ ձգված էյին պահեստների շարքերը: Պահեստների միջև յերկաթուղազիծ էր անցնում և այժմ ուսերի վրա կանգնած էյին ապրանքատար վազոններ: Բանվորներն այնտեղից դեպի պահեստներն էյին կրում քաղցր կաթի արկղներ, ալյուրի պարկեր և կիսամաշ հագուստեղենի անազնի կապոցներ, վոր Ամերիկայից ուղարկում էյին իբրև թե չքավորներին բաժանելու համար, բայց վաճառվում էյին կամ անխիղճ կերպով փոխարինվում թանգարժեք իրերի հետ:

Պահեստների վերջին շարքը գտնվում էր Կազաչի Պոստի սահմանի վրա: Այնտեղ վերջանում էր Կազաչի Պոստը և սկսվում

էր բաց դաշտը, վորով անցնում էյին դեպի քաղաք տանող յերկաթուղին ու շոսան: Պահեստները դրսի կողմից էլ դռներ ունեյին, բայց նրանք միշտ փակ էյին և նրանց մոտ միշտ պահակ սկառու էր կանգնում, վորպեսզի շոսելով անցնող մարդիկ հանկարծ չմոտենան ու կողպեքները չջարդեն: Այդ կողպված դռների մոտ կային նաև մի քանի մոայլ լուսամուտներ, հսկայական յերկաթե վանդակներով:



ԻՆՉ Ե ԿԱԶԱՅԻ ՊՈՍԸ

Կազաչի Պոստի մի այլ մասում Ամերիկացիների տունն էր: Դա մի փոքրիկ շենք էր, ուր ապրում էյին բոլոր քեռիներն ու պառաված որիորդները, վոր յեկել էյին Հայաստան՝ վորբերի մեջ աշխատելու:

Մի ուրիշ տեղում, ամենամեծ պահեստներից մեկի կողքին, մազուտի ու բենզինի պահեստն էր: Հենց գետնի մեջ փորված էյին խորանարդ փոսեր, սվաղված ցեմենտով և լիքը լցված մազութով: Նրանց վրա հաստ տախտակներ էյին փոված, իսկ տախտակների վրա դրված էյին բենզինի յերկաթե տակառներ:

Բենզինի պահեստի յետում, բավական յերկար տեղ ձգվում էր Կազաչի Պոստի պատը: Պատի տակ, այս կողմում մսի պա-

հետոն երևի և ծառայողների բնակարանները, իսկ այն կողմում, դրսում, տարածվում եր քաղաքային գերեզմանոցը: Այնտեղ հենց պատի յետևում, թաղված եր Ութսուներեսի հայրը:

Կազաչի Պոստի հակառակ ծայրում դպրոցներն էլին: Իրանք յերկհարկանի յերկու ահագին զորանոցներ էլին, ուր տեղավորված էլին: տասից ավելի դպրոցներ: Սկսուտները բոլորը սովորում էլին մի շենքում, վորբուհիների հետ խառը: Յերբ նրանց մի մասը պահակ եր կանգնած լինում, դպրոց եր գալիս մյուս մասը: Այնպես վոր, դասերը տեղի էլին ունենում յերկու հերթի. — ճաշից առաջ հաճախողների և ճաշից հետո հաճախողների համար:

Վորբանոցների վարչութիւնը գտնվում եր Կազաչի Պոստի հենց կենտրոնում, մի հարկանի մի փոքրիկ շենքում: Նրան պարպապես անվանում էլին «Վարչութիւն»: Վարչութիւնից մի քիչ հեռու հենց յեկեղեցու մոտ, «Գրասենյակն» եր: «Գրասենյակ» անվանում էլին նրա համար, վորովհետև այնտեղ գտնվում եր վոչ միայն Կազաչի Պոստի վորբանոցների, այլ Հայաստանի բոլոր վորբանոցների գլխավոր վարչութիւնը: Այնտեղ եր նաև Ֆինանսական բաժինը, ուր պահվում եր փողը: Գրասենյակի շենքում գտնվում եր հեռախոսակայանը:

Ութսուներեսը տեսավ, վոր գրասենյակի մոտ պահակ ե կանգնել Հրաչը: Բարեկեց և անցավ: Կազաչի Պոստը մի ամբողջ քաղաք եր, հազար ու մի տեսակ հիմնարկներով, արհեստանոցներով, պահեստներով, բնակարաններով: Մի որում դիտել այդ բոլորը՝ չեր կարելի: Ութսուներեսը շտապեց դեպի սկսուտանոց, խնդրելու համար, վոր իրեն դպրոց ուղարկեն սովորելու:

10. ԴՊՐՈՑ

Ութսուներեսը շատ յերեկար սպասեց ճաշասենյակում, մինչև վոր սկսուտապետն իր սենյակից դուրս յեկավ: Ութսուներեսն իսկույն շտապեց դեպի նա:

- Պարոն սկսուտապետ...
- Պահանջների համար հատուկ որ կա, իսկ շտապ պահանջներն ինձ հայտնել շուտապետի միջոցով, — կտրուկ հայտնեց սկսուտապետը և առաջ անցավ, բայց նորից շուտ յեկավ և հարցրեց:
- Ի՞նչ ես ուզում...

- Ինձ... դպրոց... Գրութիւն տվեք...
- Իպրոց: Վեր բաժանմունքն ես:
- Յերրորդ դասարան:
- Յերրորդ բաժանմունք...
- Վոչ, պարոն սկսուտապետ, յերրորդ դասարան...
- Իասմբան, — դարմացավ սկսուտապետը և ուշադիր նայեց Ութսուներեսին: — Ուրեմն դու շատ բան գիտես: Լավ չե: Յեթե սկզբից հայտնեյիր, քեզ չեյի ընդունի: Սկսուտը պիտի սովորի միայն սկսուտանոցում:

- Գիտեմ, պարոն սկսուտապետ:
- Լավ, — վճռեց պետը և գրպանից թուղթ ու մատիտ հանելով, մի տոմսակ գրեց. — գնա դպրոց, սովորիր... Յեվ աշխատիր մինչև հիմա սովորածդ մոռանալ:
- Լավ, պարոն սկսուտապետ...

Ութսուներեսն ուրախ ուրախ տոմսակը դրեց գրպանն ու շտապեց դեպի դպրոց: Նորից դեպի ուսում, նորից դեպի գիտութիւն: Ինչքան լավ ե, յերբ ամեն առավոտ արթնանալիս չես մտածում մի կտոր հաց ճարելու մասին, այլ դասդ ես սովորում... Բայց ի՞նչ յեղան իր քույրն ու յեղբայրները...

Նա հասավ դպրոց, Բոլորը դասի էլին նստել, իսկ դասամիջոցին դեռ շատ ժամանակ կար: Չհամբերելով մինչև դասի վերջանալը, նա տեղեկացավ թե վորն ե յերրորդ դասարանը և շտապեց այնտեղ: Մի բոպե լսելով ներսից յեկող ձայները, նա արտի խորը հուզմունքով դուռը բաց արեց:

Առաջին բանը, վոր ընկավ նրա աչքին, դա մի քիթ եր. — հսկայական մեծութիւն, բայց տախտակի պես բարակ մի քիթ: Թիթի յետևում նա տեսավ նրա տիրոջը՝ ուսուցչին:

- Ինչ ես ուզում. — հարցրեց ուսուցիչը, խոսքն ընդհատելով և կավիճը ժամների արանքում պտտացնելով:
- Ութսուներեսը նրան յերկարեց տոմսակը: Ուսուցիչը կարդաց, նայեց սկսուտին և ասաց.
- Լավ, նստիր...

Ութսուներեսն մի հայացք գցեց իր շուրջը: Նստած էլին մոտ քսան վորբուհիներ և յոթ-ութ սկսուտ: Վերջին նստարաններից մեկի վրա մի աղջիկ մի կողմ քաշվեց, տեղ պատրաստելով: Ութսուներեսը գնաց և նստեց նրա մոտ:

- Հա, — շարունակեց ուսուցիչն իր ընդհատված խոսքը. — այդպիսով վենք տեսանք, թե ինչ ե նշանակում ազնվութիւն...

Այս ասելով, նա ցույց տվեց «ազնվութիւն» բառը, գրատախտակի վրա գրված:

Ութսունիններ նայեց գրատախտակին և մատ քարձրացրեց: Յերբ ուսուցիչը նկատեց նրան և խոսք տվեց, նա վեր կացավ և ցույց տալով «ազնվութիւն» բառը, հայտնեց.

— Պարոն վարժապետ, սխալ ե գրված...

Բոլորն ապշած շուռ յեկան և նայեցին նրան:

— Յես եմ գրել, — մոմուաց ուսուցիչը, շունչը պահած:

— Միևնույն ե, սխալ ե գրված, — կրկնեց Ութսունինը: Նա ուզում եր բացատրել թե ինչու մնա եր բանը, յերբ հանկարծ ուսուցիչը վորոտաց.

— Լռիր: Անգրագետ...

Ութսունինը վիրավորվեց, բայց նախքան նստելը, — նորից կրկնեց.

— Սխալ ե...

Դասարանում բոլոր ներկա գտնվողները քարացել էին զարմանքից և շունչները պահած՝ ինչ վոր արտակարգ բանի էին սպասում:

— Դուք կորիր. — հրամայեց ուսուցիչը:

Սկառտներն ապշեցին: Առաջին անգամն եր, վոր ուսուցիչը վորեք սկառտի նկատմամբ այդպիսի միջոց եր գործադրում:

Ութսունինն զգաց, վոր իր համառությամբ շատ առաջ անցավ, և փորձեց ստեղծված դրութիւնը մի կերպ մեղմացնել:

— Ինչո՞ւ յեք բարկանում, պարոն վարժապետ, քաղաքում մեզ ուղորեցրել են, վոր «ազնվութիւնը» նոր ուղղագրութեան համաձայն...

— Անն... — ժպտաց ուսուցիչը: — Դու նոր ուղղագրութեան մասին ես ասում: Նստիր: Ի հարկե, նոր ուղղագրութեան տեսակետից, այստեղ «ազնվութիւն» բառը սխալ ե գրված: Բայց...

Այստեղ ուսուցիչը չարախինդ ժպտաց:

— Բայց նոր ուղղագրութիւնն ինքն ամբողջովին սխալ ե...

Դառը փորձեց խրատված, Ութսունինն այլևս չփորձեց հակաճանել: Նրա կողքին նստած աղջիկը հարզանքով մի կողմ քաշվեց, համարձակ սկառտին տեղ տալու համար:

Յերբ դասամիջոց յեղավ, ուշադրութեան կենտրոնում սկառտ Ութսունինն եր կանգնած: Հակաճանել ուսուցչին, հետո նրա հետ մի յեղբակացութեան գալ և դասարանից չվճնդվել, — դա հեղափոխութեան նման մի բան եր Կաղաչի Պոստում: Ո՞վ ե


Ութսունիննը... Ի՞նչ ե նշանակում նոր ուղղագրութիւն:

— Միթե չգիտեք, — զարմացավ Ութսունիննը. — յես իսկույն բացատրեմ...

Նա նստեց, վոր քատմի, սակայն նույն ըրպելին նրա մոտով անցնող ուսուցիչը խրատական տոնով մատը թափահարեց նրա վրա.

— Լռիր: Կխառնես աշակերտների գիտեցածը:

Ութսունիննը այլևս չհամարձակվեց վոչինչ պատմել:



— Լռիր: Կխառնես աշակերտների գիտեցածը:

Նա քաշվեց մի կողմ և սկսեց մտածել: Այս ո՞ւր ե ընկել ինքը: Այս ի՞նչ դպրոց ե, ի՞նչ ուսուցիչ...

Նա հիշում ե. — վաղուց, շատ վաղուց, այսինքն սրանից ութը, իննը ամիս առաջ, քաղաքի դպրոցներն ել սրա նման էին: Բայց հետո, յեկան կոմունիստները, պարոն Սաչատրյանին ձերբակալեցին, որիորդ Ավագյանին վճնդեցին, պարոն Կոստանյանը փախավ... Նրա՞յց փոխարեն յեկան ընկեր Սահակն ու Աշխենը: Դպրոցում ամեն ինչ փոխվեց: Իսկ հիմա, Ութսունիննը նորից

ընկել ե այն հին դպրոցի նման մի դպրոց: Ավելի վատ դպրոց... Աշակերտին վիրավորում են, դասարանից վաճառում...

Յերբ դասերը վերջացան, Ութսունինը հանդիստ շունչ քաշեց: Նա արագ վազեց դուրս, մյուս բոլոր սկառտաների հետ շարք կանգնեց և գնաց սկառտանոց:

11. ԶԱՆԳԱԿԱՍԱՆԸ

— Ութսունմեկ՝ մազութի պահեստ: Ութսունյերկու՝ հիվանդանոց: Ութսունյերեք՝ ուտելիքների պահեստի պատը՝ Կազաչի Պոստի դրսի կողմից: Ութսունչորս՝ ճաշարանի մոտ: Ութսունհինգ՝ փուռ: Ութսունվեց՝ գերեզմանատան կողմի պատը: Ութսունյոթ՝ դպրոց: Ութսունութ՝ գրասենյակը: Ութսունինը՝ զանգակատուն:

Ահա՛ Ուրեմն իր պոստն այսոր փոխել են, — մտածեց Ութսունինը: Դա լավ ե: Չանձրալի չի լինի: Համենայն դեպս՝ յերեկվա նման տխուր դեպքեր չեն պատահի...

Սմբատն արդեն վերջացնում եր պոստերի նշանակելը:

— Հարյուր տասնութ՝ հազուստեղենի պահեստը: Հարյուր տասնինը՝ ամբերիկացիների տուն: Հարյուր քսան՝ գլխավոր պոստ: Ութսունինը գիտեր, վոր վերջին պոստն ամենապատասխանատուն եր, վորովհետև այդ տեղով եյին Կազաչի Պոստ յելու մուտ անում համարյա բոլոր բանվորները, ծառայողները, այցելուները, ավտոմոբիլներն ու ֆուրգոնները:

Նորից շեփորը հնչեց, նորից վար առան պահակ կանգնած ջոկատի դրոշակը, նորից իրենց դրոշակը բարձրացրին և չորս տասնյակները ցրվեցին Կազաչի Պոստի չորս կողմերը:

Ութսունինը մտավ յեկեղեցի: Մանկապարտեզն արդեն վերջացրել եր իր պարապմունքը: Յեկեղեցում վոչ վոք չկար: Պատերի վրա խփված եյին յերեսանների կատարած նկարներն ու այլ աշխատանքները: Այս ու այն կողմ շարված եյին փայտե խողալիքներ, կավի գնդեր:

Ութսունինը բարձրացավ վոլորապուլյո սանդուղքներով դեպի զանգատուն: Պատվեց, բարձրացավ, վոլորվեց, բարձրացավ, բայց դեռ ելի կար: Հանկարծ նա իրեն զգաց մի կլոր սենյակում, վորի մեջ բացվում եյին ևս յերկու դռներ: Ութսունինը միայն մի հայացք գցեց սենյակի վրա ե շարունակեց բարձրա-

նալ: Ինչ հետո, հասավ մի դռնակի: Բաց անելով այն, բարձրացավ զանգակատուն: Լավ եր, վոր այնտեղ ճաղեր կային, ապա թե վոչ նա ներքև կգլորվեր հոգնածությունից և գլխապուլյոցից: Նա զրտնվում եր հսկայական բարձրության վրա գետնից: Կազաչի Պոստը ներքևում յերևում եր ինչպես լուցկու տուփերով ծածկված սեղան:

— Յեկմբ, — ուրախացավ պահակը: — Սոված մեռա:

Նա հանձնեց ժամացույցը և գնաց: Մենակ մնալով, Ութսունինն սկսեց նայել ներքև: Նրա մոտ, մեխից քաշ արած՝ չխչխկում եր պատի ժամացույցը: Չխչխկում եր յերկար, միալար և նրա ձայնի տակ Ութսունինը նայում եր հեռու հեռավոր քաղաքին, վոր քաշում եր նրան մազնիսի պես: Չե՛ վոր այնտեղ ապրում ու տանջվում են իր քույրն ու յեղբայրները:

Հանկարծ Ութսունինը սարսափահար նայեց ժամացույցին: Ոտ ժամանակը չի՛ անցել: Յեկ հազիվ տեսնելով սլաքներից մեկը չորսի վրա, իսկ մյուսը տասներկուսի՝ նա նետվեց դեպի զանգը և նրա ծանր լեզվակը չորս անգամ խփեց: Ամբողջ զանգակատունը դողդողաց դողանջից և թվաց, թե ուր վոր ե՛ նա կխորտակվի և վար կգլորի զանգն ու սկառտին:

Լավ... Ժամի չորսը խփված ե: Կես ժամ ժամանակ կա, մինչև մյուս զանգը: Խո՛չ անել:

Ութսունինն նկատել եր, վոր նախկին պահակն իր հետ գիրք ուներ: Նշանակում ե, կարգալ այս պոստում կարելի յե... Բայց ցափն այն ե, վոր նա հետը գիրք չի բերել...

Այսպես ձանձրանալով նա խփեց ժամի կեսը, հետո հինգը, հետո նորից կեսը և այս անգամ վճռապես վորոշեց իջնել ներքև և վորեք զբաղվելու բան գտնել: Հենց թեկուզ դիտել յերեսանների աշխատանքները...

Նա ներքև իջավ մինչև կլոր սենյակը և կանգ առավ: Այդ սենյակում, պատերից մեկի վրա, առաստաղի մոտ մի փոքրիկ դռնակ կար: Դռնակի տակ դրված եր փայտե մի շարժական սանդուղք: Ութսունինը բարձրացավ այդ սանդուղքով ու դռնակը բաց արեց: Դուռը բացվում եր թիթեղե ծածկի տակ: Ութսունինը ներս չմտավ, այլ նորից իջավ ներքև: Բաց արեց սենյակում գտնվող դռներից մեկը և մտավ ներս: Դատարկ ու մութ սենյակ եր, շատ փոքրիկ: Նա դուրս յեկավ և դուռը շղայնությամբ ծածկեց: Հետո բաց արեց մյուս դուռը:

Այդտեղ արդեն, մի քիչ ավելի հետաքրքիր եր: Իրար վրա դիզված եյին բազմաթիվ նստարաններ, աթոռներ, սեղաններ:

Այ թե լավ պահ-մտոցիկ խաղալու տեղ եր յերեխաների համար...
Մի ժամ փնտրեյիր, չեյիր գտնի...

Հանկարծ Ութսունիննը գունատվեց: Նստարանների արան-քում նա մարդու մի վտոք նկատեց: Փոքրիկ, մերկ վտաք: Հետո նկատեց մյուս վտաքը, հետո մարմինը: Աղջիկ եր. — տասյերեք-տասչորս տարեկան աղջիկ: Նա անփույթ քնել եր և նրա վտաքերը, մինչև ծնկերից վերև բացվել էյին:

Ութսունիննը մոտեցավ: Ստուգեց շնչառությունը, համոզվեց, վոր իսկապես քնած է և վոչ թե մեռած և նստեց նրա մոտ: Արթնացնի, թե չարթնացնի... արթնացնի, թե չարթնացնի... Հետո վորոշեց. — յեթե աղջիկն ինքնիրեն արթնանա և սկառտին տեսնի իր մոտ նստած, յերևի վախենա: Ավելի լավ է՝ արթնացնել...

Այս մտքերի հետ՝ նա բռնեց աղջկա ուսից և թեթևակի ցնցեց:

— Այ աղջի...

Աղջիկն իսկույն արթնացավ, անմիջապես նստեց, փեշերը քաշեց ծնկների վրա և դարձացած հարցրեց.

— Ի՞նչ էս ուղում...

— Վոչինչ... Ասում եմ՝ արթնացիր...

— Դու այստեղի պահակն ես:

— Այո: Իսկ դո՞ւ:

— Յես հինգերորդ վարձանոցից եմ: Չեն թողնում վորքանոցում քնեմ, յես ել միշտ գալիս եմ այստեղ: Դու չե՞ս վոնդի ինձ, սկառտ...

— Չե, չեմ վոնդի, — ասաց Ութսունիննը սիրալիբ կերպով և փորձեց Աչիկի նման նրա գլուխն շոյել, բայց նա վախեցած յետ քաշվեց.

— Ի՞նչ էս անում... յես խո յերեխա չեմ...

Նրանք լռեցին:

— Սկառտ, դու նո՞ր էս ընդունվի:

— Այո...

— Տեսար, ինչ շուտ գտա: Ծնկներդ դեռ սպիտակ են: Իմ ծնկներին նման են: Նայիր ու՞մ է ավելի սպիտակ...

Այս ասելով նա փեշը վեր քաշեց և իր վտաքը դրեց Ութսունիննի վտաքի մոտ:

— Քոնն ավելի սպիտակ է, — կամացուկ հանձն առավ Ութսունիննը:

— Յեվ ավելի չաղ է... Դու ինչո՞ւ յես լղար, սկառտ...

Սովա՞ծ էս մտում...

— Չե, ինչո՞ւ, — վիրավորվեց Ութսունիննը:

— Իմ անունս Սաթիկ է: Չե՞ս մոռանա:

— Ինչո՞ւ պիտի մոռանամ:

— Սաթիկ: Թաթիկ վոր ասես, միտքդ կնկնի:

— Կընկնի... Այո...

Նրանք նորից լռեցին: Աղջիկը հետաքրքությամբ զննում եր Ութսունիննին վտաքի գլուխ: Հետո կամացուկ բռնեց նրա ձեռքը և հարցրեց.

— Ուզո՞ւմ ես՝ ընկերանանք, սկառտ...

Ութսունիննը գլխով դրական նշան արեց: Աղջիկը ձեռքը կոխեց դեպի իր կուրծքը, մի քիչ խառնեց, ապա հանեց այնտեղից մի կտոր, թիթեղե մեղալ:

— Վոր ընկերացանք, դե առ իմ համարս քեզ մոտ պահիր. — Չորս հազար վեցհարյուր հիսունչորս... Իսկ քո համարը... Ութսունինն... Լավ, միտքս կպահեմ...

Ութսունինն աղջկա համարը պահեց գրպանում և ժպտալով նայեց նրան: Սաթիկը նույնպես ժպտաց և նստարանների յետևում թազնվելով ու դեմքը ծածկելով՝ շնչաց.

— Սկառտ, յեկ ինձ համբուրիր, վոր իրար չմոռանանք: Սկառտ...

Ութսունիննը ծիծաղելով իր փայտը վար դրեց, մոտեցավ Սաթիկին և համբուրեց: Դրանից հետո Սաթիկն անմիջապես վեր կացավ և հրաժեշտ տալով՝ հեռացավ: Սանդուխքների կեսին նա մի վարկյան կանգ առավ և վեր նայելով հայտնեց.

— Յես ամեն որ ծածուկ այստեղ եմ գալիս: Իմ տեղս վոչ վոք չի իմանում: Յերբ վոր կուղենաս՝ կհանդիպենք:

Ու վազեց ներքև:

Յերբ նա անհետացավ ցածրում, կարծես Ութսունիննի գլխին կայծակով մտրակեցին: Նա բոլորովին մոռացել եր զանգն ու ժամացույցը...

Շնչափառը նետվելով զանգակատուն, նա հայացքով մեխվեց ժամացույցին: Վեցն անցել եր տասնյերկու րոպե: Չկշռադատելով իր արածը, Ութսունիննը բռնեց լեղվակի պարանից և վեց ծանր ու անազին հարվածներով Կազաչի Պոստին հայտնեց ուշացած ժամի վեցը...

Դեռ լեզվակը բոլորովին կանգ չեր առել, յերբ սանդուխք-
ների վրա վոտնաձայներ լավեցին: Ձանգի հարվածներից ավելի
ծանր քայլերով բարձրանում եր Սմբատը...

Ութսունինը պատիվ տվեց:

— Ժամի քանի՜սն ե... հարցրեց ջոկատապետը զսպված
բարկությամբ և աշխատելով հանգիստ ձևանալ:

Ութսունինը նայեց ժամացույցին ու լուռ մնաց:

— Իսկ դու քանի՜սը խփեցիր, — գոռաց Սմբատը:

Ութսունիննի աչքերը սեպացան:

— Իո՞ւ խաբում ես ութ հազար հոգու... — նորից մոճուց
Սմբատը և ընդհուպ մոտենալով Ութսունինին, հենց նրա դեմքի
վրա շնչելով հարցրեց.

— Քն՞ի եյիր...



Չկշռադատելով իր արածը, Ութսունինը բռնեց լեզվակի պարանից...

— Վոչ...

Մի շառաչուն ապտակ խլացրեց Ութսունիննի ականջը: Հար-
վածի ցնցումից նրա գլուխը կպավ զանգին և զանգը թեթև դո-
ղանջով ազդարարեց ժամի յոթ և կեսը: Ժամացույցի վրա վեցն

անց եր տասնհինգ ըոպե...

— Պատվիրան չորրորդ՝ սկառուտը սուտ չի խոսում, — բացա-
տրեց Սմբատն ու ներքև իջավ:

12. ՍԿԱՌԻՏԱՆՈՅՈՒՄ

Սոսկալի տխուր տրամադրությամբ Ութսունինը վերադար-
ձավ սկառուտանոց: Արդեն բոլորովին մութն եր և բոլոր սկառու-
տներն այստեղ էին:

Նա մտավ ննջարան, իր փայտը տեղը դնելու համար: Յերբ
ուզում եր դուրս գնալ, նկատեց Հրաչին, վոր լուսամուտներից
մեկի մոտ կանգնած, ինչ վոր բան եր կարողում պատի վրա:
Ութսունինը մոտեցավ նրան և բարեկեց: Սակայն Հրաչը վոչ
միայն չպատասխանեց նրա բարեկին, այլև չուզեց նայել նրան:

Ութսունինը հետաքրքրված, ինքն ել նայեց պատին: Այն-
տեղ կայրած եր սկառուտական պատվերներից մեկը. — «Յեղիր
հավատարիմ աստծուն ու հայրենիքին»:

— Չվերջացրի՞ր, — հարցրեց նա անհամբերությամբ, տեսնե-
լով վոր Հրաչը դեռ նայում ե պատին:

— Հեռացիր, — շնչաց Հրաչը՝ առանց նրան նայելու. — մի
խանգարիր...

Ութսունինը զարմացավ և մի քիչ վերավորվեց:

— Գնանք, — առաջարկեց նա. — յես քեզ ավելի լավ կբա-
ցատրեմ: Գիտես, Հրաչ, աստված չկա...

— Գիտեմ, — շնչաց նա նորից, առանց ընկերոջը նայելու. —
բայց դու գնա: Ինձ համար ել վատ կլինի, քեզ համար ել:
Գնա...

— Ինչո՞ւ յես կանգնել ախր, — հետաքրքրվեց Ութսունինը:
Միջանցքում ձայներ լավեցին:

— Գնա, խնդրում եմ, — շտապեցրեց Հրաչը, մի ըոպե նայե-
լով ընկերոջը, ապա նորից դարձավ դեպի պատվիրանը: — Մի
ժամից հետո կգամ, կբացատրեմ...

Ութսունինը շվարած դուրս յեկավ և քայլերն ակամա ուղ-
ղեց դեպի զբաղարան-ընթերցարան:

Գրադարանն ու ընթերցարանը, թեև մարդարանի միջից
յերկու դուռ ունեյին բայց այդ յերկու դուռն ել բացվում էին
մի սենյակի մեջ: Այնտեղ զբաղարանն ընթերցարանից անջատ-

ված եր միայն փայտե ճաղերով, վորոնք յերկու մասի եյին բաժանել սենյակը:

Ութսունիննը մտավ ընթերցարան, ուր մի քանի տասնյակ սկառտներ նստած՝ կարդում էին: Գրադարանում խառնվել էին գիրք փոխող սկառտները և բավական թվով վորբուհիներ, վոր նույնպես յեկել էին գրքեր ստանալու:



— Գիտե՞ս, չե՞րաչ, աստված չկա:

Առաջին հայացքից, Ութսունիննին զարմացրեց մի հանգամանք. — սեղանների վրա վոչ մի թերթ չկար և բոլորը գրքեր

էյին կարդում: Նա մոտեցավ մի ընթերցող սկառտի և կամացուկ հարցրեց.

— Թերթերն ումնից կարելի յե վերցնել...

Սկառտը վերն նայեց: Նա ուներ հաստ պոռոշներ և՛ սև, խոնճուճ մազեր:

— Սկառտը թերթ չի կարդում, — բացատրեց նա:

— Ինչո՞ւ...

— Սկառտն զբաղվում է սկառտական գործերով: Նա կապ չունի քաղաքական հարցերի հետ: Իսկ դու, ի՞նչ, նոր ես ընդունվել...

— Այո:

— Վոչինչ, կսովորես: Վերտեղից ես յեկել... Գյուղերից, քաղաքից...

— Քաղաքից:

— Բայց ի՞նչ պատճառով պատկոմներից հեռացար, հետաքրքրվեց սկառտը:

— Ախր յես պատկոմ չեմ յեղել:

— Սուտ ես ասում, — ծիծաղեց սկառտը. — իսկույն յերևում է, վոր դու պատկոմական մտքեր ես քարոզում. — Թերթ կարդալ Սուտ մի ասիր, — սկառտը սուտ չի ասում...

— Գիտեմ վոր սուտ չի ասում, — հառաչեց Ութսունիննը, զանգահատան ապտակը հիշելով: — Հենց դրա համար ել յես ճիշտ եմ ասում. — յես պատկոմ չեմ յեղել...

— Սկառտական ազնիվ խոսք...

— Այո... Յերդվում եմ...

— Ախր հավատալս չի գալիս, — զարմացավ սկառտը, — բայց վո՞չնց է պատահել, վոր քեզ հենց միանգամից ընդունել են կոմսոմոլի մեջ: Դու անպայման պարծենում ես...

— Ո՞վ է պարծենում, — արդարացավ Ութսունիննը. — յես կոմսոմոլի մեջ ել չեմ յեղել...

— Այդ արդեն խաբում ես, — ժպտաց սկառտը: — Չեմ հավատա: Վոր կոմսոմոլ չլինեյիր, ինչո՞ւ պիտի վարժապետիդ հակառակվեյիր...

— Դու մեր դասարանից ես, — հարցրեց Ութսունիննը:

— Վոչ:

— Բա վորտեղից գիտես, թե հակառակվել եմ...

— Գիտեմ... Լսել եմ... Հա, լավ կաննե՞ք, յեթե դուրս գնանք, — առաջարկեց նա, — ընթերցողներին խանգարում ենք:

Նրանք դուրս յելան մարգասենյակ և նստեցին լուսամուտի գոգում:

— Հա, շարունակիր, — ասաց սկառուռը. — դու պատրաստվում եյիր ասել, թե վոր թվից ես մտել կոմսոմոլի մեջ...

— Վնչ, բողոքեց Ութսունիննը, — ուզում եյի ասել, վոր սկառուտական ազնիվ խոսք, յես կոմսոմոլում չեմ յեղել...

Նույն այդ իրոպեյին ներս մտավ Հրաչը և տեսնելով Ութսունիննին, ուրախ հայտնեց:

— Գնանք, յես արդեն վերջացրի...

Յերբ նրանք առանձին մնացին, նա բռնեց Ութսունիննի թեից և շուռնջով հարցրեց.

— Ի՞նչ եյիր խոսում Գարեգինի հետ...

— Ինչո՞ւ յես հարցնում...

— Զգուշ կաց նրանից, նա լրտես ե: Ամեն ինչ հաղորդում ե սկառուտապետին: Յեթե շատ բան գիտես, քիչ խոսիր...

Ութսունիննն աչքերը բաց ու խուփ արավ, կարծես աշխատելով ավելի ճիշտ հասկանալ նրա խոսքերի իմաստը: Ապա ձեռքը թափահարելով պատասխանեց.

— Լավ, նա ի՞նչ պիտի անի ինձ: Յես ի՞նչ գիտեյի, վոր նրան ինչ ասեյի: Ազնիվ խոսք, Հրաչ, յես վոչ պատկոմ եմ յեղել, վոչ կոմսոմոլ...

Հետո հանկարծ խոսքն ընդհատելով, հարցրեց.

— Այդ թողնենք: Ի՞նչ ինչո՞ւ համար եյիր կանգնել...

Հրաչը ծոծրակը քորեց:

— Մեղանչել եյի ասածու և հայրենիքի դեմ: Վոր պատվիրանի դեմ վոր մեղանչես, այն պատվիրանի տակն ել պիտի ուղիղ մի ժամ կանգնես և շարունակ կարդաս պատվիրանը, վոր այլևս չսխալվես...

— Բայց դու ի՞նչ եյիր արել, Հրաչ...

— Յես յերեկ յերեկոյան վիճում եյի յերկրորդ ջոկատի սկառուտներից մի քանիքի հետ: Նրանք ասում եյին, թե թուրքերն են մեղավոր պատերազմի համար, իսկ յես ասում եյի՝ հայերը: Հանկարծ նրանց ջոկատապետ Լեվոնը վրա հասավ, բռնեց ինձ ու տարավ մեր Սմբատի մոտ... Իսկ Սմբատն ինձ պատժեց...

Ութսունիննը լուռ լուռ եր.

— Ասում են՝ հայերը բոլորովին մեղավոր չեյին պատերազմի համար: Իայդ չե՞ վոր հայ կամավորները մեր հարևան գյուղի

բոլոր տղամարդկանց սպանեցին: Այնքան թուրք վորբեր ու վորբուհիներ մնացին... Շատ... Շատ...

Հրաչը հառաչեց և ավելացրեց.

— Մեզ նման վորբեր...

13. Ա Ռ Ո Ր Յ Ա Ն

Այդպես անցավ մի քանի որ: Յուրաքանչյուր առավոտ Ութսունիննը գնում եր դպրոց, իսկ դպրոցից հետո գնում եր պահակ կանգնելու: Պատահում եր, վոր գնում եր յերրորդ հերթի, այսինքն ժամի 2-ից մինչև 4-ը և պատահում եր, վոր գնում եր չորրորդ հերթի. — այսինքն 5-ից մինչև 7-ը: Շարունակ պոստավայրը փոփոխվում եր և նա առիթ չեր ունենում զանգակատուն գնալու: Չնայած ապտակի վատ հիշողությանը, նա ցանկանում եր նորից հանդիպել Սաթիկին:

Մի անգամ նա պահակ կանգնեց ուտելիքների պահեստի պատի տակ՝ Կազաչի Պոստի դրսի կողմից: Մի շարքի վրա ձգվել եյին այդ մուսյլ պահեստները. — մոտավորապես յոթ ութ շենք: Նրանք միմիանցից հինգ, տաս քայլ հեռու եյին և նրանց արանքում պատ եր քաշված: Յերբեմն այդ պատի յետևում յերևում եր մի բանվոր, վորը գոգնոցով լիքը աղբ եր բերում և թափում պատից այդ կողմ: Ութսունիննը դիտում եր, թե ինչպես ողի մեջ Ֆոռում եյին թուզի փոքրիկ թղթե տոպրակները, շոկոլադի կարտոնե տուփերը և ընկնում գետին: Նա դիտեր, վոր սկառուտներից կամ վորբուհիներից վոչ վոք չի կերել այդ ամենը և թուզն ու շոկոլադը միայն ամերիկացիների համար ե:

Այդ ձանձրալի պոստի վրա Ութսունիննն այնուամենայնիվ մի զբաղմունք ուներ: Փորձում եր քայլել յերկաթուղու ուղիք վրայով վորքան կարելի յե յերկար, առանց սայթաքելու: Նա իր սկառուտական փայտը լարախաղացի նման պահում եր ձեռքերի վրա, հավասարակշռության համար: Ճանապարհով այդ որը վոչ վոք չանցավ, իսկ ուղեւերով սլացավ միայն մի գնացք, այն ել ապրանքատար:

Չնայած նա գտնվում եր Կազաչի Պոստից դուրս, այնուամենայնիվ զգում եր, վոր ինքն այնքան հեռու յե քաղաքից և իրեն արգելված ե պոստից հեռանալը: Նա նայում եր դեպի քաղաք, բայց Կազաչի Պոստի այդ կողմից քաղաքը չեր յերևում:

Այդ մի քանի որվա ընթացքում նա շարունակ հիշում եր իր ընտանիքը, շարունակ տանջվում, բայց վոչինչ անել չեր կարող: Հրաչը նրան տեղեկացրել եր, վոր սկառտապետին խնդիրներ անելու համար հատուկ որեր կան, վորից գուրս արգելվում ե վորևե գիմում կատարել: Ութսունիննը անհամբեր սպասում եր այդ որվան և տանջվում:

Սկառտապետը շատ սակավ եր յերևում: Նա ամբողջ որն իր սենյակում փակված, վոչ վոք չգիտեր, թե ինչ ե անում: Գուցե միայն Գարեգինը գիտենար, վոր հաճախ նրա մոտ յել ու մուտ եր անում:

Ազատ ժամերին Ութսունիննը չորրորդ ջոկատի Վարդանի հետ գնում եր դրոշակախոսության: Նրանք գուրս եյին գալիս դպրոցի մոտի պոստից դեպի արձակ դաշտը, սակայն պարտավոր եյին պոստից շատ չհեռանալ, վորպեսզի պահակ սկառտը միշտ նրանց տեսներ: Ո՞վ գիտե. շատ-շատերը դրոշակախոսության պատրվակի տակ գուրս եյին գալիս պոստերից և մի քանի ժամով փախչում քաղաք: Դե յեկ, ասպացուցիր, թե նրանք վորտեղ են յեղել. — դրոշակախոսության տեղը, թե՛ քաղաքում: Կազաչի Պոստում, պատերից ներս, այնքան մեծ և ազատ տարածություն չկար, վորքան վոր պետք եր դրոշակախոսության համար: Իսկ դրոշակախոսության համար անհրաժեշտ եր, վոր խոսողները մի քանի հարյուր մետր իրարից հեռու լինեյին: Տեսողությունը վարժեցնելու համար, այդ անհրաժեշտ եր:

Ութսունինն արդեն սովորել եր տառերը ձևացնելը և արդեն փորձում եր բառեր կազմել: Յերկու փոքրիկ, կարմիր դրոշակները ձեռքերում բռնած, նա հաղորդում եր հեռվում կանգնած Վարդանին նրա անունը: Այլ դրոշակը ցած, ձախը գլխից վեր: Յերկուսն ել վեր: Յերկուսն ել հորիզոնական դիրքով, լայն բաց արած: Մեկը հորիզոնական դիրքով, մյուսը թեք... Յեվ այդպես շարունակ:

Սկառտանոցի մոտ, փոքրիկ ելեկտրոկայանը ցերեկը շարունակ աշխատում եր, հոսանք հաղորդելով Կազաչի Պոստի արհեստանոցներին: Բանթողից հետո նա մի քանի ժամով կանգ եր առնում, ապա նորից աշխատում, այս անգամ լուսավորության համար:

Շաբաթ յերեկոյան, սկառտանոցը սովորականից ավելի աշխույժ տեսք եր ստացել: Փողային նվազախմբի սկառտները, գործիքները ձեռներին, փորձեր եյին անում, ըստ յերևույթին

պատրաստվելով նվազել: Հին կոշիկ կամ հագուստ ունեցողներ ստանում եյին նորերը, ջոկատապետները դես ու դեն եյին վազվզում և այլն: Վարդանն Ութսունիննին բացատրեց, վոր ամեն շաբաթ յերեկո տողանցք ե լինում և այսոր ել պատրաստվում են հենց տողանցքի: Տողանցք՝ այսինքն պարագ, դորահանդես:

Դուրս յեկավ սկառտապետը, ամբակազմ, ձիգ իրանով: Նա հագել եր զինվորական հագուստի գույնի կարճ շալվար ու բլուզ: Գլխին դրել եր անգլիական բոյ-սկառտական լայնեզր գլխարկ: Մեջքին կապել եր կաշվե լայն գոտի և մի ուրիշ գոտի յել մի քիչ ավելի նեղ, ձգվում եր նրա ուսի վրայով: Այդ հագուստներով նա շատ գեղեցիկ եր և նրա քառասուն տարեկան, բայց յերիտասարդ դեմքը փայլում եր: Նրան տեսնելուն պես սկառտները գլխարկները վեր նետեցին և «ուռոս» բացականչեցին: Նա խրոխտ քայլերով մոտեցավ, սուլիչ տվեց և վոտքի ծայրերի վրա յետ յետ գնալով սկսեց հրահանգներ տալ: Անմիջապես վեց ջոկատներն ել շարք կանգնեցին և նվազախումբն անցավ նրանց գլուխ: Յերկու հարյուր քառասուն սկառտներից և վեց ջոկատապետներից վոչ մի ձայն չեր լսվում: Ամբողջ սկառտանոցը անշարժ քարացել եր: Շարքից գուրս եյին մնացել միայն չորս սկառտներ, վոր պիտի մնային սկառտանոցը հսկելու:

— Բ՞նջ չ... առնջ, — վորոտաց սկառտապետի ձայնը և նույն բոպեյին մարջը թնդաց և յերկու հարյուր քառասուն հոգի մի մարդու պես շարժվեցին առաջ:

Այդ գեղեցիկ մարջը, այդ հաղթական յերգը, այդ գեղեցիկ սկառտապետն ու ջոկատապետերը, այդ միանման յերկու հարյուր քառասունը և նրանց համաչափ քայլը, — այդ ամեն մի հիանալի տեսարան եր՝ մայր մտնող արեգակի շողերի տակ: Յեվ ցավում եր Ութսունիննը, վոր ինքն ու մյուս բոլորը պատկոմներ չեն, այլ միայն սկառտներ, դաժան ու չար: Նա հիշում եր քաղաքի պատկոմներին, վորոնցից շատերն իր դասընկերներն եյին: Նրանք չունեյին վոչ միայն համազգեստ, այլ չունեյին կարգին հագուստներ: Շարքի մեջ նրանք հաճախ խառնում եյին վոտները կամ նույնիսկ զբուցում եյին: Ասենք առանց այն ել, նրանց շարքերը գեղեցիկ տպավորություն չեյին թողնում առանց միանման զգեստի, առանց ընդհանուր կարմիր փողկապներին... Բայց ինչ ել լիներ, նրանք ավելի լավ եյին, վորովհետև նրանցից վոչ մեկը չեր ապտակում և դունչ ու մուռթ չեր վիշրում բոքսով...

Նվազում եր նվազախումբը, հաղթ քայլում եր սկաուտայետը
 և տողանցքն անցնում եր Կազաչի Պոստով: Նրանց ճանապարհի
 վրա հավաքվել էին վորբուհիները, ծառայողները և նայում էին:
 Կապույտ փողկապներ, փայտեթ թևերի տակ, գեղեցիկ, բաց
 ծնկներ, հպարտ, վեր թեքած գլուխներ: Նրանց ծափահարում
 էին, «սկաուտ», «սկաուտ», շնչում էին փաղաքշանքով և ճա-
 նապարհ դնում:

Քիչ հետո, տողանցքը թեքվեց դեպի ամերիկացիների տունը:
 Այնտեղ, մուտքի մոտ, հավաքվել էին բոլոր քեռիներն ու պա-
 ուված մորաքույրները: Նվազն ավելի աշխուժացավ, շարքերն
 ավելի զգաստ քայլեցին, սկաուտայետն ու ջոկատայետներն
 ավելի հաղթ տեսք ընդունեցին:

— Նայիր անշ. — լավեց հրահանգը և յերկու հարյուր քառա-
 սուն դեմքեր միասին, կտրուկ շարժումով դարձան դեպի ամերի-
 կացիների տունը: Նվազախումբն սկսեց ամերիկական հիմնը:

— Պատվի ան, — յեղավ յերկրորդ հրահանգը: Բոլորը մի
 մարդու պես պատիվ տվեցին քեռիներին ու մորաքույրներին:


Իսկ քեռիները, չիբուխները բերանների մի անկյունում
 բռնած, վեր էին լարձրացրել իրենց ջղոտ ու վոսկրոտ ձեռ-
 քերը և ժպտում էին: Ակնոցավոր մորաքույրները ծափահարում
 էին:

Շրջելով Կազաչի Պոստը, սկաուտները մյուս կողքով վերա-
 դարձան սկաուտանոց:

Իսկ հետևյալ օրը՝ կիրակի, Ութսունիննը մի տարրու-
 նակ բան նկատեց: Սկաուտանոցի դիմաց, յերկաթե ձողի վրա,
 շեփորի հնչելուց ու պատիվ տալուց հետո ծածանվեց դաշնակ-
 ցականների յեռագույն դրոշակը...

Անշափ զարմացած, Ութսունիննը դիմեց իր կողքին կան-
 զնած այն սկաուտին, վորի հետ մի անգամ ընթերցարանում
 խոսել էր.

- Այս ինչո՞ւ համար ե դաշնակցականների դրոշակը...
- Ներեցեք, — գլուխն որորեց Գարեգինը, — սա դաշնակցա-
 կանների դրոշակը չէ: Դա մերն է: Կարմիր յեռանկյունի՝ առա-
 ջին ջոկատ: Կապույտ՝ յերկրորդ ջոկատ: Դեղին՝ չորրորդ ջոկատ...
 Չե՞ս տեսնում, վոր դրանք յերեք առանձին դրոշակներ են...
- Իսկ ինչո՞ւ միաժամանակ...
- Վորովհետև կիրակի յի:
- Բա ո՞ւր ե մեր դրոշակը...



Բոլորը մի մարդու պես պատիվ տվեցին քեռիներին և մորաքույրերին:

Գարեգինը ժպտաց և մատով ցույց տվեց: Յեռագույնից բա-
վականին ներքև, առանձին ծածանվում էր կանաչ յեռանկյունի
կտորը:

— Իսկ ի՞նչ, — հետաքրքրվեց Գարեգինը, — դու դե՞մ ես
յեռագույնին... Գուցե ուզում ես, վոր միայն առաջին ջրկատի
դրոշակը կախենք...

— Չե, ինչու, — շտապեց ժխտել վախեցած Ութսունինը: —
Միայն թե յես վերավորվեցի, վոր մեր ջրկատի դրոշակը կախե-
ցին չորրորդ ջրկատի դրոշակից հետո, այն էլ բավական ցածր...

14. Գ Ո Ր Տ

Մի որ, Ութսունինը զարմանքով նկատեց, վոր բոլոր ջրկա-
տապետները և սկառտապետներից վոմանք իրենց գլխարկի վրա,
աջ կողմում ունեն ճիշտ այնպիսի նշաններ, ինչպիսին կա սկառ-
տական գոտիների վրա. — մեծ ու փոքր Մասիսը, «բարձրացիր,
բարձրացուր» բառերով: Սկզբում նրան թվաց, թե դա ջրկատա-
պետական նշան է: Բայց յերբ ստուգեց, վոր շարքային սկառտ-
ներից մի քանիսն էլ ունեյին դրանից, հետաքրքրվեց և դիմեց
չորրորդ ջրկատի Հակոբին, վոր իր կողքին նստած, ճաշում էր:

— Ա՛, դրանք հայ արիներ են, — բացատրեց նա:

Արի... Ի՞նչ է նշանակում արի... Արի կոչվում է սկառտա-
պետի շունը, վորին սիրում են բոլոր սկառտները և մանավանդ
ինքը, — սկառտապետը...

Հակոբը բացատրեց, վոր արի նշանակում է քաջ: Հայ արի՛
քաջ հայ: Այդպես կոչվում են այն սկառտները, վորոնք ամենից
լավն են, վորոնք վորեւե աչքի ընկնող գործ են կատարել կամ
ընդհանրապես իրենց պահում են որինակելի:

Զարմացած Ութսունինը գդալը վար դրեց և մտքերի մեջ
ընկավ: Ուրեմն բոլոր սկառտներն էլ իրար հավասար չե՞ս, ինչ-
պես ինքն էր կարծում: Ուրեմն կան ցածր սկառտներ և բարձր
սկառտներ... Ահա թե ինչ է նշանակում «բարձրացիր», բարձրա-
ցուր...» Ուրեմն Գարեգինը, Սմբատը, առաջին ջրկատապետ
Գասպարը, յերկրորդ ջրկատապետ Լեվոնը, չորրորդ ջրկատապետ
Մամիկոնն արդեն բարձրացել են, վորպեսզի իրենց էլ բարձրա-
ցնեն... Ահա անցյալ որվա չար դեմքով սկառտ Ութսունը, վոր իր
քիթն ու դեմքն արյունոտեց: Նա յե՛լ պիտի բարձրացնի իրեն...

Ճաշը վերջանալու վրա յեր, Համարյա ամեն որ սկառտները
ճաշարանից դուրս եյին գալիս կիսատ կշտացած, իսկ հատկապես
այդ որը ճաշը բոլորովին անպետք էր: Մաքրելով իր ափսեն,
Ութսունինն ուղեց ինքն էլ մյուսների նման գնալ և մի ափսե
ճաշ ևս խնդրել, բայց վախեցավ մերժվելուց: Սահակը, ճաշի
կաթսան իր ջրուտ վոտների մեջ առած և շերեփով զինված, յեր-
կրորդ անգամ բաժին լցնում էր շատ քչերին: Ահա մերժված վե-
րադարձավ Հրաչը: Իսկ նրա փոխարեն, դատարկ ափսեն ձեռքում
բռնած, սկսեց բողբոջել Վարդանը...

— Իսկ ինչո՞ւ Հրանտին տվեցիր...

— Հրանտը հայ արի յե — մոմոաց Սահակը, շերեփը ձեռ-
քում խաղացնելով:

— Հայ արին ավելի մեծ փոր ունի, — սկսեց Վարդանը,
բայց նույն րոպեյին սկառտապետի դուռը բացվեց և պետը դուրս
գնաց: Անմիջապես լուռ թյուռն տիրեց և սկառտներն սկսեցին
ցրվել:

Իրսում Վարդանն Ութսունինին առաջարկեց գնալ կանաչ
ուտելու: Ինքն այսոր բոլորովին, բոլորովին սոված է: Կվերցնեն
դրոշակները, կգնան պոստից դուրս իբր թե դրոշակախոսու թյան
և կսկսեն ուտելու կանաչ փնտրել...

Ութսունինը համաձայնվեց: Յերկար ամիսների սոված վե-
ճակից հետո, սկառտանոցի ճաշը նրան բավարարեց միայն
առաջին որերի ընթացքում: Իսկ այժմ, նա ամեն որ, քաղց էր զգում
բոլոր մյուսների պես:

Յերբ պոստից բավական հեռացան, տեսան մի քանի սկա-
ռտներ, վորոնք ծիծաղելով գորտ եյին բռնում անցնող փոքրիկ
ջրի միջից: Վորպեսզի նրանք չնկատեն իրենց կանաչ ուտելը,
Վարդանը և Ութսունինը շեղեցին ճանապարհը և նրանցից հե-
ռացան:

Կանաչ, իհարկե, շատ կար և հաճախ հանդիպում եյին ուտելու
պետքական տեսակները: Կես ժամի չափ քաղհան անելուց և ուտե-
լուց հետո նրանք սկսեցին դրոշակախոսել: Ութսունինն արդեն
կարողանում, էր հաղորդել ամբողջ բառեր ու նախադասու-
թյուններ:

Նրանք տարվել եյին իրենց գործով, յերբ հանկարծ հեռվից,
սկառտանոցից հնչեց շեփորի ձայնը: Այդ նշանակում էր, վոր
պոստից, արհեստանոցներից, դպրոցից ազատ բոլոր սկառտներն
իսկույն պետք է վազ տային սկառտանոց: Չհասկանալով թե

ինչու՞ն է բանը, Ութսունինն ու Վարդանը նույնպես վազեցին այն կողմ:

Յերբ տեղ հասան, սկառտները մի յերկար հերթ արդեն կանգնել եր սկառտապետի դռանը: Վոչ վոք պատճառը չգիտեր. հրամայված եր հանգիստ կանգնել և սպասել:

Գարեգինը ժպտալով դուրս յեկավ պետի սենյակից, նայեց հավաքվածներին և ներս մտավ: Քիչ հետո դուռը նորից բացվեց ու շեմքի վրա յերևաց ինքը, սկառտապետը, մի մեծ թավա ձեռքին բռնած: Թավայից գոլորշի յեր բարձրանում:

— Սկառտը չպիտի զզվի, — սկսեց նա լուրջ, բայց զվարթ տոնով. — հիմա մենք բոլորս, սովորական ճաշից դուրս ուտելու յենք մի մի գդալ գորտով ձվածեղ...

Աննկարագրելի աղմուկը յեղավ պատասխանը: Մի քանիսը վոքձկացին, մի քանիսը ծիծաղեցին, վոմանք սկսեցին պարզապես բղավել իրենց համաձայնութունը կամ անհամաձայնութունն արտահայտելով: Իսկ մինչ այդ, սկառտապետը լցրեց առաջին գդալը:

— Յեկ... Ապրես... Դե կուլ տուր...

Սկառտի աչքերը չովեցին, դեմքի մկանները խաղացին և նա հենց տեղնուտեղը, դուրս ժայթքեց վոչ միայն ձվածեղը, այլ և քիչ առաջ կերած ճաշը:

— Վոչինչ, ահա քեզ մի գդալ ևս: Սա արդեն կեր: Ապրես: Դե դնա...

Սկառտն իրեն դուրս նետեց գնդակի պես:

— Ի՞նչ կա, վոր չեր ուտում, — զարմացավ մեկը:

— Յես շատ եմ կերել, — պարծեցավ մյուսը:

— Յես գորտ չեմ կերել, — խոստովանվեց մի ուրիշը, — բայց խեցգետին՝ շատ...

Սկսեցին ուտել: Յուրաքանչյուր սկառտ մոտեցնում եր բերանը, կուլ եր տալիս իրեն հասնելիք մի գդալը և նետվում եր դուրս: Բայց ահա մոտեցավ յերկրորդ խմբի մի սկառտ, — այն չար դեմքով տղան, վոր բոքս եր խաղացել Ուսունիննի հետ: Նա ախորժակով կերավ իր բաժինը և համարձակ դիմեց պետին.

— Յեթե կարելի յե, մի գդալ ել տուր, պարոն սկառտապետ...

Բոլորը զարմացած նայեցին: Պետը գդալը դրեց վար, ժպտաց, քաջալերանքով թոթովեց նրա ուսը և բացականչեց.


— Ապրես, Ոհան: Յերեկոյան յեկ ինձ մոտ, հայ-արիական նշանդ ստացիր...

Ոհանը կերավ նաև յերկրորդ գդալը և հպարտ դուրս յեկավ, հերթում կանգնածների նախանձոտ հայացքների տակ:

Ութսունիննը սարսափով սպասում եր իր հերթին: Իրենից առաջ մնացել էին միայն յերեք հոգի: Ահա մեկը կերավ: Ահա մոտեցավ մյուսը...

Իր ամենասոված որերին անգամ նրա մտքով չեր անցնի այդպիսի կեղտոտ բան անել: Գորտ ուտել: Ազնիվ խոսք նա կմեռնի զզվանքից կամ կգժվի: Թյու, ուտել կոկոացող գորտերին...

Բայց չուտել չեր կարելի: Մի քանի որ հետո նա սկառտապետից պիտի խնդրեր իր քրոջը վորբանոց ընդունել: Յեթե այժմ ձվածեղ չուտեր, ամեն ինչը փչանար: Ուտել անհնար է, բայց հարկավոր է...



Սկառտը զզվանքով ճչաց և անզգա փովեց հատակին:

Ահա կերավ նա յերկրորդը: Ահա սկառտապետը լցնում է գդալը՝ յերկրորդի համար: Նրանից հետո հերթն իրենն է... Ի՞նչ պիտի անի... Ահա պետը բարձրացրեց գդալը...

Բայց այս ի՞նչ պատահեց... Սկառտը բերանը մոտեցրեց գդալին, ապա զզվանքով ճչաց և անզգա փովեց հատակին: Սկառտապետը կատաղած թքեց, մի ձեռքով թավան շարտեց հատակին, մյուսով գդալը և քթի տակ ինչ վոր հայտոյանք մոմուտով մտավ ներս ու դուռը շխկացրեց:

Նույնիսկ Գարեգինը չհամարձակվեց մտնել նրա յետևից...

15. ՎԱՀԱՆ ՔԻՐԱՉ

Յերեք որ սկառտապետը սենյակից դուրս չեկավ:

Յերեք որ, ճաշի ժամանակ ամենախորին լուսթյուն եր տիրում, վորպեսզի պետը նրանց ձայներից ավելի չնյարդայնանար:

Յեվ յերեք որ, Գարեգինն անընդհատ յել ու մուտ եր անում նրա մոտ, բոլոր սկառտների կողմից խնդրելով նրան՝ ներել իրենց... Յերբ Գարեգինը դուրս եր գալիս նրա սենյակից, մյուս հայ արիներն ու սկառտները թափվում էին նրա վրա և տեղեկություններ հարցնում: Սակայն պատասխանը միշտ նույնն եր լինում: Գարեգինն իր հաստ շրթունքների միջից մրմնջում եր.
— Չե...

Իսկ մի անգամ, նա հայտնեց.

— Պետն ինձ առաջարկեց, այս դեպքը մտցնել հիշատակարանի մեջ...

Այստեղից Ութսունիննը իմացավ, վոր Գարեգինի պարտականությունների մեջ եր մտնում նաև՝ գրել սկառտանոցի հուշա-



նա զարմանքով տեսավ իրենց պետի լուսանկարը: արի շան հետ միասին:

տետրերը: Իրի առնել այն բոլոր կարեվոր ու աչքի ընկնող դեպքերը, վոր տեղի էին ունենում Կազաչի Պոստում և հատկապես սկառտների մոտ:

Սակայն չորրորդ որը, Գարեգինը վերջապես դուրս յեկավ պետի մոտից զվարթ դեմքով: Լսելով, վոր ուշաթափված սկառտը զղջացել եր և այժմ համաձայն եր պետի հետ գորտերի մի ամբողջ

ճահիճ ուտել, պետը ժպտացել եր: Ժպտար, — դա արդեն վորոշ բան նշանակում ե...

Նույն յերեկոյան, Ութսունիննը ընթերցարանի սեղանների վրա գտավ արտասահմանում լույս տեսնող «Հայ Սկառտ» շաբաթաթերթի մի համար և բաց անելով, զարմանքով տեսավ այնտեղ իրենց պետի լուսանկարը, արի շան հետ միասին: Նկարի տակ գրված եր.

«Սկառտապետ Վահան Գիրազ: Վերջերս նա զնաց Հայաստան, աշխատելու այնտեղի վորբերի մեջ, արհամարհելով կոմունիստների դաժան ուժիմը: Մենք հաջողություն ենք ցանկանում հերոս սկառտապետին, վորը համարձակ կերպով զնաց ազատելու հայ պատանիներին կոմունիստական աղդեցությունից»:

Ութսունիննը թերթը ծալեց և սկսեց յերկար մտածել:

16. ՀԱՄԱՐՁԱԿ ՍԿԱՌՏԸ

— Ի՞նչ համարձակ սկառտ ե Ութսունիննը, — իրենց տպավորություններն էին հաղորդում վորբուհիները, շրջելով դպրոցի միջանցքում և սպասելով զանգին:

— Բայց ինչքան խեղճ ե յերևում, — ավելացրեց Արուսյակ անունով մի վորբուհի. — նա միշտ մտածում ե և շատ քիչ ե խոսում:

— Լղար ե...

— Նոր ընդունվածները միշտ այդպես են լինում, — բացարեց նվարդ անունով մեկը. — իմ յեղբայրն ել այդպես եր...

Նա յեղբայր անվանում եր Վարդանին: Ընդհանրապես յուրաքանչյուր վորբուհի աշխատում եր սկառտներից մեկին իրեն յեղբայրացնել, վորպեսզի նա զոնե մի քիչ մոռացնել տար իսկական յեղբայրների կորուստը և առիթ յեղած տեղը պաշտպաներ վորբուհուն կառավարիչի կամ դաստիարակչուհու բարկությունից:

— Իսկ գիտե՞ս, Իսկուհի, — դարձավ Արուսյակը մի թուխ աղջիկ, — ասում են Ութսունիննը պատկոմ ել ե յեղել... Բաղաբում յեղած ժամանակ...

— Պատկոմն ի՞նչ ե, — չհասկացավ Իսկուհին:

Արուսյակը չկարողացավ բացատրել: Պատկոմը... դա ելի... սկառտի նման մի բան ե, բայց կարմիր փողկապավոր սկառտ: Յեվ նա դեմ ե սկառտներին:

— Իսկ Ութսունինն ել ե սկառտներին դեմ... Բա ել ինչո՞ւ համար ինքն ել ե սկառտ...

Աղջիկները վոչ մի յեզրակացութեան չեկան: Յերբ սկառտները շարքով յեկան դպրոց, նրանք վորոշեցին Ութսունիննին հարցուփորձ անել: Բայց այդ ըոպեյին զանգը արվեց, իսկ դասը ընթացքում մի դեպք պատահեց, վորը մոռացնել տվեց Ութսունիննի հետ կապված բոլոր մյուս հարցերը:

Առաջին դասը կրոն եր: Ի՞նչպես թե կրոն... Ութսունինն ապշեց: Իպրոցում կրոնի դեմ... Վճիռ դարձնեմ եմք ապրում:

Սակայն իսկապես վոր կրոնի դաս եր: Յեկավ վարժապետ Մելիք Ջահանգուլյանը, տերտերի կերպարանքով, հաստամարմին մի մարդ և մտավ դասարան: Աշակերտները վորքի կանգնեցին: Նա փնջալով նստեց և աշակերտներին թույլատրեց նստել: Հետո քանոնն ուղղեց դեպի վորբուհիներից մեկը.

— Սկսում ենք կրոնի դասը: Պատմիր...

«Յերբ Հիսուս Քրիստոս տեսավ աղքատ Դազարոսի մոր լացն ու կոծը...

Բայց այդ ըոպեյին, առանց մատ բարձրացնելու, Ութսունիննը իր տեղից բացականչեց.

— Պարոն վարժապետ, դպրոցներում արգելված ե կրոն դասավանդելը...

— Ո՞վ եր... — հարցրեց շնչահեղձ յեղած ուսուցիչը և նրա ձայնը չարագուշակ հնչեց ընդհանուր լուռության մեջ:

— Յես եյի...

Վոչ վոք չեք համարձակվում մի շուկ հանել: Ինչպես յերևում եր, Ութսունիննը դեռ շատ պիտի զարմացներ նրանց: Նրանք սպասում եյին:

— Ո՞վ ես դու:

— Սկառտ եմ:

Մելիք Ջահանգուլյանը փորձեց մի բան անել, բայց անակընկալի ազդեցութեան տակ այնքան շփոթված եր, վոր վոչնչի ձեռնարկել չեք կարող: Շվար դրութեամբ մի քիչ կանգնելուց հետո նա դուրս գնաց:

Իսասարանում բոլորն իսկույն հանգիստ շունչ քաշեցին և սկառտներից մեկը բարկացած բղավեց.

— Ի՞նչ ես ամեն անգամ դասերը խանգարում, կոմունիստական լրտես...

Ութսունիննը գունատված վերկացավ և պատասխանեց.

— Մի վերավորիր ինձ, սկառտ: Կրոնն արգելված ե...

Իր տեղն անհարմար եր. — ամենավերջում: Բոլորը շուռ եյին յեկել և նայում եյին իրեն: Ստիպված նա դուրս յեկավ և գնաց կանգնեց ամբիոնի մոտ:

— Կրոնն արգելված ե, — կրկնեց նա. — ազնիվ խոսք, ազնիվ սկառտական խոսք: Ամերիկացիներն ու կոմունիստներն իրար հետ համաձայնվել են, վոր մեզ մոտ վոչ կոմունիստական մտքեր քարոզվեն, վոչ ել կրոնական: Մենք պիտի մեծանանք,



— Ինչ սկառտանոց, պետք քեզ կանչում ե...

հետո նոր պիտի ընտրենք մեր ճանապարհը... Մենք վոչ ուզում ենք ազդիտացիա լսել, վոչ ել կրոն...

— Ճիշտ ե ասում, — համաձայնվեց Գրիգոր անունով մի սկառտ, ոգնող շոկատից: Յերկու յերեք վորբուհիներ գլուխներն որորեցին ինչպես համաձայնութեան, իսկ Ութսունիննի կողքին նստած աղջիկն ինչ վոր բան ասեց, վորն Ութսունիննը չկարողացավ լսել:

— Այ, որինակ, քաղաքի դպրոցներում, — շարունակեց նա:

Բայց այդ ըրպեյին դուռը բացվեց և ներս մտավ Մելիք-Ջահանգուլյանը դպրոցի վարիչի հետ: Աշակերտները վտառի թռան:

— Ո՞վ եր այն սկառուր, — հարցրեց վարիչը և նրա ակնոցները կարծես փայլեցին բարկութունից:

— Յես եմ...

Վարիչը բռնեց նրա թևից:

— Ինչ սկառուտանոց. պետք քեզ կանչում ե...

Ապա դառնալով Մելիք-Ջահանգուլյանին ավելացրեց.

— Շարունակեցեք դասը:

Ութսունիննի աչքերը մթնեցին:

Նա զգաց, վոր ամեն ինչ կորած է. — մաքուր հագուստ, ուտելիք, քրոջն ընդունել տալու հույսը... Ամեն ինչ... Նա վերջին մի հայացք գցեց դասարանի վրա, — կարծես հրաժեշտի հալացք. — և դուրս յեկավ...

17. ԽՈՐԱՄԱՆԿ ՍԿԱՌՈՒՏԸ

Սկառուտանոցի ճանապարհին Ութսունիննը զգաց, վոր նա շատ եր առաջ անցել: Այդքան անզգույշ չպետք եր լինել: Ի՞նչ դուրս յեկավ... Իրեն կվճռեն և դպրոցում ամեն ինչ նորից նույնը կմնա: Իսկ ինքը կրկին սոված կթափառի և վոչնչով չի կարողանա ոգնել իր ընտանիքին... Բայց չե, նա կզնա ընկեր Միսակի մոտ, կհայտնի, վոր Կազաչի Պոստում կրոն են դասավանդում: Կոմունիստները կզան, կարգելեն կրոնի դասը: Իսկ իրեն՝ այլևս սկառուտանոց չեն ընդունի վոչ ամերիկացիները, վոչ սկառուտապետը...

Վոչ, ինչ ել վոր լինի, նա մեծ սխալ է գործել: Ա՛խ, յերանի ամեն ինչ նորից յետ դառնար, նորից սկսվեր առաջին դասը. նորից ներս մտներ Մելիք-Ջահանգուլյանը և հայտներ. — «սկսում ենք կրոնի դասը»: Այս անգամ Ութսունիննը ծպտուն չեր հանի...

Սակայն ուշ է և ահա ինքը գնում է սկառուտապետի մոտ — փողոց շարտվելու համար...

Նա արագացրեց քայլերը: Սկառուտանոցի դիմաց առաջին ջոկատը շարք եր կանգնել, իսկ յերկրորդ ջոկատապետ Լեոնը յերկաթե ձողի վրայից իջեցնում եր կտպույտ դրոշակը: Բայց այժմ այդ բոլորն Ութսունիննին չի վերաբերում: Նրա բաղձն արդեն վորոշված է: Նա անտարբեր կարող է անյանել և մտնել սկառուտապետի սենյակը...

Ըստ յերևույթին Գիրազն արդեն ամեն ինչ գիտեր: Նա հանգիստ նայեց ներս մտնող Ութսունիննին և մի ըրպե լուռ զննելուց հետո ասաց.

— Սկառուտապետըդ տնւր...



Ութսունիննը գրպանից հանեց և դողդողացող ձեռքերով հանձնեց այն փոքրիկ գրքույկը...

Ութսունիննը գրպանից հանեց և դողդողացող ձեռքերով հանձնեց այն փոքրիկ գրքույկը, վոր միայն յերկու որ առաջ եր ստացել: Այնտեղ գրված եր իր անուն-ազգանունը, ծննդյան և սկառուտ ընդունվելու թվերը, ծնողների անունը, իր ջոկատը և այլն: Այնտեղ կար «վոսկի եջ» ու «սև եջ», ուր պիտի գրվեյին սկառուտի լավ ու վատ արարքները: Մի վայրկյան Ութսունիննի մեջ շողաց հույսը և նրան թվաց, թե խնդիրը կարող է վերջանալ սև եջով: Բայց յերբ Գիրազն սկառուտապետը վերցնելով անփութորեն նետեց գրասեղանի դարակը, այդ վերջին հույսը միանգամայն չքացավ:

— Պատմիր, — առաջարկեց Քիրազը:

Յե՛վ այստեղ, Ութսուներեքի ծայր աստիճան լարված ուղեղում մի միտք հղացավ. — խաբել պետին: Մի վարկյան, միայն մի փոքրիկ վարկյան նա մտածեց, թե ինչպիսի վտանգավոր քայլ է անում և ինչքան դժվար է իր պես անփորձի համար՝ խաբել այդքան հասակավոր ու խելոք մի մարդու: Բայց սովամահ լինելու սարսափը նրան ուժ ներշնչեց և նա, ինքն էլ չի մանալով թե ինչպես, սկսեց.

— Պարոն սկառտապետ, յես ուզում եմ բողոքել քեզ՝ մի հիմար վարժապետի վրա: Ներողություն, վոր յես այդպես եմ անվանում նրան: Մտնում է դասարան ու բոլորի մոտ հայտարարում. — Սկսում ենք կրոնի դասը... Յեղամվ... Ազնիվ սկառտական խոսք, հանկարծ վոր քաղաքում իմանան, թե մենք կրոն ենք սովորում... Մի՞թե կարելի յե այդպիսի անզգուշություն, պարոն սկառտապետ... Ձի՞ կարելի, որինակ, մտնել դասարան և ասել. — սկսում ենք հայոց լեզվի դասը. այսոր մենք կքննադատենք ավետարանը... Որինակ, քաղաքի մի քանի դպրոցներում այդպես են անում...

Յերբ սկառտապետը ժպտաց, քիչ մնաց Ութսուներեքը ճշար ուրախությունից: Տասնապատկված վոգևորությամբ նա շարունակեց այս անգամ ձայնը ցածրացնելով:

— Քաղաքում արդեն վեց ամիս է, վոր կրոնի դասը վերացրել են... Հանկարծ կգան, այստեղ էլ կվերացնեն...

Քիրազը վեր կացավ և Ութսուներեքին գրկեց:

— Ճիշտ ես ասում: Նաև ճիշտ ես ասում, վոր ձեր ուսուցիչը հիմար մարդ է... Յես կդիմեմ դպրոցների վարչությանը...

Այս ասելով նա բաց արեց գրասեղանի դարակը և հանեց այնտեղից սկառտապետը: Բաց արեց վոսկի ելը և կարմիր թանաքով, մանր տառերով գրեց.

«Ութսուներեքը մեր սկառտանոցի գիտակից տղաներից մեկն է»:

Սկառտապետը գրպանը դնելիս, քիչ մնաց Ութսուներեքը ուրախությունից լաց լինելու: Նա դիմեց դեպի դուռը, բայց Քիրազը կանչեց նրա յետևից.

— Վերցրու այս շոկոլադը...

Ութսուներեքը շոկոլադը վերցրեց. մի կտոր կերավ հենց ճանապարհին, իսկ մյուսը պահեց իր քրոջ ու յեղբայրների համար: Շոկոլադը... Նա այդպիսի բան չէր կերել յերբեք իր կյանքում...

Վե՛յ, Ութսուներեքն այսուհետև ավելի զգուշ կլինիր... Նա ընկել է բոլորովին ուրիշ աշխարհ...

18. ՓՆՏՐՈՒՄՆԵՐ

Որերն անցնում էին, բայց Ութսուներեքին դեռ նորից չէին նշանակում զանգակատան պոստը գնալու: Վերջապես մի որ այլևս չհամբերելով, նա մի ազատ ժամ գտավ և գնաց այնտեղ: Վոլորապտույտ սանդուղքներով բարձրանալիս նրա սիրտը բարխում էր: Նա շտապում էր տեսնել Սաթիկին, վորի հետ ընկերացել էր ու համբուրվել: Նա գիտեր, վոր Սաթիկն ամեն որ սպասած կլիներ իրեն... Ահա սանդուղքը վերջանալու վրա յե, ահա կլոր սենյակը, ահա և այն դուռը...

Նա նայեց վերև, բայց զանգակատան պահակը չէր յերևում: Յենթադրելով, վոր նա լսած կլինի իր վտանաձայնը և վար կիջնի իրեն փնտրելու, նա վորոշեց նախ բարձրանալ նրա մոտ: Նա չէր ուզում, վոր ուրիշները Սաթիկի տեղն իմանային. Սաթիկը կարող էր մի ուրիշի հետ ընկերանալ և Ութսուներեքն նորից մենակ թողնել...

Թևի դեղին նշանից իմացավ, վոր զանգակատան պահակը չորրորդ ջոկատից է: Բարևեց, նստեց: Պահակն ուրախացավ. նա մենակ ձանձրանում էր: Շատ կմնա Ութսուներեքը:

— Վոյ, յես հենց հիմա կգնամ. — պատասխանեց Ութսուներեքը ցավակցությամբ, — յես յեկա միայն նրա համար, վոր մի քանի մոմի կտորտանք գտնեմ: Հարկավոր է...

— Կա. — հայտնեց պահակը հորանջելով. — ներքևի կլոր սենյակում, մյուս սենյակներում...

Ինչպես թե մյուս սենյակներում... Ութսուներեքի սիրտը թունդ յելավ: Ուրեմն պահակը յեղել է նաև մյուս սենյակներում...

Նա արագ վար վազեց և մտավ նստարաններով ու սեղաններով լիքը սենյակը:


Սաթիկը չկար...

Ինչո՞ւ... Ձե՞, վոր նա ասաց, թե ամեն որ գալիս է այստեղ... Ո՞ւր է Սաթիկը...

Ութսուներեքն սկսեց նրան փնտրել նստարանների արանքներում, սեղանների տակը, աթոռների վրա: Բայց նա, իսկապես վոր չկար:

Այդ ժամանակ Ութսունինն սկսեց գործ դնել իր սկառուտական դիտելիքները, վոր սովորել եր Ընձուզտ խմբակում: Որինակ, յեթե նստարաններից մեկի տախտակն ավելի տաք է քան մյուսները, նշանակում է նրա վրա քիչ առաջ մարդ է նստած յեղել...

Բայց իրոր նստարանները, բոլոր սեղաններն ու աթոռները հավասար ջերմություն ունեյին և Ութսունիննը չկարողացավ նրանցից վոչ մեկի վրա նկատել Սաթիկի մարմնի թարմ հետքը:



Ութսունիննը բարեկեց, նստեց: Պահան ուրախացավ: Նա մենակ ձանրանում եր:

Այս անգամ ինքը նստեց և սկսեց յերկար մտածել: Ախր ո՞ւր է Սաթիկը... Զգնալ արդյոք հինգերորդ վորբանոց և հենց այնտեղ նրան հանդիպել... Բայց հիշեց, վոր առանց գործի վորբուհիների հետ հանդիպելը խստիվ արգելվում է և հարկավոր է կառավարչին կամ դաստիարակչուհուն մանրամասն բացատրություն տալ հանդիպման պատճառի մասին... Իսկ Ութսունիննը վոչ մի պատճառ չունի: Նա պարզապես ցանկանում է հանդիպել ու մի քիչ խոսել նրա հետ, վորովհետև նա բարի աղջիկ է, նա իր ընկերուհին է և նման Լուսիկին...

Ութսունիննը տրտում վեր կացավ: Նախ վորոշեց մի գրու-

թյուն թողնել աղջկան, բայց հետո վախեցավ, վոր մի ուրիշը կարող է գրությունը կարդալ: Գուցե մոտից նա հառաչանքով նայեց այն սենյակին, վորի հետ կապված եր իր կյանքի լավ հիշողությունը: Հետո դուրս յելավ, դուռը դանդաղ ծածկեց, կարծես զգուշանալով քնած Սաթիկին արթնացնելուց... Մի քանի քայլ իջնելուց հետո նա նորից վերադարձավ, արագ բաց արեց դուռը և նորից մտավ ներս: Գուցե լավ չի փնտրել, գուցե այնտեղ է Սաթիկը:

Վոչ, Սաթիկ չկար:

Ութսունիննը դուրս յեկավ յեկեղեցուց: Նա՞ վաղն էլ կգա, այստեղ, մյուս որն էլ այն մյուս որն էլ... Ու յեթե այլևս Սաթիկին չհանդիպի, նրա ինչի՞ն է հարկավոր զանգակատան պոստը: Նա այլևս լարված չի լսի Սմբատին, վորպեսզի մի որ, պոստերը նշանակելիս նա վերջապես ասի.

— Ութսունինն՝ զանգակատուն...

19. ՔԱՂԱՔԻ ԿԱՐՈՏԸ

Քաղաքի կարոտը նոր ուժով սկսեց քաշել Ութսունինին: Նա վոչ կարողանում եր ուտել, վոչ խմել, վոչ դաս սովորել: Նրա աչքի առաջ կանգնում էին մեկը մյուսից ավելի սարսափելի պատկերներ: Ի՞նչ յեղավ իրենց ընտանիքը... Պառավ տատը, մայրը, քույրը, յեղբայրները: Ի՞նչ պատահեց նրանց հետ...

Մի գիշեր նա յերազ տեսավ, իբր թե իր ամենափորը, հինգ տարեկան յեղբայրը մեռել է: Արթնանալով, Ութսունիննը յերկար լաց յեղավ ու վորո՞ւնց փախչել քաղաք: Նույնիսկ հագնվեց, յելավ դուրս, բայց յերբ հովը դիպավ նրա ճակատին, նա սթափվեց և սկսեց մտածել. — Ի՞նչ կարող է անել, ինչի՞վ կարող է ոգնել, յեթե փախչի... Յեթե կարողանա ոգնել, ապա կկարողանա ոգնել միայն սկառուտ մնալով...

Յեվ նա վերադարձավ ննջարան, իր վորոշումը փոխած: Յերկու սկառուտներ, վոր արթուն հսկում էին իբրև սկառուտանոցի գիշերապահներ, ուշադրություն չդարձրին Ութսունիննի վրա: Քչի՞րն են գնում գիշերով արտաքնոց...

Մի ուրիշ անգամ, առավոտյան, — սրբիչով յերեսը չորացնելիս, Ութսունիննի աչքովն ընկավ շոկոլադի ծայրը, վոր յերևում եր բարձի տակից: Նա նորից լաց յեղավ, հիշելով ընտանիքը և պատկերացնելով, թե ինչպես իր փոքր յեղբայրներն ու քույրը

կխօսեցին այդ անծանոթ, համեղ առարկան: Իսկ յեթե նրանք իսկապես մեռել են... Ութսունիննը սարսափով ընդհատեց մտքերի թելը:

Հրաչը նկատեց, վոր Ութսունիննը նորից սկսում է լղարել: Ութսունիննը ուսերը թափահարեց: Ի՞նչ անի... Սակայն նա վոչնչին չպատասխանեց Հրաչին, ավելի լավ համարելով իր վշտի հետ մնալ մենակ...

Իրոշակախոսությունը, սկառուտական գիտելիքները, մարդանքը, ամենորյա շարքային վարժությունները, — այդ ամենն իրենց իմաստը կորցրին Ութսունիննի աչքում: Այդ ամենի փոխարեն, նրա ուղեղում տեղ գրավեց միայն մի միտք, տանջող ու հյուժող — ընտանիքը:

Մի որ, դասերից հետո, նրան բաժին ընկավ գերեզմանատան կողմի պատը կամ ինչպես ասում էին՝ գերեզմանատան պոստը: Իսկ Կազաչի Պոստն ողակող պատի մի մասն էր: Ութսունիննը պետք է հսկեր, վորպեսզի պատի վրայից մարդիկ չանցնեցին: Նա սկսեց պոստի յերկայնքով յետ ու առաջ գնալ, բայց շատ շուտով ձանձրացավ: Մի քիչ կանգ առավ մսի պահեստի մոտ, վոր գտնվում էր պատի տակ: Պահեստապետը մի նախկին մսագործ էր, վոր համաձայն հին սովորության, մսերը կախել էր պահեստի բաց դռների միջև, կարծես դա պահեստ չէր, այլ մսավաճառանոց: Սակայն այդտեղ ել հետաքրքիր վոչինչ չկար և Ութսունինն իսկույն հեռացավ այդտեղից:

Նա մտածեց. — ավելի լավ չի՞ լընի, յեթե վեր կենա ու ուստի պատի վրա...

Այդ մտքից վոզեվորված, նա արագ վազեց, փայտը դեմ տվեց գետնին և ցատկեց պատի վրա: Այ՛ թե՛ հետաքրքրություն, այ՛ թե՛ զբաղմունք: Այդ ի՞նչպես էր, վոր վաղուց չմտածեց այդ...

Հենց պատի տակից սկսած՝ փոփում էր գերեզմանոցը: Հազարավոր դեղին, կարմիր ու սև քարեր կանգնել էին խառնիխուռը, մեծ ու փոքր, կարճ ու յերկար... Նրանց միջև յերևում էին աղքատ մեռելների աղքատ հողաթմբերը:

Հանկարծ Ութսունիննը հիշեց. — հենց այստեղ մի քանի քայլ այն կողմ, հինգ տարի առաջ թաղեցին իր հորը: Այնուհետև Ութսունինն այդտեղ չի յեղել: Կգտնի արդյո՞ք հոր հողաթումբը...

Յե՛վ մոռանալով ամեն զգուշություն, նա պատի վրայից թռավ ներքև:

Վոչ, բազմաթիվ շիրիմների միջև նա իր հոր գերեզմանը գտնել չի կարող: Բայց այն միտքը վոր իր հայրը թաղված է այդտեղ, նրա հոգին լցրեց դառը տխրությամբ:

Բայց անա շիրիմաքարերի միջև յերևում է փայտե մի խաչ: Սովորական խաչ, վրան կպցրած մի կլոր թիթեղ: Ութսունիննը մոտեցավ խաչին, զարմանքով աչքերը տրորեց: Փայտի վրա ամրացված էր սկառուտական «Բարձրացիր, բարձացուր»-ը...



...նա արագ վազեց, փայտը դեմ տվեց գետնին և ցատկեց պատի վրա:

Սկառուտ էր թաղված. — իրեն պես մի սկառուտ: Վոչ անուն ազգանունը կար, վոչ նույնիսկ նրա համարը: Սկառուտ, վորք սկառուտ...

Ութսունիննը յերկար կանգնեց փայտե խաչի մոտ, նայեց: Ուղղեց թիթեղի մի անկյունը, վոր ծովել էր: Մաքրեց խաչի թևերի վրայից փոշին ու նորից բարձրացավ իր պատի վրա:

Հեռվում, գերեզմանոցի մյուս ծայրում, յերևում էր այն հսկայական հողաթումբը, վորի տակ թաղված էին Լուսինն ու

իր մայրը և նրանց հետ բոլոր այն մյուսները: Սակայն գնալ մինչև այնտեղ՝ Ութսուներկանը չէր կարող: Հանկարծ կարող էին սուլիչը տալ և պատասխան չստանալ: Հանկարծ կարող էին անցնել Գասպարը, Լևոնը, Մամիկոնը կամ ահռելի Սմբատը...

Յերբ արևն սկսեց մայր մտնել, գերեզմանոցի այն կողմից անցնող ճանապարհի վրա յերևացին սայլեր և մարդիկ: Գյուղացիները յերգում էին և ճիպոտները շարժում: Ութսուներկանի սիրտը քաղցրութեամբ լցվեց: Նշանակում է այնտեղ, քաղաքում արդեն վերակենդանանում է կյանքը, նշանակում է, ամեն առավոտ նորից գյուղացիները գնում են այնտեղ և քաղաքը լցվում է հազար բարիքով: Նորից խփում է առողջ կյանքի դարկերակը:

Իսկ ինքը, ինքը նստել է ահա այստեղ, այս պատի վրա և չի կարող քսան քայլից ավելի հեռանալ իր տեղից: Սովի սարսափը նրան կասկած է պահում Կազաչի Պոստին և նա, յեթե նիզակներով ել քշեն, քաղաք չի վերադառնա: Ընդհակառակը, դեռ կաշխատի այստեղ բերել թե իր քրոջը և թե... Վնչ, յեղբայրներին հնարավոր չի: Բայց ի՞նչ պիտի անեն նրանք...

Ութսուներկանը վորոշեց, վոր հենց առաջին անգամ, յերբ թույլատվութիւն ստանա և գնա քաղաք, աշխատի վորևէ գործ ճարել: Գտալ թե չե՞ իսկույն դուրս կգա սկառուտանոցից...

Խտացող խավարի միջով անցկացավ մարդատար գնացքը, վորը շտապում էր հասնել քաղաք: Լուսամուտների մեջ փայլում էին ելեկտրական ճրագները և յերևում էին մարդկանց գլուխները...

Լավ էր, վոր Ութսուներկանը անմիջապես ցած թռավ պատի վրայից: Իսկույն նրա մոտից անցավ առաջին շոկատապետ Գասպարը և տեսնելով Ութսուներկանին, մոտեցավ.

— Վոր շոկատից ես...

— Յերբորդ:

Գասպարը սկսեց նրան զննել: Նրա դեմքը բարկացած էր ու դաժան: Ըստ յերևույթին, նա ցանկանում էր Ութսուներկանին բռնած լինել վորևէ հանցանքի մեջ:

— Այստեղից սկառուտները չանցան...

— Չեմ տեսել:

— Ի՞նչպես թե չեմ տեսել. — գոռաց Գասպարը. — դու այստեղի պահակը չե՞ս:

— Այո: Բայց յես պոստն եմ հսկում...

— Լորբ... — և Գասպարը ձեռքը բարձրացրեց, բայց չխփեց:

— Չոկատապետ— շնջաց Ութսուներկանը. — յես ինչո՞վ եմ մեղավոր... Ախր յես...

— Լավ, — կտրուկ ընդհատեց շոկատապետն ու գնաց:

Յերբ նա հեռացավ, Ութսուներկանը դառնացած թքեց: Նրան շատ լավ հայտնի էր շոկատապետների սովորութիւնը. — նրանց միջև հավիտենական մի թշնամութիւն կար և նրանք միշտ փոխադարձաբար վարկաբեկում էին իրար: Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր ապացուցել, վոր մյուսի սկառուտներն անկարգապահ են, անպետք, անշնորհք: Ապացուցել, վոր շոկատապետը հոգ չի տանում նրանց վրա և նրանք չգիտեն սկառուտական կանոնները, պոստի կանոնները... Յեւ յեթե վորևէ շոկատապետի կամ սկառուտի հաշոյվում էր մյուս շոկատի վորևէ սկառուտից պոստի ժամանակ գողանալ նրա փայտը, այդ արդեն մեծ հաղթանակ էր նրանց կողմից և զարհուրելի խայտառակութիւն՝ պարտված սկառուտի վողջ շոկատի համար: Հրաչի պատմածի համաձայն, շոկատապետ Լևոնն անցյալներում այդպիսի մի հանցանքի համար շան նման ծեծել էր իր սկառուտներից մեկին և վնդռել տվել:

Քիչ հետո, Ութսուներկան իր պոստը հանձնեց ծանոթ միլիցիոներին, և սկսեց սպասել, վոր պահակատեղիներից վերադարձող սկառուտների խումբը գա և ինքը միանա նրանց:

20. ՊՈՍՏԵՐԻ ՎՐԱ

Պատահում էին սոսկալի պոստեր: Այնքան ձանձրալի, վոր ուզում է սիրտդ ճաքի՝ վոչինչ անել չես կարող: Որինակ, դպրուցի պոստը: Կանգնիր այնտեղ, տես թե ինչպես հեռվում խաղ են անում դասաժիջոցի դուրս յեկած աշակերտները, իսկ դու գոռանցիր ինքդ քեզ հետ խոսելով, կամ նայիր դաշտերի լայնարձակութեանը:

Ութսուներկանը մտածում էր. — արդյոք բոլոր պոստերն են այդպես, թե՛ կան նաև հետաքրքիրները: Վերջին որբը նա նկատել էր, վոր մի քանի սկառուտներ, շարք կանգնելուց առաջ խնդրում էին շոկատապետին՝ իրեն այս կամ այն պոստում նշանակել: Ու յեթե խնդրողը լինում էր շոկատապետի սիրելի սկառուտներից մեկը, նրա խնդիրը հարգվում էր:

Հենց իրենց շոկատում, Ութսուներկանը նկատել էր, վոր յերկու Վահանն էլ, — թե Սևը, թե Սպիտակը, համարյա միշտ նույն

պոստերում ելին նշանակվում: Սև Վահանը հայ արի յեր, իսկ Սպիտակը՝ Սմբատի մոտիկ ընկերներից մեկը:

Ցանկալի պոստերի մեջ ելին մտնում պահեստները, գլխավոր պոստը, մազութի պահեստը: Ինչո՞վ ելին այդ պոստերը հետաքրքիր, Ութսունինը պարզ պատկերացնել չեր կարող: Նա, որինակ մի անգամ պահակ էր կանգնել ուտելիքների պահեստի պատին Կազաչի Պոստի դրսի կողմից և ճիշտն ասած՝ վոչ մի հետաքրքրություն չեր գտել:

Պատահում էր, վոր մի ջոկատի պոստ կանգնելու միջոցին այդ ջոկատի վորևե սկառա զբաղված էր լինում: Այդ դեպքում թույլատրվում էր վերցնել մի այլ ջոկատի սկառա, յեթե նա այդ որը պահակած չէր լինում: Այդպիսի դեպքերում վայ այդ սկառաին. — նրան անպայման ընկնում էր Կազաչի Պոստի ամենասանպետք պոստերից վորևե մեկը...

Մի անգամ, Ութսունինը պահակ կանգնեց գրասենյակի դռանը: Դա ևս համարվում էր անպետք պոստերից մեկը: Դրա համեմատությամբ զանգակատունը, վոր գտնվում էր գրասենյակի հենց դիմացը, մի կատարյալ դրախտ էր:

Վերջին որերի, ընթացքում Ութսունինը մի քանի անգամ էր գնացել յեկեղեցի, Սաթիկին փնտռելու, բայց Սաթիկը չկար: Իսկ այժմ գրասենյակի դռանը կանգնած՝ նա նորից հիշեց նրան և հառաչելով գրպանից հանեց նրա համարը: Չորս հազար վեց հարյուր հիսուն չորս... Վերտեղ ես հիմա, չորս հազար վեցհարյուր հիսունչորսյերորդ վորբուհի, թանկագին Սաթիկ...

Չանգակատան ճաղերին կռթնած՝ ներքև էր նայում մի սկառա: Դժվար էր վորոշել նրա ով լինելը: Յերբ Ութսունինին թվաց, վոր նա դեպի իր կողմն է նայում, իսկույն փայտն առավ վոտների արանքը և դատարկ ձեռքերով սկսեց դրոշակախոսել. — հվ ես:

— Հրաչը, — յեղավ պատասխանը:

— Ի՞նչ կա հետաքրքիր:

— Վոչինչ, — հայտնեց Հրաչը, թեևրը համապատասխան ձևերով շարժելով:

Ութսունինը մի քիչ տատանվելուց հետո հարցրեց.

— Մենակ ես...

Նախքան պատասխանելը, Հրաչը խփեց ժամի չորս և կեսը: Ութսունինը սրտատրոփ սպասում էր: Վերջապես Հրաչը հայտնեց.

— Այո:



...նա շտապեց հեռանալ վտանգավոր դարձած պոստից:

Ութսուներկնը հանգիստ շունչ քաշեց և նորից խոսեց.

— Մի կտոր մոմ գցիր...

Հրաչը վերևում անհետացավ, ապա նորից յերևաց:

Նույն վայրկյանին, Ութսուներկնի վոտների մոտ ընկավ կարտոֆիլի մոմի մի հաստ կտոր:

Ի՞նչ հնարել դրանով, վոր հետաքրքիր լինի: Որինակ, ծամոն սարքել... Փորձեց, բան դուրս չեկավ: Ծամոնը չեր կպչում իրար: Ելի մտածեց և վոչ մի յեզրակացության չեկավ: Բարկ արևի տակ մոմի կտորն սկսեց կակղել:

Ութսուներկնի աչքն ընկավ մոտակա պահեստներին: Նրանց մուտքի մոտ կանգնած եր Սիոնը: Բանվորները ներսից պարկե-րով ինչվոր բան ելին բերում և բարձում ֆուրգոնները: Ութսուներկնը սկսեց հաշվել, թե մի ֆուրգոնի վրա քանի պարկ են դնում: Հետո յենթադրեց յուրաքանչյուր պարկի քաշը, բանավոր հաշիվ տեսավ, բայց սխալվեց: Ուզեց թուղթ հանել, բայց մոտը մատիտ չկար: Միտքն ընկավ մոմը: Նայեց գրասենյակի պատին: Պատը սև քարից եր շինած, վուրը փողոց ստացել եր մոխրագույն տեսք: Հարթ, միապաղաղ, մոխրագույն պատ: Հիանալի գրատախտակ ե... Ութսուներկնը գրպանից մոմի կտորը հանեց, մոտեցավ պատին, բայց հանկարծ, փոխանակ ֆուրգոնների խնդիրը լուծելու, խոշոր, հաստ տառերով գրեց. — Սիոն...

Իսկույն մոմը հալվեց: Ջեռացած քարի վրա սև, մեծ առուներով փայլեց կատաղի սկառտի անուկը: Ութսուներկնը սարսափեց: Նա այդպիսի բան չեր յենթադրում: Մոտեցավ, վոր մոմի մնացած կտորով ջնջի գրածը, բայց նույն ըոպեյին հեռվից յերեվաց չորրորդ ջոկատի տասնյակը, վոր գալիս եր իրենց փոխարինելու: Նա շունչը պահած հագիվ պատիվ տվեց իրեն փոխարինող սկառտին, պատիվ առավ և շտապեց հեռանալ վտանգավոր դարձած պոստից...

Մի ուրիշ անգամ նրան նշանակեցին վորբանոցների մի խմբի մոտ պահակելու: Սրտի հուզումով, նա հենց պոստի վրա լսեց, վոր վորբանոցներից մեկը հինգերորդն ե: Յեթե Սմբատի վախը չլիներ, նա անմիջապես կթողներ իր պոստն ու կվազեր այնտեղ:

Վորբուհիները, տեսնելով, վոր Ութսուներկնը դեռ անփորձ ե, հավաքվեցին նրա շուրջը և սկսեցին խնդրել.

— Սկահատ, թող քաղաք գնանք...

— Սկահատ, թող պոստից անցնեմ...

— Թույլ տուր գնամ տուն, սկահատ:

Ութսուներկնը մերժում եր բոլորին, բայց նրանք, մերժելու մեղմ ձևից վոզուրված՝ ավելի շատ ելին խնդրում:

— Սկահատ, ինչքան խիստ ես: Մյուս պահակները միշտ թողնում են մեզ: Դու ել թող...

Յեվ վերջապես, ձանձրանալով Ութսուներկնի մեղմ, բայց համառ մերժումից, նրանցից մի քանիսն արդեն պոստն անցան:

— Հետ դարձեք, — բղավեց Ութսուներկնը.

Վորբուհիները կանգ առան, բայց յետ չդարձան:

Ութսուներկնը զգաց, վոր յեթե վազի նրանց յետևից, պոստի վրա գտնվող բոլոր այն մյուսները կփախչեն չորս կողմերով: Նա չվար մտածում եր իր անելիքը: Հենց այդ ըոպեյին յերևաց մյուս պոստի պահակը, վոր իր կողմն եր նայում: Ութսուներկնը զայրացած, նախ քշեց պոստի վրա հավաքվածներին, ապա վազ տվեց պոստից դուրս յեկածներին յետևից, փայտը սպառնազին շարժելով:

Յերբ վորբուհիներն զգացին, վոր այս մեկն ել նման ե բոլոր մյուս սկառտներին, այլևս դադարեցին խնդրելուց և քաշվեցին իրենց գործերին:

Ութսուներկնը վճռեց վորևե վորբուհուց՝ իմանալ Սաթիկի մասին: Սակայն, յերբ կանչեց նրանցից մեկին, մի ամբողջ խումբ վազեց դեպի պոստը: Ստիպված՝ նա ձայն չհանեց, այլ քշեց նրանց:

Այդ ըոպեյին պոստի վրա յերևաց մի գյուղացի կին:

— Աշխեն, մայրիկդ, մայրիկդ, — բղավեցին չորս կողմից և վազեցին դեպի լղար ու փոքրիկ մի աղջիկ: Աղջիկը զարմացած նայեց, ապա վազ տվեց դեպի պոստը: Ութսուներկնի մոտ նա տխուր կանգնեց ու հարցրեց.

— Սկահատ, թույլ կտամ մորս տեսնեմ...

Ութսուներկնը նայեց նրա աղաչական աչքերին ու մրմնջաց.

— Գնա տես, բայց շուտ վերադարձիր...

Աղջիկը վազեց, մայրը գրկեց նրան: Ութսուներկնը սկսեց վախով շուրջը նայել: Վոչ վոք չկար:

Տաս ըոպե հետո, նա քայլերն ուղղեց դեպի վորբուհին: Մայրը նստել եր գետնին, գրկել եր նրան և նրանք զրուցում էին:

— Բավական ե, — շնջաց Ութսուներկնը, աշխատելով կուպիտ չլինել:

— Թող, բալա ջան, — աղերսեց կինը, — յերկու տարի յե, չեմ տեսել...

— Չե, գնամ, մայրիկ, — հառաչեց յերեխան. — կրարկանան սկառուտի վրա...

Յերբ մայր ու վորդի բաժանվեցին, աղջկա մոտ մնաց շորի մի փոքրիկ կապոց:

— Վերցրու մի քիչ, սկահուտ, — ասաց նա, կապոցը բաց անելով: — Վայրի տանձ ե:

Ութսուներեսը նայեց, բայց չվերցրեց:

— Վերցրու:

— Չեմ ուզում: Գնա, փոքրիկ, շնորհակալ եմ...

Մի քանի անգամ նորից խնդրեց յերեխան, բայց Ութսուներեսը չվերցրեց: Աղջիկն իսկույն վազ տվեց մյուս վորբուհիներին մոտ, նրանց հետ միասին ուտելու իր մոտ յեղածը:

Ութսուներեսը պոստից վերադարձավ սկառուտանոց, առանց Սաթիկին տեսնելու:

Մի այլ անգամ, նա պահակ կանգնեց ուտելիքների պահեստի պատի տակ, բայց այս անգամ Կազաչի Պոստի ներսի կողմից: Այդ ևս համարվում էր ցանկալի պոստերից մեկը, բայց վոչ այդ ժամերին:

Պահեստն արդեն փակ էր:

Ութսուներեսը մի հետաքրքիր զբաղմունք գտավ: Պահեստի դռները գետնից բավական բարձր էին և յուրաքանչյուր դռան դիմաց շինված էր քարե սանդուխներով մի բարձրություն: Նրանցից մեկի մոտ, գետնի վրա, ցցխաջուր կար: Ութսուներեսը հավաքեց մի քանի տասնյակ մեծ քարեր և կրեց պահեստի դռան մոտ: Հետո ինքն էլ բարձրացավ այնտեղ և սկսեց շրջփ, շրջփ, նետել ցցխաջրի մեջ: Շիթերը դես ու դեն էին ցայտում, ճառագայթաձև թրջելով շրջապատը:

Դիմացից, ճաշարանի խոհանոցի լուսամուտից, յերևաց խոհարարի զարմացած դեմքը: Հետո նա, յերեի յենթադրելով, վոր սկառուտն այդպիսով ուզում է ուշադրություն հրավիրել տալ իր վրա, կանչեց նրան լուսամուտի տակ:

Իսկույն լուսամուտը բացվեց և այնտեղից դուրս ձգվեցին խոհարարի մազոտ ձեռքերը, վորոնցից մեկում մի մեծ կտոր հաց կար, իսկ մյուսում, համարյա նույն մեծությամբ միս:

Այդ որը ճաշի ժամանակ Հրաչը զարմանքով նկատեց, վոր Ութսուներեսն ախորժակ չուներ:

Բայց վերջապես մի որ, Սմբատն Ութսուներեսին նշանակեց պահեստների շարքերից մեկը: Յեվ Ութսուներեսը սկսեց հասկանալ, թե ինչ էր պոստերի հետաքրքրությունը: Նրա պոստ կանգնելու հենց առաջին բոպներին մի բանվոր դուրս յեկավ պահեստից և նրա գրպանները լցրեց համեղ ջրով: Մի ուրիշ բանվոր նրան տվեց ամենամաքուր չամիչ: Ութսուներեսն իսկույն սպանեց իր մի գրպանը, մյուսը պահելով քրոջ ու յեղբայրների համար:

Այդ ուժ համար էր չիրն ու չամիչը պահեստներում... Մի բանվոր իբրև գաղտնիք, նրան հաղորդեց, վոր այդ ամենն Ամերիկայից ուղարկում են իբր թե վորբուհիների և սկառուտների համար, բայց ամբողջը յուրացնում են նույն ամերիկացի և հայ վարիչներն ու կառավարիչները:

Սկառուտներից շատերը ազատ յել ու մուտ էին անում պահեստը, բանվորների հետ մտնում էին պարկերի արանքը և այնտեղից դուրս էին դալիս ուռած գրպաններով: Միայն պահեստպետ Արտուրյանի յերևալն էր փախցնում նրանց, համարյա առանց բացառություն: Բացառությունը սարսափելի Սիոնն էր, վորից վախենում էին նույնիսկ պահեստապետները: Յերբ նա մտնում էր պահեստ նեղ աչքերը պլպլացնելով, Արտուրյանն ինքն էր նրան միջոց ու քաղցրավենիք առաջարկում:

Սիոնի յերևալուն պես, Ութսուներեսի մարմնով դող էր անցնում: Նախ նա հիշում էր Սիոնի փայտի հարվածն այն մարդու վտաններին, ապա հիշում էր «Սիոն» բառը, վոր ահա քանի որ է, ինչ անջնջելի փայլում էր գրասենյակի պատի վրա:

Մի որ, Ութսուներեսը Վարդանից իմացավ, վոր գլխավոր պոստը՝ դա Սիոնի մասնագիտությունն է: Բայց ինչ մասնագիտություն էր դա՝ հենց այնպես էլ նա չհարցրեց: Նա գիտեր միայն այն, վոր Սիոնի մասնագիտությունը Ֆուտբոլն էր: Ֆուտբոլ, վորը կազմում էր թե Սիոնի, թե չար դեմքով Ոհանի, թե Սմբատի և թե համարյա բոլոր մյուս սկառուտների զբաղմունքի գլխավոր առարկաներից մեկը...

21. ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պոստից ուշ փոխարինվելու պատճառով, Ութսուներեսը առաջին դասին ուղացավ: Յերբ մտավ ներս, բոլոր հայացքներն ուղղվեցին դեպի նա: Իրանից շփոթվելով, Ութսուներեսը հաղիվ հասավ իր տեղն ու նստեց: Պոստ էր անձանոթ ու նոր մի ուսուցիչ:

Յերբ Ութսունինն նստեց, նրա կողքի աղջիկը՝ Արշալույսը, սովորականից ավելի սիրալիր նայեց նրան և շնչաց.

— Սկսուտ, — մենք այլևս կրոն չենք անցնելու... Մեկիք-Ջահանգյուլյանին վռնդել են:

Ութսունիննը զարմացած ուզեց հարց տալ, բայց այդ ջր-պեյին ուսուցիչը նայեց նրանց:

— Յեվ այսպես, — շարունակեց ուսուցիչը. — այն դասը վոր մենք անցնելու յենք կրոնի փոխարեն, կոչվում ե տրամաբանու-թյուն: Տը-րա-մա-բա-նու-թյուն: Կրկնեցեք...

— Տը-րա-մա-բա-նու-թյուն, — յերգեց դասարանը:

— Այո, ճիշտ այդպես: Տրամաբանություն՝ նշանակում ե դատողություն: Նու, ասենք, մտքերի, գաղափարների ուսումնա-սիրություն: Հասկանալի՞ յե Մենք տարվա ընթացքում կվեր-ցնենք հին ու նոր գրվածքներ և կսկսենք նրանց մտքերն ու գաղափարներն ուսումնասիրել: Սկսենք աստվածաշնչից...

Այս ասելով, բաց արեց ամբիոնի վրա դրած հսկայական գիրքը:

Դասամիջոցի ժամանակ Արշալույսն Ութսունիննի հետ առանձ-նացավ:

— Սկսուտ, — ասաց նա փաղաքշական ձայնով, — ինչից ե, վոր դու այդքան համարձակ տղա յես...

— Ինչո՞վ եմ համարձակ. — հարցրեց Ութսունիննը:

— Մեր դասարանի մյուս սկառտները քեզ նման չեն: Այդ ինչպես ես անում, վոր խոսում ես վարժապետների դեմ և քեզ չեն վռնդում... Մեր բոլոր աղջիկները զարմացել են...

Ութսունիննը ձայն չհանեց: Արշալույսն սպասողական նա-յում եր նրա դեմքին: Տեսնելով, վոր տղան չի խոսում, նա շարու-նակեց.

— Սկսուտ, կրոնի դասը քո պատճառով վերացրին...

Ութսունիննը շուրջը նայեց, ապա շրթունքները մոտեցնելով աղջկա սպիտակ ականջին, շնչաց.

— Կրոնը չեն վերացրել... Անունն ես փոխել...

— Ինչո՞ւ...

Յեվ Արշալույսն սկսեց վախեցած նայել:

— Ինչո՞ւ, — կրկնեց նա:

— Վորովհետև կոմունիստները արգելում են կրոնը:

— Կոմունիստներն ո՞վքեր են:


— Ամենալավ մարդիկ:

— Ինչո՞ւ նրանք չեն ուզում, վոր մենք կրոն սովորենք: Խոթուքներ չեն...

— Չե, Հայեր են: Ասում են՝ կրոնը խաբում ե մարդկանց: Ասում են՝ կրոնը չի թողնում, վոր ճնշված մարդիկ կավեն իրենց շահագործողների դեմ: Կրոնն ասում ե. — վարժապետը կծեծի՞ հնազանդվիր, դաստիարակչուհին մազերը կքաշի՞ լսիր...

Արշալույսը զարմացած լսում եր:

— Ինչ կոմունիստներն ի՞նչ են ասում. — հարցրեց նա:



Ութսունիննը մի ուրիշ թղթի վրա գրեց. — հետո կբացատրեմ...

— Կոմունիստները... նրանք ասում են՝ մի հնազանդվիր, այլ բողոքիր... Կովիր...

Արշալույսը վախեցավ:

— Ի՞նչ վոր վռնդե՞ն, սկառտ...

Ութսունիննը հանկարծակի յեկավ: Նա սկսեց մտածել:

— Ինձ թվում ե, — պատասխանեց նա քիչ հետո, — վոր յեթե բոլորը միասին բողոքեք, դիմադրեք, խո բոլորիդ ել չեն վռնդի: Ի՞նչ ես կարծում...

— Չենք փորձել, — խոստովանվեց Արշալույսը:

Նրանք լռեցին:

— Գիտե՞ս, աստված չկա, — սկսեց նորից Ութսունիննը:

— Ե՛հ, այդ արդեն սուտ ե, — ժխտեց Արշալույսը:

Ութսունիննը վերավորվեց:

— Ազնիվ սկաուտական խոսք, — պնդեց նա, — աստված չկա: Ամեն ինչ բնութայուն է:

Բայց այդ բոլորին զանգը տրվեց և նրանք գնացին դասարան: Աղջիկներն սկսեցին նախանձով նայել Արշալույսին:

Սկսվեց հայոց լեզվի դասը, սակայն վոչ Ութսունիննը վոչ Արշալույսը, տրամադրություն չունեցին դաս լսելու: Մի անգամ, յերբ ուսուցիչը կոտցավ գրքի վրա, Արշալույսը սեղմվեց սկաուտին և ականջին շշնջաց:

— Բա վոր աստված չկա, յերեխա վճնց և լինում...

Ութսունիննը զգուշությամբ յետ հրեց նրան, վախեցած նախազգուշացնելով:

— Վարժապետն այս կողմն է նայում. հետո կբացատրեմ...

Քիչ հետո, նա մի թղթի կտորի վրա մի քանի խոսք գրեց ու գրեց Արշալույսի առաջ:

— Յերեխային ել, մեծին ել ստեղծում է բնութայունը...

Արշալույսը հարցական նայեց: Չեր հասկանում: Ութսունիննը մի ուրիշ թղթի վրա գրեց:

— Հետո կբացատրեմ. միայն թե խնդրում եմ ասածներս գաղտնի պահես: Թե չե՛ ինձ ել կվճռեն, քեզ ել... Յեթե բան է, կուզենաս ուրիշներին պատմել, պատմիր միայն ամենահավատարիմ ընկերուհիներիդ...

Նստարանի տակից Արշալույսն իր ձեռքը սողացրեց դեպի սկաուտը և սեղմեց նրա ձեռքը, իբրև անկեղծ յերդում:

22. ԱՆՄԱՆՈՒ ԼԵՁՈՒ

Հրաչը մտավ սկաուտանոցի ընթերցարանը և խորհրդավոր տոնով Ութսունիննին դուրս կանչեց: Յերբ նրանք իրենց զգացին մենակ, Հրաչը ձեռքը գրպանը տարավ և այնտեղից հանեց մի ծալած թղթի կտոր:

— Ի՞նչ բան է...

— Չեմ հասկանում, Ութսունինն... Գլուխ ճաքեցրի, չկա բողացա հասկանալ: Անձանոթ լեզվով է գրված...

Ութսունիննը վերցրեց թուղթն ու նայեց: Գրված էր հայերեն. ստանդարտ, բայց բառերը հասկանալ չեր կարելի:

— Անգլերեն խո՞ չի, Հրաչ...

— Չե, ինչ անգլերեն: Նրանց տառերն այդպես չեն, վոչ ել բառերը: Մի՞թե ձեր դասարանում անգլերեն չեք անցնում...

— Անցնում ենք, — պատասխանեց Ութսունիննը, — բայց յես միայն դեռ տառերը գիտեմ: Գուցե՞ սա անգլերեն բառեր են, հայերեն տառերով...

— Վնչ, վոչ, — շտապեց հակաճառել Հրաչը:



— Չեմ հասկանում, Ութսունինն: Անձանոթ լեզվով է գրված...

— Լավ, ինչ լեզվով ուզում է լինի: Ի՞նչն. յես հետաքրքրվում:

— Հրաչը ձայնը ցածրացրեց:

— Գարեգինի թղթերի միջից՝ ընկավ...

— Այդ արդեն ուրիշ բան է: Այդ արդեն բոլորովին ուրիշ բան է: Ութսունիննը նորից թուղթը՝ ձեռքն առավ, ավելի ուշադիր կարդալու համար: Բայց և այնպես, հասկանալ վորևե բան՝ հնարավոր չեղավ: Նրանք յերկար մտածեցին, ապա հանկարծ Հրաչն առաջարկեց:

— Յեա մի խելոք սկառու գիտեմ: Գնանք նրա մոտ: Գուցե նա բացատրի...

Նրանք գնացին գրասենյակ: Այնտեղ, հեռախոսակայանում, գիշերային հերթապահության եր նստել մի սկառու, Վազգեն անունով: Սակայն վերջին ըոպային Ութսունիննը սեղմեց Հրաչի ձեռքը և աչքով արավ: Հրաչը թղթի մասին Վազգենին վոչինչ չասաց և մի քիչ զրուցելուց հետո նրանք վերադարձան:

— Ո՛վ գիտե՛ ինչ ե գրված... Գուցե գաղտնի բան է... Գարձյալ մեզ պիտի մեղադրեն, վոր հետաքրքրվում ենք, փոխանակ հանձնելու տիրոջը...

— Այն... — համաձայնվեց Հրաչը:

Նրանք գնացին քնելու, հետևյալ առավոտյան Հրաչը լեկավ Ութսունիննին հայտնելու, վոր թուղթն իր բարձի տակից գողացել են:

— Ձի կարող պատահել, — ապշեց Ութսունիննը: — Գուցե ուրիշ տեղ ես զրել կամ կորցրել ես...

— Վո՛չ, գողացել են... Ինչ վոր մեկը գիշերով քրքրել է համարյա բոլորի բարձերի տակն ու հագուստները, մինչև վոր թուղթը գտել է: Մեր ջոկատի տղաներից մի քանիսը առավոտյան գտել են իրենց հագուստները խառնոտած: Վոչինչ չի կորել, բայց հագուստները խառնվել են...

Ութսունիննը արագ շուռ տվեց բարձն ու նայեց: Վո՛չ, շոկոլադն ու չիրն այնտեղ էին և վոչ վոք վոչինչ չեր վերցրել:

— Ձեմ հասկանում, — հայտնեց նա Հրաչին, հանելուկից գլուխը հոգնած:

23. ՍԵՎ ՋՈՎԱՏԻ ՀԱՅ ԱՐԻՆ

Մեծ ննջարանում տեղավորված էին առաջին չորս ջոկատների մահճակալները: Չորս շաբաթերից յուրաքանչյուրը մի ջոկատ էր: Վերջին յերկու ջոկատները տեղավորված էին փոքր ննջարանում:

Ութսունիննը շատ սակավ էր լինում փոքր ննջարանում և ավելի սակավ էր հանդիպում «ոգնողների» ու «սևերի» հետ: Սակայն նրանց աջ թևերին խփված թիթեղե փոքրիկ յեռանկյունիների նկարներից գիտեր, թե նրանցից ով ինչ արհեստ ունի: Նրանց մեջ կային ատաղձագործներ, հյուսներ, ներկարարներ, դարբիններ, կազմարարներ... Կային և այնպիսիները, վո-

րոնք, յերեք-չորս մասնագիտություն ունեյին և յերեք-չորս յեռանկյունիներ էյին կրում իրենց թևի վրա: Յեվ ահա, այդ «սևերից» մեկի հետ էր, վոր պատահաբար սերտ հարաբերություն մեջ մտավ սկառու համար Ութսունիննը:

Այս սկառուի անունը Միհրան էր և նրա դիտարկի վրա հայ արիի նշան կար: Իսկ աջ թևի վրա՝ յերեք յեռանկյունի: Առաջինի վրա՝ մի գնդան, յերկրորդի վրա՝ սղոց ու դուր, իսկ յերրորդի վրա՝ կազմարարական գործիք: Միհրանը դարբին էր և մյուս արհեստներով բոլորովին չեր զբաղվում: Յերբ նա բանթողից հետո վերադառնում էր սկառուտանոց, նրա յերեսն ու ձեռքերն ամբողջովին սևացած էյին լինում: Հանելով իր բանվորական կապույտ զգեստը, նա ժպտերես լվացվում էր ու մաքրվում: Նրան նայելիս Ութսունիննը մի տեսակ մխիթարվում էր, զգալով, վոր սկառուտանոցում բոլորը չեն դաժան ու չար և նրանց մեջ կան Միհրանի նման հանգիստ մարդիկ:

Յեվ իսկապես — Միհրանը սքանչելի տղա յեր յերևում: Ո՛վ ասես, վոր նրա հետ կատակ չեր անում, ո՛վ ասես, վոր նրան չեր չարացնում, բարկություն փոխարեն միայն ժպտ ստանալով նրանից:

Մի անգամ, որինակ, նա սկառուտանոց յեկավ տարորինակ բեռով: Վազրի նման նրա շալակն էր թռել յերկրորդ ջոկատի կարճահասակ Ավետիսը և փաթաթվել էր նրա վզով: Իսկ նա, յերկարահասակ ու մեծամարմին, լոք-լոք գցում էր իր վոտները և ծիծաղում: Նա, ի հարկե կարող է մի լվի նման Ավետիսին պոկել իր վրայից, բայց չեր անում: Սկառուտները ծափահարություններով ուռաներով դիմավորեցին նրան, իսկ զարմացած սկառուտապետը լուսամուտից գլուխը դուրս հանեց:

Հենց նույն յերեկոյան, Ութսունիննը վորոջեց նրա հետ մտերմանալ:

Հարմար առիթ պատահեց ընթերցարանում: Միհրանը նըստել էր և ինչ վոր դասագիրք էր թերթում: Ութսունիննը մոտեցավ նրան:

— Սկանու, իմ դանակի բերանը բթացել է, կտանձա՞ ձեր արհեստանոցում սրելու:


— Տուր...

Յեվ Միհրանը դանակը վերցրեց:

Կես ժամ հետո Ութսունինն այնքան էր մտերմացել նրա հետ, վոր արդեն պատմում էր նրան խորհրդավոր թղթի գտնելվին ու անհետանալը:

— Ա՛... — գլխի ընկավ Միհրանը: — Գիտեմ դա ինչ թուղթ ե: Զարմացած Ութսունիննը նորից հարց ու փորձ արեց Միհրանին, բայց նա հանկարծ լրջացավ ու վեր կացավ, առանց խոսելու: Յերբ Ութսունիննը դուրս գնաց ընթերցարանից, նրան ապշեցրեց մի այլ նորություն. — Հրաչն իր մահճակալի տակից գտել եր կորցրած թուղթը...

— Յեկ արտագրենք, առաջարկեց նա, — թող մի որինակ քեզ մոտ մնա, իսկ մի որինակ ել ինձ մոտ: Մեկը կորչելու դեպքում, մյուսը կմնա...



— Սկսուա, իմ դանակի բերանը բթացել է. կտան՞ն ձեր արհեստանոցում սրելու:

Նրանք մտան ընթերցարան: Ութսունիննը թուղթն ու մատիտը վերցրեց, նստեց, Հրաչը նստեց նրա կողքին և շուկով սկսեց թելադրել: Նրանք աշխատում էին ամեն ինչ գաղտնի կատարել, դրա համար ել, հենց վոր մի մարդ եր մոտենում, իսկույն թողնում էին գործը և իբր թե խորասուզվում ընթերցանության մեջ:

Յերբ արտագրությունը կեսից անցել եր, հանկարծ մոտեցավ Գարեգինը: Տղաներն իսկույն թողեցին արտագրությունը: Գարեգինը մոտեցավ Հրաչին, համարյա զոռով խլեց նրա առջև դրած

գիրքը, իբր թե վերնագիրը նայելու համար և միջից հանելով իր թուղթը, կատաղած մոմոաց:

— Ինչո՞ւ յես պահել... Միևնույն ե, վոչ մի բան չես հասկանա...

Այս ասելով, նա հեռացավ: Բարեբախտաբար, թղթի արտագրելը նա չեր նկատել:

Ութսունիննը ու Հրաչը հեռու մի տեղ ծածուկ նայեցին արտադրությանը: Այնտեղ գրված էին հետևյալ անհասկանալի բառերը.

Ծեհորիդբառ խտահուկ գեհիս բեծ ոսք անիգեհիս, իյհեծ աֆեգիձ րածագահիֆգեհը՝ խտաուկագոձուֆ տաչֆուֆ եգճ նափկգի ֆիուպրուգ, տոֆուգի խկատագ նափաղահգեհի շեֆ տլձեու...

— Ուրեմն իմ բարձի տակից գողացուց Գարեգինը չեր յեղել... — յեզրակացրեց Հրաչը:

— Ճիշտ ե: Բայց ուրիշ ո՞վ կարող եր լինել, — հարցրեց Ութսունիննը: Մի՞թե ուրիշները գիտեցին թղթի կորչելու մասին...

— Գիտելին, — հաստատեց նա. — Գարեգինը հայտարարություն եր փակցրել պատին: Յերեի չես կարդացել...

Մոտեցան մի քանի սկաուտներ և տղաների խոսակցությունն ընդհատվեց:

24. ԴԵՊԻ ԲԱՂԱՔ

Վերջապես յեկավ այն ուրը, յերբ Վահան Բիրազը ցանկացավ լսել սկաուտների պահանջները, վոչ թե ջոկատապետների միջոցով, այլ անձամբ իրենցից: Յեվ անա, դեռ վաղ առավոտից, մի անագին հերթ կանգնեց նրա դռան առաջ:

Գարեգինը, ինչպես միշտ, սկաուտանոցի՝ հիշատակարանը թեի տակ, յել ու մուտ եր անում Բիրազի մոտ: Մի անգամ նա լուր բերեց, վոր սկաուտապետն արդեն վերջացրեց նախաճաշը: Մի ուրիշ անգամ, հավաքվածների անհամբեր հարցերին պատասխանեց, վոր Բիրազն ատամներն ե քչփորում և պատրաստվում ե սկաուտներին ընդունել:

Այս խոսքերից քիչ հետո, Բիրազը զանգը տվեց և առաջին սկաուտը ներս մտավ:

Շուտով հերթը հասավ Ութսունիննին: Նա ներս մտավ և շփոթված կանգնեց սենյակի կենտրոնում:

— Ի՞նչ ունես ասելու:

— Պարոն սկառտապետ... — Ութսունիննը կակաղեց. — պարոն սկառտապետ, իմ քրոջը վորբանոց չէ՞ք ընդունի... Նա...

— Այդ մասին դիմիր վորբանոցների վարչությանը, — ընդհատեց Քիրազը:

Ութսունիննի շունչը կտրվեց: Ինչպէս թե... Վարչությանը... Ուրեմն, մինչև այժմ նա կարող եր դիմել: Իսկ հիմա պետք է դուրս գնալ: Աստուծո, վոր հենց սկզբից չխնդրեց քաղաք գնալ:

— Ուրի՞շ... — հարցրեց սկառտապետը:

Ութսունիննը ուրախացած, իսկույն վրա տվեց:

— Պարոն սկառտապետ, թույլ տվե՞ք գնալ քաղաք... Բոլորովին քաղաք չեմ գնացել...

Քիրազը մի թղթի կտորի վրա գրեց թույլտվությունը, Ութսունիննը համարյա հափշտակեց այն ու դուրս թռավ:

Ուրեմն նա գնում է տուն... Տեսնելու յե իր ընտանիքին... Նա արագ մտավ ննջարան, բարձի տակից վերցրեց շոկոլադն ու չիրը և դուրս յեկավ: Գլխավոր պոստի մոտ, վորտեղից պետք է անցներ, նա պահակ սկառտին տվեց իր թույլտվությունն ու առաջ անցավ:

Հենց վոր Ութսունիննը պոստից դուրս յեկավ, վոնց վոր մի ծանր քար նրա կրծքի վրայից վերցնես: Նա խորը, խորը շունչ առավ ու քայլերն արագացրեց: Կարծես նա պոկ եր յեկել մի կախարդական շրջանակից, վորի միջից դուրս գալն անկարելի յեր: Այժմ նա իրեն զգում եր ազատ, իր գլխի տերը...

Տարրինակ եր: Կազաչի Պոստի ներսում, չնայած բավական լայնարձակ տարածություններին, նա իրեն ազատ չեր զգում: Շարունակ հիշում եր, վոր ինքը, այս տարածությունը, այս ամբողջ Կազաչի Պոստը շրջապատված է պահակներով: Իսկ այժմ, նա ազատ է: Մինչև յերեկո ազատ... Հիմա դեռ առավոտ է: Նա կարող է գնալ՝ ուր վոր ուզենա, անել՝ ինչ վոր ցանկանա: Ի՞նչ պես թե... Ազատ... Առաջվա նման...

Բայց ա՛հ, դիմացը փռվել է քաղաքը: Հիսուն կամ հարյուր քայլից հետո նա կհասնի նրա առաջին շենքերին: Քաղաքը... Ընտանիքը...

Նրա սիրան սկսեց բարախել, իսկ շտապ քայլերից շունչը կտրվում եր: Ախր յերբ պիտի հասնի...

Իր դիմացը, ճանապարհի վրա յերկացին յերկու սկառտներ: Նրանք ել ելին քաղաք գնում: Տեսնես ուրիշ ել ո՞վ է գալիս: Ութսունիննը յետ դարձավ, նայելու համար: Նա տեսավ մի սկառտի, վորը չգիտես ինչու, աշխատեց թագնվել նրանից: Ութսունիննը ճանաչեց նրան, — նա հեռախոսակայանի հերթապահ Վազգենն էր, — և բղավեց: Տեսնելով, վոր թագնվելն անհնար է, Վազգենը մոտեցավ:

— Բարե, Ութսունինն, քաղաք ես գնում...

— Այո... Յեկ միասին գնանք:

Վազգենը տատանվեց:

— Չեմ կարող, — շնջաց նա. — դիմացից գնացող սկառտներն ինձ կնկատեն... Կարող են նաև յետևից ուրիշները գալ... Յես ճանապարհս պիտի փոխեմ...

— Ինչո՞ւ...

— Յես հավատում եմ քո ազնվությանը, Ութսունինն: Դու վոչ վոքի չես ասի, այնպես չէ: Յես այսօր քաղաք եմ գնում առանց թույլտվության: Քիրազն ինձ մերժեց, վորովհետև յես անցյալ շաբաթ ել եմ քաղաք գնացել...

Ութսունիննը պատիվ տվեց ու բացականչեց:

— Վոչ վոքի չեմ ասի: Սկառտական ազնիվ խոսք...

Վազգենն իր ճանապարհը թեքեց, իսկ Ութսունիննը շարունակեց գնալ համարյա վազելով:

Տուն... Տուն... Դեպի տուն... Թպրտում է սիրտը, լարվում են վոտները, կտրվում է շունչը: Ահա նա մտավ քաղաքի առաջին փողոցը: Դա արհեստավորների փողոց է: Իրենց փոքրիկ, մրոտ խանութներում նրանք ահա աշխատում են. — դարբիններ, պղնձագործներ, թիթեղագործներ: Ահա այս անկյունում պառկեցրել են մի յեզան, չորս վոտները պարանով կապել են մի փայտից ու պայտում են: Պայտոը մեխն է խփում, իսկ յեզան տերն ոգնում է նրան: Տուն, տուն, դեպի տուն...

Շուկայում ահագին մարդիկ կան: Արև, աղմուկ, աշխուժություն: Մի մարդ հայելի յե ծախում: Արևն ընկել է հայելու վրա: Ութսունինն նայում է և նրա աչքերը խողտում են: Հին պանդոկի բակում ու դարբասի մոտ, փողոցում, կանգնած են գյուղերից յեկած գյուղացիների սայլերը, ֆուրգոնները: Յեզները թրիքի մոտ նստած հանդարդ վորոճում են, իսկ ձիերը, գլուխները դեպի ֆուրգոնները դարձրած կանգնած, ուտում են իրենց գլխից կախված տոպրակների գաբին, ֆոնչացնելով ու գլուխ-

ները թափահարելով: Բայց ահա Ութսունինը դուրս ե գալիս շուկայից: Աղմուկը, մարդիկ, ձայները մնում են յետևում: Նա թեքվում է մի փողոց և ահա բնակարաններ են ու վոչ մի խանութ չկա: Իսկ փողոցներն ամայի յին: Մարդ չկա: Միայն մի քանի յերեխաներ են լսող անում մի պատի տակ:

Ութսունիննի սիրտն այնպես եր բաբախում, վոր նա վախենում եր: Ահա այս անկյունից վոր թեքվի՝ յերկրորդ տունն իրենցն է: Նրա աչքերը մթնեցին: Նա չգագաց, թե ինչպես շուռ յեկավ իրենց փողոցը, ինչպես բաց արեց դարբասը և ինչպես հայաթը մտավ: Բայց այս ինչ բան է, իրենց տանեցիներից վոչ վոք չկա: Միթե բոլորն ել ներսումն են: Նա հասավ իրենց բնակարանի դռանը, կամացուկ յետ հրեց ու փայտե, ճոճացող սանդուխքով բարձրացավ սենյակ...

Մայրը նրան չնկատեց: Նա մենակ եր և փալասի մի կտորով պատերի փողին եր մաքրում: Իսկ յերբ նկատեց, չճանաչեց: Իսկ յերբ ճանաչեց՝ ճչաց ու լաց լինելով գրկեց տղային:

— Ո՞ւր են մերոնք, — շշնջաց Ութսունինը, վախենալով պատասխանից և վախենալով իր սրտի սարսափելի խփոցից:

— Մի վախենա, վորբանոցումն են, — հանգստացրեց մայրը:

— Սուտ ես ասում...

Յեվ Ութսունինն սկսեց աղեկտուր լաց լինել, կարծես իր քրոջ ու յեղբայրների մահվան լուրը լսելով:

— Ի՞նչ ես լաց լինում, այ գիժ, յես քեզ ասում եմ, վոր վորբանոցումն են: Մարիամը՝ քաղաքի վորբանոցներից մեկում, փոքրը, Հարությունը՝ Պոլիգոնում...

— Իսկ Արտաշեսը...

— Արտաշեսը... Նա Բաթում է գնացել: Վենետիկ անունով մի քաղաքից վարդապետ եր յեկել: Նա մի քանի յերեխաների հավաքեց, վոր տանի իրենց քաղաքը, նրանց վարդապետ դարձնելու: Գաղտնի պլտի տաներ: Յես ել չգիտեմ. — հիմի Արտաշեսը դեռ Բաթումի՞նն է, թե նրան արդեն տարել են...

Այստեղ լաց յեղավ վոչ մի միայն Ութսունիննը, այլև մայրը:

— Իսկ տատի՞ն, տատի՞ն...

— Նա գյուղ է գնացել Բարեկամների մոտ: Գյուղում ապրելն ավելի հեշտ է...

— Իսկ դ՞ու ինչով ես ապրում...


— Հաց եմ ստանում: Հազիվ ոգտում ե առավոտից յերեկո...

Իսկ դու կ՞ուշտ ես լինում, վորգիս...

— Յես լավ եմ ապրում, մայրիկ: Իսկ պոստ կանգնելը՝ դժվար չի: Շատ հետաքրքիր է... Վոչ վոք չի ապտակում, վոչ վոք քիթ ու պուռնգ չի ջարդում: Դու ինձ համար մի անհանգստանա, մայրիկ...

Մայրը դիտում եր տղային, նրա հագուստները: Նա ուղղեց նրա գոտին, կտրեց փողկապի ծայրից կախ ընկած թելը և հարցրեց.

— Սոված խո չե՞ս... Մի քիչ հաց կա...



Նա հասավ իրենց բնակարանի դռանը, կամացուկ յետ հրեց...

— Չե, մայրիկ, սոված չեմ: Իսկ քեզ համար չիր եմ բերել: Հետո՞ շոկոլադե...

Նա հանեց գրպանից իր ունեցածը և դարսեց սեղանին: Մայրը կերավ մի չիր, իսկ մնացածը պահեց:

— Կտանենք Մարիամին: Դու սկառուտ ես, քեզ թույլ կտան նրանց վորբանոցը մտնելու: Իսկ հետո, յեթե ժամանակ մնաց, կգնանք Պալիգոն, Հարությունի մոտ...

Մայրն շտապեց վերջացնել տուն մաքրելը: Ութսունինն սկսեց շուրջը նայել: Ահա իր արկղը, վորի մեջ իր դասագրքերն են ու տետրակները: Ահա նայե գրքերն ու տետրակները: Ահա Արաաշեսի ու Հարությունի խաղալիքները... Նրանք թողել են այդ բոլորն ու գնացել, սովից ազատվելու համար: Ինչ տխուր է, ինչ վատ է...

Ութսունիննը բաց արեց իր արկղը և հանեց այնտեղից մի տետրակ: Հետո դրեց տեղը: Չեր ուզում նայել: Տխրում եր: Հետո հիշեց, վոր ամբողջ ժամանակ կովում եր Մարիամի հետ և չեր թողնում, վոր նա իր գրքերն ու տետրակները նույն արկղում դնի: Հենց հիմա յել, Մարիամի իրերը փոշոտվում են թախտի տակ...

Ութսունիննը ցավ գգաց: Հավաքեց բոլորն ու խնամքով դարսեց արկղի մեջ: Հետո նույնպես հավաքեց յեղբայրների խաղալիքները, նույնպես լցրեց իր արկղի մեջ և տախտակը խնամքով դրեց վրան:

Տեսնես՝ պիտի գամ այնպիսի ժամանակ, յերբ նորից հավաքվի իրենց ցրված ընտանիքը, նորից բաց անեն արկղը, հանեն այնտեղից իրենց գրքերն ու դաս սովորեն: Հանեն իր յեղբայրներն իրենց խաղալիքներն ու խաղան...

Տեսնես՝ պիտի գամ այնպիսի ժամանակ, վոր հացը դնեն սեղանի վրա, ուտեն, դեռ մի պուճուր ել ավելանա... Հետո՞ պանիր լինի... Թեյ...

Ութսունիննը կծկվել եր իր տարիքից մեծ վշտի տակ: Նրա բաց սրունքերի մսերը դողդողում եյին. — կարճես նրանք ել եյին հեկեկում...

Տեսնես պիտի գամ այնպիսի ժամանակ...

Մայրն ավելել վերջացրեց, գլուխը կապեց մի շորով և Ութսունիննի հետ դուրս յելավ: Նա դուռը փակեց իրենց մեծ, ծանր բանալիով և նրանք գնացին դեպի Մարիամենց վորբանոցը: Մայրը մի թղթի մեջ փաթաթած՝ ձեռքում բռնել եր մի քանի չիր ու մի կտոր շոկոլադ...

25. ՆՈՐԻՑ ԴԵՊԻ ՅԵՏ

Ինչպես որն անցավ, ինչպես մթնեց և յեղավ վերադառնալու ժամանակը: Ութսունինն ու իր մայրը հագիվ կարողացան հանդիպել Մարիամին, իսկ հետո գնացին Պալիզոն:

Հարությունին հազցրել եյին վորբական մոխրագույն խալաթ և գլուխն ածիլիլ եյին: Նա տխուր նստել եր պատի տակ: Մայրն արտասովեց: Տեսնելով մորն ու յեղբորը, Հարությունը վազեց, լաց յեղավ և այլևս չեր ուզում վերադառնալ: Նա ուզում եր տուն գնալ: Վորբանոցում լավ չի: Այնտեղ բոլոր յերեխաներին ձեծում են...

Յերբ նրանք հեռացան, յետևներից դեռ յերկար ժամանակ լսվում եր Հարությունի լացը...

Յեվ այսպես՝ մթնեց: Ութսունիննը մոր հետ յեկավ մինչև տուն, ապա հրաժեշտ տալով գնաց, խոստանալով շուտով ելի գալ:



Յերբ նրանք հեռացան, յետևից դեռ յերկար ժամանակ լսվում եր Հարությունի լացը:

Նորից ճանապարհը՝ Այժմ արդեն, շուկան դատարի եր և բոլոր խանութները փակ եյին: Փակ եյին նաև պանդոկի բնագին դարբասները: Շրջապատը մութն եր և միայն դիմացը, հեռվում, բարձրավանդակի վրա, պլպլում եյին Կազաչի Պոստի կրակները:

Ութսունիննը դուրս յեկավ քաղաքից դեպի ճանապարհը: Ճանապարհի յերկու կողմերում փովել եյին քաղաքի բոստան-

ները, վորոնց միջով, հանդարտ ու անձայն՝ հոսում եր փոքրիկ մի առու: Ճանապարհից հեռու, բոստանների զլխներին շինված իրենց փոքրիկ տնակներում նստել էին բոստանչիները և ոչախ էին վանել: Նրանց առաստաղի գերանները թարմ կտրված ծառերից էին և այժմ նրանք ճյուղեր ու տերևներ էին արձակել: Մի ճյուղ, դեռ կոկոն տերևներով՝ դուրս եր յեկել լուսամուտից: Նա վողողված եր փոքրիկ լամպի լույսով:

Տնակների շուրջը փովել էին մարգերը — կանաչեղենի, կարթոֆիլի, կաղամբի, վարունգի ու դդումի մարգերը: Իսկ մարգերի ափերին՝ որորվում էին յերկար արևածաղիկները...

Ինչքան լավ եր այդ բոլորը... Ինչքան գեղեցիկ եր ազատ կյանքը: Յեվ ինչքան մոայլ եր նայում Կազաչի Պոստը դիմացից՝ իր ծանր գորանոցներով ու տրտում վորբանոցներով:

Բայց պետք է գնալ... Պետք եր գնալ, սովամահ չլինելու համար: Պետք եր նորից մտնել պոստից ներս, զգալ, վոր դու նորից համարյա բանտում ես և քեզ արգելված է պոստից դուրս գնալը: Պետք է գնալ, այո...

Բայց Ութսունինն զգաց հանկարծ, վոր հարկավոր է գնալ վոչ միայն սովամահ չլինելու համար, այլև ուրիշ բանի... Պետք է գնալ, վորովհետև այնտեղ են Սաթիկն ու Աչիկը, Միհրանն ու Հրաչը, Արշալույսն ու Վարդանը...

Պետք է գնալ...

26. ՏԵՈՒՐ ՈՐ

Տխուր առավոտ բացվեց Ութսունիննի վրա: Սկսվեց հենց այնտեղից, վոր յերկինքը թուխպ եր և արև չկար: Չնայած այն հանգամանքին, վոր տան հոգան այլևս նրան առաջվա պես չեր տանջում, դարձյալ նա չեր կարողանում հանգստանալ: Նրա ականջներում դեռ հնչում եր իր փոքր յեղբոր լացը: Նա դեռ հիշում եր քրոջ փոշոտ տնտրակներն ու յեղբայրների անտեր մնացած խաղալիքները: Յեվ ահա, այս հոգսերի հետ միասին հանկարծ լսում է զազազած Միոնի ձայնը.

— Ո՛ւր ե, ճ՛վ ե գրել պատի վրա: Այս յերկու՝ որ ե, վոր փնտրում եմ: Սկանտներ, խոստովանվեցեք, ապա թե վոչ, յեթե բռնեցի կապանեմ... Ա՛խ, յեթե մի գիտենայի, թե վո՞ր որն է գրված յեղել... Կփնտրե՞յի այդ որվա պահակներին... Կգտնե՞յի մեղավորին... Ո՛վ ե գրել...

Բանից դուրս յեկավ, վոր ամերիկացիները տեսել էին կեղտոտված պատը և բողոքել: Լուրը հասել եր Քիրազին: Իսկ Քիրազը յենթադրելով, վոր դա Միոնն ինքն է գրել, պատժել եր նրան մտրակի յերեք ծանր հարվածներով: Շատ սակավ եր պատահում, վոր արիւններից մեկը պատժվեր, այն ել այդպես:

Ութսունիննը սարսափեց: Ի՞նչ կլինի իր դրությունը, յեթե իմացվի, վոր ինքն է հանցագործը... Բայց ինչո՞ւ պիտի իմացվի: Մյո՞ւ մասին գիտե միայն Հրաչը, վորը պահակ եր զանգակատանը: Իսկ նա, պարզ է, վոր վոչ վոքի չի ասի:

— Յեվ այն ել ինչո՞վ են գրել, — շարունակում է զբաղվել Միոնը. — վոչ վոք չի կարող ասել, թե ինչով են գրել: Մազոթ է. — մազոթ չի: Նե՞րկ է, ներկ չի... Լվանում ես՝ մնում ե: Քե՛րում ես, քարը տաշվում է, իսկ տառերը մնում են: Ա՛խ, թե՛ կգտնե՞յի, թե՛ ձեռքս կընկներ...

Կատաղած վագրի նման շրջում եր Միոնը սկառտանոցում և յուրաքանչյուր սկառտ, — մանավանդ շարքայիններն ու փոքրահասակները, շտապում էին խուսափել նրան հանդիպելու անհաճ պատահականությունից:

Կարծես բոլորը խոսք մեկ էին արել, այդ որն արտահայտել իրենց բարկությունը և դրանով զցել Ութսունիննի տրամադրությունը: Հետեյալ դեպքը, վորին ականատես յեղավ Ութսունիննը, վերաբերում եր Աչիկին:

Ութսունիննը նրան հանդիպեց դաշտի մոտերքում: Նա ճանաչեց յերեսային ու կանչեց իր մոտ:

— Ո՛ւր ես գնում, Աչիկ:

Աչիկը դժկամությամբ մոտեցավ և նույնիսկ չպատասխանեց սկառտի հարցին:

— Դու խո ինձանից չես նեղացել, Աչիկ...

— Նեղացել եմ, — թոթովեց յերեսան:

— Ինչո՞ւ յես նեղացել:

— Ի՞նչու յեկար, — բացատրեց Աչիկը: — Դու վոր չե՞այի Կազաչի Պոստ, ի՞մ յեղբայրը կգար... Խուժան չեր մնա...

— Նա յեկ կգա, Աչիկ ջան...

Բայց յերեսան չեր հավատում...

— Ել չի գա: Ել ուրիշ սկառտ չեն ընդունում...

— Կընդունեն:

Աղջիկը թերահավատ նայեց և ուզում եր հեռանալ:

— Ուզո՞ւմ ես յեղբորդ գտնեմ, — հանկարծ առաջարկեց Ութսունիննը:

Աղջիկը չհավատաց:

— Սուտ ես ասում:

— Կգտնեմ, ազնիվ խոսք: Մյուս անգամ վոր քաղաք գնամ, անպայման կհանդիպեմ: Նա վժրտեղ է:

— Բաղարում... Միրզ է փախցնում: Վոր գնաս, կտեսնես: Ասում են՝ ձեռքին կեռ յերկաթ ունի: Գյուժ է ժրգին ու տանում:

— Բա քեզ ինչո՞ւ չի հանդիպում, Աղջիկ...

— Վախեցնում է, վոր ծեծեն: Լավ շոր չունի... Խուժանի շորերով է:

Մի դաստիարակչուհի, — հասակավոր կին, վոր հեռվից ծածուկ մոտենում էր, հանկարծ բռնեց վախեցած Աչիկի մազերից և րդավեց.

— Մյուս անգամ կգնաս կանաչ ուտելու, հա՛, մյուս անգամ կգնաս...

Ութսունիննը փորձեց բռնել կնոջ թևից, բայց նա յետ շարտեց սկառտին և հեկեկոցի մեջ խեղդվող Աչիկին ծեծելով քարշ տվեց վորբանոց:

Յերբորդ դեպքը պատահեց դպրոցի պոստի վրա: Ութսունիննը գնացել էր դպրոց, վերցնելու այնտեղ մոռացած իր մատիտը: Յերբ շենքից դուրս յեկավ, նրա ականջին հասավ Սմբատի դռոցը: Նա բարկանում էր պահակ սկառտի վրա:

— Ախր ինչո՞ւ յես կախ արել կանաչ ժապավենը, սրիկա... Դու արժանի՞ յես դրան... Ախր բավական է: Ահա յերկրորդ անգամն է, վոր Գասպարը նկատողութուն է անում քեզ: Բավական է, լակոտ, քո պատճառով յես եմ խայտառակվում...

Այս ասելով, Սմբատը դետին գլորեց պահակին և իր ծանր կոշիկներով սկսեց ջարդ ու փշուր անել նրան: Հարվածեց այնքան, վոր հոգնեց: Հետո քարշ տվեց նրան, կանգնեցրեց վտաքի վրա և փայտը տվեց ձեռքը:

— Հիմա յերևի չես համարձակվի պոստի ընթացքում աշակերտների հետ զրույց անել...

Բայց փայտը պահակի ձեռքից ընկավ վար, վորից հետո ընկավ ինքը, սկառտը: Սմբատը շուրջը նայեց և տեսնելով Ութսունիննին, րդավեց.

— Ի՞նչ, դու ազատ ես... Ախ, չորրորդ հերթին ես պահակելու: Շատ լավ: Դե յեկ, մի բոպե կանգնիր այստեղ, յես ուրիշին կուղարկեմ քեզ փոխարինելու...

Այս ասելով, Սմբատը փայտը տվեց նրան, իսկ ինքը գրկելով անզգա սկառտին, տարավ նրան հիվանդանոց...

Յերկար նայեց Ութսունիննը Սմբատի յետևից և սկսեց մտածել:

Ի՞նչն է այդպես կատաղի դարձրել ջոկատապետի բնավորութունը: Նա կարող է սպանել սկառտներին, թեև, ըստ յերևույթին նա ևս ունի իր սրտի բարի մի անկյուն: Ահա նա գրկել է սկառտին և տանում է: Ինչպիսի քնքշությամբ է վարվում նա նրա հետ: Կարծես ինքը չէր քիչ առաջ նրան ծեծողը...

Յեկ հանկարծ, Ութսունիննի գլխում ծագեց մի հիմար, անհիմն միտք: Մի միտք, վոր զուրկ էր վորևե լուրջ դատողությունից: Ութսունիննը վորոշեց, ինչ գնով էլ լինի ուղղել Սրմբատին:

Քիչ հետո, յերբ յեկավ մի սկառտ և փոխարինեց իրեն, նորից Ութսունիննը սկսեց թափառել Կազաչի Պոստով ու մտածել. — մինչև պոստի կանգնելը գեռ յերկու ժամ կա: Ի՞նչ անել այդքան ժամանակամիջոցում, այս տխրությունից ու ձանձրույթից ազատվելու համար...

Նա հիշեց, վոր Միհրանն իր դանակը դեռ չի վերադարձրել: Այլ լավ առիթ արհեստանոց գնալու և աշխատանքը դիտելու համար: Իսկույն Ութսունիննը քայլերն ուղղեց դեպի այն կողմը, վորտեղից զալիս եյին ծեծվող յերկաթի, սողոմող փայտի, պտուղով փոկերի ու դարձող մեքենաների ձայներ: Դարբնոց գնալուց առաջ նա մտավ փայտամշակման մասը, ուր, դազգահների յետևում կանգնած, բանվորներն ու սկառտները չարխում եյին սեղանի ու թախտի վտոներ, զանազան կարիքների համար կլոր կամ նախշած փայտամասեր, փայտյա ամսեններ, յերեսայի խողալիքներ, հոլեր... Այդպես շրջելով բոլոր արհեստանոցները, նա գնաց դարբնոց և ստացավ հիանալի սրած իր սկառտական դանակը:

Նա դուրս յեկավ դարբնոցից և իր քայլերն ուղղեց սկառտանոց: Նրա ականջներում դեռ ժժում եյին արհեստանոցի ձայները:

Սմբողջ սև ջոկատն այնտեղ էր — արհեստանոցներում: Մոտ յերեք ջոկատի չափ էլ, մոտ հարյուր քսան հոգի, — բանվորներն եյին: Իսկ ինչքան բանվորներ կան պահեստներում, մյուս արհեստանոցներում, ուր ինքը չկարողացավ լինել, փուժում, խոհանոցում, վորբանոցներում... Մոտավոր հաշվով Կազաչի Պոստն ունի հազար բանվորներից ու ծառայողից ավելի...

Ութսունիննը նկատեց մի բնորոշ հանգամանք. — սև ջոկատի սկառուտներն աշխատում էին բոլոր արհեստանոցներում, բացի փոխից: Դե, իհարկե, այնտեղ հաց կա: Իսկ այդքան շատ հացի հետ սկառուտը գործ չպիտի ունենա: Դե, կարող ե գաղտնի կերպով մի կտոր հաց տալ իր ընկեր սկառուտներից մեկին ու մեկին: Իսկ դա՞ միայն կհասցնի ամերիկական նպաստամատույց կոմիտե- յին... Ավելի լավ է, թող փողում միայն բանվորներն աշխատեն, վորոնց ընտանիքն ու ընկերները հեռու յեն, — քաղաքում, ուստի և նրանք հաց գողանալու շահագրգռություն չունեն: Կուտեն՝ ինչքան փորները կտանի, վորովհետև միևնույնն է, իրենց գրպա- նում պահած մի կտոր հացն անգամ կխլեն իրենցից, բանթողի ժամանակ խուզարկելիս:

Յերևի ինչան շնորհակալության, վոր Ութսունինն իր հեր- թից դուրս պոստ եր կանգնել դպրոցի մոտ, Սմբատը նրան նշանակեց ուտելիքների պահեստի պատը՝ Կազաչի Պոստի դրսի կողմից: Յե՛վ Ութսունինն այս անգամ վորոշեց վերջնականապես պարզել թե ինչու՞ն է կայանում այդ պոստի զբաղվածությունը: Սակայն վորքան գլուխ ճաքեցրեց, վոչինչ չկարողացավ հասկա- նալ: Պահեստի դռներն այդ կողմից բաց չէին, ուստի չեր կա- րելի ներս մտնել և մի բան ուտել: Ել ի՞նչ կար հետաքրքիր. — անցնող սայլերը, թե՛ մոայլ դեմքով այն բանվորը, վոր ժամը մի անգամ յերևում եր պատի յետևից և աղբ եր թափում ներքև...

Բայց ահա, պատի յետևում նորից յերևաց այդ բանվորը և իրեն կանչեց:

Ութսունիննը մոտեցավ:

— Հը, լավ է, — հարցրեց բանվորը, ժպտալով:

— Ի՞նչը... — զարմացավ Ութսունիննը:

Բայց այդ բոպելին, յերևի պատի այն կողմով մարդ ան- ցավ: Բանվորն շտապեց յետ քաշվել: Ութսունիննը վոչինչ չհաս- կացավ:

Կես ժամ հետո, բանվորը նորից յերևաց:

— Ել ուզում ես, — հարցրեց նա:

— Ախր ի՞նչ...

— Հիմար, — բացականչեց բանվորը, — տես ինչ եմ թափել քեզ համար...

Ութսունիննը արագ մոտեցավ աղբին և նրա աչքերը փայլե- ցին: Թղթի կտորտանքի և ջարդված կարտոնների ու ապակի- ների միջև ընկած էին ընտիր թուզի լիքը տուփեր, մի քանի

շոկոլադ, մի փոքրիկ տոպրակ կանֆետ և թիթեղե մի կտոր տու- փով ձկան խավյար...

Ահա՛ թե ինչու՞ն է բանը: Ահա՛ թե ինչով է լավ այս պոստը...

Նա գլուխը վեր բարձրացրեց, շնորհակալության համար, բայց բանվորը չեր յերևում: Ութսունինն իսկույն խժոնց ամեն ինչ, բացի մի տուփ թղից ու խավյարից, վորը պահեց Հրաչի հետ միասին ուտելու համար:

Որվա տխրությունն սկսեց չքանալ:



...Ընտիր թուզի լիքը տուփեր, մի քանի շոկոլադ, մի փոքրիկ տոպրակ կանֆետ և թիթեղե մի կտոր տուփով ձկան խավյար...

Սկառուտանոց վերադառնալիս, Ութսունինն ավելի ուրախա- ցավ՝ մի նորությունից. — Սիոնն ուրախ է: Սիոնն այլևս չի փնտոնում իր հակառակորդին: Այսոր Սիոնը հարստացել է...

Ինչպե՞ր պատահել եր այսպես: Ինչպես հաճախ, այդ որն ևս, Սիոնը գնացել եր պահեստները, վորևե բան ուտելու, վորևե բան վերցնելու: Յե՛վ ահա, հագուստի պահեստի մոտից անցնելիս, պատահաբար մտել եր ներս:

— Քիչ մնաց չմտնելի, — պատմում է նա: — Բայց վրոնց վոր մեկն ասի՝ մտիր, Սիրոն, չես զղջա... Մտա... Պահեստապետը հայտնեց, վոր Ամերիկայից հազուստեղենի նոր կապոցներ են ստացել: Ասի՝ ո՞ւր են... Ասավ՝ վաղը կգաս, կնայես, Սիրոն: Ասի՝ ո՞ւր են, տեղն ասա... Ասավ՝ կասեմ, բայց բաց չանես, Սիրոն... Ասի՝ սկառուտական անգնիվ խոսք, բաց չեմ անի... Տեղը ցույց տվեց: Յերեք սովորական կապոց՝ ամեն մեկը տասյերկու փութ... Դանակով բաց արի յերկաթե կապերը: Պինդ եր կավված: Հենց վոր յերկաթը դեն գնաց, կապոցն ինքն իրեն բացվեց: Վոչինչ չկար մեջը. — միայն գլխարկներ: Չղայնացած՝ բաց արի մյուս կապոցը: Ելի վոչինչ չկար. — պինջակ ու շալվար: Մեկ ել նայեմ, մի շալվարի գրպանը խշխշում է: Ձեռքս կոխեցի, հանեցի՝ ի՞նչ հանեմ. — հարյուր քսան դոլլար... Հի՛, հի՛, հի՛... Հարյուր քսան դոլլար: Մյուս կապոցն ել բաց արի, բոլոր գրպանները խառնեցի, ել բան չգտա: Հարյուր քսան...

Յեվ իբրև ապացույց, նա ֆուռացնում եր ձեռքում բռնած թղթադրամի դաստան:

Մյուս սկառուտները նախանձում եյին Սիրոնին, բայց դժբախտաբար նրա տեղը լինել՝ չեյին կարող: Ինչ վոր թույլատրվում է նրան, նրա նման հայ արիներին, արգելվում է իրենց: Սիրոնից բոլորը վախենում եյին և նա մուտք ուներ ամեն տեղ:

— Իսկ պահեստապետը չնեղացավ, վոր բաց եյիր արել, Սիրոն...

— Ծիծաղեց...

Այս խոսքից հետո, Սիրոնը, բոլորի ներկայութամբ իր գումարը դրեց իր փոքրիկ սնդուկի մեջ և առանց կողպեքը փակելու դրեց մահճակալի տակ: Ո՞վ կհամարձակվեր ձեռք տալ Սիրոնի ունեցածին...

27. ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ութսունինն ու Հրաչը, թուզն ու խավյարը միասին կերան, շրթունքները լպտեցին և սկսեցին զրուցել: Վերջին որերի նրանց մտահոգություն առարկան անձանոթ լեզվով գրած թուղթն էր:

— Ափսոս, վոր կեսը հազիվ արտագրեցի, — շնչաց Ութսունիննը:

— Ինչեբրիս է պետք, — հուսահատ բացականչեց Հրաչը. — միևնույն է, վոր վոչինչ չենք կարող հասկանալ:

Նրանք լռեցին: Ամեն մեկն իր համար մտածում եր: Յեվ հանկարծ, Ութսունինն ուրախ վեր բաձրացրեց գլուխը:

— Հրաչ, — հարցրեց նա, — հեռախոսակայանի Վազգենը կարո՞ղ է կարդալ:

— Յերևի: Նա շատ խելոք տղա յե: Չորրորդ դասարանից: Ազատ խոսում է անգլերեն, Փիլիսոփայական գրքեր է կարդում. — գիտե՞ս, անհասկանալի բաների մասին...

— Կալ, — վճուցեց Ութսունիննը, — գնանք նրա մոտ...

— Ի՞նչպես թե գնանք, — ապշեց Հրաչը. — Եթե դու անցյալ որն ասում եյիր, վոր նա կարող է մատնել...

— Գնանք, հիմա նա չի կարող մատնել: Յես մի գաղտնիք գիտեմ, վոր յեթե բաց անեմ, նա կորած է:

Ապա բերանն ականջին մտեցնելով բացատրեց.

— Բաղաք է գնում... Առանց թույլտվություն...

— Այդ դեպքում գնանք, — համաձայնվեց Հրաչը և նրանք դուրս յեղան:

Գրասենյակում լույս կար: Ըստ սովորություն, գրասենյակը վողջ զիշերը բաց եր և այժմ, միլիցիոները գրասենյակներին մեկի յետևում նստած հսկում եր իր պոստը, պարապությունից հաշվիչի մատները չըրկացնելով:

Ութսունինն ու Հրաչը լուսամուտների մոտից սահելով, մտան հեռախոսակայան:

Վազգենը, հեռախոսափողն ականջին դրած, ննջում եր: Լսելով վտանաձայներ, նա սթափվեց ու վեր կացավ: Սկառուտները բարևեցին նրան ու նստեցին:

— Զրոսնում եք, — հարցրեց նա, ինքն ել նստելով:

— Չե, քեզ մոտ յեկանք:

— Յերևի հեռախոսով քաղաքի հետ խոսելու:

— Չե, հենց այնպես, զրուցի:

— Կալ արեցիք, ձանձրանում եյի:

— Իսկ ի՞նչ, այստեղից հնարավոր է քաղաքի հետ խոսել:

— Հնարավոր է, բայց չի թույլատրվում: Իսկ յես, մեր սկառուտներին գաղտնի թույլ եմ տալ ս:

Ութսունինն ու Հրաչն ուրախացան այդ մտերիմ խոստովանություն համար:


— Յերկուսդ ել յերրորդ ջոկատից եք, այնպես չե՞, — հարցրեց Վազգենը, — ապա նկատելով նրանց ժապավեններն ու համարները, Բեգրակացրեց. — հա՛, իհարկե, համար ութսունիննը և իննսուն:

Լոսցին: Ութսունինն սկսեց հաշվել. — համար մեկինց մինչև քառասուն՝ առաջին ջոկատ: Քառասուն մեկից ութսուն՝ յերկրորդ ջոկատ: Հետո ծուլացավ շարունակել:

— Ձեր դպրոցներն արձակվել են, — նորից հարցրեց Վազգենը:

— Վաղվանից այլևս չենք տեսնվելու:

— Այ թե հետաքրքիր կլինի, հա... Մի որ առավոտյան



Սա հայերեն է, բայց գրված է պայմանական նշաններով:

կգնանք պոստի, մի որ ցերեկով, կամ ճաշից հետո, կամ յերեկոյան:

Լավ կլինի...

— Ձահրուժար կլինի, — ջղայնացավ Հրաչը. — քո գրիժդ ավելի հետաքրքիր է:

— Միթե, իսկ յես այստեղ եմ ձանձրանում: — Ամբողջ վեց ժամ, մինչև կես գիշեր...

Ութսունիննը գրպանից թուղթը հանեց և մոտենալով Վազգենին, խորհրդավոր շնչաց.

— Սա չէս կարդա...

— Ի՞նչ բան է, — նույնպես շունջով հարցրեց նա:

— Չգիտեմք: Անծանոթ լեզվով է գրած...

Վազգենը թուղթը վերցրեց և սկսեց յերկար դիտել:

— Անծանոթ լեզվով չի գրած: Սա հայերեն է:

Ութսունինն ու Հրաչը զարմացած նայեցին իրար:

— Այո, հայերեն է, բայց գրված է պայմանական նշաններով: Սա կոչվում է գաղտնագրութուն... Շիֆր...

— Ի՞նչ...

— Գաղտնագրութուն: Այսինքն մի տառի փոխարեն մի ուրիշ տառ են գրում: Մարդ դրա որենքը պետք է իմանա, վոր կարողանա կարդալ: Այ, որինակ, իմ կարծիքով այստեղի խտառկ բառը նշանակում է սկառու: Ուրիշ ի՞նչ բառ կա, վորի մեջ ա և ու տառերն իրար կողքի լինեն: Սկառու և խտառկ, նման են իրար, տղաներ: Ինչպես յերևում է, սրա միայն բաղաձայներն են փոխված, իսկ ձայնավորները նույնն են...

Սկառուտները լուռ լուռ եյին նրան, թե զարմացած և թե վախեցած:

— Յես շատ շնորհակալ եմ, վոր յեկաք, — ժպտաց Վազգենը. — յես այլևս պարապութունից չեմ ձանձրանա: Դրանով կգրադվեմ...

— Միայն թե, — նախազգուշացրեց Ութսունիննը, — զգուշ յեղիր, վոր ուրիշի ձեռքը չընկնի և հատկապես՝ Դարեգինի ձեռքը: Շատ ենք խնդրում...

— Լավ, լավ, — հանգստացրեց Վազգենը:

Բայց լավը բավական չեր. — սկառուտական ազնիվ խոսք եր հարկավոր: Յեվ խորամանկ Ութսունինն սկսեց.

— Վազգեն, յես սկառուտական ազնիվ խոսք եմ տալիս քեղ, վոր վոչ վոքի չեմ ասի քո գաղտնի քաղաք գնալու մասին... Վազգենը հասկացավ:

— Սկառուտական ազնիվ խոսք եմ տալիս, — ասաց նա իր հերթին, — վոր այս թուղթը վոչ վոք չի տեսնի և նրա մասին վոչ վոք չի իմանա...

Ութսունինն ու Հրաչը դուրս յելան:

Մժբատն Ութսունիննին մի անգամ ևս նշանակեց զանգա-
կատան պոստում: Ութսունինն այնտեղ գնաց անտարբեր, վորով-
հետև, գիտեր, Սաթիկին այլևս չէր հանդիպելու:

Սակայն վորովոր սանդուղքներով վերև բարձրանալիս, նո-
րից նրա սրտում հույսի մի շող ցոլաց: Յերբ հասավ կրոր սեն-
յակը, նրա սիրտն ուժեղ բաբախում էր: Նա բաց արեց ցանկալի
սենյակի դուռը: Վհչ, Սաթիկն այնտեղ չէր...

Կոտրված տրամադրություններ նա բարձրացավ զանգակատուն:
Յերբ զանգը խփեց, նորից ներքև իջավ կրոր սենյակը: Իհարկե
ափսոս, վոր Սաթիկը չկա, բայց վորևե բանով զբաղվել հար-
կավոր է: Նա շարժական փայտե սանդուղքն ամուր դրեց պատն
ի վեր և բարձրացավ դեպի այն դռնակը, վորը տանում էր յեկե-
ղեցու թիթեղե ծածկի տակ:

Մտավ ներս: Կեսորի արևից թիթեղը չափազանց տաքացել
էր և այժմ նրա տակ սոսկալի տոթ էր — բաղանիքի նման: Ութսունինն
իսկույն քրտնեց և սկսեց ծանր շնչել: Գալիս էր
կիզացած թիթեղի ներկի հոտը և հոտը տաքացած հողի, վորով
սփռված էր այդ վերնատան ամբողջ հատակը:

Աջ ու ձախ կողմերում ծածքը հետզհետե իջնում էր, ցածրա-
նում, նեղանում: Այդ տեղերում մութն էր և Ութսունիննը հա-
մարյա վախենում էր: Բայց իր գլխավերևում, դարձյալ աջ ու
ձախ կողմերում, բացվում էին կտուրի յերկու շարք կիսակրոր
լուսամուտներ: Ութսունիննը կանգնեց վտտների ծայրերի վրա,
բաց արավ նրանցից մեկի ապակին: Իսկույն նրա դեմքին խփեց
դրսից փչող ողի թարմ հոսանքը: Նա մի քիչ զովացավ և շարու-
նակեց առաջ քայլել: Նրանից վախեցած, իսկույն մի քանի աղավ-
նիններ թևերը թափահարեցին և լուսամուտներից մեկի կոտրված
ապակուց դուրս թռան:

Ութսունիննի վտտը մի փափուկ բանի կպավ: Նա նայեց
ներքև ու տեսավ մի մեռած աղափլի: Կոացավ, վերցրեց: Թշնա-
մին ծակել էր նրա վիզը, ծծել էր արյունը և նրա արնաքամ
դիակը թողել էր այնտեղ...

Քիչ հետո Ութսունիննի աչքերը վարժվեցին կիսախավարին
և նա զարմանքով նկատեց հողե հատակի վրա, այս ու այն կողմն
ընկած բազմաթիվ աղափլիների, բոլորի վնասներն էլ ծակոտած...

Նա հասկացավ: Այդ վամպիրն է արել: Մի մութ անկյունում
թաքնված՝ նա հետևել է իր զոհերին և ապա հանկարծ հարձակ-
վել է նրանցից մեկի վրա: Այդ, իհարկե յեղել է գիշերով, վորով-
հետև վամպիրը գիշերով լավ է տեսնում: Նա բռնել է աղափլի-
ներից մեկին, նրա քնքուշ ու թպրտացող մարմինն առել է իր
ձանկերի մեջ ու սուր ատամներով ծակել է նրա յերակը...

Մյուս աղափլիները վախից ճչացել են խավարի մեջ, թևերն
են թափահարել ու փախչելու փորձ անելով՝ դիպել են թիթեղին:
Ջնգացել է թիթեղը...

Կամ այդ արել են առնետները:.. Նրանք էլ են սիրում ծծել
աղափլիների արյունը: Նրանց բերանի առջև չորս հատ սարսա-
փելի ատամներ կան, յերկար ատամները: Յերկուսը վերևում, իսկ
յերկուսը ներքևում...

Վամպիրն է յեղել, թե առնետը, միևնույն է: Գիշերվա խա-
վարին այդ թիթեղե թակարդը դարձել է հիանալի ճաշարան:
Թշնամին արնաքամ է արել քանիսին վոր ցանկացել է: Սավա-
րում թպրտացող աղափլիներից յերևի շատ քչերն են գտել ճա-
նապարհը դեպի ջարդված ապակին, դեպի դուրս...

Ութսունիննը բաց արեց բոլոր լուսամուտները: Թող աղավ-
նիներն աղատվելու ավելի շատ հնարավորություն ունենան...

Հանկարծ Ութսունիննին թվաց, թե այդ մեռած աղափլինե-
րից մեկը Սաթիկն է: Նա վախեցավ: Հետո հիշեց կրոր սենյակը,
հետո զանգակատունը, հետո զանգը և սարսափից քարացավ: Նա
ուշացել է: Նա նորից մոռացել է զանգը խփել...

Ութսունիննը սարսափահար դեմքով նետվեց դեպի դռնակը
և հենց նույն ըրպեյին տեսավ, թե ինչպես առաջին ջոկատի
յերկու սկառտներ սանդուղքը վար առան և ծիծաղելով հե-
ռացան...

Կանչելն իզուր էր: Նրանք հենց դրա համար էլ արեցին այդ-
պես, վորպեսզի ինքը խայտառակվի... Մժբատն անպայման իրեն
մերձիմահ կծեծի, իսկ այն յերկու սկառտներն իրանց ջոկա-
տապետ Գասպարի հատուկ հարգանքին կարժանանան...

Դեռ լավ է, վոր նա փայտն իր հետ է բերել: Ապա թե վոչ՝
փայտն էլ կտանեյին... իսկ ժամացույցը չէն վերցրել...

Համարյա կիսախելազար՝ Ութսունիննը կռացավ, բարձրա-
ցավ, նորից կռացավ և իրեն նետեց առաջ, դեպի զանգակատան
սանդուղքը: Կարողացավ բռնել նրա ճաղերից և իսկույն վեր
սլացավ: Ժամացույցն այնտեղ էր: Կեսն անցել էր մի ըրպե:

Ութսունիննը իսկույն զանգը խփեց և ժամացույցի սլաքը յետ տվեց մի ըոպե: Նույն վարկյանին սանդուխտները վրա յերևաց Սմբատը, վորին յերևի գնացել էյին կանչելու այն յերկու սկառտները:

Տեսնելով Ութսունիննին իր պոստի վրա, Սմբատը զարմացավ:

— Դու այստե՞ղ ես...

— Իհարկե, ջոկատապետ: Ձե՞ վոր այսոր դու ինձ այս պոստին ես նշանակել:

— Այո՛, բայց...

— Վատ կարծիք ունես իմ մասին, ջոկատապետ, — ժպտաց Ութսունիննը. — յես իմ պոստից մի քայլ չեմ հեռանում...

— Յեվ չես ել քնում...

— Վոչ, այն դեպքից հետո այլևս չեմ քնում...

Սմբատը գոհ մնաց: Նա ուշադիր նայեց տղային և հայտնեց.

— Դու այժմ չաղացել ես: Առաջ շատ լղար էյիր:

— Այո՛:

Սմբատը նստեց և թաշկինակով սրբեց քրտինքը:

— Կարելի՞ յե մի բան հարցնել, ջոկատապետ:

— Հարցրու:

— Ի՞նչ ես կարծում, յես ինչո՞ւ այլևս չեմ քնում պոստի վրա: Ապտակի պատճառով...

— Յերևի:

— Վոչ, ջոկատապետ: Յես քեզ հարգում եմ, դրա համար ել չեմ քնում: Յեթե ինձ այլևս չապտակես, քեզ ավելի շատ կսիրեմ...

Սմբատը զարմացած նայեց:

— Իսկ յեթե վոչ վորքի չծեծես, — ավելացրեց Ութսունիննը, — յես կայծակի արագութեամբ կկատարեմ քո յուրաքանչյուր խոսքը: Վատ ե, շատ վատ ե, վոր դու սկառտներին ծեծում ես...

Սմբատն ապշած նայում էր:

— Ձե՞ս վախենում ինձանից, վոր այդպիսի բաներ ես ասում, — հարցրեց նա վերջապես:

— Վոչ, ջոկատապետ, չեմ վախենում: Յես գիտեմ, վոր դու հոգով լավ մարդ ես: Այ, որինակ՝ անցյալ ուրը, դու ինքը գրկած հիվանդանոց տարար քո ծեծած սկառտին... Դու լավ մարդ ես, բայց չեմ հասկանում, թե ինչո՞ւ մեզ յերբեմն ծեծում ես...

Սմբատը գլուխը կախեց:

— Ջանիկ, — մրմնջաց նա, — բոլորը քեզ նման գիտակից չեն: Կարգապահութուն չգիտեն...

— Դիտեմ, — բացականչեց Ութսունիննը, Սմբատի փափկելուց վողկորված, — ջոկատապետ: Բայց դու փորձիր մի ամիս վոչ վորքի չծեծել, փորձիր մեզ հետ վարվել ընկերաբար ու տես թե ինչ դուրս կգա... Ազնիվ սկառտական խոսք, մեր ամբողջ ջոկատը քեզ կսկսի իր յեղբոր պես սիրել: Այն ժամանակ թող կատարեն Գասպարը, Լևոնն ու Մամիկոնը...

Ջոկատապետ Սմբատից այլևս վոչինչ չմնաց: Նստած տեղից Ութսունիննին էյին նայում արյունով լցված, բայց բարի հայացքով յերկու մեծ աչքեր: Սմբատը ցատկեց վոտքի, ձեռքը դրեց Ութսունիննի ուսին և ասաց.

— Ազնիվ հայ արու խոսք, Ութսունինն, յուրաքանչյուր ծեծից հետո իմ սիրտը ցավում ե ու յես խղճում եմ: Դու կարծում ես՝ ինձ դժուր ե գալիս, վոր յես ձեզ ծեծում եմ... Լավ, յես մի ամիս, ուղիղ մի ամիս կփորձեմ ձեզ հետ լավ վարվել: Ինձ համար ավելի լավ կլինի, յեթե քո ասածը դուրս գա...

Նա մտերիմ բռնեց Ութսունիննի ձեռքը, սեղմեց, ժպտաց ու գնաց:

Ժպիտ Սմբատի դեմքը վրձն... Ութսունիննը ցատկեց սանդուխտների գլխի մոտ և կանչեց.

— Ջոկատապետ...

Սմբատը կլոր սենյակում կանգ առավ: Ութսունիննը իջավ նրա մոտ, պատիվ տվեց և հայտնեց.

— Ներիք ինձ, ջոկատապետ, յես գտնվում էյի թիթեղե ծածկի տակ և առաջին ջոկատի սկառտները սանդուխտքը վար առան: Դու այդ բանը գիտեյիր, բայց ահա յես խոստովանում եմ: Այլևս չեմ անի...

Սմբատը մտածեց:

— Չանձրալի պոստ ե... Յես քեզ չեմ մեղադրում...

Ապա նայելով Ութսունիննին, ասաց.

— Մյուս անգամ, յեթե նորից այդտեղ բարձրանալու կլինես, գզույշ յեղիր: Յեվ աշխատիք զանգը խփելուց չուշանալ: Դու ժամի կեսը մի ըոպե ուշ խփեցիր...

Սյա ասելով, նա գնաց:

Ութսունիննը մնաց իր տեղում քարացած: Ուրեմն կարելի յե... Ուրեմն հնարավոր ե շարժել մարդու հոգու ամենալավ լարերը... Ազնիվ խոսք, Սմբատն այնքան վատ մարդ չի, ինչպես թվում ե: Մի մտածիր. — նա գիտեր, վոր դու զանգն ուշացրել ես մի ըոպեյով, բայց քեզ չեր ապտակում...

Մտքատը կորած մարդ չե...

Յեկան Ութսունիննին փոխարինելու: Հենց վոր ազատվեց իր պոստից, նա իսկույն քայլերն ուղղեց դեպի հինգերորդ վոր-բանոց: Փոքրահասակ վորբուհիները պատի տակ խաղ էյին անում: Մեծահասակներից մի քանիսը գիրք էյին կարդում: Նա մտավ ներս և կառավարչի դուռը թակեց:

Դուրս յեկավ կառավարիչը, վոր մոտ յերեսունինգ տարեկան մի կին էր: Նա խիստ հայացքով նայեց Ութսունիննին և հարցրեց:

— Ի՞նչ ես ուզում...

— Կարելի յե տեսնել հորեղբորս աղջկան, Սաթիկին...

— Սաթիկին...

— Այո...

Կառավարչուհին վոտից գլուխ չափեց Ութսունիննին և քրմ-ծիծաղ տվեց:

— Նրան չի կարելի տեսնել, — ասաց արհամարհաբար շր-թունքները սեղմելով և աչքերը կիսափակ անելով:

— Ինչ՞եւ չի կարելի...

— Վորովհետեւ նա հիմա գտնվում է մի կարևոր տեղում: Իսկ դու, սկառտ, հեռացիր: Սաթիկը հորյեղբոր տղա չունի...

Կառավարչուհին մի անգամ ել չար ծիծաղեց ու ներս մտավ: Ութսունիննին վոչինչ չեր մնում, բացի վերադառնալուց: Սակայն նա մտեցավ մի քանի վորբուհիների և հարցրեց նրանց Սաթիկի մասին:

Վոչ վորք Սաթիկի տեղը չգիտեր...

Տխուր յետ դարձավ սկառտ համար Ութսունիննը: Նրա գլուխն անկարող էր լուծել այդ հանելուկը: Ո՞ւր է գնացել Սաթիկը... Պարզ բան է, վոր նա չեր մեռել...

Ութսունիննն ամբողջ որն այդպես տխուր թափառեց, իսկ վերջալույսի ժամանակ, յերբ արևը մայր էր մտնում հեռավոր լեռների յետևում և վերջին շողերի տակ վոսկեգոծվել էյին մոտակա արտերը, նա տեսավ իր դասընկեր Արշալույսին:

Այդ հանդիպումը նրան շատ ուրախացրեց: Ուրախացավ նաև Արշալույսը: Նա բռնեց Ութսունիննի ձեռքերից, նայում էր նրան ժպտալով, շշնջում էր «սկառտ, սկառտ», չգտնելով ուրիշ ավելի փաղաքշական բառ:

— Մենք բոլոր աղջիկներս միշտ հիշում ենք քեզ և սպասում ենք պարագմունքները վերսկսվելուն, — ասաց նա: — Դու չե՞ս

նեղանա, սկառտ, վոր յես ի՞մ բոլոր ընկերուհիներիս հաղորդել եմ քո խոսքերը...

Ութսունիննը չեր հիշում:

— Վճի խոսքերը — հարցրեց նա:

— Յերեսային էլ, մեծին էլ, ստեղծում է բնությունը...

— Ա՛, այդ խոսքերը... Իսկ ի՞նչ, ընկերուհիներդ հավատում են, թե վոչ...



Այդ հանդիպումն Ութսունինն շատ ուրախացրեց:

— Հավատում են: Բայց ուզում են ավելի մանրամասն իմա-նալ: Դու խոսքերդ լսելուց հետո մենք շարունակ ծածուկ վիճում ենք. — աստված կամ, թե չկա...

— Իհարկե չկա, — տեղակացրեց Ութսունիննը:

— Սկառտ, մի որ չե՞ս դա ընկերուհիներիս մոտ, այդ նյութի մասին խոսելու: Մենք կհավաքվենք մի ծածուկ տեղ ու կխոսենք: Կգ՞աս, սկառտ...

— Կգամ:

— Մենք բոլորս զարմանում ենք, թե այդքան բան դու վճռաբեղից գիտես: Իսկոյններում այդպիսի բաներ չեն սովորում...

— Սովորում են, Արշալույս: Քաղաքի դպրոցներում սովորում են: Յես այդ բոլորն ել այնտեղ եմ լսել, կոմունիստների գալուց հետո:

— Հա, — հիշեց Արշալույսը, — հետո, մեր դասարանի բոլոր աղջիկները հետաքրքրվում են, թե ովքեր են կոմունիստները...

— Այդ ել կրացատրեմ:

Ութսունինը ցավակցաբար նայեց Արշալույսին և հարցրեց:

— Ի՞նչ է, ձեզ չէ՞ն թողնում քաղաք գնալ...

— Թողնում են... Ամիսը մեկ անգամ, այն ել խմբով, վորպեսզի մենք զանազան կողմեր չցրվենք: Միշտ մեզ հետ դնում են մի հավատարիմ աղջկա, վոր մեր բոլոր ասածներն ու արածները հաղորդի իրենց... Ել վճռաբեղից իմանանք կոմունիստների մասին...

Բաժանվելուց առաջ, Արշալույսը խորհրդավոր տոնով շնջաց.

— Սկսուտ, իմ կարծիքով դու միակ վորբն ես, վորին ընդունել են այս վերջին ժամանակներս: Կոմունիստների գալուց հետո այլևս վոչ վոքի չեյին ընդունում, վոր վորբանոցները վաստ մտքեր չմտնեն... Այնպես, վոր միայն դու կարող ես մեզ նորութուններ հաղորդել...

Ութսունինը պայմանավորվեց նորից հանդիպել և նրանք բաժանվեցին:

29. ԼՈՒԾՎԱԾ ԳԱՂՏՆԻՔ

Քիրազի հրամանով, գլխավոր պոստի վրա այժմ պահակ եյին կանգնում միաժամանակ յերկու սկաուտներ: Հարկավոր եր բանթողից հետո քաղաք գնացող բոլոր բանվորներին խուզարկել, ապա բաց թողնել: Առաջ այդ գործը կատարում եր միայն մի սկաուտ և չեր կարողանում հասցնել: Բանվորների մի մասը մնում եր առանց խուզարկվելու, իսկ վոմանք ուղղակի ձկվում եյին:

Իսկ այժմ, մի սկաուտը պիտի խուզարկեր, իսկ մյուսը պիտի հետևեր, վոր ձկվողներ չլինեն: Բացի դրանից, պատահում եր, վոր գալիս եր մի ավտոմոբիլ և հարկավոր եր նրա անցազիբն ստուգել: Մի խոսքով, գլխավոր պոստի վրա շարժումը մեծ եր և մի պահակը չեր բավականացնում:

Այդ պոստը միակն եր, վոր հեռախոս ուներ: Դժվար խնդիրների համար պահակը զանգահարում եր Քիրազին և նրանից խորհուրդ հարցնում: Պատահում եր նաև, վոր հեռախոսը հարկավոր եր լինում սկաուտների ոժանդակ մի խումբ հրավիրելու համար:

Մի որ գլխավոր պոստի վրա կանգնած եյին այդ պոստի «մասնագետ» Սիոնն ու Ութսունինը: Հենց առաջին հայացքից նրանք միմյանց դուր չեկան: Սիոնը, վոր առաջին շոկատից եր, տանել չեր կարող ընդհանրապես մյուս շոկատցիներին: Իսկ Ութսունինը ատում եր Սիոնին իր Կազաչի Պոսա գալու հենց առաջին որից: Սակայն չնայած իր հակակրանքին, նա փորձեց Սիոնի մեջ արթնացնել մարդկային բարի գծեր, ինչպես Սմբատի մեջ:

— Սիոն, — հարցրեց նա, — ինչ՞ու յես մարդկանց ծեծում, չե՞ վոր...

— Լավ եմ անում, — գոռաց Սիոնը. — իսկ դու քիչ խոսիր: Քեզ այստեղ ինձ ոգնական են նշանակել և վոչ թե հրամայող...

Ութսունինը ստիպված լռեց: Նա միխթարվեց միայն նրանով, վոր պատի վրա Սիոնի անունը գրելով առիթ եր տվել, վոր գոնե մի անգամ ել նա ծեծվի...

Վորող ժամանակ նրանք ձանձրանում եյին, բայց հետո, յերբ հնչեցին բանթողի շահկները, դրությունը փոխվեց: Իսկույն յերկացին բազմաթիվ բանվորներ, վոր դեպի պոստն եյին շտապում:

Սիոնն անցավ գործի: Սուզարկեց մեկին, յերկրորդին, յերրորդին, բոլորին ել բաց թողեց: Չորրորդի գրպանից նա հանեց յերեք կտոր տուալետի սապոն, դրեց մի կողմ և նրան նույնպես, բաց թողեց:

Ութսունինը զարմացավ, վոր Սիոնը նրան չծեծեց: Բայց հետո նկատեց, վոր նա վոչ վոքի չի ծեծում, այլ ընդհակառակը, կարծես ասում է.

— Լավ ես արել, սիրելիս, վոր գողացել ես: Վաղն ել գողացիր: Միևնույն է, վոր հետո վոչինչ չես տանի...

Յերբ բանվորների գլխավոր հոսանքը պոստով անցավ, պոստի վրա մնաց սապոնի, գուլպայի, թուզի, հագուստի մի ամբողջ կույտ, հանված չորս թե հինգ բանվորի գրպաններից: Սիոնը շոկեց մի քանի արժեքավոր իրեր, դրեց իր գրպանը և սպառնազին նայելով Ութսունինին, ասաց:

— Պատահաբար մարդու բան չասե՛ս...

Հետո ցույց տալով ճամբի յեզրին թափված մյուս իրերը, գլխով արեց.

— Մի բան ել դու վերցրու...

— Ինձ պետք չի...

— Դու գիտես:

Քիչ հետո, յերևաց միայնակ մի բանվոր, վոր գալիս եր դեպի պոստը: Միտնը պատրաստվեց նրան խուզարկելու: Իր փայտը հանձնեց Ութսունինին: Բանվորը կանգնեց: Միտնը խուզարկեց նրան, վոչինչ չգտավ, բայց հանկարծ տարավ, բերեց ու մի պինդ ապտակ հասցրեց բանվորի յերեսին:

— Սրիկն, — գոռաց նա, — թալանեցիք կազաչի Պոստը: Այսքան ել ապրանք գողանան...

Այս ասելով, նա ցույց տվեց ճամբի յեզրին թափված իրերը...

Ութսունիննը ապշեց զարմանքից, իսկ բանվորը պինդ սեղմեց բռունցքն ու մի սոսկալի հարված հասցրեց Միտնի տափակ բթին:

— Լակոտ, — գոռաց նա, — ստախոս սրիկա:

Արյունոտ քիթը բռնած, Միտնը տենդագին զանգահարեց հեռախոսը:

— Պարոն Քիրազ, պարոն Քիրազ, խնդրում եմ շտապես այստեղ, սկառտներով միասին:

Չորս կողմից մարդիկ վազ տվեցին դեպի գլխավոր պոստը, իսկ քիչ հետո յերևաց սկառտապետը, սկառտների հետ:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց նա:

— Պարոն Քիրազ, — դիմեց Միտնը նրան, — այս բանվորն ահա այսքան բան ե գողացել: Խուզարկեցի, խփեց: Ուզում եր փախչել...

Բանվորն առաջ նետվեց իրեն պաշտպանելու համար, բայց Ութսունիննը բղավեց.

— Սուտ ե ասում: Ուզում եք ինձ դուրս արեք: Սուտ ե ասում: Նա իրերն ուրիշներից հանեց: Այս բանվորը մեղավոր չի...

Հավաքվածները զարմացած նայեցին Միտնին, վորը կատաղությունից իրեն եր ուտում, չիմանալով թե ինչ անի: Դրությունը փրկեց սկառտապետը:

— Կարող ե պատահել, վոր Միտնը սխալվել ե, — յենթադրեց նա. — բայց դրա համար բանվորը իրավունք ունի պահա-

կին ծեծելու: Լսիր, բանվոր, դու կարող ես վաղվանից աշխատանքի չգալ: Յես կհայտնեմ ամերիկացիներին այս բանը և կխնդրեմ, վոր քեզ վճնդեն...

— Կտեսնենք... մոռաց բանվորն ու հեռացավ:

Քիրազը թևանցուկ արեց Ութսունինինն ու տարավ մի կողմ:

— Ամեն ինչի մեջ չեն խառնվի, սիրելիս, — խրատեց նա. — ամեն տեղ անկեղծ խոսելը հիմարությունն է...

Ապա դառնալով Միտնին՝ հրահանգեց,

— Սրա հետ վատ չվարվես: Քեզ անտեղի նեղությունն պատճառեց, բայց կուղղվի... Սա վատ սկառտ չէ...

Յեզվ գնաց:

Այժմ արդեն, Ութսունիննը համարյա համոզված եր, վոր Միտնն այն չորս-հինգ բանվորների հետ խորհրդավոր կերպով աչքով եր պնում և յերբ նրանց գրպաններից իրերը հանեց ու նրանք հեռացան, նրանց գրպաններում անպայման ուրիշ իրեր ել մնացին... Ահա թե ինչու Միտնը չեր բարկանում նրանց վրա: Միթե գողն իր ընկերներին կվշտացնի...

Զսպված գազանի նման Միտնը նայում եր Ութսունինինն, բայց վոչինչ անել չեր կարող: Քիրազի խոսքերը նրան սաստել էին:

Պատի վրա, հեռախոսը զանգահարեց:

— Լուտ եմ, — կանչեց Ութսունիննը, խոսափողը վերցնելով: Նրա ականջին հնչեց Վազգենի ձայնը.

— Տեղեկացա, վոր այդ պոստումն ես: Հենց վոր կգան քեզ փոխարինելու, անմիջապես անցիր ինձ մոտ: Յեթե կարող ես Հրաչին ել բեր: Խորհրդավոր գրության գաղտնիքը լուծված է...

Դաղտնիքը լուծված է... Ել Ութսունինն ինչ համբերությամբ սպասի պոստի վրա: Սուտ չի ասում Վազգենը: Միթե իրող, նա կարդացել ե անհասկանալի բառերը...

Մինչև պոստի վերջանալն Ութսունինն այդ մասին եր մտածում: Իսկ յերբ փոխարինվեց, անմիջապես գտավ Հրաչին և նրանք միասին վազ տվեցին հեռախոսակայան:

Վազգենն այժմ հերթապահությունն եր անում կեսորից մինչև յերեկո: Նա նստել եր և անհամբերությամբ սպասում եր տղաներին: Յերբ նրանք ներս մտան, նա առանց բարև տալու կամ առնելու, նրանց առջև դրեց մի թղթի կտոր, հետևյալ գրությամբ.

Բ գ դ զ թ ժ լ խ ծ կ հ ձ ղ ճ մ

յ ն շ չ պ ջ ո ս վ տ ր ց փ ք ֆ

— Ի՞նչ բան է սա, — հարցրին սկաուտները, վոչինչ չհասկանալով:

— Սա գաղտնի գիտություն է բանալին է:

— Ի՞նչ բանալի...

Վազգենն սկսեց ավելի մանրամասն բացատրել:

— Ինչպես նկատել էյի հենց առաջին հայացքից, «խղառկ» բառը շատ նման է սկաուտ բառին: Դրանից ել յեղրակացրի, վոր գաղտնի գրության մեջ ձայնավոր տառերը մնացել են նույնը և միայն բաղաձայներն են փոփոխված: Սկսեցի փնտրել և ահա գտա, վոր բանալին այս է: Նրանք բաղաձայները բաժանել են յերկու շարքի և յերբ վոր մի տառ է պետք յեղել, նրանք վերցրել են նրա տակի կամ վրայի տառը: Որինակ, սկաուտ գրելու համար վերցրել են ս տառի վերևի դ-ն, կ տառի տակի տ-ն, ա և ու տառերը՝ իրրև ձայնավորներ, թողել են նույնությամբ և վերջապես տ-ի փոխարեն վերցրել են նրա վերևի կ-ն...

Սկաուտները, բերանները բաց լսում էյին նրան: Հրաչը հաղթական նայեց Ութսունինին, կարծես ուզում էր ասել:

— Յես չասի, վոր Վազգենը կգտնի...

— Իսկ ի՞նչ էր գրության բովանդակությունը, — հետաքրքրվեց Ութսունինին:

Վազգենը գրպանից գրությունը հանեց և բանալու ոգնությամբ սկսեց կարդալ: Ութսունինինը ու Հրաչը ծայր աստիճան լարված սկսեցին հետևել և ահա, անհայտ տառերի արանքից գուրս լողաց բառը բառի յեակից վողջ նախադասությունը:

— Վերոհիշյալ... սկաուտներս... և հայ... արիներս... իրրև... ամենից... հավատարիմները... սկաուտանոցում... կազմում... ենք... գաղտնի... միություն... կոմունիստական... գաղափարների... դեմ... կովելու...

— Այ քեզ բան... — ապուշ կտրեց Հրաչը:

— Կոմունիստական գաղափարների դեմ... — հազիվ կակագեց Ութսունինինը: — Իսկ ովքեր են այդ «վերոհիշյալները...»

— Իժբախտաբար չգիտենք, — գլուխն որորեց Վազգենը: — Թե կգիտենայինք, լավ վերոհիշյալ ցույց կտայինք...

Հրաչը նորից գրությունը ձեռքն առավ, կարդաց ու յեզրակացրեց:

— Ուրեմն բոլոր հայ արիներին չի՞ն վերցրել այդ գաղտնի միություն մեջ...

— Այդպես է յերևում... վարվել են շատ զգույշ...

Ութսունինինը հուզված վեր կացավ: Նրա նինար կուրծքն արագ վեր ու վար եր անում:

— Կոմունիստական գաղափարների դեմ կովելու համար... — բացականչեց նա: — Ազնիվ սկաուտական խոսք, այս կոմունիստները շատ լավ մարդիկ են: Նրանք վերջացրին պատերազմները, սովածներին հաց ավեցին, չթողեցին, վոր կրոնով և ուրիշ բա-



Նրանք ճկույթները մոտեցրին միմյանց...

ներով հարուստները մեզ խաբեն ու շահագործեն... Ազնիվ սկաուտական խոսք՝ յես կոմունիստների կողմն եմ...

Վազգենը նրան ընդհատեց:

— Ո՛ւզում ես, հենց հիմա գանգահարենք քաղաք՝ և հայտնենք մեր գյուտի մասին: Թող գան, այդ սրիկաներին ձերբակալեն:

— Կարիք չկա, — մերժեց Հրաչը: — միևնույն է, մենք սրիկաների անունները չգիտենք... Ավելի լավ է լռենք ու հետևենք...

— Ճիշտ ե, — համաձայնվեց Ութսունիննը, — բայց լուեղն ու հետևելը բավական չե: Յես առաջարկում եմ, վոր մի միություն ել մենք կազմենք, կոմունիստական գաղափարները տարածելու համար: Որենքով պետք ե, վոր իբրև թե սկաուտներին այդպիսի խնդիրները հեռու պահելին, բայց քանի վոր նրանք իրենց միությունն են կազմել, յեկեք մենք ել մերը կազմենք...

— Ի՞նչ դնենք անունը, — հարցրեց Վազգենը, վորին այդ բանը բավական հետաքրքրում եր:

— Դու յի՛ր ես համաձայն, բացականչեց Ութսունիննը. — ուրեմն յերեքով ենք:

— Այո՛, համաձայն եմ, — հաստատեց Վազգենը: Քանի վոր նրանք, խառնվում են քաղաքական խնդիրներին, յես ել կխառնվեմ... Ութսունիննը ձայնը ցածրացրեց.

— Բայց զգուշ պետք ե լինենք, սկաուտներ. ով վոր մի խոսք բաց թողնի...

— Յեկեք յերդվենք, — առաջարկեց Հրաչը:

Ութսունիննը գոտուց արձակեց իր դանակը, մի քիչ ձեղքեց իր ձկութը, հետո Հրաչինը, հետո Վազգենինը: Նրանք ձկութները մոտեցրին միմյանց, արյունները խառնեցին իրար ու յերդվեցին.

— Յերդվում ենք սկաուտական ազնիվ խոսքով, վոր վոչ վոքի վոչինչ չենք ասի և հավատարիմ կսլայքարենք մեր... մեր...

— Կոմունիստական բջիջի համար, — անվանեց Ութսունիննը:

— Կոմունիստական բջիջի համար, — կրկնեցին Հրաչն ու Վազգենը:

Նրանց հիմնադիր ժողովը դրանով փակվեց:

30. ԱՄԵՆԱԼԱՎ ԱՐԻՆ

Սկաուտապետ Քիրազը սոսկալի տխրել եր: Ամենալավ արին, իր շունը, — հիվանդ եր: Ահա յերրորդ օրն եր, վոր նա վոչ քաղցր կաթ եր ուտում, վոչ ել ընդհանրապես վորևե բան: Վշտահար Քիրազը նրա մոտից չեր հեռանում: «Արի, արի, իմ խելոք արի» — կրկնում եր նա անդադար, բայց շունը միայն նայում եր տխուր հայացքով և տեղից շարժվել չեր կարողանում:

Սկաուտների համար պետք եր նոր սպիտակեղեն դուրս գրել, բայց վոչ մի ջոկատապետ չեր համարձակվում մտնել Քիրազի

սենյակը, այն ել այդպիսի մի խնդրով: Գարեգինը, — նույնիսկ նա, — զբաղված եր զուտ Արիի վերաբերող հարցերով:

Կեսորին Քիրազի մոտ յեկավ Կազաչի Պոստի գլխավոր բժիշկը, այն մի աչքանին, վորին Ութսունիննն արդեն տեսել եր: Դեռ նա ներս չեր մտել, յերբ հայտնվեց միստեր Նոնսը: Իսկույն բոլոր սկաուտները, վոր սկաուտանոցի առջև, դես ու դեն ցրված, զանազան գործերով եյին զբաղված, պատվի առան նրան: Միստեր Նոնսը, առանց նայելու նրանց, իր փայլուն սապոգներով դոփելով գետինը, մտավ Քիրազի մոտ: Թվում եր, թե նրա հսկայական կազմվածքը չպիտի անցներ սկաուտապետի փոքր դռնով:

Մի քիչ անց, Քիրազի դռնից դուրս թռավ Գարեգինը մի դեղատոմս ձեռքին: Կազաչի Պոստի դեղատանն իսկույն պատրաստեցին հարկավոր դեղերը և տասնհինգ բույե չանցած, Գարեգինը վերադարձավ: Սկաուտները հարցին, թե ինչպես ե շան առողջությունը, նա կարճ պատասխանեց.

— Թոքային բորբոքում ե ստացել... Առողջանալու համարյա հույս չկա...

Միստեր Նոնսից հետո, հիվանդին տեսնելու յեկան միս Ադամսը, միս Ֆայենը, դոկտոր Եկջոնը, օրիորդ Սիրանուշը և ուրիշ շատերը: Դեռ նրանից վոչվոք դուրս չեր յեկել, յերբ շնչափութուր վազելով, սկաուտանոց ներս ընկավ պահեստապետ Արտուսյանը:

— Դողություն, — գոռաց նա. — ամբողջ պահեստը թալանել են...

Նա ահաբեկված տեսք ուներ: Վախվելով ներս մտավ Քիրազի սենյակը և ամեն ինչ պատմեց նրան: Իսկ մի քիչ հետո, սկաուտները Գարեգինի միջոցով իմացան գործի մանրամասնությունները:

Բանից դուրս ե գալիս, վոր դա առաջին գողությունը չեր: Պահեստից հաճախ եր ապրանք պակասում: Բայց Արտուսյանը դա վերագրում եր բանվորներից մի քանիսի հերթական մանր գողություններին: Սակայն այսօր, պահեստը բաց անելիս, նրա աչքով եր ընկել զգալի դատարկություն: Ապրանքը ստուգելուց հետո պարզվել եր, վոր պահեստից պակասում եյին քսանվեց պարզ զանազան ուտելիքներ: Քսանվեց պարզ... Դա հո մի ամբողջ ֆուրգոն եր, յեթե վոչ ավելին... Իսկույն հարցաքննել եյին

պահեստի և գլխավոր պոստի միլիցիոներներին, բայց նրանք վոչինչ չեյին տեսել...

Սոսկալի շղայնացած՝ դուրս յեկավ Քիրազը և միջանցքում կախված գրատախտակի վրա կավիճով գրեց.

«Հրաման: Հրամայում եմ առաջին ջոկատապետ Գասպարին, իր հայեցողութեամբ, անմիջապես միջոցներ ձեռք առնել գողութեանը պարզելու համար: Այն սկառուտապետը, վորն անձամբ կրոնի գողին, կստանա ամենալավ արիի կոչումը: Վահան»:

Գասպարը պայծառացավ: Նրանք անպայման կգտնեն գողերին...

Անմիջապես անցնելով իր պարտականություններին, Գասպարը հավաքեց չորս ջոկատների ամենահուսալի սկառուտներին: Յերեկոյան նրանք նորից պիտի հավաքվեյին, բայց թե ինչու համար՝ վոչ վոք չգիտեր:

Այդ սկառուտների մեջ եր նաև առաջին ջոկատի Վարդանը, վորի հետ Ութսուներինը սովորել եր դրոշակախոսելը: Հրաչն ու Ութսուներինը վորոշեցին, վոր Գասպարը խորամանկ մարդ է և անպայման նրան կհաջողվի բռնել գողին կամ գողերին:

Այս յենթադրությունների տակ իջավ իրիկունը: Սկառուտները քնեցին, իսկ Գասպարի ընտրած խումբը գնաց:

Յերեկ արդեն լուսանում եր, յերբ Ութսուներինն ու Հրաչն արթնացան: Աղմկելով ներս եյին մտնում Գասպարն ու իր խումբը: Հրաչը նստեց, աչքերը տրորեց և կանչեց Վարդանին.

— Պատմիր, — խնդրեց նա. — գտա՞ք գողերին թե վոչ...

— Գողերին չգտանք, — խոստովանեց Հրաչը, — բայց հետաքրքիր շատ բաներ պատահեցին:

— Դե պատմիր, — շապկեցրեց Ութսուներինը իր հերթին:

— Մենք այստեղից գնացինք առանց վոչ մեկին հայտնելու: Միստեր Նոնսից խնդրեցինք բանալիները և ծածուկ մտանք պահեստ ու թագնվեցինք: Այդ մասին վոչ Արտուսյանն իմացավ, վոչ պահեստի միլիցիոները, — Արտուսյանն արդեն տուն եր գնացել, իսկ միլիցիոներին միստեր Նոնսը մի կողմ քաշեց ինչ վոր պատրվակով:


Արդեն կես գիշերն անց եր, յերբ հանկարծ լսեցինք ֆուրգոնի ձայն, վորը կանգ առավ պահեստի դռան մոտ: Շունչներս պահեցինք: Քիչ հետո, լուսամուտներից մեկի ամբողջ փեղկը տեղահան յեղավ և անշունչ ներս մտան յերեք մարդ: Յերբ նրանք մտան պահեստի խորքը, իսկույն Գասպարն ու մի քանիսը նրանց բռնեցին և մթան մեջ սկսվեց սոսկալի մի տուրու-

գմբոց: Մեզանից մեկը լուցկի վառեց և նույն ըոպեյին պարզվեց թյուրիմացութեանը, — մեր առջև կանգնած եյին պահեստապետն ու պահեստի յերկու բանվորներ:

— Ա՜... — բացականչեց Գասպարը, — այդ դ՞ուք եք, պարոն Արտուսյան... Յես կարծեցի...

Արտուսյան մի մոայլ հայացք գցեց մեզ վրա և ժպիտով բողբոջեց Գասպարին.

— Այդպես էք հսկում... Գողերին բռնելու փոխարեն քիչ քնաց ինձ սպանեցիք...



...Լուսամուտներից մեկի ամբողջ փեղկը տեղահան յեղավ և անշունչ ներս մտան յերեք մարդ:

Գասպարը ներողութեան խնդրեց, մենք գլուխներս քաշ արինք, Սիոնը հանցավոր ժպտաց: Արտուսյանը, վոր յեկել եր քաղաքի վորբանոցների համար մթերք տանելու, բարձեց ֆուրգոնն ու գնաց:

Յեվ այդպես, մենք գողերին չգտանք...

— Իսկապես չգտաք, — հարցրեց Ութսուներինը յերկիմաստ նայելով:

— Զգտանք:

— Իսկ Արտուսյանը...

Վարդանը վախեցած շուրջը նայեց:

— Հասկացանք, — շնչաց նա:

— Մի՞թե արևի պես պարզ է, — բացականչեց Հրաչը: —

Իսկ հետո...

— Հետո ուրիշ վոչինչ... Մնացածը առավոտյան կիմանաք...

Սիոնն այժմ ունի և՛ հարյուր հիսուն դուլար, իսկ Գասպարը՝
յերկու հարյուր...

— Իսկ յեթե միտտեր Եկջոնն իմանամ, — հարցրեց Ութ-
սուռիններ:

Վարդանը ժպտաց:

— Պարոն Արտուսյանը ապրանքը տեղափոխում էր միտտեր
Եկջոնի գիտությամբ...

Յե՛վ այսպես, պահեստի գողերը չգտնվեցին և ամենալավ
արիի անունը վոչ վոք չստացավ...

31. ԽՈՆԱՐՎԱԾ ԴՐՈՇԱԿ

Կիրակի առավոտյան շունը սատկեց:

Գարեգինը յեղավ դուրս և ինչան սգի՝ լուռ, տխուր, առանց
պատվի, առանց շեփորի՝ կիսով չափ վար իջեցրեց յերկաթե
ձողի վրայի յեռագույնը և ներքևում միայնակ Ֆոֆոացող կանաչ
դրոշակը: Ամբողջ սկառտանոցի վրա տարածվեցին տխրության
ու լուռության թևերը...


Նորից յեկան միտտեր Նոնսը, հետո Ադամսը, Փայենը, Եկջոնը,
Սիրանուշը... Բիրազի փոքրիկ սենյակը մարդկանցով լցվեց:

Սև ջոկատի մի քանի սկառտներ, Գարեգինի խորհրդով, շան
չափսն առան և դնացին հյուսնոցը բաց անելու: Մի ժամ հետո
նրանք վերադարձան մի վոսկեզոծ դագաղի հետ միասին:

Ութսուռիններն թվում էր, թե նա յերազ է տեսնում: Մի՞թե
շանը պիտի դագաղի մեջ դնեն...

Սկառտապետի դուռը բացվեց և յերևաց ինքը, Բիրազը, աչ-
քերը կարճրած: Հավաքված սկառտներն իսկույն դես ու դեն
ցրվեցին, իսկ ջոկատապետները ցավակցաբար սեղմեցին պետի
ձեռքը:

Բիրազը գնաց դուրս և մատնացույց անելով յերկաթե ձողի
մոտի տարածությունը, հրահանգեց.



Սկառտապետը լաց էր լինում: Արտավում ելին նաև միս Ադամսն ու Փայենը:

— Փորեցեք...

Ու նորից ներս մտավ: Իսկ քիչ հետո յերևաց նրա դեմքը
էր սենյակի լուսամուտում: Նա նայում էր, թե ինչպես է գնում
փորելու աշխատանքը:

Յերբ գերեզմանն արդեն պատրաստ եր, հավաքվեցին բոլոր սկառուները, լավեցին նվագարանների ձայները — նվագողներն ստուգում էին, թե մահվան քայլերգը հո չէ՞ն մոռացել:

Բացի յերկրորդ ջոկատից, վոր պոստի վրա յեր, մյուս բոլոր ջոկատներն իրենց լրիվ կազմով հավաքվեցին փոսի շուրջը: Նվագախումբը սպասողական դիրքով կանգնեց նրանց մոտ:

Դռների միջև յերևաց Գարեգինը, դագաղը գլխի վրա պահած: Նրա յետևից, դուրս յեկան Քիրազն ու բոլոր մյուսները: Իսկույն հնչեց. թաղման քայլերգը և սգո յերթը մոտեցավ գերեզմանին... Սկառուապետը լաց եր լինում: Արտասովում էին նաև միս Ադաման ու Ֆայենը: Կանանցից միայն քառասնամյա որիորդ Սիրանուշն եր, վոր կարողանում եր անարցունք և արիաբար տանել վողջ տեսարանը...

Դագաղը փոսն իջեցրին, հողը լցրեցին նրա վրա և սգահանդեսը վերջացավ: Քիրազը, կոտրված սրտով վերադարձավ իր սենյակը:

Ութսունինն ու Հրաչը, վոնց վոր խորը քնից արթնանան: Նայեցին իրար յերեսի և ծանր շունչ քաշեցին:

— Տեսար...:

— Տեսա:

— Լրբություն չե՞...

— Լրբություն ե...:

Բայց սարսափահար Ութսունինն իսկույն բերանն փակեց. — անցնում եր Սմբատը:

— Մի վախենա ինձանից, — ասաց նա, — իսկապես վոր, դա լրբություն ե...:

Ուրախությունից, Ութսունինն ուզում եր համբուրել Սմբատին:

— Ընկեր ջոկատապետ, — ասաց նա, առաջին անգամ գործածելով ընկեր բառը — պատմիր խնդրեմ, լինչպես թաղեցին ինձանից առաջ յեղած սկառու համար Ութսունինն, — Վաչագանին...

Սմբատի աչքերը գայրույթով լցվեցին: Նա գոռաց.

— Շշան նման...

— Վոչ այս շան նման, — սրբագրեց Հրաչը:

— Այն... Վոչ այս շան նման...

Յեվ ջոկատապետը նայեց թարմ հողաթմբին, թքեց ու հեռացավ...

Սմբողջ սկառուանոցում սկսվեց դադանի զրույց ու վիճաբանություն՝ պատահած դեպքի մասին... Բոլորը քննում էին դեպքն ըստ իրենց գիտցածի՝ աշխատում էին վորոշել. — Ճիշտ վարվեց սկառուապետը, թե վոչ:

Գարեգինը բացատրում եր.

— Պետն այդ բանն արեց իբրև որինակ մեզ համար: Չե վոր մեր պատվիրաններից մեկն ասում ե. — սկառու սիրում ե կենդանիներին... Այ, որինակ մեր բոլոր խմբակների զրոշակների վրա կենդանիներ ու թռչուններ են նկարված. — ընձուղտ, աղվես, գայլ, արծիվ, բազե... Պետն, իհարկե, ճիշտ վարվեց...

Հանկարծ տեղի ունեցավ մի տարրինակ բան: Ո՞վ կսպասեր սև ջոկատի հեզ ու խելոք Միրանից այդպիսի բարկություն...

— Դու յել ես գլուխդ քարով տվել, — գոռաց նա, — պետն ել...:

Բոլորը կաթվածահարի նման յեղան:

— Ի՞նչ... լինչ... — կմկմաց Գարեգինը:

— Ինչ ու զահրումար, — շարունակեց Միրանը ձայնն ավելի բարձրացնելով. — սկառտին գիշեր-ցերեկ աշխատեցնում են, շան պես ծեծում են, մեռնելիս քաշ են տալիս, զցում մի փոստի մեջ, իսկ շան համար սուգ են հայտարարում, զրոշակ են իջեցնում, նվագում են... Լրբեր...

— Ո՞ւմ ես ասում, — գոռաց Գարեգինն իր հաստ շրթունքների միջից:

— Քեզ ել, քո պետիդ ել: Յերկուսիդ ել հերն անիծած...

— Լոխր, անզգամ, — վորոտաց Գարեգինը, վեր կենալով: Միրանը նույնպես վոտքի թռավ և մոտեցավ նրան:

— Դու չհամարձակվես անզգամ անվանել բանվորին, թե չե դունչդ կփշրեմ...

— Մի մոռանա, վոր դու սկառու ես, — հիշեցրեց Գարեգինը:

— Յես բանվոր եմ:

— Վոչ, դու սկառու ես: Հայ արի յես:

— Վոչ!!!

Յեվ Միրանի կարմրած դեմքի վրա յերակները կանգնեցին: Նույն բոպեյին բացվեց փոքր ննջարանի դուռը և ամբողջ սև ջոկատը դուրս թափվեց:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց փականագործ Գրիգորը, առաջ գալով:

Հրաչը յեղելությունը հաղորդեց նրան: Գրիգորը նայեց Գարեգինին, նայեց յերկար, ապա մոտեցավ: Բայց իսկույն, ուրիշ

յերկու սև ջոկատցիներ, գուշակելով Գրիգորի մտադրութիւնը, մոտեցան և բռնեցին թևերից:

— Թողէք, — բղավեց նա:

Բոլորն իրար խառնվեցին:

— Թող, Մկրտիչ, թող Սարգիս, — խնդրեց նա, թևերը թափահարելով:

Նրան բաց չթողեցին: Իսկ նրա փոխարեն, Գարեգինին պատասխանեց ձուլարանի Գևորգը.

— Կորիւր անմիջապէս, թե չե բուրդդ քամուն կտանք: Պետիդ ել կասես, վոր թքել ենք իր վրա յեւ, իր շան վրա յել... Գարեգինը գնաց:

— Լսիր, — կանչեց Միհրանը նրա յետևից, — կասես նրան, վոր յեթե համարձակվի ինձ վռնդել, աղնիվ բանվորի խոսք, ամբողջ սև ջոկատը վոտքի կկանգնի...

— Ո՞ւմ դուրս անի, — վորոտաց Մկրտիչը, — մենք խո իր սեփական հացը չենք ուտում: Այ, այս ձեռներով ենք աշխատում, սրիկաներ... Առանց ոտճիկի, մի փոր հացով բանվոր են պահում. կարող են դուրս անել...

Գարեգինը գնաց, իսկ սև ջոկատը մնաց հենց այդպէս հավաքված: Նրանք սպասում էին: Յեւ իրոք, քիչ հետո նորից յերևաց Գարեգինը և ձայն տվեց.

— Յեկ, Միհրան, պետք քեզ կանչում ե...

— Թող ինքը գա, — առաջարկեց Միհրանը:

Սև ջոկատը հրհրաց:

Գարեգինը թքեց, հեռացավ, ապա յերկրորդ անգամ յեկավ:

— Ի՞նչ կա, լրտես, — հարցրեց Սարգիսը:

Գարեգինն ուշադրութիւն չդարձրեց նրա վրա, մոտեցավ Միհրանին և հայտնեց:

— Սկառտատետորդ ու հայ արիական նշանդ տնւր...

Միհրանն անմիջապէս պոկեց նշանը գլխարկի վրայից, գրպանից հանեց տետրն ու հանձնեց Գարեգինին: Միայն յերկու բողբոջ անցավ և նա վերադարձավ, այս անգամ միայն սկառտատետորդ ձեռքին:

— Վերցրու, — ասաց նա ու գնաց:

Սև ջոկատը հավաքվեց Միհրանի գլխին, վորն առանց սխալվելու բաց արեց սև եջն ու կարդաց.

«Չարգելով իմ շան հիշատակը, յես այսոր դուրս չեմ անում քեզ, այլ միայն զրկում եմ հայ արիական կոչումից: Յեթե յեր-

կրորդ անգամ փորձես դուրս գալ իմ դեմ և իմ դեմ գրգռել սև ջոկատը, յես քեզ դուրս կշարտեմ իբրև անկարգապահի»:

Վո՛չ, Վահան Գիրազը կատակ չեր անում...

32. ԺՈՂՈՎ

Յերեկոյան Ութսունիննը հեռախոսակայանում ժողով նշանակեց: Ներկա պիտի գտնվեյին յերզված յերեքը և Միհրանը: Նա մտածեց կանչել նաև Սմբատին ու Վարդանին, բայց հետո թողեց: Նրանց հանդեպ այնպէս վստահ լինել, ինչպէս Միհրանի՝ առայժմ չեր կարելի:

Յեւ ահա, կենտ, կենտ, գործադրելով ամեն տեսակի զգուշութիւն, սկառտները հավաքվեցին Վազգենի մոտ: Միհրանը յեկավ ամենից առաջ և մինչև բոլորի հավաքվելը՝ զրուցում եր Վազգենի հետ:

Ութսունիննը հիշեց քաղաքում իր տեսած ժողովները և դիմեց հավաքվածներին:

— Ընկերներ... Ժողովը համարում եմ բացված: Այսոր մենք խոսելու յենք հետևյալ նյութերի մասին. — առաջին՝ շան թաղումը: Յերկրորդ՝ գաղտնի գրութիւն հարցը: Յերրորդ՝ ընդունելութիւն: Չորրորդ՝ ուրիշ հարցեր...

Առաջին հարցի մասին շատ քիչ խոսեցին և բոլորն ել յեկան մի յեզրակացութիւն. — շան թաղումը լրբութիւն ե: Այդպէս ել գրեցին արձանագրութիւն մեջ: Յերկրորդ խնդրի մասին խոսք վերցրեց Միհրանը:

— Սկառտներ, ասաց նա. — յերբ Ութսունինն ինձ պատմեց Հրաչի դատած թղթի մասին, յես նրան վոչինչ չասեցի: Մեր ժողովում յիս յերզվել էի լուրթիւն պահպանել... Բայց հիմա պիտի ասեմ, — Գիրազի ղեկավարութեամբ սկառտանոցում, իսկապէս, վոր կաղմված ե այդ գաղտնի միութիւնը, հետևյալ անդամներով...

— Սիոն... Գարեգին... Գասպար... Լևոն... Վահան... Մամիկոն... Սեդրակ... Հրանտ... Սև Վահան... Սպիտակ Վահան... Յես ել էի, բայց այժմ, իհարկե, ինձ վռնդել են...

— Ափսոս — ցավեց վազգենը. — յեթե չվռնդեյին, դա մեզ շատ ոգտակար կլինէր...

Յերրորդ խնդրի մասին ևս խոսեց Միհրանը:

— Ընկերներ, — ասաց նա այս անգամ, — խնդրում եմ, վոր ինձ ել ընդունեք ձեր կոմունիստական բլիշի մեջ: Յես խոսք եմ

տալիս ձեզ նման գաղտնապահ լինել և կոմունիստական գաղափարները տարածել սե ջոկատում:

— Իսկ ձեր ջոկատից ել հււմ ընդունենք, — հարցրեց Հրաչը:

— Առայժմ վոչ վոքի: Ճիշտ ե նրանք բոլորն ել հիանալի տղաներ են, բայց պետք ե զգույշ լինել... Կընդունենք հետազայում... Միհրանին ընդունեցին, բայց ավելորդ գտան ձկույթը կտրել: Չորրորդ խնդրի մասին խոսեց Ութսունինը:



— Սա ինչ բան ե Վոչ սկաուտն ունի մարդու իրավունք, վոչ վորբուհիները

— Սա ինչ բան ե, — հարցրեց նա — Վոչ սկաուտն ունի մարդու իրավունք, վոչ վորբուհիները Դեռ մենք աղաներ ենք, մի կերպ աանում ենք: Իսկ ինչ անեն խեղճ աղջիկները... Յես առաջարկում եմ, վոր նրանց մեջ ել տարածենք կոմունիստական գաղափարները և նրանց ել ընդունենք բջիջի մեջ...

Վորոշեցին, վոր ամեն մարդ իր դասարանի աղջիկների մեջ աշխատանք տանի: Ստորագրեցին արձանագրութունը, պայմանավորվեցին մյուս հավաքույթի մասին և ցրվեցին:

Ութսունինը հեռացավ չափազանց վոգևորված: Նրան ուրախացնում եր այն միտքը, վոր նա լավ բան ե անում և միաժամանակ գաղտնի բան... Ինչքան վտանգավոր և հաճելի յե գաղտնի աշխատելը...

33. ՆՈՐԻՑ ԽՈՇՈՐ ԳՈՂՈՒՅՅՈՒՆ

Ութսունինը, համաձայն Արշալույսի ժամադրության, գնաց ությերրորդ վորբանոց, ընկերուհիներին հանդիպելու: Բայց նախ քան նրանց հանդիպելը, ներկա յեղավ մի դեպքի:



Հանկարծ նա գույգ ձեռքերով բռնեց իր մազերից ու ըզավեց:

Հենց Արշալույսենց սենյակում տեղի յեր ունեցել մի խոշոր գողություն: Վորբուհիներից մեկը, տեսնելով սենյակում մի ավելորդ և իր ընկերուհիներից վոչ մեկին չպատկանող սրբիչ, վերցրել և դրել եր իր արկղը: Բայց նա այդ հանցանքը կատարել եր շատ անզգույշ: Գառավարինը լուսամուտից ամեն ինչ տեսել եր:

Յերբ Ութսունիննը ներս մտավ, շատ վորբուհիներ հավաքվել էին սենյակում և կառավարիչն աղջկա արկղն եր խուզարկում:

— Ահա, — բացականչեց նա, — գտա վերջապես: Գտա, անզգամ գող...

Աղջիկը, վորի դեմքն իր գողացած սրբիչի պես սպիտակել էր, բերանը կիսաբաց կանգնել եր մահճակալի մոտ և անիմաստ հայացքով շուրջն եր նայում:

Ներս յեկավ դաստիարակչուհին: Նա սրբիչը վերցրեց կառավարչի ձեռքից, շարժեց աղջկա յերեսին ու թքեց:

— Թյու, թյու քո պատվիդ, լիրբ, գող: Թալանում ես ընկերուհիներիդ...

Ընկերուհիների անունը լսելուն պես, աղջիկը սարսափահար շշնջաց:

— Աղջիկներ... Միթե յես ձեր սրբիչն եմ գողացել: Ախր ավելորդ սրբիչ եր...

— Լա՛ր, — վորտաց կառավարիչը:

Աղջիկը շուրջը նայեց: Նրա աչքերը խելագարի տեսք ունեյին: Հանկարծ նա զույգ ձեռքերով բռնեց իր մազերից ու բղավեց:

— Ո՛ր ո՛ր... Խայտառակ յեղա... Ո՛ր, պատիվ...

Արշալույսը փորձեց հարձակվել և բռնել նրա թևերից, բայց նույն րոպեյին աղջկա ձեռքերը ցնցվեցին և իր գլխից պոկեց յերկու ահագին փունջ մազեր: Պոկեց, նայեց մազերին, դաստիարակչուհուն, կառավարչին և բարձր, շատ բարձր ծիծաղեց:

— Ի՞նչու յեք հավաքվել... Դեռ ճաշի ժամանակ չի...

Դաստիարակչուհին ցնցվեց:

— Շուտ, — շտապեցրեց վառավարիչը, — սրան պետք ե հեռացնել վորբանոցից...

Ութսունիննը նայեց նրան բուռնցքները սեղմած, մոտեցավ, ծանր հևաց նրա դեմքն ի վար և ասաց:

— Խորտակեցիք խեղճ աղջկան, ավազակներ: Հիմա ուղարկեցեք խելագարանոց...

Արշալույսն ու մի քանի ուրիշները գրկեցին աղջկան, փորձելով մխիթարել:

— Վարդուհի, աղջի, հո չե՞ս գժվել, վերջ աուր, կատակ էյին անում քեզ հեա: Աղջի...

— Կատակ, — զարմացավ Վարդուհին և նրա աչքերը կտրաթան: — Կատակ, — կրկնեց նա, ապա այնպես ծիծաղեց, վոր բոլորը փրաքողվեցին:

— Թողեք, թողեք, — ճչաց նա և դուրս պրծավ:

Բայց Ութսունիննը բռնեց նրան:

— Կաց, աղջի, հանգստացիր:..

— Թող, սկառուտ, ինձ մի սպանի, յես ինքս կփախչեմ, — նորից ճչաց նա և դուրս թռավ...

Նրան բռնեցին յեկեղեցու մոտ: Տարան հիվանդանոց, իսկ քիչ հետո՝ խելագարանոց: Միաչքանի բժիշկը նրան բնորոշեց իբրև անհույս ցնորված...

Յերբ Ութսունիննը վերադարձավ ութերորդ վորբանոց, այնտեղ համարյա բոլոր աղջիկները լաց էյին լինում: Վոչ կառավարչի սպառնալիքները, վոչ դաստիարակչուհու խրատները չէյին ոգնում: Ամբողջ շինքը հեծկլտում եր և հարյուրից ավելի վորբուհիների ուսերը ցնցվում էյին լացից:

Ութսունիննը լուռ նստեց ընկերուհու կողքին, սպասեց մի քիչ, ապա խնդրեց:

— Մի լաց լինիր, Արշալույս ջան, բավական ե, լսիր ինձ: Բավական ե հեկեկաս...

Արշալույսը լացեց ավելի անմխիթար և իր հոգնած գլուխը հենեց սևահեր Իսկուհու ուսին, վոր կարմրած աչքերով նստել եր և վերմակի ծայրի հետ խաղ եր անում ու տխուր մտածում:

Քիչ հետո, Արշալույսը փախաի մի կտորով աչքերը սրբեց, ապա դիմեց ընկերուհիներին:

— Ե՛հ, զնանք, աղջիկներ...

Վորբանոցից դուրս յելան Ութսունիննը, Արշալույսը և հինգվեց ուրիշ աղջիկներ:

Այնտեղ, ուր նրանք պիտի հավաքվեյին, մի փոս եր, վորի մի կողմում պահեստի մերկ պատը, մյուս կողմում Կազաչի Պոստի պարիսպը, իսկ յերկու կողմերում՝ արձակ դաշար: Վոչ վոք նրանց նկատել չեր կարող: Նրանք նստոտեցին և Ութսունինն անմիջապես սկսեց:

— Աղջիկներ, յերկար խոսելու կարիք չկա: Ինքներդ ինձանից լավ եք տեսնում, թե ինչ ե կատարվում: Մենք սրանց ձեռքում չենք դիմանա. — կամ Վարդուհու պես կխելագարվենք, կամ կմեռնենք: Լռելու կարիք չկա: Հիմա առաջվա նման՝ չե: Կոմունիստները մյուսների նման չեն: Նրանք մեր կողմն են: Մենք վոր մեր ջոկատապետների, ուսուցիչների, կառավարիչների, գաստիարակչուհիների դեմ դուրս գանք, կոմունիստները մեզ կպաշտպանեն: Նրանք...

— Իսկ ամերիկացիները, — շնչաց մի աղջիկ:

— Ամերիկացիներն ի՞նչ պիտի անեն, յեթե ամբողջ Կաղաչի Պոստը միասին սկսի բողոքել: Հո բոլորիս ել դուրս չե՞ն անի... Զոկատով, դասարանով, վորբանոցով կբողոքենք... Թույլ չենք տա, վոր մեզ տանջեն...

Ստուգելով իր խոսքերի թողած տպավորությունը, Ութսունինը շարունակեց.

— Սրանք, աղջիկներ, մեզ հազար ու մի տեսակ, սուտ ու սխալ բաներ են սովորեցնում, վոր մենք կոմունիստներին չսիրենք: Բայց կոմունիստները, ազնիվ սկաուտական խոսք, շատ լավ մարդիկ են: Որինակ՝ քաղաքում նրանք հաց են բաժանում, հիվանդներին դեղ են տալիս և այլն... Իրա համար ել յես ասում եմ, վոր մենք ծածուկ կերպով հավաքվենք, սովորենք կոմունիստների մասին, տեսնենք նրանք ձեր վնասն են ուզում, թե՛ լավը...

— Ի ու կոմունիստի գրքեր չունես, — հարցրեց մեկը:

— Չունեմ...

— Այ, յեթե լիներ, կկարդայինք...

— Այո... Կկարդայինք... Յես ել չեմ կարդացել Միայն լսել եմ, — խոստովանվեց Ութսունինը:

Շուրջը վոչ վոք չկար: Իրենց թագստոցում նստոտած, նրանք շարունակում էին իրենց առաջին ժողովը:

34. ՊԻՄԵՆ

Պոլսից մի սկաուտապետ յեկավ Պիմեն անունով: Նա յեղել էր Քիրազի հին աշակերտներից և ընկերներից մեկը: Հենց նրա գալու որը լուր տարածվեց, վոր Կաղաչի պոստում տեղի յե ունենալու Կաղաչի Պոստի, Պալիգոնի և քաղաքի սկաուտների ընդհանուր ոլիմպիադա: Պիմենը յեկել էր այդ ոլիմպիադային ներկա գտնվելու համար: Յերևի նա շատ նորություններ էր բերել իր հետ, վորովհետև նրա գալուց հենց մի ժամ հետո Քիրազի սենյակում ժողով յեղավ, վորին մասնակցում էին միայն հայ արիները: Հասարակ սկաուտներից մասնակցում էին միայն այն մի քանի հոգին, ովքեր կոմունիստական գաղափարների դեմ պայքարող միության անդամ էին: Նրանք ժողովը շուտ վերջացրին, վորովհետև որը շաբաթ էր և սկաուտները պատրաստվում էին տողանցքի դուրս գալու: Սակայն, նախքան տողանցքը,

նրանց հավաքեցին ընթերցարանում, ներս մտավ Գարեգինը մի հաստ կապոց թղթեր ձեռքին և սկսեց խոսել:

— Սկաուտներ... Պարոն Պիմեն, ոգտվելով իր այստեղ գալուց, Տաճկաստանից ձեզ համար բերել է այս թղթերը...

Սկաուտներն իրար խառնվեցին: Շշուկներ, խոսակցություն, հարցեր: Ի՞նչ է բերել պարոն Պիմենը... Ի՞նչ թղթեր են դրանք...

— Սրանից վոչ շատ ժամանակ առաջ, — շարունակեց Գարեգինը, — մեր դաշնակցական զորքերը կովում էին կոմունիստների դեմ: Լսելով այդ կոմիսիաների մասին, Տաճկաստանի Իզմիր



Մի բոպե լուսթյուն տիրեց: Ապա հանկարծ բոլոր հայ արիները, կարծես սկզբից պայմանավորված լինեյին, սկսեցին լզոռոտալ. — Ի՞նչ անը, տուգ...

քաղաքից, մի շարք հարուստ և աչքի ընկնող հայ մարդիկ փող, մթերք և ուրիշ իրեր էին ուղարկել մեր զորքերին: Նրանք ուղարկել էին նաև այս նամակները...

Գարեգինը շարժեց ձեռքում բռնած թղթերը:

— Բայց, — շարունակեց նա, — նամակները հասել էին բավական ուշ, յերբ մեր զորքերն արդեն հաղթվել էին: Այդ պատճառով, նամակները յետ էին վերադարձել...

Գարեգինը հառաչեց և շարունակեց.

— Պարոն Պիմենը վերցրել էր այս բոլորը, պահել էր և այժմ բերել է մեզ, իբրև այդ զորքերի հավատարիմ հաջորդողների... Հաղթված և ջարդված զորքերի փոխարեն այժմ մենք պիտի պատասխան գրենք իզմիրի մեր անծանոթ բարեկամներին... Յես նմուշի համար կկարդամ այդ նամակներից մեկը և հետո բոլորը կբաժանեմ ձեզ...

Նա առանց ընտրելու վերցրեց նամակներից մեկը և կարդաց. «Անծանոթ զինվոր: Յես, ըստ անծանոթ բարեկամդ, ուղարկում եմ քեզ այս նամակը, վոր քաջալերվես և ավելի վողևորված կովես այդ սրիկա կոժուռիստների դեմ: Գիտցիր, վոր դու մենակ չես և ըստ թիկունքում կանգնած ենք մենք, բոլոր հարուստ և նշանավոր մարդիկս, բոլոր դաշնակցականներս: Յես քեզ խնդրում եմ, վոր կամ հաղթես, կամ մեռնես...»

— Մյուս նամակներն էլ մոտավորապես այս բովանդակություներն ունեն, — ասաց Գարեգինը, ընթերցումը վերջացնելով: — Այժմ ասացեք, ո՞վ է ուզում այս նամակներից ստանալ...

Մի բոլակ լուսթյուն տիրեց: Ապա հանկարծ բոլոր հայ արիները, կարծես սկզբից պայմանավորված լինեյին, սկսեցին դողդողալ.

— Ինձ տուր, ինձ տուր... -

— Լավ, լավ, — հանգստացրեց Գարեգինը, — միք աղմկի, բոլորիդ էլ կհասնի:

Յերբ ցանկացողներն ստացան, Գարեգինը զարմանքով նկատեց, վոր նամակներ կային գլխավորապես հայ արիների ձեռքում: Սկառուտներից շատ քչերն էին վերցրել:

— Ել ո՞վ է ուզում, — հարցրեց Գարեգինը:

Այլևս վոչ վոք չէր ուզում:

Մի քիչ սպասելուց հետո, նա նորից հարցրեց.

— Ել ուզող չկա...

Չկար:

Գարեգինը, թղթերի կույտը ձեռքին դուրս գնաց և վերադարձավ Պիմենի հետ: Բոլոր սկառուտները վոտքի կանգնեցին և պատիվ տվեցին:

— Սկառուտներ, — սկսեց Պիմենը. — Գարեգինն ինձ տեղեկացրեց, վոր դուք նամակներն ստանալու խնդրում ակտիվություներն չեք ցուցաբերում: Իսկ լավ չէ: Այս նամակները մենք ցանկանում ենք տալ բոլորիդ, այն ինչ, միայն հայ արիներն են

ստացել: Իսկ մեր նպատակն այն է, վոր մենք ձեր պատասխանները կարդալով, կարողանանք ավելի լավ ծանոթանալ ձեր մտքերի հետ: Մանավանդ, վոր, սիրելիներս, մենք ուզում ենք ամենալավ պատասխան գրողներին նկատի ունենալ հայ արիի կոչում տալու համար...

— Ինձ տվեք. — բացականչեց Ութսուներինը:

— Ինձ էլ, — ավելացրեց Հրաչը:

Վազգենը նույնպես վերցրեց, վորից հետո բոլոր մյուսները Պիմենը սիրալիբ մոտեցավ Ութսուներինին, հարցրեց նրա անունը, ժպտալով խփեց ուսին և դուրս գնաց:

— Կես բոլակ ժամանակ՝ նամակները պահելու համար, — հրահանգեց առաջին ջոկատապետ Գասպարը:

Իսկույն բոլորը վազեցին իրենց անկողինների մոտ, նամակները դրեցին բարձերի տակ և դուրս յեղան: Շենքի առջևում, թմբուկն իր տկտկոցով շտապեցնում էր բոլորին:

Յերբ բոլորն արդեն շարք էյին կանգնել Սմբատը հանկարծ մոտեցավ Ութսուներինին և ժպտաց.

— Առաջին անգամ եմ տեսնում, Ութսուներին, վոր դու առանց գլխարկի շարք կանգնես...

Ութսուներինն շիթված ձեռքը տարավ գլխին և ստուգելով, վոր այնտեղ գլխարկ չկա, արագ վազեց ննջարան:

— Յե՛վ ձեզանից վոչ մեկը, — հանդիմանեց Սմբատն իր սկառուտներին, չէր նկատել, վոր Ութսուներինը գլխարաց է... Ել ո՞ր մնաց «սկառուտը սրատես պիտի լինի» պատվիրանը...

Սկառուտներն ամոթաբար գլուխները կախեցին...

Յեթե առաջ լիներ, Սմբատն այդպիսի հանցանքի համար շան նման կծեծեր Ութսուներինին և կպատժեր իր ամբողջ ջոկատը: Բայց հիմա նա զարմանալի կերպով խելոքացել է Վշտացնել այդպիսի լավ ջոկատապետին՝ չարժե:

Այդ որը, տոհանցը դեկավարելու յեր Պիմենը: Նա դուրս յեկավ Բիրազի հետ միասին և անցնելով յերթի գլուխը, հրահանգեց.

— Պատ-րնաստ....

Հրաչն սկսեց անհանգստանալ. — Ութսուներինը դեռ չէր վերադարձել...

— Քայլ առնջ...

Այն չորս սկառուտները, վոր պիտի մնային սկառուտանոցը հսկելու, սկսեցին նախանձով նայել շարքերին:

Նվագախմբում, նվագարանները մոտեցրին բերաններին և սկսեցին սպասել «մարշ» բառին: Հրաչն անհանգստությունից իրեն եր ուտում...

Հանկարծ շենքից դուրս թռավ Ութսուներկունը և իրեն նետեց դեպի շարքերը: Նա հազիվ եր կանգնել իր տեղը, յերբ Պիմենը բղավեց.

— Մարշ:

Ու նորից հաղթական քայլերդ, ու նորից հազարավոր վորբուհիներ նրանց ճանապարհի կողքերին կանգնած: Ութսուներկունն աչքի ծայրով նայում և տեսնում եր իր դասընկերուհիներից մի քանիսին: Հետո տեսնում եր փոքրիկ Աչիկին: Հիվանդանոցի մոտով անցնելիս, տեսավ միաչքանի բժշկին, վոր լուսամուտից դուրս կախված նայում եր իրենց:

Այնուհետև Ութսուներկունը տեսավ բոլոր այն ծանոթ և անծանոթ ծառայողներին, ուսուցիչներին, վորոնք, կազաչի Պոստում եյին ապրում: Հետո նորից վորբուհիներ... վորբուհիներ... Կարելի յե տարիներով ապրել այդտեղ և դեռ չկարողանալ նրանցից շատերին ճանաչել: Միշտ նոր դեմքեր, միշտ նոր աղջիկներ, վորոնց մինչ այդ չեյիր նկատել...

Իսկ Սաթիկը չկա... Բոլորը կան, բացի նրանից...

— Նայիր աջ... — լավեց Պիմենի հրահանգը ուղղված բոլորին և Ութսուներկունի մտքերը ցրվեցին: Նա յերեսը դարձրեց դեպի ամերիկացիների տունը, վորի դռան առաջ, արդեն իջնող կիսախավարում կանգնել եյին չիբուխավորներն ու ակնոցավորները...

Բայց... Բայց Սաթիկը չէ՞ այն, նրանց հետ միասին... Սաթիկը... Նրանց հետ: Բայց ինչո՞ւ այսքան գունատ... Գուցե Սաթիկը չի՞...

Ութսուներկունը աչքերը չոեց, բայց պատահաբար միտոր նոնսը շարժվեց և աղջիկը կորավ նրա հսկա կերպարանքի յետևում:

Ո՞վ ե... Սաթիկն եր... Սաթիկը չեր... Յեվ ինչո՞ւ այնքան գունատ...

Նույն յերեկոյան, տողանցքից հետո, սկաուտանոցում մի տարրինակ բան պատահեց:

Ութսուներկունն իր փայտը կախեց մահճակալի կողքից, զլխարկը հանեց և յերբ բարձն եր ուղղում, տեսավ, վոր իր ստացած նամակը նրա տակից անհետացել եր...

— Սկաուտներ, — բղավեց նա ննջարանով մեկ. — ո՞վ ե իմ բարձի տակից նամակս վերցրել...

Ննջարանի հետո ծայրից, չորրորդ շոկատի մի սկաուտ, — համար հարյուրերեսուն յոթը, բղավեց.

— Այստեղ գողեր չկան... Լռիր...

Բայց նրանից հետո, մի ուրիշն ել կանչեց.

— Իմ նամակս ել չկա...

Իսկույն բոլորը նեավեցին դեպի իրենց բարձերը: Պարզվեց, վոր շատ շատերի ստացած նամակներն անհետացել եյին...

Սկաուտանոցը խառնվեց իրար: Յեկան Գիրազն ու Պիմենը, նորությունից ապշած:

— Ովքե՞ր եյին սկաուտանոցի պահակները, — հարցրեց Քիրազը բարկությունից կարմրած:

Առաջ յեկան չորս սկաուտներ: Չորսն ել հայ արիներ և Քիրազի ամենահավատարիմ տղաներից, վորոնց մասին սկաուտապետը վոչ մի կասկած ունենալ չեր կարող: Նա զարմանքից քար կտրեց:

— Տղաներ, մեր գնալուց հետո ո՞վ ե մտել սկաուտանոցը...

Իսկույն չար դեմքով Ոհանն առաջ յեկավ և պատասխանեց.

— Պարո՞ւ պետ, յերդվում եմ կոչմանս վրա, վոր թոչունն ել չի անցել այստեղով: Ամբողջ ժամանակ յես ննջարանումն եյի...

Նրա հետ յերդվեցին նաև մյուս յերեքը:

— Բա ո՞վ ե արել, — հարցրեց նորից Քիրազը և նրա ձայնը դողում եր կատաղությունից:

Չորս սկաուտներն անմիջապես հանեցին իրենց զլխարկները, թափեցին իրար վրա, հետո նրանց վրա լցրին իրենց սկաուտատետրերը և Սպիտակ Վահանը բացականչեց.

— Պետ, վերցրու մեր նշանը և թող մենք այլևս չլինենք հայ արիներ, վերցրու մեր տետրը և թող մենք չլինենք սկաուտներ: Վոնդիր մեզ հենց այս րոպեյիս, բայց մեզ վրա մի կասկածիր...

Մի րոպե իր բարկությունից սթափվելով, Քիրազը գրկեց նրան և հանգստացրեց:

— Յես ինձ վրա սվելի շուտ կկասկածեմ, քան քեզ վրա... Բայց ո՞վ ե արել...

Ապա դառնալով դեպի մյուսները, բղավեց դայրագին.

— Ո՞վ ե արել...

Պորը լուրջությամբ յեղավ պատասխանը:

Քիրազի դեմքի մկանները խաղացին.

— Միոն, Գարեգին, Ոհան, խուզարկեցեք ամբողջ ննջարանը և բոլորին, առանց բացառություն: Կացեք: Սկսեցեք ինձանից...

— Պարոն պետ... — ապուշ կտրվեց Սիոնը:

— Վոչ մի խոսք: Խուզարկիր...

Սիոնը վատահ մոտեցավ, վոտից գլուխ տնտղեց Գիրազին և հայտնեց.

— Չկա...

— Այժմ զնացեք սենյակ...

Բայց այսեղ բոլորը բողոքեցին և թույլ չտվին պետի սենյակը խուզարկել, Սկսեցին քրքրել մեծ ու փոքր ննջարանները: Արդեն գիշեր եր, բայց բոլորը վոտքի վրա էին:

Յերկու ժամ հետո խուզարկող յեռյակը Գիրազին պատվի առնելով հաղորդեց, վոր վոչինչ չի գտնված:

Գիրազն այլալվեց: Նայեց շուրջը, բոլորին, նայեց ահից քար կտրած յերկուհարյուր քառասունին և նրա ուժեղ ձայնը թնդաց վողջ շենքով մեկ.

— Այդպէս ընդունեցիք Պիմենին, հա... Ձեր մեջ բայլելիկներ կան... Կսպանեմ իմ ձեռքովս, իժի ծնունդներ... Յես թույլ չեմ տա, վոր սկառտանոցս ոտար գաղափարներ մտնեն...

Նա զնաց և այնպես շրխկացրեց դռները, վոր ամբողջ մեծ ննջարանը ձայն տվեց: Իսկ քիչ հետո, նրա սենյակում գումարվեց կոմունիստական գաղափարների դեմ կովող միութեան նիստը, վոր տևեց մինչև առավոտ...

Իրենց անկողիններում պառկած, Հրաչն ու Ութսունինն նայեցին միմյանց:

— Իմ կարծիքով, — յենթադրեց Հրաչը, — այսորվա գողը նույն մարդն է, վորը վերցրեց իմ բարձիս տակից գաղտնի գրութեանն ու վերադարձրեց...

Ուրեմն քո կարծիքով, — շնչաց Ութսունիննը, — նա նամակներն էլ կվերադարձնի...

— Վոչ... Նա յերևի նամակները վերցրել է այլ նպատակով, քան գաղտնի գրութեանը... Դժվար թե վերադարձնի...

— Իմ կարծիքն էլ այդ է, — համաձայնվեց Ութսունիննը: Յեթե պիտի վերադարձնի, էլ ինչ՞ու յե վերցրել: Ութսունիննը այդքան հիմար տղա չի...

Հրաչը տեղից վեր ցատկեց:

— Պառկիր... Կնկատեն...

— Ի՞նչ...

— Յես...

— Յերբ...

— Գլխարկս վերցնելու ժամանակ... Գլխարկս յես դիզմամբ էյի մոռացել...

Հրաչն սկսեց վախից դողալ: Թեև նրա մահճակալն անմիջապես Ութսունիննի մահճակալի կողքն էր դրված և համարյա կպած էր նրան, բայց նա այնքան կամաց էր խոսում, վոր վոչինչ լսել չէր կարելի:

— Իսկ...

— Բարձր ասա... քնած էն...

— Իսկ հւր են...

— Վառեցի... Դուրս գալիս, լցրեցի խոհանոցի կրակը... Դե թող Իզմիրի մեր հարուստ բարեկամները պատասխանի սպասեն...

— Բա ինչ՞ու բոլորը չհավաքեցիր...

— Ժամանակ չկար... Բացի դրանից, յես ջոկեցի: Հայ արիւնների և գաղտնի միութեան նամակները չգողացա: Թող պատասխանեն... Յեթե գողանայի էլ, միևնույն է, նրանք նամակ կգրելիին... Սրիկաները:

Լռեցին: Քիչ հետո, Հրաչը նորից ձայն տվեց.

— Ութսունինն, Ութսունինն, այ Ութսունինն...

— Հը...

— Քնած չէ...

— Դեռ չե:

— Դադանի գրութեանն էլ էյիր դու գողացել...

— Չե:

— Բա վո՞նց իմանանք, թե ով էր: Սիրտս ձաքում է հետաքրքրութեանից: Մինչև հիմա չենք գտել թե ով էր...

— Կգտնենք: Համբերիր: Յեվ շուտ գալով մյուս կողքի վրա, լռեց: Բայց իսկույն, ձայն տվեց.

— Հրաչ...

— Լսում եմ...

— Նրանք դեռ չէն լիկել...

— Չե... Դեռ Գիրազի մոտ են... Ժողովը յերկարեց...

— Ինչքան ուզում է թող յերկարի: Ել հիմա նրանք մեզ վոչինչ չեն կարող անել: Մենք բլեջ ունենք...

Ութսունիննը քնեց:

35. ՍԱԹԻԿ

Նախաճաշից անմիջապես հետո Ութսունիննը զնաց դեպի ամերիկական տունը և սկսեց նրա մոտերքը թափառել: Պետք էր

անպայման իմանալ, Սաթիկն եր այն կերպարանքը, վոր յերեկոյան կիտախավարի մեջ յերևաց մի վայրկյան և անհետացավ...

Ամերիկական տան մոտ պահակ եր կանգնել սկառտանոցի ամենափոքր տղան, — չորրորդ ջոկատի տասնյերեք տարեկան Աշոտը:

Ութսունիննը կանգնեց և սկսեց նրա հետ զրույցել:

Վոչ, ամերիկական տանը վոչ վոք չեր յերևում: Գործնական քեռիներն ու մորաքույրները գնացել էյին իրենց պաշտոնատեղերը, իսկ Սաթիկը չկար...

Ճաշի ժամանակ Ութսունիննը վերադարձավ սկառտանոց, իսկ ճաշից հետո՝ նա պահակ պիտի կանգներ: Վորոշեց հետևյալ որը նույնպես գնալ ամերիկացիների տան մոտ և համառությամբ սպասել Սաթիկին կամ նրա նման աղջկան:

Այս անգամ նա պահակ կանգնեց բնակարանների մոտ, վորոնք, շինված էյին Կաղաչի Պոստի մի ծայրում: Ենքերի առջև մի փոքրիկ հրապարակ կար և յերկաթե ճաղերով մի դարբաս տանում եր գեպի քաղաք:

Ութսունիննը նստեց դարբասի մոտ, մի քարի վրա և սկսեց զիտել: Արդեն ժամի յերեքն եր և գործերից ազատ ծառայողներն ու դասերից ազատ ուսուցիչներն զբոսնում էյին փոքրիկ հրապարակով:

Առաջին անգամը չե, վոր Ութսունիննը կանգնում եր այդ պոստում: Այդ պատճառով էլ, նա ճանաչում եր համարյա բոլոր բնակիչներին:

Նրանք, այդ բնակիչներն ունեն իրենց փոքրիկ աշխարհը: Ապրում են այդ աշխարհում: Քաղաք գնում են միայն կիրակի որերը: Քաղաքը նրանց չի հետաքրքրում: Իրենք այնտեղ շատ փոքր են յերևում: Իսկ այստեղ... այստեղ նրանցից յուրաքանչյուրը մի հեղինակութուն է, մի նշանավոր անձնավորութուն... Ահա պարոն Հովհաննեսը, վորի համար գժվում են յերկրորդ հիվանդանոցի և աչքի ամբուլատորիայի քույրերը: Պարոն Հովհաննեսն այդ բանը գիտե և զրա համար ել իրեն պահում է շատ ծանր: Քայլում է գանդաղ, հպարտ նայելով շուրջը: Նա միշտ հագնում է հիանալի զգեստներ: Հասկանալի յե, Նա և պահեստապետ Արտուսյանը մոտիկ ծանոթներ են: Ամերիկայից ստացված հին շորերի առաջին ջոկոզը միշտ պարոն Հովհաննեսն է լինում: Այդ է պատճառը, վոր նրա հազուստները միշտ լավ են լինում և դուք նրա պինջակի վրա չեք գտնի համարյա վոչ մի յուրոտ բիծ, համարյա վոչ մի թելով լցրած ծակ...

Կամ ահա պարոն Բարունակը: Կամ արդյոք նրանից ավելի խելոք մարդ Կաղաչի Պոստում... Ինչի մասին ուզում ես, խոսիլ հետը: Նա ամեն ինչ գիտե: Յերը յերկու հոգի միմյանց հետ վիճում են և մեկն ասում է, վոր պարոն Բարունակն ել այս կարծիքին է, մյուսն այլևս զինաթափ է լինում: Պարոն Բարունակը միշտ զբոսնում է շրջապատված իր դասարանի մի քանի վորրուհիներով, վորոնք զարմացած նայում են նրա բերանին, սպասելով իմաստուն խոսքերի:

Պարոն Բարունակն իմաստուն խոսքերի կողմից ժլատ չե: Բարձր, չորս կողմը լսելի ձայնով նա այնքան է պատմում, բացատրում, վոտ ու ձեռքերը շարժում, կանգնում, գետնի վրա ինչ վոր գծագրում, բացատրում, ապա նորից իր շքախմբով շարժվում առաջ, այնքան է դուրս հորդում գիտության գանձերը, վոր խելճ աղջիկների գլուխները հոգնում են և նրանք պատրաստ են լինում քանդել քաղաքավարության շղթաները և գնալ դեպի պարոն Ժանը, իմաստությունից հետո մի քիչ ել անիմաստ խոսքեր լսելու:

Պարոն Ժանը... Նա հո միայն դերասան չի... Նա գիտե նայև հիանալի պարեր: Սովորեցնում է ցանկացողներին: Ձրի: Մեծ ուրախությամբ: Հետո՝ նա շատ անեկդոտներ գրիտե:

Ահա նայև վարժապետների ու վարժուհիների մի խումբ: Նրանց հետ է նաև միտար Հարլի թարգման Ասքանազը: Նրանք նստոտել են մի քանի նստարանների վրա և քաղաքական կյանքի մասին են վիճում:

— Խորհրդային իշխանութուն՝ իր վրա դրած իմ հույսեր՝ չարդարացրեց, — ցավելով հայտնում է մեկը:

— Յես միշտ Անգլիո կողմնակից յեղած եմ, — հանգիստ վրա յե բերում մի ուրիշը:

— Յես Անգլիո հետ միայն մի խնդրո նկատմամբ համաձայն չեմ, — հայտնում է յերրորդը, շեշտակի նայելով իր դեմից անցնող որիորդ Անուշի աչքերին:

Որիորդ Անուշը... Նա տասնվեցերորդ վորբանոցի դաստիարակչուհին է և ըստ իր և մի քանի ուրիշների կարծիքի, Կաղաչի Պոստի ամենագեղեցիկ կանանցից մեկը: Ահա նա անցնում է Ազգանուշի մոտից և արհամարանքով ծովում է քիթը: Մինչև հիմա յե, չի կարողանում տանել, վոր իր նախկին վորբուհին այժմ այդքան փարթամացել է և հանդիսանում է միտիս Ստաուսոնի թարգման Հակոբի կինը... Ախ, այդ Հակոբը... Ինչքան է

յերևակայում իրեն... Յեկավ տասնվեցյերորդ վորքանոց, իրեն կին ընտրեց ինչ վոր Ազգանուշի, չնկատելով դաստիարակչուհուն... Շատ հարկավոր է... Թող կորչի ինքն ել իր կինն ել...

Դիտում է Ութսունիններ նրանց բոլորին և սովորում է մարդկանց ճանաչել: Նա լավ գիտե, վոր հետագայում այդ իրեն շատ պետք կգա: Դիտում է Ութսունիններ և չի զգում, թե ինչպես է անցնում ժամանակը:

Յերբ առաջին շոկատի տասնյակն անցավ իր մտոից և մի սկառու յեկավ իրեն փոխարինելու, Ութսունիններ նույնիսկ վորոշ ավտոսանքով թողեց իր պոստը: Նա վազեց, հասավ շարքին, մտավ շարք և քայլեց նրա հետ: Մյուս պոստում փոխարինվեց Հրաչը և շարք մտավ Ութսունինների կողքին:

Ճանապարհին, ամերիկական սան մտոից անցնելիս, Ութսունինն արագ կերպով իր փայտը տվեց Հրաչին և շարքից դուրս ծլկվեց,

— Սաթիկ...:

Աղջիկը ցնցվեց, կանգնեց և նայեց:

— Ութսունինն... բացականչեց նա:

— Ո՛ւր եյիր Սաթիկ Հան, ախր ո՛ւր եյիր...

— Ի՞նչքան ես փոխվել, — հիացավ Սաթիկը, առանց նրան պատասխանելու — չաղացել ես, սևացել...

— Սաթիկ, — անհամբեր հարցրեց Ութսունիններ, — դու քո մասին ասա: Շաբաթ յերկույան այդ դժու եյիր կանգնած ամերիկացիների տան դռանը:

— Յես եյի...

— Ի՞նչ ես անում նրանց մոտ...

Սաթիկը գլուխը կախ արեց և ուսերը շարժեց:

— Չգիտեմ, — շնչաց նա քիչ հետո:

— Չգիտեմ թե ինչ ես անում... — զարմացավ Ութսունիններ:

— Վո՛չ:


— Չես ուզում ասել...

Սաթիկը վախեցած նայեց շուրջը և ասաց.

— Գնանք մի քիչ այն կողմը: Ամերիկացիները լուսամուտից կնկատեն...

— Ուզում ես գնանք զանգակատան սենյակը, — առաջարկեց Ութսունիններ:

— Գնանք: Յես ասեմ ինչ կպատմեմ քեզ, սկառու...



Նա իրենց լեզվով հայրույց Ութսունինին և Սաթիկին համարյա զրկելով՝ նորից յես տարավ իրենց տուն...

Նրանք դեռ յերկու քայլ չեյին արել, յերբ հանկարծ նրանց դիմաց կտրեց միստը Նոնսուր: Նա իրենց լեզվով ինչ վոր հայրույց Ութսունինին և Սաթիկին համարյա զրկելով՝ նորից յես տարավ իրենց տունը...

36. ՍՈՍԿԱԼԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ սկառուտանոցը պատրաստվում էր ոլիմպիադայի հաճար: Մարզանքը, վոր առաջ ել կազմում էր սկառուտների պարագմունքների գլխավոր արարկան, այժմ արդեն գրավում էր համարյա միակ տեղը: Յուրաքանչյուր շոկատ ստուգում էր իր լավագույն մարզիկներին, վազողներին, թռչողներին, ցատկողներին, գունդ,

սավառնակ, նիզակ նենողներին և բոլոր մյուսներին, ոլիմպիա-
դային ներկայացնելու համար Ամբողջ որը կարելի յեր տեսնել
մկանոտ թևեր ու վոտներ և լսել «չեմ խառնվի» բզավոցը...

«Չեմ խառնվի», — դա նշանակում էր, վոր գունդ, նիզակ
կամ սկավառակ նետողը նախագգուշացնում է հավաքվածներին:

Ինչ նշանակում էր, «հեռու կացեք գնդիս, նիզակիս, սկավա-
ռակիս ճանապարհի վրայից: Հակառակ դեպքում, յեթե ձեզ մի
բան պատահի, յես չեմ խառնվի, իմ գործս չի»:

Ութսունինը լսում է այդ «չեմ խառնվի»-ն և մտածում, թե
ինչ դաժան բան է մարմնամարզությունը:

Նա իր սկառտանոց գալու հենց առաջին որվանից ատեց
Ֆիզկուլտուրան, վորովհետև Ֆիզկուլտուրայի անունով էր, վոր
Ոհանն իր քիթ ու պոռնոզը ջարդեց: Այդ որվանից ի վեր նա
յերբեք չէր զբաղվում մարմնամարզությամբ, բացի շարքային
պարապմունքներից, վոր պարտադիր էին բոլորի համար:

Սակայն, նա միակը չէր: Ընդհանուր յերկու հարյուր քառա-
սուն հոգուց մոտ հիսուն հոգի ատում էին Ֆիզկուլտուրան:
Յերևի նրանց մի մեծ մասը նույնպես զոհ էր գնացել Ոհանի
նմաններին, իսկ մյուս մասն իր որն անց էր կացնում զուտ
մտավոր աշխատանքով:

Պետն այդպիսիներին չէր սիրում և տիրացու յեր անվանում:

Տիրացուի կոչում էր ստացել նաև սկառտո համար Ութսունինը:

Յեվ ահա, ոլիմպիադայի կապակցությամբ, մի որ այդ տիրա-
ցունների գլխին ճայթեց մի սոսկալի հայտարարություն, վոր
պետը վարդազույն կավճով գրել էր միջանցքի գրատախտակի վրա.

«Սկառտոները և հատկապես տիրացուները ուշադրությանը:

Մի քանի որ հետո, անդի յե ունենալու ֆուտբոլի մրցումս Խա-
ղալու յեն սկառտանոցի ամենաթույլ, մարմնամարզություն չսի-
րող և ֆուտբոլից բան չհանկանող սկառտաները: Նրանց ցուցակը
շուտով կհայտարարվի: Վահան»:

Վոչ մի լուր, վոչ մի նորություն սկառտանոցում այնպիսի
աղմուկ չէր հանել, ինչպես այդ հայտարարությունը: Փորձված
ֆուտբոլիստները բնթթ ծիծաղում էին, հին մարդիկները կատակ-
ներ անում ու ձեռ անում և բոլորը միասին՝ անհամբեր սպա-
սում: Իսկ տիրացուները, վախից չորացած, սպասում էին դար-
հուրելի ցուցակին: Տեսնես նրանցից ով կընկնի այդ ցուցակի
մեջ, տեսնես ով պետք է որը ցերեկով խայտառակվի դիտող
հասարակության առաջ: Ախր ինչպես թե... Առանց սովորելու,

առանձ փորձելու, վերցնել ու ֆուտբոլ խաղալ, այն էլ ոլիմպիա-
դայի պատրաստվելու համար... Վոչ, Բիրազն ավելի սոսկալի
ծաղր չէր կարող հնարել և ավելի մեծ անանջանք չէր կարող
ստեղծել այդ հիսուն տիրացուների համար:

Հրաչի թուքը չորացել է

— Ութսունինը, — ասում էր նա անով ու տանկանով: — Ես
մի մտածիր. — կխաղանք յես ու դու, կընային մեր դասարանի
անդիկները, մեր ցովանի տղաներն ու կհրահան... Ազնիվ խնք,
յես կփախչեմ...



Վոչ մի լուր, վոչ մի նորություն սկառտանոցում այնպիսի
աղմուկ չէր հանել, ինչպես այդ հայտարարությունը:

— Կաց տեսնեսք, — մոայլ վրա յեր բերում Ութսունինը. —
զուցե մեզ չեն ընտրի:

— Կընարեն, կընարեն, վստահեցնում էր Հրաչը և ընկերոջ
սիրքը կնարծես ճաքեցնելու համար ավելացնում էր. — իսկի ինձ
էլ վոր չընտրեն, քեզ անպայման կընտրեն...

Յեվ ծիծաղում էր:

— Յերկուսիս ել կընտրեն, — յենթադրում եր Ութսունիննը. — իսկ յեթե քեզ չընտրեն, դու, իբրև հավատարիմ ընկեր, կխաղաս իմ փոխարեն...

Բայց այս կատակները նրանց չեյին ուրախացնում և նրանք մի քանի որ շարունակ, շրջում եյին մոլորվածի ու շմածի պես: Նախքան չարաբաստիկ ցուցակի հայտարարվելը, սկառուներն արդեն յենթադրում եյին, թե ովքեր պիտի լինեն այդ տարորինակ Փուտրոլ խաղացողները: Տասնմեկ հոգի մի խումբը և տասնմեկ ել մյուս խումբը: Ասել է՝ Հրաչին ել հերթ կհասնի, Ութսունիննին ել, գրադարանապետին ել, ճաշ բաժանող անճոռնիորեն չաղ Սահակին ել... Բոլորը կլինեն:

Մի որ, Ութսունիննը Սմբատի կարծիքը հարցրեց.

— Ի՞նչ ես կարծում, պարոն ջոկատապետ. յես կլինեմ նրանց մեջ...

Սմբատը ծիծաղեց և խփեց նրա ուսին.

— Մի վախենա, կլինես հենց առաջին հերթին:

Ութսունիննը հուսահատ նայեց նրան և մրմնջաց.

— Իսկ... Չի կարելի խուսափել...

— Ձե, չի կարելի: Բայց, Ութսունինն, այս բանը թող քեզ խրատ լինի, վոր սկսես մարզվել...

— Ձեմ մարզվի, ծաղրում են:

Սմբատը լրջացավ:

— Այո: Ծաղրում են, Ութսունինն: Իսկ դու, ի՞նչ շատ ես քաշվում ծաղրելուց:

— Դե, վիճեց ասել, — ազդում ե, իհարկե:

— Յես քեզ առանձին կմարզեմ, ուզեմ ես, Ութսունինն...

— Ուզում եմ, — ուրախացավ Ութսունիննը: — Բայց կարող ես այնպես անել, վոր մինչև Փուտրոլի որը բավականաչափ մարզվեմ...

— Ինչո՞ւ: Վոր ազատվեմ խաղալուց:

— Այո...

Սմբատը քրքջաց:

— Ձե, այս անգամ, ուզես թե չուզես, պիտի խաղաս: Իսկ յես քեզ կմարզեմ անկախ դրանից: Հո մնաս չի...

Ութսունիննը ջղայնացած թքեց.

— Տես ինչեր ե հնարում: Բիրազը, մեզ տանջելու համար...

— Վատ ե անում, — համաձայնվեց Սմբատը. — դրանով մարմնամարզության սեր չի առաջանա, այլ կառաջանա ատելություն... Ճիշտ չե՞ Ութսունինն...

— Յես առանց այդ ել ատում եմ մարմնամարզությունը, — դառնացած խոստովանվեց Ութսունիննը:

Յերկու որ հետո կախվեց սոսկալի ցուցակը:

Ութսունիննը, սրտի բարախոցով մտքեցավ պատին և կարդաց իր անունը... Ուրեմն կատարվեց խայտառակությունը... Ինչն ել կար, Հրաչն ել...

Իսկույն հայտարարություն մոտ հավաքվեց սկառուների մի մեծ խումբ: Մեկը կարդում եր անունները, իսկ մյուսներն անզուսպ հրհուռն եյին յուրաքանչյուր անունը կարդալուց հետո: Այդ դեռ ցուցակի մոտ: Իսկ ի՞նչ պիտի տեղի ունենա խաղի միջոցին...

Տիրացուները մի յերկար հերթով կանգնեցին Բիրազի դռան մոտ: Խնդրեցին Գարեգինին, վոր հայտնի սկառուապետին իրենց մասին: Նրանցից յուրաքանչյուրն ուզում եր խնդրել, վոր իր թեկնածությունը փոխվի մի ուրիշով:

Սկառուապետը համաձայնվեց նրանց ընդունելու: Անմիջապես հերթի առջևում կանգնած յերկու սկառու, ալսինքն Ութսունիննն ու Հրաչը, մտան ներս...

Պիմենը նույնպես ներսումն եր: Նրա ներկայությունն սկառուներին շփոթեցրեց: Սակայն Հրաչը կակազելով սկսեց.

— Պարոն պետ, յես չեմ ուզում խաղալ...

— Ինչո՞ւ:

— Ձեմ կարող: Բոլորովին չեմ խաղացել:

— Հենց դրա համար ել պիտի խաղաս, սիրելիս, — պատասխանեց Պիմենը:

Հրաչը լռեց:

Ութսունիննն ուրիշ բանով եր դբադված: Նրա դարձացած հայացքի դիմաց, պատի վրա կպցրած եր մի իսկական յեռագույն դրոշակ: Վոչ մի Գարեգին այլևս չեր կարող պատճառաբանել, վոր դա յերեք ջոկատի դրոշակների գույներն են:

— Իսկ դու, ջանիկս, — հարցրեց Բիրազն Ութսունիննին:

— Ինձ համար միևնույնն ե — ասաց Ութսունիննը անփույթ տոնով: — Յես Փուտրոլ շատ եմ խաղացել...

Բայց Բիրազը հասկացավ խորամանկությունը և Պիմենին աչքով անելուց հետո պատասխանեց.

— Ապրես... Ուրեմն կխաղաս...

Նրանք շվարած դուրս յելան: Հերթում կանգնածները հարցական նայեցին նրանց:

— Ձուք ե, ցրվեցեք, — խորհուրդ տվեց Հրաչը: — Վոչ մի հույս չկա ցուցակը փոփոխելու...:

Քիչ հետո յերբ Քիրանդն ու Պիմենը դուրս յերան, դառն առջև այլևս վոչ մի սկանուտ չեի մնացել:

37. ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Իսպրոցները բացվեցին: Սակայն այժմ, Ութսուներեսը և նրանց ամբողջ դասարանը դիպրոց պիտի գնար կեսուրից հետո: Յերբ նորից սկսվեցին կանոնավոր պարապմունքները, Ութսուներեսը սկսեց ավելի հաճախ հանդիպել աղջիկներին և ավելի հաճախ հավաքել նրանց պարապմունքների: Իսկուհին հարցնում էր, Արշալույսը հարցնում էր, Մյուս թնորը հարցնում էին և Ութսուներեսը պատասխանում էր այնքան, ինչքան վոր կարող էր: Ախ, յեթե նա ինքն այդ բոլոր հարցերին պատասխան ունենար...

Սակայն միայն իր գրույցներով չէ, վոր Ութսուներեսը սիրում էր նրանց: Յերբ նա պահակ էր կանգնած լինում Կազաչի Պոստի սահմաններից մեկի վրա, շատ անգամ նրա ընկերուհիները գալիս էին, անջնով էին անում, ցույց էին տալիս մի թղթի կտոր՝ իբրև թե անցագիր, և զննում էին քանիք Ութսուներեսն այլևս չէր վախենում, վոր արածը կնկատեն: Նա վաղուց արդեն նկատել էր, վոր բոլոր սկաուտներն էլ, հաճախ զանցառու յեն լինում իրենց պահակային պարտականություններից: Ել ուրեմն ինչու ինքն էլ զանցառու չլինի, քանի վոր դրանով իզուր է վորոքուհիներին: Մյուս կողմից, Ութսուներեսը շատ լավ գիտեր, թե ինչ է նշանակում կարոտել քաղաքին: Նա ինքն ևս կարոտից տանջվում էր և չէր ուզում, վոր իր ընկերուհիներն էլ տանջվեն...

Ի միջի այլոց, մի ուր, նա խոսակցություն ունեցավ Վազգենի հետ, անունը թույլովություն քննաք գնալու մասին:

— Իրանից հեշտ իան չկա, — բացատրեց Վազգենը. — այն որը, յերբ դիպրոցից անգամ կլինես, վեր կան ու ծղվիլի: Ո՞վ կփնտրի քեզ, ո՞վ կնկատի բացակայությունը, յեթե դու ներկա գտնվես նախաճաշի, ճաշի, ընթրիքի, պոստի, դիպրոցի կամ քննելու ժամերին: Իսկ այդ ժամերից դուրսն ինչքան անգամ ժամանակ կա... Հեշտ ե...

Ութսուներեսն ընտրեց ճաշից մինչև ընթրիքը յեղած անգամ ժամանակը: Առանցիկ ջոկատի Վարդանի պոստից դուրս յեկավ և շոսսեյից հետո, դաշտերի միջով հասավ քաղաք: Նրա սիրտը

բարախում էր թե ուրախությունից և թե անհանգստությունից: Յեթե վորևե սկանուտ տեսներ նրան, նա կորած էր: Ուստի և, հասնելով շուկային, նա փորձեց ճանապարհը թեքել: Սակայն նա դեռ վոչ մի քայլ չէր արել դեպի մյուս փողոցը, յերբ հանկարծ անսովոր մի աղմուկ գրավեց նրա ուշադրությունը: Մարդիկ սկսեցին վազել և նրանց հետ վազեց նաև Ութսուներեսը: Քիչ հետո նա տեսավ պատահական շորերով մի տղայի, վոր խաղողի վողկույզը ձեռքում, փախչում էր: Նրա յետևից, հետևով հալածում էր չաղլիկ մի մարդ. — յերևի խաղողի տերը: Նա մեկնեց իր ահապին թաթը, ցատկեց մի ուժեղ թռիչքով և տղային քանց: Մինչդեռ նրա մյուս ձեռքը վերև բարձրացավ հարվածի համար, Ութսուներեսն անաջ նետվեց ու բղավեց:

— Յերեսխաներին ծեծել չի կարելի: Յես թույլ չեմ տա, վոր ծեծեք, նա սոված է:

Այդ վողկույզը վերցնելով խուժանի ձեռքից, նետեց գետնին:

— Վերցրեք:

Յեզ դարձավ խուժանին:

— Գնանք...

Խուժանը սկաուտի հովանավորության տակ իրեն ազատով զգալով, սկսեց քայլել, աչխատելով յետ չընկնել և չուտել իրեն համար պատրաստված ծեծը:

Յերբ նրանք մի քիչ հեռացան, Ութսուներեսը նրան հարցրեց.

— Ի՞նչ Կազաչի Պոստի Աչիկի յեղբայրը չէ...

— Վոչ, — ժպտաց խուժանը, կարծես ներողություն խնդրելով վոր ինքը նրա ուզած մարդը չի:

— Ախոս, — մրմնջաց Ութսուներեսը և քայլեց:

— Լսիր, — բղավեց խուժանը նրա յետևից, — յես նրա տեղը գիտեմ:

— Գիտես...

— Այո: Վաչիկ է անունը...

— Անունը չգիտեմ:

— Յես գիտեմ: Վաչիկն է: Սպասիր զնամ կանչեմ: Նա խուկույն անհետացավ և վերադարձավ միայն հինգ բոպե հետո: Նրա ձեռքում մի ծրար կար:

— Չեկավ, — ասաց նա: — Զբանդված է: Յեզ խնդրեց, վոր այս նամակը անա իր քրոջը:

— Նամակը... Ի՞նչ, այդ Վաչիկը խուժանն է:

— Ի՞նչ կա վոր, — հպարտացավ յերեսխանը: — Խուժանը նամակ գրել չի կարող... Հա, ասա Աչիկին, վոր նրա յեղբայրը գբաղված էր...:

— Ի՞նչ ե անում...

— Ինչ վոր պատահի. — հաց, խաղող, ձմերուկ...

— Յույց տուր ինձ նրա տեղը, — խնդրեց Ութսունիննը:

— Ձե՛մ կարող:

— Ինչո՞ւ:

— Ձի կարելի:

Ութսունիննը բռնեց նրա թևից, վորպեսզի գոռով տանի իր հետ, բայց հանկարծ, նրա աչքովն ընկավ ավելի կարևոր մի բան. — Սիոնը շուկայում շորեր եր ծախում:

Պետք եր փախչել: Յե՛վ Ութսունիննը, թողնելով խուժանի թեք, իսկույն անհետացավ: Նա նկատեց, թե ինչպես Սիոնը սլացավ իր յետևից, փորձելով բռնել իրեն կամ ճանաչել, բայց Ութսունիննը չթողեց այդ: Կես ըոպե անց, նա շուկայի վերջին խանութներն իր յետևում եր թողել...

Այժմ պետք եր շտապել, բայց վո՞չ դեպի տուն, այլ դեպի իր պարտականությունները: Նա շոշափեց գրպանի թղթերը, հագուստները շտկեց և քայլերն ուղղեց դեպի կոմսոմոլի գավառային կոմիտեն...

Նրան մեծ զարմանքով ընդունեցին: Քարտուղարն ընդհատեց իր խոսակցությունն ուրիշների հետ և սկսեց լսել Ութսունիննին: Բայց Ութսունիննը դեռ չեր խոսում: Նա կասկածանքով նայում եր հավաքվածներին:

Քարտուղարը հասկացավ:

— Համարձակ յեղիր, — բացականչեց նա. — սրանք բոլորը մերոնք են...

Ութսունիննը գրպանից թղթերը հանեց:

— Յես յեկել եմ սկառտանոցի գաղտնի բջիջի կողմից: Յես բջիջի քարտուղարն եմ...

— Բջիջ...

— Բջիջ ասեցիր...

— Այո... բջիջ... Ահա մեր յերեք ժողովների արձանագրությունները...

Բայց քարտուղարը թղթերը մի կողմ դրեց, տեղից վեր կացավ և մոտեցավ Ութսունիննին:

— Ապրե՛ք, տղաներ, — բացականչեց նա: — Ապրե՛ք...

Իսկույն գումարվեց արտակարգ խորհրդակցություն, վորտեղ Ութսունիննն ամեն ինչ պատմեց, սկզբից մինչև վերջ: Նա սկսեց իր այնտեղ գնալու որից և վերջացրեց արձանագրություններով:

Ձայն վերցրեց մի կոմյերիտական:

— Ընկերներ, — ասաց նա, — մենք վողջունում ենք սկառտաների բջիջը: Յե՛վ ինչպես Ութսունիննն ասաց, հարկավոր ե անայժմ ամեն ինչ գաղտնի պահել, վորովհետև, յեթե ամերիկական կոմիտեն նրանց վճռի, մենք հնարավորություն չենք ունենա նրանց պահել: Կպահենք մեկին, յերկուսին, տասին, բայց յերկու հարյուր քառասունին կամ վեց հազարին՝ չի կարելի:

Ապա դառնալով սկառտին, ասաց.

— Սիրելի Ութսունիննն, այժմ տեսնենք, թե ինչ պիտի լինի ձեր անելիքը... Իմ կարծիքով, դուք պիտի անայժմ տանեք դաստիարակչական աշխատանք: Նրանց կրոնին դուք պիտի հակադրեք ձեր հակակրոնական պարապմունքները, նրանց դաշնակցական մտքերին՝ ձեր կոմունիստական զրույցները:

Հետո, խորհուրդ տվեց:

— Միք վիճի նրանց հետ, ինչ ել վոր ասելու լինեն: Լսում ես, Ութսունիննն, բոլորովին միք վիճի: Ինչ վոր կասես՝ հալած յուղի տեղ ընդունեցեք: Իսկ տակից, արեք ձեր գաղտնի հակաագիտացիան...

Քարտուղարն ու մյուսները գլուխները դրականորեն շարժեցին: Կոմյերիտականը շարունակեց.


— Շատ չի մնացել, Ութսունիննն, շուտով մեր պետությունը հնարավորություն կունենա բոլորիդ ել հաց ու գործ տալու: Այն ժամանակ, — բացականչեց նա, — մենք ձեզ կվերցնենք նրանց ձեռքից և այնտեղ ապաստարան գտած բոլոր սրիկաներին իրենց տեղը ցույց կտանք: Միայն թե, Ութսունիննն, աշխատեցեք վոր նրանք ձեր մտքերը շատ չպղտորեն: Դրա համար ել կարդացեք մեր գրքերը, տարածեցեք մեր մտքերը, ժողովներ արեք, զրույցներ արեք, նույնիսկ ընկերական խոսակցություն մեջ զգույշ կերպով ձեր ագիտացիան տարեք...

Նա նստեց: Խոսեցին մյուսները և բոլորն ել համարյա նույնն ասացին: Քարտուղարը խորհուրդ տվեց չսահմանափակվել սկառտանոցով և վորքան կարելի յե շատ վորբուհիներ հավաքել իրենց շուրջը:

Նիստը վերջանալուց հետո, այն անաջին խոսող կոմյերիտականն Ութսունիննին տվեց քառասուն կտոր զանազան գրքեր, սկառտներ ի ու վորբուհիների մեջ տարածելու համար: Հետո խոստացավ ելի տալ և խնդրեց Ութսունիննին, վորքան կարելի յե շուտ շուտ հանդիպել իրենց: Դրանից հետո նորից բոլորը գո-

վեցին նրան, ժպտացին, փաթաթվեցին, ուսին խփեցին և նա մնաս բարե ասաց ու գնաց:

Վերադարձին, վտանգը դառավ կրկնակի: Ինչպե՞ս մտնել Կազախ Պոստ, քառասուն կոմունիստական գիրք թևի տակին... Չմնա՞լ արդյոք այնքան ժամանակ, մինչև վոր պահակ կանգնեն միլիցիոներները... Բայց նրանք հո պետական միլիցիոներներ չեն: Նրանք ել ամերիկացիների հավատարիմներն են: Այո, ներս չեն թողնի... Ո՞վ գիտե ինչքան դաշնակցականներ կան նրանց մեջ...



... հասնելով իրենց դպրոցի դռանը, նստեց այնտեղ ու բաց արավ գրքերից մեկը:

Չշտապե՞լ արդյոք, քանի դեռ Վարդանն է կանգնած պոստի վրա... Նա լավ տղա յե, Նա դրոշակախոսություն սովորեցրեց Ութսունինին: Բայց արդյոք նա ևս չի՞ մատնի իրեն: Չէ՞ վոր կոմունիստական գիրքն այնքան վտանգավոր բան է...

Հանկարծ, անսպասելի կերպով Ութսունիննը գտավ լուծումը: Մոտենալով Կազախ Պոստին, նա կիսաշրջան արեց և հասնելով իրենց դպրոցի պոստը, նստեց այնտեղ ու բաց արավ գրքերից մեկը:

Քիչ հետո, պահակ սկառուրը նրան նկատեց:

— Ութսունինն... Ի՞նչ յե՞ս... Յե՞րբ յեկար, վոր չտեսա, — հարցրեց նա:

— Վաղուց է, վոր այստեղ եմ, — ասաց Ութսունինն անփույթ տոնով:

— Այդ ի՞նչ ես կարդում:

— Դաս եմ սովորում, բայց արդեն մութն է, Հեռաքրքիր ե՛լն թրիքի ժամանակ չի՞...

Այս ասելով նա վեր կացավ և մտավ Կազախ Պոստ:

Այժմ մի նոր մտահոգություն. — ո՞ւր պահել գրքերը... Բարձի տանի՞ անհնար է: Թեկուզ կողպած արկղի մեջ՝ վտանգավոր է: Կարող են խուզարկել... Իեռ լավ է, վոր այդ ուրը Վազգենն է հեռախոսակայանի յերեկոյան հերթապահը: Վտանգավոր բեռը կարելի յե ժամանակավորապես նրա մոտ պահել, մինչև մի հարմար տեղ գտնելը...

Յե՛վ նա գողեգող շուրջը նայելով, քայլերն ուղղեց դեպի հեռախոսակայանը:

38. ԿՈՍՅԵՐԻՏԱԿԱՆ ԲՁԻՁ

Հեռախոսակայանում կայացավ կոմյերիտական բջիջի հերթական ժողով: Այս անգամ արդեն, Ութսունիննից, Հրաչից, Վազգենից ու Միրանից գատ՝ կար նաև Սմբատը, Ութսունիննը գեկուցեց նրանց իր բերած գրքերի մասին և պատմեց գավառային կոմիտեյի նիստում տեղի ունեցածի մասին:

— Իհարկե, ճիշտ են ասել, — համաձայնվեց Միրանը: — Հարկավոր է դաստիարակչական աշխատանք տանել: Ժողով, զրույց... Պարապմունք... Հետո՞ թերթ... Ի՞նչ կասեք թերթի մասին:

— Թերթ...

— Այո, պատի թերթ...

— Լավ ես մտածել, — վոզեվորովեց Հրաչը:

Ութսունիննը լուռ էր:

— Կգրենք, — բացատրեց Միրանը, — կպատրաստենք, հետո ծածուկ կախ կտանք դպրոցի միջանցքում... Լավ կլինի:

— Լավ կլինի, — համաձայնվեց Ութսունիննը, — բայց հարկավոր է այնպես անել, վոր վոչ վոք մեկ վրա չկասկածի: Իսկ յեթե պիտի կասկածեն, պիկի լավ է առանց թերթի: Միայն ժողովներով ու զրույցներով յուրա կգնանք...

— Չեն կասկածի, — վատահեցրեց Վաղգենը. — համենայն դեպս, մինչև հիմա մեզանից վոչ վոք կասկածի տակ չի...

— Տղաներ, — խառնվեց խոսակցութեան Սմբատը, — հետո հարկավոր ե այնպես անել, վոր մեր ձեռագրից մեզ չճանաչեն: Հարկավոր ե թերթը գրել կեղծ ձեռագրով:

— Յես հիանալի կեղծում եմ, — հայտնեց Հրաչը:

— Ապա փորձիր...

Նա վերցրեց թուղթ, թանաք և սպասողական նստեց:

— Ի՞նչ գրեմ...

— Գրիր, — թելադրեց Ութսուներկունը, — գրիր վերնագիրը. — կղզու վրա: Գրեցիր: Դե հիմա շարունակիր. — Վեց հազարից ավելի վորբուհիներ գտնվում են Կաղաչի Պոստում, ինչպես մի կղզու վրա: Շատ լավ: Հիմա գրիր. — Համարյա նույնքան տղաներ գտնվում են Պոլիգոնում... Ապրես, Հրաչ, լավ ես կեղծում: Յեթե կարողանաս այդ կերպ յերկար գրել, — հիանալի կլինի: Հիմա շարունակիր. — Յերեք հազար վորբուհիներ գտնվում են Արփաշայի ափին, Սևերսկի կոչվող գորանոցներում, վոր նույնպես մի կղզու տպավորութիւնն ե թողնում: Հրաչը, զգուշ կաց. «վ» տառը նմանեցնում ես քո ձեռագրին: Ուրեմն ինչ գրեցինք. — տպավորութիւնն ե թողնում: Հիմա գրիր. — Մի քանի հազար տղա և աղջիկ վորբեր ել գտնվում են քաղաքի վորբանոցներում, բայց նրանք ել են կտրված քաղաքից և նույնպես կղզիացած են...

— Յեվ այդ կղզիներում հավաքված. — շարունակեց Ութսուներկունը, — կոմունիստների թշնամիներն իրենց ուզածի պես դատարակում են այդ բազմահազար պատանիներին: Սրիկաներ... Սրիկաները ջնջիր: Թեև ամերիկական կոմիտեն պետութեան հետ պայմանավորվել ե, վոր նրանց մեջ վոչ կոմունիստական, վոչ ել հակակոմունիստական ագիտացիա չտարվի, այնուամենայնիվ վորբերն ու վորբուհիները դատարարակվում են դաշնակցական վարժապետների կողմից և նրանց ուզածի պես...

Հրաչն արագ արագ գրում եր: Ութսուներկունը վոզկորված շարունակեց:

— Քանի վոր այդպես ե, քանի վոր ամերիկական կոմիտեյի ու պետութեան պայմանը միշտ խախտվում ե, քանի վոր մի կողմից միշտ ագիտացիա յե տարվում, մյուս կողմից ինչո՞ւ չտարվի... Թող վորբերը նրանց ել լսեն, մեզ ել: Տեսնենք թե՞ կհավատան նրանք. — իրենց խաբողներին, թե՞ իրենց աչքերը բաց անողներին:

— Գրիր, Հրաչ. — Ու թող ամերիկական կոմիտեն չնեղանա պետութեանից, քանի վոր մենք մեր բջիջը կազմել ենք ինքնագլուխ կերպով և նախ քան վորնե մեկից խորհուրդ լսելը, մենք ինքներս ենք դեմ դուրս յեկել մեզ խաբողներին...

— Բավական ե, — բացականչեց Մինրանը, — մեր թերթի առաջին հոդվածն արդեն պատրաստ ե...

Ութսուներկունը զարմացավ:

— Այո, — հաստատեց Վաղգենը, — դա կլինի թերթի խմբագրականը: Դե հիմա թող, յես ել թելադրեմ: Գրիր, Հրաչ. — Ի՞նչ պիտի լինի այն սկանուների ապագան, վորոնք վոչ մի արհեստ չեն սովորում, բացի պահակ կանգնելուց...

— Հսեք, — ընդհատեց Հրաչը նրան. — յեկեք այսպես անենք. — դուք ցրվեցեք, պատահաբար մարդ կարող ե գալ: Հետո հերթով կգաք և ձեր հոդվածները կթելադրեք...

Սկանուները վոտքի կանգնեցին:

— Սպասեցեք, — դիմեց Սմբատը նրանց. — դուք մի խնդիր մոռացաք: — Ի՞նչպես ցրել գրքերը... Յես առաջարկում եմ յուրաքանչյուր հուսալի սկանուտի բարձի տակ ծածուկ կերպով մի գիրք դնել: Յեթե աղմուկ բարձրացրեց, նշանակում ե նրա հերն ել անիծած, իսկ յեթե ձայն չհանեց, պարզ ե, վոր հուսալի տղա յե և նրան կարելի յե նույնիսկ ընդունել մեր բջիջը...

Բոլորը զարմացան այս հնարքի վրա:

— Քննութիւնը բռնեցիր, — բացականչեց Ութսուներկունը: Հրաչը խփեց Սմբատի ուսին և ժպտաց: Վոչ վոք չեր հիշում, վոր նա ջոկատապետ ե: Չեր սխալվել ուրեմն Ութսուներկունը. — Սմբատը լավ մարդ եր:

Նայելով շուրջը, նրանք հեռախոսակայանից մեկ առ մեկ դուրս յեղան:

Դուան մոտ, նրանց ապշեցրեց այն անավոր աղմուկը, վոր լսվում եր հեռվից: Յերկինքը կարճրել եր և դեպի այդ կարմիրն եյին բարձանում բոցի լեզուներ ու ծխի բոխչաներ:

— Հրդեհ, — գոռաց Ութսուներկունը:

— Հրդեհ, — կանչեցին մյուսները և վաղ տվեցին դեպի աղմուկի կողմը:

— Հեղափոխութեան հրդեհն ե, — կատակի տվեց Մինրանը, — շարունակելով վազել:

— Ձահրուժար ե, — յենթադրեց Սմբատը. տեսնելով, վոր պահեստն եր վառվում...

Յե՛վ իրոք: Հագուստեղենի պահեստը կրակի մեջ եր... Տեղ հասնելով Սմբատը, Միհրանը և Ութսունինը տեսան համարյա իրենց բոլոր սկառտներին, վորոնք ճգնում էին հրդեհը մարել: Ճեղքելով վորբուհիների, պարապ նայող ծառայողների և նրանց կանանց ողակը, Ութսունինը, Սմբատն ու Միհրանը նետվեցին առաջ:

— Սրիկա՛, — մոմոաց Սմբատը, — թալանեց, թալանեց, իսկ վերջում, հետքը կորցնելու համար տես թե ինչ արավ...

— Ո՛վ, — հարցրեց Ութսունինը:

— Պահեստապետը, ո՛վ: Գլխավոր հաշվապահը, ո՛վ:

Կտուրի մի մասում, ուր ծխի խիտ ու թանձր մուժ եր կանգնած, հանկարծ բոց յերևաց և դուրս ժայթքեց կրակի հախուռն մի հորձանք: Սմբողջ շենքը կորել եր բոցերի մեջ: Տաքությունը խփում եր մարդկանց դեմքին և նրանք, խրտնած ձիերի նման յետ էլին թեքում իրենց գլուխները: Յերբեմն բոցերի միջից յերևում եր պահեստի ներսը, ուր այրվում էին հազարավոր կիսամաշ պինջակներ ու շալվարներ: Յերբեմն, կտուրի քանդված տեղերով դեպի յերկինք էլին թռչում մի քանի բոցավառված գլխարկներ և նորից յետ թափվում կրակի մեջ:

Փրկել անհնար եր: Առանց մեքենաների, առանց ջրախողովակների, սկառտները դուրյերով ջուր էլին դատարկում շենքի վրա, բայց ջուրը գոլորշիանում եր բոցի թևերին, դեռ նրա հիմունքին չհասած: Սկառտներից շատերն արդեն հուսահատվել էին և այժմ կանգնած դիտում էին ավերումը:

Հանկարծ կոկորդ պատռող մի ձայն հնչեցրեց իր ահազանգը:

— Ոգնեցե՛ք... Մազութի պահեստը վտանգի տակ ե...

Մի վարկյանում բոլորը նետվեցին դեպի ձայնը և վառվող պահեստը փնաց մեն-մենակ:

Մազութի ամբարները գտնվում էին հիսուն քայլ հեռավորության վրա, բայց այնտեղ դրված բենդինի տակառները հեռվից ծծում էին հրդեհի ջերմությունը: Այժմ նրանք չափացանց տաքացել էին և յուրաքանչյուր վարկյան կարող էին պայթել:

Մոռանալով ամեն տեսակ վտանգ, սկառտները նետվեցին դեպի տակառները և սկսեցին սառը ջուր թափել նրանց յերկաթե կողերին: Բայց հազիվ ջուրը յերկաթին հասած՝ տակառն անմիջապես չորանում եր հեղուկի վերջին նշույլից: Հարկավոր եր ելի լցնել, ելի լցնել, շարունակ լցնել:



Ութսունինը մի տակառի վրա կանգնած՝ վերցնում եր սկառտների բերած սառը ջուրը և լցնում նրա վրա:

Այրվող պահեստը բոլորովին մոռացվեց: Ութսունիննը մի տակառի վրա կանգնած՝ վերցնում էր սկառուտների բերած սառը ջուրը և լցնում նրա վրա: Յերբ այդպիսով տակառները բավական հովացան, աղաներն սկսեցին նրանց հրել հրդեհից հեռու, ապահով տեղեր: Հենց այդ ընթացքին լավեց հոնդոց և ոգնության հասավ քաղաքի հրդեհաշեջ խումբն իր յերկու ավտոմոբիլներով: Իսկույն հրշեջները ցած թռան, մի քանի վարկյանում կարգի գցեցին գործիքները և սկսեցին ջրի նեղակներով ծածկել կրակի պատը: Նրանց վտակեփայլ սաղավարտները փայլում էին բոցերի տակ և նրանք նման էին յերրորդ դասարանի դասադրքից վերցրած հոռմեացիներին:

Մտա, կեղտոտված, հոգնած Սմբատը մոտեցավ Ութսունիննին: — Յես գնում եմ հեռախոսակայան, — հայտնեց նա. — պիտի մի հողված թելադրեմ այս հրդեհի իսկական պատճառի և իսկական հեղինակների մասին...

Քիչ հետո լուր տարածվեց, վոր Քիրազը կանչում է հրդեհ հանգցնելուն լավագույն կերպով ոժանդակող սկառուտներին, շուկոլատով պարգևատրելու համար: Կանչվածների մեջ էր նաև Ութսունիննը:

39, ՖՈՒՏԲՈԼ

Վերջապես յեկավ սարսափելի ուրը: Յերբ Ութսունիննը մոտեցավ իրենց միջանցքում կախված գրատախտակին, տեսնելու համար, թե վոր ջոկատներն են այդ որն իրենց հետ ֆուտբոլ խաղալու, նա կարդաց. «Առյուծներ և վագրեր»... այդ անմեղ կենդանիների անունով Քիրազն անվանել է տարրինակ ֆուտբոլ խաղացողներին:

Մինչդեռ բոլոր մյուսները ծիծաղում էին և իրենց էին ուտում անհամբերություներից, քսանյերկու դատապարտվածները շրջում էին սկառուտնոցում ինչպես ուրվականներ:

Այդ ուրը, հատուկ խնամքով մաքրեցինք ֆուտբոլի դաշտը և տեղ պատրաստեցին սովորականից ավելի շատ հանդիսատեսների համար: Կավիճի ջրով պոկեցին այն շրջանակը, վորի ներսում պիտի իրենց տանջանքը կրեին քսանյերկու խեղճ սկառուտներ:

Այդ ուրը թե Սիոնը, և թե բոլոր մյուս հայ արիները հատուկ սիրով էին վերաբերվում դեպի քսանյերկու դատապարտված-

ները: Նրանք չէին բարկանում, յերբ իրենց ծաղրից կատաղած նրանցից վորևե մեկը խփում էր իրենց: Սիոնը մեծ սիրով շոյում էր Ութսունիննի մազերը և Ոհանը շոկոլատ էր առաջարկում Հրաչին: Նրանց համար թանգ էր քսանյերկու դատապարտվածներից յուրաքանչյուրը, վորովհետև պիտի ուրախություն պատճառեր նրանց ժամ ու կիսվա տանջանքի գնով: Յեվ սոսկալի յեր նրանց փաղաքջանքը, քան թե նրանց հարվածները, յեթե խփեցին:

Այդ ուրը հասարակ սկառուտներն ահով ու ցավակցությամբ էին նայում քսանյերկու դատապարտվածների աչքերին: Նրանք վշտակցում էին առյուծներին ու վագրերին, բայց վոչնչով ոգնել չէին կարող: Նրանք պայծառ պատկերացնում էին, թե վորքան դժվար է իրենց ընկերների վիճակը: Նրանք ատամներն էին սեղմում իրար, դուրս չթողնելու համար այն հայրոյանքը, վոր պատրաստել էին սկառուտապետի համար...

Ժամը չորսին մոտ, ահալի լուրեր հասան սկառուտանոց: Իեռ մի ժամ կար ֆուտբոլի սկսվելուն, բայց դաշտն արդեն շրջապատված էր հազարավոր դիտողներով... Քսանյերկու դազաններն այդ լուրը լսեցին մթագնած գիտակցությամբ և սկսեցին նայել անխմաստ հայացքով: Նրանք վոչ մի բառ չէին փոխանակում վոչ միմյանց հետ, վոչ էլ ուրիշներին:

Ժամի հինգին մոտ, Քիրազը դուրս յեկավ իր սենյակից:

— Սկառուտներ, արդեն ժամանակն է, — հայտնեց նա:

Իսկույն ուրախության վոռնոցը բռնեց վողջ ննջարանն ու վողջ շենքը: Սիոնն ու Ոհանը դուրս յեկան պետի մոտից, թևերի տակին սպորտային շապիկի կույտեր:

— Յեկեք, յեկեք անուշիկներ, — կանչեց Սիոնը դիվային հրճվանքով, — յեկեք հագցնեմ:

Նա ճանկեց վագրերից մեկին և աննկարագրելի հաճույքով նրա վիզն անցկացրեց սպորտային շապիկը դեղին ու կանաչ յերիզներով: Սկառուտը շապիկն ընդունեց դահիճի պարանի պես և ձայն չհանեց: Նույն ընթացքին, Ոհանն Ութսունիննի գլուխը կոխեց կապույտ ու կարմիր յերիզավոր շապիկի մեջ: Քիչ հետո, յերբ յերևաց Ութսունիննի դեմքը, նա գունատ էր մահապարտի պես:

— Վոչինչ, կմարդկեք, կսովորեք ֆուտբոլ խաղալ, — քրքրում էր Գարեգինն իր հաստ շրթունքների միջից և անդադար ներս ու դուրս անում Քիրազի մոտ: Մի անգամ սենյակից դուրս

յեկավ Պրմենը: Նա նայեց քսաներկու լղարներին ու գունատներին, ժպտան յեկավ, բայց հետո նա ժպտալ պահեց և լուրջ տոնով խորհուրդ տվեց չանհանգստանալու, վորովհետև անանձնապեն վոչինչ չի պատահելու:

Քիրազը դուրս յեկավ արտակարգ պճնադարդված: Նա ֆուտբոլի գնդակն առավ թեի տակ և անցավ խմբի գուլեր: Բայց նույն րոպեյին, քսաներկու դատապարտվածներ մի անգամ ևս փորձեցին ազատվել:

— Պարոն պետ, խնդրում ենք, շատ ենք խնդրում: Մենք ամաչում ենք, մենք այնպիսով վոչինչ սովորել չենք կարող... Պարոն Քիրազ...

Բայց Քիրազն այս անգամ ավելորդ դատավ նույնիսկ լսելը: Նա սուլեց սուլիչը և հրահանգեց.

— Զգաստ...

Ու կատարվեց անորոշման մի բան: Կորցրած իրենց վերջին հույսը և ատելութամբ լցված բոլորի դեմ, քսաներկու դատապարտվածներն անխոս յենթարկվեցին հրամանին: Թող լինի, ինչ վոր լինելու յե: Նրանք կխաղան, նրանք չեն հրաժարվի և վերջապես նրանց բավական ծանոթ ե այդ նզովյալ ֆուտբոլ խաղը: Նրանք շատ են տեսել ուրիշներին խաղալիս: Կփորձեն իրենք ել...

— Բայլ առաջ, մերջ...

Մինչդեռ քսաներկուսը համարձակ քայլերով առաջ շարժեցին, բոլոր մյուս սկսուտները վազքով սլացան դեպի դաշտ, հարմար տեղ գրավելու համար: Այնտեղից, դաշտից, արդեն լքվում եր նվազախմբի ձայնը...

Այն ինչ ե այնտեղ: Մարդիկ են: Այո, մարդիկ են: Իրենց են սպասում: Անհամբեր են:

Քսաներկու հայացքներ նայում են պետի լայն թիկունքին, հետո այն կտր առարկային, վոր դրված ե նրա թեի տակ: Բայց անա նրանց ականջներն ավելի պարզ են լուսւմ նվազը: Ընդհանուր դժժոցի հետ նրանց լսողությանն են խփում առանձին խոսքեր ու բառեր: Նրանք գիտեն, վոր արդեն մտել են դաշտ, բայց սարսափում են շուրջը նայել: Սակայն իր վրա մեծ ճիգ գործադրելով, Ութսուներին իր հայացքը վար ե առնում Քիրազի մեջքից:

Վոչինչ չի յերևում: Միայն մի գորշ, հաստ շրջանակ, վորն ողակել ե դաշտը: Այդ մարդիկ են: Յերևի նրանց մեջ են նաև

Սաթիկն ու Արշալույսը, Իսկուհին ու Նվարդը... Իսկ ինքը, վաղը նորից դպրոց պիտի գնա...

— Կանգ առ:

Միթե չեյին կանգնել... Իսկ նրան թվում եր, թե արդեն կանգնել են և ինչ վոր սպասում են:

Քիրազն իր թեի տակից վար առավ այն սարսափելի կտր առարկան և դրեց գետին: Ինչ դանդաղ ե շարժում նա: Ուղղակի անտանելի յե: Գոնե շուտ տար սուլիչը, գոնե շուտ սկսեք այն, ինչ անխուսափելի յե... Սակայն ինչ դանդաղ ե շարժվում պետը: Գնդակի վրա կոացած՝ նա աշխատում եր իր ճիշտ տեղում կանգնեցնել նրան:

Բայց վերջի վերջո Հրաչը չհամբերեց: Իր վտոքերին հագցրած ֆուտբոլային ծանր ու մեխապատ կողիկներից մեկով նա մի ուժեղ հարված հասցրեց կտր դահիճին: Նա թռավ ողի մեջ, իսկ Քիրազն իր արյունոտած քիթը բռնելով մի կողմ ցատկեց: Ու սկսվեց...

Վճրը վորոց եր, հիվ եր, հում եր, ինչու յեր, ինչպես եր, — վոչ վոք չգիտեր: Վերջապահ եր, թե առաջապահ եր, գուցե կենսորոնապահ եր, աջ թե եր, թե ձախ եր, բերդապահ եր, ինչ եր... Տալիս եյին, շարժում, փշրում, խփում, քաջքում: Հինգ-վեց հոգի իրար վրա ընկած, փորձում եյին գտնել գնդակը, վորն իրենց յենթարկութամբ այդտեղ պիտի լիներ, այն ինչ գնդակը հետու բերդի դռնից իր համարձակ մուտքն եր կատարում բերդապահի գլխի վրայով: Հետո այդ կտր առարկան, անբացատրելի կերպով նորից հայտնվեց տաք կովի կենտրոնում: Մեկը փորձեց խփել նրան, բայց վրեպեց, միայն կարողանալով իր ընկերոջ գուլերը շարժել: Գնդակն ընկավ մի ուրիշ վտոքերի մոտ: Բայց նա սարսափած յետ ցատկեց, վորովհետև գիտեր, թե ինչ ե նշանակում գնդակի վտանգավոր մոտակութունը: Յեվ իրոք, — նույն վայրկյանին կարմիր ու կապույտ, դեղին ու կանաչ բծավորների մի ամբողջ սլացավ դեպի նա: Սկսուտն սկսեց փախչել առանց գնդակի, բայց գանձները շարունակում եյին նրան հալածել: Շուտ դալ ապացուցել վոր գնդակը իր մոտ չե, — անհնար ե: Նախքան վորեն բանի ձեռնարկելը, նրանք իրեն բզիկ բզիկ կանեյին իրենց ծանր կրունկներին տակ:

Վերջապես նա հասավ բերդին, յերկու ցատկումով թռավ, բռնեց բերդի փայտիցից մեկը և սողաց վերև: Նա փրկված եր: Հալածողների խումբը սլացավ յետ, դաշտերի մի այլ ծայրում փնտրելու գնդակը:

Նրանք հասան դիմացի բերդի մոտ այն ժամանակի յերբ գնդակն արդեն վեցերորդ անգամ ներս եր մտնում բերդի միանգամայն ազատ դռներին: Սկսվեց նոր պայքար: Մի քիչ խախտելով ֆուտբոլի որենքները, նրանք գնդակը ձեռք ձեռք եյին անցկացնում: Վերջապես մեկին հաջողվեց բռնել գնդակը: Նա դրեց նրան իր թևի տակ, թևով քիթը սրբեց և սկսեց փախչել: Արդեն բավական հեռացել եր իրեն հետևողներին, յերբ իր առաջը կտրեց մի այլ սկառու:

- Տուր գնդակը:
- Չեմ տա:
- Քեզ ասում եմ՝ տուր:
- Ասեցի, վոր չեմ տա:
- Տուր: Թող մի քիչ ել յես գլորեմ...

Այս խոսքերով նա դուրս քաշեց գնդակն ընկերոջ թևի տակից, բայց ուժեղ ցնցումից, գնդակը դուրս պրծավ իր ձեռքից ու գնաց: Նրան տարավ Ութսունիններ: Գազազած սկառուը հարձակվեց ընկերոջ վրա և սկսեց ծեծել: Նա ևս յետ չմնաց: Ու մինչդեռ հեռվում, քսան հոգի պայքարում եյին գնդակի համար, դաշտի ամայի մի ծայրում կանգնած, յերկու սկառուներ, յերկուսն ել դեղին ու կանաչ շերտավորներ, սկսեցին տուր ու դմփոցը:


Ութսունիններ գետնի վրայով գլորում եր գնդակը իսկական ֆուտբոլիստի պես: Վոչ վոք չեր կարողանում նրան խել իրենից: Բոլորը վազում եյին նրա յերկու կողմերով անթարթ հետևելով գնդակի ընթացքին: Ամենայն հեշտությամբ Ութսունիններ գնդակը գլորեց մինչև վերջ, ձեռքի մի հարվածով նրան ներս շարտեց իրենց սեփական բերդի դռներին:

Իսկ դաշտի ամայի մի անկյունում, սկառուը դեռ գնջում եր իր ընկերոջը:

— Գնդակը չե՞ս տալիս, հա՛: Բերդս թողել յեկել եմ գնդակի յետևից, իսկ սա չի տալիս: Դե կեր:

Մի քանի հազար կողորդներ դողդողում ելին սոսկալի քրքրիչից: Յերկու վարժապետներ ծիծաղեց ուշաթափվեցին: Հայ արիների աչքերը լցվել եյին հրճուցի արցունքով և նրանց կրծքներից դուրս եյին գալիս ուրախության ահուկ ձայները: Մի ձեռքով իր արյունոտ քիթը բռնած, Քիրազը մյուս ձեռքով սուլիչը բերնին եր մոտեցրել: Նրա դեմքը կարմրել եր, նրա վզի ու ճակատի յերակներն ուռել եյին, իսկ քսաներկու հերոսներից վոչ մեկը չեր կարող լսել նրա ձայնը:

Դրուժյունը փրկեց քսան վազող սկառուը: Նա վազեց դեպի դաշտի կենտրոնը, վտանգի յենթարկելով իր կյանքը և իր վիթ-



Տալիս էյին, ջարդում, փշրում, խփում, քաշքշում...

խարի նվազարանն սկսեց աշխատեցնել: Յերբ աններդաշնակ յելվեցների հրոսակախումբը հասավ քսաներկուսի ախանջներին,

նրանք հասկացան, վոր հարցն իրենց ե վերաբերվում: Նրանք դադարեցին պատերազմելուց և քրտնած, արյունոտած, փոշոտած, ճղճղված, կանգ առան: Նրանք անթարթ նայում էին գնդակին, առաջին սուլոցի հետ միաժամանակ նորից նրա վրա հարձակվելու համար: Բայց յերբ վերջապես զգացին, վոր խաղը վերջացել է, Հրաչն սկսեց հետաքրքրվել, թե վոր խումբն է հաղթանակ տանողը...

Քիրազը նետվեց դաշտ և վորոտաց.

— Սկառտանոց կորեք, ձրիակեր սրիկաներ: Ել ինչո՞ւ համար ենք պահում ձեզ, յեթե մի Ֆուտբոլ խաղալ ել չգիտեք... Հալա մի սրանց շենքին նայեցեք, շնորքին. շնուտ, դեպի տուն:

Յե՛վ առյուծները, և՛ վագրերը, պարտվել էին: Նրանք գլխիկոր անցան դեռ ժպտացող ծառայողների և տխուր նայող վորբուհիների մոտով, և իրենց մոլոր քայլերն ուղղեցին դեպի սկառտանոց: Բայց յերեկոյան, Քիրազի բարկութունն իջավ և նա շոկոլադով պարգեվատրեց Ութսունինին ու իրար ծեծող յերկու սկառտներին, իբրև ամենալավ Ֆուտբոլիստների:

Յե՛վ այդպես, Ֆուտբոլը խաղացվեց, ծանր քարն ընկավ քսաներկուսի ուսերից և ծիծաղից թարմացած Քիրազը, Պիմենն ու հայ արիները գնացին քնելու:

Ծանր որը մնաց յետևում...

40. ՈՒԽՄՊԻԱԳԱ

Ութսունինը մտածում եր. — այդ ինչիցն է, ջոկատապետները վատ են նաև այն ժամանակ, յերբ նրանք վոչ վոքի չեն ծեծում: Յերևի այդ նրանիցն է, վոր բոլոր ջոկատապետները, բացի Սմբատից, միայն մի բանի մասին են մտածում. — ծեծով լինի թե սիրով, սկառտներին յենթարկել իրենց և նրանց գլուխը լցնել հազար ու մի մութ բաներով...

Սմբատն ել եր նրանցից, բայց բջիջն ուղղում է նրան: Այժմ նա անճանաչելի յե դարձել: Անճանաչելի յեն դարձել նաև յերբորդ ջոկատի սկառտներից շատ շատերը: Այժմ նրանք իսկապես վոր, սիրում են Սմբատին: Բավական է, վոր նա մի բան հրահանգի, նրանցից յուրաքանչյուրը կշտապի կատարել այդ: Առաջին ջոկատապետ Գասպարն ուղղակի նախանձում է յերբորդ ջոկատի կարգապահութանը: Իսկ Սմբատից՝ նա պարզապես արնաքվում է Ուխմպիադայից հետո Քիրազը ջոկատապետներից

մեկին ընտրելու յե իրեն ոգնական: Գասպարն ուղղում է, վոր անպայման այդ ինքը լինի: Իրա համար ել, նա չի խնայում վոչ մի ջանք, իր ջոկատն ամենից լավը դարձնելու համար:

Տեսնելով Սմբատի հաջողութունը, Գասպարը նույնպես սկսեց իր բոլոր սկառտների հետ քաղցր վարվել, թեև զգացվում եր վոր դա հատուկ նպատակով արված քաղցր վերաբերմունք է և վոչ թե անկեղծ ցանկութուն: Բայց ինչ ել վոր լիներ, սկառտներն սկսեցին ծեծից ազատվել:

Գասպարի որինակին հետևեցին Լևոնն ու Մամիկոնը: Իսկ ինչ վերաբերում է հինգերորդ ու վեցերորդ ջոկատապետներին, ասկա նրանք իրենց սկառտների հետ միշտ ել յեղել էին պարզ ընկերներ:

Յե՛վ այսպես, սկառտներն սկսեցին մարդավարի վերաբերմունք տեսնել իրենց ջոկատապետներից, առանց գիտենալու, վոր դա Ութսունինինի ու բջիջի հաղթանակն է...

Սակայն հայ արիները մնացին անզրոգելի: Նրանք վոչ միայն դժգոհ էին ջոկատապետների մեղմ վերաբերմունքից դեպի սկառտները, այլև աշխատում էին նրանց չարածն իրենք անել: Ընդհանրապես հայ արիները սկառտանոցի ամենահասակավոր և ամենատեղի տղաներն էին:

Այն սկառտները, վորոնք հանդիսանում էին կոմունիստական գաղափարների դեմ կռվող միության անդամներ, այժմ նույնպես դարձել էին հայ արիներ և նույնպես վերևից էին նայում հասարակ սկառտներին:

Հասարակ սկառտ... Յուրաքանչյուր խմբակավար, այսինքն տասնապետ, իրեն ընկճված եր զգում, մինչև վոր հայ արի դառնար: Նրանցից միայն մի քանիսն էին մնացել հասարակ սկառտներ, վորոնց թվում նաև յերբորդ ջոկատի Ընձուղտի խմբակավարը: Սակայն նա շատ լավ տղա յեր, և ըստ յերևույթին վոչ մի ցանկութուն չեր ցուցաբերում հայ արի դառնալու:

Քիրազը խոստացել եր, ուխմպիադայից հետո հայ արի դարձնել այն բոլոր սկառտներին, ովքեր առաջին մրցանակներ կտանային: Իսկ ուխմպիադան կայանալու յեր կիրակի՞ որը:

Ութսունինը փորձեց նորից քաղաք ծղկվել, բայց մինչև կիրակի այդ անհնար եր: Յուրաքանչյուր բոլոր վորևե անթիվ համաքում էին սկառտներին և վնայ նրան, ով ներկա չգտնվեր:

Ահա իրերն այդ դրության մեջ էին, յերբ յեկավ կիրակի որը:

Դեռ վաղ առավորովանից, Կազաչի Պոստը՝ գտնվում էր տոնական ամենաբարձր տրամադրութեան մեջ: Տկտկում էին թրմբուկները, նվագարանների վրա իրենց նոր սովորած յեղանակներն էին ստուգում սկաուտները, ճյուղերով, ծաղիկներով ու դրոշակներով զարդարվել էր վողջ Կազաչի Պոստը:

Վահան Քիրազը խնամքով ուղղում էր իր արև շան գերեզմանի վրա տնկված ընտիր ծաղիկները: Գերեզմանն առնված էր յերկաթի ցանկապատի մեջ և Քիրազն իր լուսամուտից հաճախ թախիժով նայում էր նրան:

Փուտրոլի դաշտը, մարզանքների դաշտը, վազքի ճանապարհը, ամեն ինչ խնամքով մաքրված էր և սպիտակ յերիզներով սահմանված: Սկաուտները նոր զգեստները հագել պատրաստվել էին, յերբ գլխավոր պոստի ուղղութեամբ քաղաքի ճանապարհի վրա հնչեց նվագախմբի ձայնը:

— Չորրորդ ջոկատ, գնացեք դիմավորելու, — կարգադրեց Քիրազը, ծաղիկների միջից պոկելով ավելորդ խոտերը:

Չորրորդ ջոկատը գնաց: Յեկողները Պոլիգոնի սկաուտներն էին: Նրանք մոտ չորս հարյուր հոգի էին: Հագել էին նույնպիսի զգեստներ, բայց գլխներին դրել էին կլոր սպիտակ գլխարկներ: Կանաչավուն նավակ-գլխարկներն ընդունված էին միայն Կազաչի Պոստում:

Պոլիգոնները յեկան և սպասելով մյուս հյուրերին, սկսեցին ազատ շրջել Կազաչի Պոստում: Տեղի սկաուտներն արտաքին հարզանքով, բայց թագցրած հպարտութեամբ էին նայում յեկվորներին, վորովհետև Կազաչի Պոստի սկաուտանոցը հոչակված էր ամբողջ Հայաստանում, իբրև ամենալավը:

Քիչ հետո, քաղաքի սկաուտներից յեկան յերեք հարյուր հոգի: Արփաչայի ափի Սեվերսկի գորանոցներից վոչ վոք չեկավ, վորովրետև այնտեղ բոլորն աղջիկներ էին:

Կազաչի Պոստն այլևս վոչ վոքի չէր սպասում, յերբ հանկարծ գլխավոր պոստից հեռախոսը զանգահարեց: Քիրազը լսեց, իսկույն հագավ իր տոնական զգեստն ու յելավ դուրս:

— Շնուտ, — բացականչեց նա, — գնանք Յերևանի սկաուտներին դիմավորելու:

Իրորը վոգեվորվեցին: Մի բոպեյում իննհարյուր քառասուն սկաուտներն էլ շարք կանգնեցին և յերեք նվագախմբերի յերաժշտութեան տակ շարժվեցին դիմավորելու յերևանցիներին:

Յերևանցիները, թվով հարյուր հոգի, պոստի մոտ սպասում էին: Տեսնելով դիմավորողներէ ահագին բանակը, նրանք վոգեվորված առաջ շարժվեցին և դաշնակցական «Մեր Հայրենիք» յերգի նվագի տակ մտան Կազաչի Պոստ:

Ութսունինն ապշեց: Ի՞նչպես թե «Մեր Հայրենիք» նվագել կոմունիստական յերկրում... Գոթվել է յերևանցիների նվագախումբը...

Սակայն նվագախումբը դժբախտաբար չէր գոթվել: Նա շարունակում էր նվագել, շարժելով հայ արիների վոգեվորված ջղերը: Նրանց սկաուտապետ Ոնիկը համբուրվեց Քիրազի ու Պիմենի հետ և միացավ նրանց: Այդպես շքեթը հասավ սկաուտանոց և կանգ առավ նրա դիմաց: Իսկույն Պիմենը կանգնեց յերկաթե ձողի տակ դրված մի սեղանի վրա և նայելով սկաուտական գլուխների ծովին, մատը վեր բարձրացրեց դեպի ձողի ծայրին ֆոֆոացող դրոշակները և վորոտաց:

— Նայեցեք այս յեռագույնին և նրա տակ գտնվող կանաչ դրոշին...

Ութսունիննը նայեց իրենց ջոկատի դրոշին, վորը սովորականի նման, միայնակ վորովորում էր հերթականութեանից դուրս բոլոր ջոկատների դրոշակներից ցածր...

— Նայեցեք, — կրկնեց Պիմենը. — այս յեռագույնը մեր նշանն է, իսկ այն կանաչը՝ խորտակվող Իսլամի — մահմեդականների...

Ութսունինն այլևս չլսեց: Նրան թվաց թե, ինքը յետ և գնացել մի տարով և նորից լսում է խմբապետների ճառերը, վորոնք ժողովրդին քարոզ են կարգում ջարդել թուրքերին:

Պիմենը վողջունեց Հայաստանի զանազան վայրերում գտնվող սկաուտների այդ ներկայացուցիչներին և բոլոր նվագախմբերի նվագի տակ իջավ վար:

Մի քիչ անց, յեկան հավաքվեցին նաև Կազաչի Պոստի հարավոր վորբուհիները և ոլիմպիադան սկսվեց: Սկաուտները շարքերը քանդեցին և սկսեցին խառնիխուռն կանգնած, նստոտած, դիտել:

Հանկարծ Ութսունիննի աչքն ընկավ Աչիկին: Ուզեց մոտենալ, բայց հանկարծ լսեց «չեմ խառնվի» նախադրուշական ձայնն ու քաշվեց մի կողմ: Յերկաթե փայլուն սկավառակը սլացավ և ընկավ փափուկ հողի մեջ: Ութսունիննը մոտեցավ Աչիկին:

— Աչիկ, յեղբորիցդ նամակ ունեմ:

— Ո՞ւր է, — ուրախացավ Աչիկն ու տեղից վեր թռավ:

— Նստիր, հիմա կրեմ, — հանգստացրեց Ութսունինը ու գնաց նամակի յետևից: Յերբ ծրարը ձեռքին ննջարանից դուրս յեկավ, նորից լսեց «չեմ խառնվի» խոսքը, նորից տեսավ ողով թոչող սկավառակը և հանկարծ՝ Աչիկի սուր ճիչը: Նա խելագարի պես ցատկեց այն կողմը և նրա յետևից արշավեցին ուրիշները:

Աչիկը մեռել էր: Սկավառակը դիպել էր նրա փորին: Նա նստած էր իր նախկին դիրքով, ծալապլատիկ: Նրա գոգում, չաղ բոջոնի պես ընկած էր փայլուն, արծաթավուն սկավառակը:



Նրա գոգում, չաղ բոջոնի պես ընկած էր փայլուն, արծաթավուն սկավառակը:

Աչիկը փակել էր իր աչիկներն ու կարծես քնել էր: Աչիկ, Աչիկ, հեկեկաց Ութսունինը և նետվեց դեպի նա, բայց նրան յետ պահեցին... Քիրազն էր:

— Տարեք դիակը, — շնչաց նա: Ապա դառնալով դեպի հավաքվածները, հայտնեց.

— Վոչինչ չկա, հանգստացե՛ք: Շարունակում ենք ոլիմպիադան...

Ուրեմն Աչիկը չկա... Աչքերից լուռ կերպով արցունքներ թափելով, Ութսունինը նայում էր իր ձեռքի ծրարին: Ուրեմն Աչիկն այլևս չկա... Այլևս վոչինչ չի լսի իր յեղբոր մասին ու յերբեք, յերբեք չի տեսնի նրան...

Նա թևով սրբեց աչքերը, բայց նրանք չեյին չորանում: Հետո բաց արեց նամակը և սկսեց կարդալ:

«Բժ անուշիկ քույրիկ Աչիկ: Ձեր սկառուսն ինձ տեսավ, բայց յես խաբեցի նրան, վոր Վաչիկը յես չեմ: Յես վախենում եյի, վոր նա ինձ կըռներ ու նորից վորբանոց կտաներ: Աչիկ ջան, յես շատ, շատ կարոտել եմ քեզ: Փախիր վորբանոցից: Յեկ ինձ մոտ: Յես քեզ կպահեմ: Հաց կճարեմ, խաղող, ձմերուկ... Աչիկ ջան, ազատ լինելը շատ լավ բան է: Յեկ ինձ մոտ: Սխր վորբանոցում քեզ ել են ծեծում ինձ նման: Համբուրում եմ քեզ: Աչիկ ջան: Քո յեղբայր՝ Վաչիկ»:

Աչիկն այլևս այս նամակը չի կարդա...

41. ԱՌԱՋԻՆ ՀԱՍԱՐԸ

Ութսունինն անշուշտ վեր կացավ:

Ինն ամբողջ սկառուտանոցը քնած էր: Նա հագավ իր շորերը, գրքերը դրեց իր թևի տակ և քայլերն ուղղեց դեպի դպրոց:

Չով առավոտ էր: Ալազյաղի գազաթը դեռ նոր էր վոսկեվառվել արևի ճառագայթներով: Բայց Ութսունինը ժամանակ չուներ նրան նայելու: Նա շտապում էր: Ահա հագաչի Գոստի միջով անցնող յերկաթագիծը: Շուտով կլինի դպրոցը: Ահա մոտեցավ: Ահա հասավ: Նրա սիրտը բաբախում էր անհամբերությանից: Մի բուպե նա կանգ առավ շենքի անկյունի մոտ, վորպեսզի դպրոցի մաքրարարը մի կողմ գնա և իրեն չնկատի: Բախտը ժպտաց Ութսունինին: Հենց վոր մաքրարարը միջանցքից դուրս յեկավ և գնաց աղբը թափելու, Ութսունինն անմիջապես ներս մտավ: Արագ բարձրացավ յերկրորդ հարկը և նրա փոքրիկ միջանցքի պատի վրա փակցրեց գաղտնի թերթի առաջին համարը: Բայց թիչ է այս... Սանդուխտների վրա վոտնաձայներ լսվեցին: Նա շտապ մտավ իրենց դասարանը և բանալու անցքից նայեց: Վերև բարձրացավ հավաքարարը, անփույթ նայեց պատի թերթին, մտավ դասարաններից մեկը, վերցրեց այնպեղից իր պինջակն ու գնաց: Ութսունինը դուրս յեկավ նրա յետևից և նորից վերադառնալով սկառուտանոց, հանվեց ու պառկեց իր անկողնում:

Մի քանիսն անտարբեր նայեցին նրան, յենթադրելով, վոր նա գալիս է արտաքնոցից:

Իրանից հետո, արդեն, սկսվեց իսկական առավոտը:

— Վոտքի, — բղավեց Սմբատը, մոտեցավ Ութսունինին, թեթև քաշեց նրա վերմակը և կամաց հարցրեց.

— Պատրաստ ե...

— Պատրաստ ե, — պատասխանեց Ութսունինինը ու սկսեց հագնվել: Հրաչն անջքով արեց, նույն ձևով պատասխան ստացավ ու ժպտաց:

Յերբ սկսուտները հասան դպրոց, այնտեղ արդեն հավաքվել էին ահագին թվով վորբուհիներ ու թերթն էյին կարդում: Միջանցքում տեղ չկար: Յեկել էյին նաև մյուս շենքում տեղավորված դպրոցների աշակերտուհիները: Իսկ ուսուցիչներից և վոչ մեկը, ըստ սովորության, այդ վաղ ժամին դպրոցում չեր լինում:

Ութսունինին ու Հրաչը մի կողմ կանգնած, ներքին հրճված լսողությանն էյին հասնում քաջալերական խոսքեր և «ճիշտ ե, շատ ճիշտ ե» բացականչություններ: Նրանց հաշվով, թերթն արդեն կարդացել էյին բոլոր աշակերտների կեսից ավելին:

Սկսուտները նույնպես կարդում էյին: Կարդում էյին նաև հայ արիները: Նրանք մոլորվել էյին. — պոկե՛լ թերթը պատի վրայից, թե վոչ: Նրանք կասկածում էյին, վոր թերթն այնտեղ խփված է դպրոցի վարիչի գիտությամբ: Գոնե այդպես էյին փսփսում Հրաչը և Ութսունինինը նրանց քթի տակ:

— Պոկենք, — շշնջում էր Հրաչը, հայ արիներին լսելի ձայնով:

— Կարիք չկա, — պտտասխանում էր Ութսունինինը. — հանկարծ կարող են մեղ մեղադրել: Ո՞վ գիտե, ո՞ւմ թույլտվությամբ է խփված...

— Ո՞վ թույլ կտա այդպիսի բան, — զարմանում էր Հրաչը:

— Դու գիտես, — լվանում էր Ութսունինին իր ձեռքերը. — ուզում ես՝ պոկիր: Յես չեմ խառնվի...

Հրաչը նույնպես, իբրև թե վախենում էր պոկել: Նրանց հետևելով, ձեռքերը ծալել էյին նաև հայ արիները:

— Տեսնես ո՞ւմ արածն է, — հարցնում էր մի հայ արի:

— Վորբուհիների գործը կլինի, — պատասխանում էր մի ուրիշը և իր խոսքը հաստատելու համար դիմում էր Ութսունինինին. — ճիշտ չե՞մ ասում:

Յերևի՞՞ ճիշտ ե, — յենթադրում էր Ութսունինինը և լռում:

Հանկարծ աղջիկները մեջ շարժվեց. — վարիչը... վարիչը... վարիչը...

Իսկույն շատերը ցրվեցին իրենց դասարանները կամ իջան ներքև: Վարիչը վեր բարձրացավ ծանրաքայլ և հարցրեց աղջիկներին:

— Ի՞նչ է պատահել: Ի՞նչու յեք հավաքվել...



Միջանցքի պատի վրա փակցրեց գաղտնի թերթի առաջին համարը:

Վորբուհին լուռ ցույց տվեց պատի թերթը:

Վարիչն իսկույն մոտեցավ, ակնոցները դրեց, կարդաց մի քանի տող և սառը հարցրեց:

— Ո՞ւմ արածն է...

Պարզ է, վոր պատասխան սպասելը հիմարություն կլիներ: Վարիչը թերթը հավաքեց իր զույգ ձեռների մեջ և պատից պոկեց: Հետո ձվեց, ուզեց պատուել, բայց հարթեց, ծալեց ու դրեց գրպանը:

— Կտեսնենք, — մոմոաց նա ու գնաց:

Իսկույն բոլորն աղմուկ բարձրացրին: Այ թե ինչ... Ուրեմն այդ թերթը շատ վտանգավոր բան էր... Ափսոս, վոր նորից չկարդացին: Ամեն մի տողն ուղղակի խոսում էր իրենց սրտերից: Յեվ ինչու պոկեց այդ վարիչը: Միթե նա չի ուզում, վոր վոր-բերը ճանաչեն հրդեհի իսկական մեղավորներին կամ Քիրազի խորամանկութունը, վորն աշխատում է մարմնամարդական զբաղ-մունքներով զբաղեցնել սկառտների ամբողջ միտքը և թույլ չտալ ուրիշ, վտանգավոր բաների մասին մտածելու... Ինչու, վա-րիչը չի ուզում, վոր վորբուհիներն այդ ամենն իմանան...

Հանկարծ Նվարդը ձգվեց վտանների վրա և կանչեց.

— Ընկեր խմբագիր, — գիտեմ վոր դու այստեղ ես, բայց չգիտեմ թվ ես դու: Գուցե սկառտ ես, գուցե վորբուհի: Մենք բոլոր աղջիկներս խնդրում ենք քեզանից, վոր ուրիշ թերթեր ել լույս տեսցնես: Մենք այսուհետև միշտ կանուխ կգանք դպրոց, վոր յեթե թերթը կպցրած լինի, կարողանանք կարգալ...

Բոլորը նայում էին նրանց: Իսկ յերբ նա վերջացրեց, հան-կարծ պատի վրա նկատվեց մի թղթի կտոր: Այնտեղ գրված էր. «Սպասեցեք հետևյալ համարին»...

Չանգը մի քիչ ուշացավ: Յերկու վորբուհիներ ուսուցչանոցի դռան ձեղքից տեսել էին, թե ինչպես վարիչը թափահարում էր ձեռքում բռնած թերթը և բարկանում էր ուսուցիչների վրա: Քիչ հետո, յերբ ուսուցչանոցի դուռը բացվեց և վարժապետները դուրս յեկան, նրանք բոլորն ել մոայլ էին ու վրդովված: Նրանց մի-ջից ջոկնվեց տրամաբանության դասատուն և յեկավ դեպի յեր-րորդ դասարանը:

— Բնց արեք սուրբ գիրքը, — հրամայեց նա իր սովորական խոսքերը, բայց այլևս խիստ տոնով: — Լուսթյուն: Հիսուս Քրիս-տոսի հերթական հրաշքների մասին պատմելու յե Նվարդը:

Նվարդը վեր կացավ և սկսեց պատմել: Մինչդեռ նա խոսում էր, Արշալույսը ծածուկ քաշեց Ութսունինի բլուզից և նրա ական-ջին շնջաց.

— Կսպասենք:

— Ո՛ւմ, — գարժացավ Ութսունինը:

Արշալույսը ժպտաց.

— Հետևյալ համարին:

Ութսունինը արագ նայեց նրա աչքերին և ձայն չհանեց: Իսկ զասամիջոցին, նա մի կողմ ասարավ Արշալույսին և հարցրեց.

— Ասա, դու ինձ սիրում ես իբրև ընկեր...

— Այո... Յեվ իբրև ընկեր... Յեվ իբրև... Ամեն տեսակ...

— Ինձ վոր սիրում ես, — յեզրակացրեց Ութսունինը, — խնդրում եմ վոչ վոքի վոչինչ չասես: Հենց վոր ասեցիր՝ ինձ կվռնդեն:

— Չես ամաչում, — հանդիմանեց Արշալույսը. — Յե՛ս ում պիտի ասեմ, վոր...

— Չե, համաձայնվեց Ութսունինը, — Նվարդին կարող ես ասել... Իսկուհուն ել... Ուրիշ վոչ վոքի: Ի՞նչ է, դու համաձայն ես թերթի հոդվածների հետ...

— Մենք բոլորս ել համաձայն ենք, Ութսունին, ի՞նչ ես խոսում: Դու խո նոր չես ճանաչում ընկերուհիներդ...

— Լավ, — վճռեց Ութսունինը և ձայնը ցածրացնելով, շնջաց աղջկա ականջն ի վար: — Այսոր յերեկոյան ժամի ութին, դու, Նվարդը, Իսկուհին, կգաք հեռախոսակայան, բջիջի նիստի... Նայեցեք. — միասին չեք գա, այլ մեկ առ մեկ...

Չանգը տրվեց: Աշակերտներն սկսեցին մտնել դասարանները: Ութսունինն ել էր ուզում ներս գնալ, բայց հանկարծ վարիչը տեսավ նրան և ձայն տվեց.

— Ութսունինն, գնա սկառտանոց. պետք քեզ կանչում ե...

— Ի՞նչ...

— Պետք կանչում ե...

Միթե ամեն ինչ բացվել է...

Իսկ թվ է մասնիչը...

Ութսունինը գլխարկը դրեց ու դուրս թռավ: Այժմ, յերբ կոմսոմոլի գավառական կոմիտեն կարող էր իրեն հաց տալ և աշխատանք, այժմ ինքը չէր ուզում հեռանալ Կազաչի Պոստից: Ի՞նչպես թե: Մեր բջիջը, ընկերներին, աղջիկներին և պայքարի դաշտը... Ի՞նչպես հեռանալ... Նա կմեռնի կարոտից, յերբ այլևս վոչ մի որ իրեն ներս չեն թողնի Կազաչի Պոստի սահմաններից: Նա կկատաղի բարկությունից, յերբ այլևս հնարավորություն չի ունենա կազմակերպելու իր գաղտնի զրույցները կամ կախ տալու թերթի հերթական համարը: Չե՞ վոր դեռ նա պիտի լուծի Սա-թիկի անհեռանալու պատմությունը...

Սակայն սկառտանոցում ամեն ինչ պարզվեց: Նրանց ըն-տանիքից ինչ վոր մեկը, կամ յերկուսը, հիվանդանոցի պոստի մոտ նրան կանչում էին: Ութսունինը հանգիստ չունչ քաշեց և սլացավ դեպի հիվանդանոց:

Այնտեղ, դետնի վրա փռված եր մի փալաւ: Նրա մոտ նստած եր իր պապն ու լալիս եր: Ութսունիննը նետվեց դեպի նա:

— Ի՞նչ ե պատահել, — գոռաց սարսափահար:

Տատը յետ տարավ փալասի ծայրը: Նրա տակ պառկած եր նրա տաս տարեկան Արտաշես յեղբայրը, վոտից դուրս քոսոտված... Նա վերքոտ դեմքով ժպտաց մեծ յեղբորն ու նրա աչքերն արցունքից փայլեցին:

— Ի՞նչ ե պատահել, Արտաշես ջան, — հարցրեց Ութսունիննը, կռանալով դեպի նա:

— Քոսոտվել եմ...

Յեւ Արտաշեսը հեկեկոցից ծռմռեց բերանը և նրա ծնոտը դողդողաց:

— Ախր ի՞նչպէս յեղավ...

— Բաթումից... մեզ պիտի տանեյին... տերտեր դարձնելու... — փորձեց պատմել Արտաշեսը, արցունքը զսպելով: — Հետո կոմունիստները չթողեցին... Մեր տերտերին բռնեցին... Իսկ մեզ ուղարկեցին յետ... Ճանապարհին քոս ընկա...

— Բալւ ջան, — մղկտաց տատը. — Ընդունել տուր յեղբորդ հիվանդանոց...

Ութսունիննը չքցեց: Մի քիչ անց, նա ներս մտավ հիվանդանոցի գրասենյակը, մի դիմում ձեռքին բռնած: Միտար Նոնսը նայեց նրան և իրենց լեզվով ինչ վոր բան ասեց:

— Ի՞նչ ես ուզում, — բացատրեց թարգմանը:

Ութսունիննը թուղթը մեկնեց նրան: Թարգմանը կարգաց և դառնալով դեպի ամերիկացին, սկսեց բացատրել:

— Յեղբայրդ վճիռ վորբանոցից ե ուղարկված, — հարցրեց թարգմանը:

— Յեղբայրս վորբանոցում չի...

Միտար Նոնսը թուղթը վերցրեց, մակագրեց յերկու տառ, ստորագրեց և ավեց Ութսունիննին:

«Նո», — գրված եր այնտեղ:

— Չեմ հասկանում, — շշտաց Ութսունիննը, նայելով թարգմանին:

— Շատ իզուր չես հասկանում: Դպրոցական չեմ: Անգլերեն չեմ սովորում: «Նո»՝ նշանակում ե՝ «վոչ»:

Ութսունիննը նետվեց դեպի միտար Նոնսը և արցունքն աչքերին, սկսեց աղաչել:

— Խնդրում եմ, միտար Նոնս... Մի՛ մերժիր...

Նոնսն իր ծխամորճը դրեց վար, կտրուկ շարժումով կանգնեց, վերցրեց իր ճիպոտն ու կոտորված հայերենով գոռաց:

— Յերբորդին կխփեմ: Դուրս գնա: Մեկ...

Ութսունիննը դեռ լալիս եր:

Յերկնու...

Ութսունիննն աչքերը սրբեց և լուռ աղաչանքով նայեց ամերիկացուն:

— Յերեք...

Ութսունիննը ցատկեց դուրս, սակայն ողում շվաց ճիպոտը և վոնց վոր նրա մեջքը յերկու կես անեյին...

Դրսում տատն ու յեղբայրն անհամբեր նրան եյին սպասում: Արտաշեսը, հույսն աչքերի մեջ նայեց յեղբորը, բայց Ութսունիննը հեծկտաց:

— Դնա, տատի... Տար... Չընդունեցին... Մեծեցին... Լաց մի լինիր, Արտաշես, մի կերպ կառողջանաս...

Հանկարծ մի միտք փայլեց:

— Տատի ջան, կտանես այս թուղթը, կտաս կոմսոմոլի գավկոմի քարտուղարին: Նա ընդունել կտա իրենց հիվանդանոցը:

Այս ասելով, նա իր դիմումի հակառակ յերեսի վրա գրեց մի այլ դիմում: Տատն ու յեղբայրը հեկեկալով և որորվելով գնացին: Իսկ հետեյալ որն Ութսունիննը հեռախոսակայանից դանգահարեց քաղաքի հիվանդանոց և տեղեկացավ, վոր իր յեղբայրը պառկած ե այնտեղ և սկսում ե առողջանալ:

42. ՅԱՄՐԱՅԻՐ, ՅԱՄՐԱՅՈՒՐ

Մի առավոտ, յերբ դեռ բոլորը քնած եյին, Գասպարը կիսատ հագնված դուրս յեկավ արտաքնոց, բայց իսկույն վերադարձավ, ձեռքին թղթի մի կտոր:

— Սկառտներ, — գոռաց նա, — ո՞վ ե ձեր մեջ այն սրիկան, վոր կատարել ե այս բանը...

Սկառտներից շատերը վեր թռան տեղերից և հավաքվեցին Գասպարի շուրջը: Զոկատապետը ձեռքում բռնել եր արտաքնոցում գործածված մի թուղթ, վորի վրա նկարված եր հայ սկառտների նշանը և նրա շուրջը գրված եր. — «Ճածրացիր, ցածրացուր»:

Ավելի մեծ վիրավորանք հասցնել սկառտական պատվին՝ չեր կարելի: Բոլորը քարացան:

— Ո՞վ ե արել, — կրկնեց Գասպարը: — Յեթե չխոստովանվեք, յես ինչս կգանեմ իմ ձեռքով և կսպանեմ...

Սկառուները ցրվեցին իրենց մահճակալների մոտ և լուռ սկսեցին հագնվել: Գասպարը գնաց Քիրազի սենյակը:

— Դ՞ու՞ր յես արել, Հրաչ, — հարցրեց Ութսուներինը վրդովմունքով:

— Մեր բջիջո՞քն եմ յերդվում, վոր վոչ: Ախր դա հիմարություն են արել, Ութսուներին...

— Յեկ հենց հիմա մեր տղաներին հավաքենք...

— Յեկ հավաքենք: Յերևի նրանցից մեկն ու մեկն ե...

Քիչ հետո բոլորը վտաքի վրա ելին: Վոչ մեկն այդ որը մարզանք չեր անում: Բոլորն անհամբեր սպասում ելին, թե ինչ լուր պիտի լսվի պետի սենյակից:

Ընթերցարանում, մարզարանում, ննջարաններում, շենքի դիմաց, խումբ խումբ հավաքվել ելին սկառուները և լուռ գրուցում ելին: Ուստի և, այդ պայմաններում բոլորովին աչքի չէր ընկնում այն, վոր Ութսուներինը, Հրաչը, Սմբատը, Միհրանն ու Վաղգենը նույնպես, Արի շան ցանկապատի մոտ կանգնած խոսակցում ելին:

— Տղաներ, — խոսեց Ութսուներինը խիստ տոնով, — ո՞վ ե արել այդ հիմար ու ֆլասակար գործը...

Վոչ վոք՝ ձայն չհանեց:

— Սմբատ, — ասաց Ութսուներինը դառնալով սկառուապետին. — իբրև սկառու յես յենթարկվում եմ քեզ, իբրև մեծ ընկերոջ նույնպես: Բայց իբրև կոմյերիտական, դու պատասխանատու յես իմ առջև, բջիջի առջև. — դու չե՞ս արել...

Սմբատը կարմրեց, գլուխը կախեց ու շշմջաց:

— Վոչ, յերդվում եմ կոմունիստական գաղափարների անունով:

— Իսկ դու, Միհրան...

— Վոչ, Ութսուներին, վոչ: Յերդվում եմ:

— Վաղգեն...

— Յերդվում եմ:

— Հրաչ...

— Ձեմ արել Յես ել եմ յերդվում:

— Լավ, — վճռեց Ութսուներինը. — յես իրավունք չունեմ ձեզ չհավատալու: Մենք չենք արել: Ուրեմն սպասենք, տեսնենք: Ձգույշ կացեք, տղաներ, շատ եմ խնդրում...

Սկառուանոցի շեմքի վրա յերևաց Գարեգինը:

— Սկառուներ, — կանչեց նա. — գիշերային հերթապահները թող ներս գան: Պետք կանչում ե:

Ներս մտան վեց սկառուներ, վոր դույզ գույգ, յերեք հերթով գիշերը հսկել ելին սկառուանոցին: Ըստ ընդունված կարգի, նրանցից յուրաքանչյուրը մի ջոկատից եր:

Սկառուներն սկսեցին անհամբեր սպասել նրանց դուրս գալուն: Իսկ յերբ նրանք դուրս յեկան, բջիջի անդամները վազեցին դեպի առաջին ջոկատի Վարդանը և շրջապատեցին նրան:

— Պատմիր, — շտապեցրեց Ութսուները:

— Ի՞նչ պատմեմ: Ներս մտանք թե չե, Քիրազը հարցրեց:

— Ո՞վ ե այս գիշեր դուրս գնացել:

— Պարոն Պետ, — պատասխանեց յես, — ինչպես յերևի կզիտենաք, յերեկոյան մեր ընթրիքը ձեթով եր պատրաստված, հետևաբար և, համարյա ամբողջ սկառուանոցը գիշերը դուրս գնաց...

Մյուս հերթապահներն իմ խոսքերս հաստատեցին և Քիրազը մեզ բաց թողեց, առանց վորևէ արդյունքի հասնելու: Չարժանալի յես: Վերջերս մեր սկառուանոցում տարորինակ բաներ շատ են պատահում...

— Իսկպես վոր, — համաձայնվեց Հրաչը. — Մի անգամ ել իմ գլխիս տակից մի բան վերցրին և հետո նորից վերադարձրին: Մինչև հիմա յել չգիտեմ, թե ո՞վ եր անողը...

Վարդանն ուշադիր նայեց Հրաչի աչքերին, բայց վոչինչ չասաց: Հետո հեռացավ: Հրաչին դարձնալի թվաց նրա հայացքը, բայց մտածելով այդ մասին, նա վոչ մի յեղբրակացություն չհանեց:

Հանկարծ, այլայլված դուրս յեկավ իր սենյակից Վահան Քիրազը: Նա մոտեցավ գրատախտակին, այնտեղ ամրացրեց յերկու թուղթ ու նորից ներս գնաց: Նրա դեմքի արտահայտությունից վախեցած՝ մի ըռազե դեռ վոչ վոք չհամարձակվեց մոտենալ պատին: Բայց հետո, կարծես խոսք մեկ արած, բոլորը միասին գրտեցին դեպի այնտեղ և կարդացին:

Առաջին թղթում գրված եր.

— «Սկառուներ, հենց այս ըռազիս յես իմ սենյակից գտա այն թուղթը, վոր փակցնում եմ սրա կողքին: Մեր սկառուանոցում բուն դրած մի քանի լակոտներն այնքան են լիտիացել,

վոր թուացիկներ են գցում նույնիսկ իրենց պետի սենյակը: Մպանել այդ շներին՝ այդ քիչ կլինի: Այն սկառտը, վոր գտնի նրանց, կատանա հայ արիի կոչում և կդառնա իմ ոգնականը»: Վահան

Մյուս թուղթը հետևյալն էր.

«Քաղաքացի Վահան: Իզուր եք չարչարվում ձեր վողորմելի ուղեղով գտնել մեր հեաքերը: Մենք վորոշել ենք ձեռք առնել ամբողջ սկառտանոցը, ծիծաղել ձեզ վրա և ուտել ձեր հացը: Ցեթե տղամարդ եք, գտեք մեզ: Բաս... Ձեք գտնի... Մեր նպատակը հետևյալն է. — քայքայել սկառտանոցը, թույլ չտալ վոր դու քո ապուշ մտքերը մեր մեջ տարածես: Մենք դեմ ենք սկառտիզմին: Կեցցեն պատկոմները»:

Ստորագրված էր. — «Սկառտանոցը քայքայող յեոյակ»:

Ութսունինն աչքով արավ բլիշի անդամներին: Նրանք նորից հավաքվեցին Արի շան ցանկապատի մոտ:

— Ի՞նչ վերաբերմունք ցույց տանք քայքայող յեոյակի արարքին, — հարցրեց նա:

— Նրանք ապուշներ են, — ձևակերպեց խմբակը:

— Նրանք լավ նպատակների համար են պայքարում, — ասաց Միհրանը. — բայց միթե այդպես պետք է պայքարել...

— Իրանով բոլոր սկառտներին կխրտնեցնեն մեր գաղափարներից, — վրդովվեց Հրաչը:

— Հենց ցավը նրանումն է, — պատասխանեց Ութսունիննը, — վոր նրանք վարկաբեկում են վոչ միայն իրենց, այլև մեզ... Բոլոր սկառտները կխրտնեն...


— Ախր ձվքեր են այդ քայքայող յեոյակի անդամները, — սրտնեղված հարցրեց Հրաչը: — Ցես վոչ վոքի վրա չեմ կասկածում...

— Ցես էլ, — միացավ նրան Միհրանը: — Ուրեմն սկառտանոցում քայքայող յեոյակ կա և մենք տեղեկության չունենք...

— Ցեոյակ, — սկսեց ինքն իրեն խոսել Ութսունիննը, — ուրեմն յերեք հոգի: Ախր ձվքեր են... Թե կիմանայի... Հարկավոր է նրանց մի լավ հայտնի իրենց անմիտ արարքների համար և հետո ընդունել բլիշի մեջ...

Բայց ժամանակն անցնում էր: Պետք էր պոստի կանգնել: Նախաճաշի զանգը տրվեց: Սկառտները մտան ճաշարան և յերբ սեղան նստեցին, բոլոր հայ արիների տեղերը դատարկ գտան: Վահան Քիրազի սենյակում նորից խորհրդակցություն կար...

Քիչ հետո, յերրորդ ու չորրորդ ջոկատի սկառտներից քանասուն հոգի արդեն պոստի եյին կանգնած չորրորդ ջոկատի դրոշակի ներքո, իսկ մյուս սկառտները շտապում էյին դպրոց, արհեստանոցներ և հիմնարկներ...



Նա բերանով լի թուքը շարտելով նշանի վրա, յետ ցատկեց ու դուրս թռավ բաց լուսամուտով:

Բայց որվա ամենահետաքրքիր դեպքը պահված էր յերեկոյան, յերբ բոլոր սկառտները սկառտանոցում գտնվեցին: Իեռ ընթրիք չարած՝ արդեն հայտարարվեց, վոր բոլորը քնելուց առաջ պետք է հավաքվեն ընթերցարանում: Իսկ ընթերցարանը՝ յերկու

հարյուր քառասուն հոգու համար շատ փոքր եր: Սկառուները նստեցին ուր վոր հնարավոր էր և դարձյալ նրանց մեծ մասը կանգնած մնաց: Ճաղերի այն կողմը — ուր գրադարանն էր, — դատարկ էր: Այնտեղ սեղանի յետևում, նստել էր Գարեգինը և սպասում էր:

Քիրազը, Պիմենը, Գասպարն ու Սիոնը ներս մտան: Բոլոր սկառուները պատիվ տվեցին պետերին, իսկ նրանք գնացին ճաղերից այն կողմ և նստոտեցին լուսամուտների մոտ:

Քիրազը նայեց դեպի լուսթյան մեջ քարացած ընթերցարանը, ապա դիմեց Գարեգինին.

— Գնա իմ սենյակից այն բանը բեր:

Գարեգինը բերեց «այն բանը»: Դա կարտոնի վրա նկարված մի ահագին սկառուտական նշան էր, յերկու փայտե վոտերի վրա ամրացրած: Քիրազը վերցրեց նշանը, ամրացրեց ընթերցարանը գրադարանից անջատող ճաղերի դռնակի վրա այնպես, վոր մարդ նրա տակից անցնել կարողանա:

— Սկառուներ, — խոսեց նա. — իմ խոսքերի ընթացքում և նրանից հետո ով վոր մի ձայն հանի կամ շարժում գործի, իսկույն դուրս կշարժվի մեր շարքերից: Արգելվում է իրար հետ թեկուզ մի բառ փոխանակելը կամ տեղից-տեղ փոխվելը: Ուրեմն լսեցեք: Հիմա դուք բոլորդ մեկ մեկ կգաք կանցնեք այս նշանի տակով և հավատարմության յերդում կտաք... Ուրեմն սկսում ենք: Առաջին նստածներ, վեր կացեք...

Մի սկառու մոտեցավ նշանին, կանգնեց, պատիվ տվեց և սասց.

— Յերդվում եմ, վոր հավատարիմ կմնամ այս նշանին...

Հետո նրա տակով մտավ գրադարան:

Ութսունինն իրեն էր ուտում: Ի՞նչպես իմաց տալ ընկերներին, վոր անպայման պետք է յերդվել և անցնել նշանի տակով: Հարկավոր չի մատնել իրենց: Յերդվելով վոչինչ չենք կորցնի, բայց չյերդվելով կկորցնենք ամեն ինչ: Սակայն նրանց հետ նույն-իսկ մի ակնարկ փոխանակելու վոչ մի հնարավորություն չկար...

Արդեն սկառուների մեծամասնությունն անցել էր ճաղերի այն կողմը: Իջիջից դեռ վոչ վոք չէր գնացել: Ըստ յերևույթին նրանք տատանվում էին և սպասում: Ուրեմն հարկավոր է վեր կենալ: Ութսունիննը առաջինը կերդվի և որինակ կտա նրանց:

Ութսունիննից հետո, հերթով յերդվեցին բջիջի բոլոր անդամները: Ընթերցարանում հազիվ մնացել էին չորս հինգ հոգի:

Ահա յերեքը մնացին: Միթե դա քայքայող յեռյակ չե... Բայց վոչ, նրանցին մեկը հայ արի յե: Ահա նա յերդվեց: Ահա մոտեցավ ու յերդվեց նաև նախավերջին սկառուը՝ ոգնող ջոկատից: Ահա և առաջին ջոկատի Վարդանը: Նա վերջինն է: Նա մոտեցավ ճաղերին, կանգնեց, նայեց վերև և բերանով լի թուքը շարժելով նշանի վրա, յետ ցատկեց ու դուրս թռավ բաց լուսամուտով:

— Բռնեցեք, — վորոտաց Քիրազն ու առաջ ցատկեց: Առաջ ցատկեցին նաև մյուս բոլորը: Ճաղերի մուտքի մոտ առաջացավ կուտակում և վոչ վոք չէր կարողանում դուրս նետվել: Մի քանիսը փորձեցին ցատկել ճաղերի վրայով, բայց յետևից սեղմում էին և շարժվելու հնարավորություն չկար: Վերջապես ճաղերը դիմացան մարդկանց գրոհին և ամբողջ ցանկապատը ճռնչալով գետին տապալվեց: Վար ընկավ նաև սկառուտական նշանը, բայց վոչ վոք ժամանակ չունեցավ վերցնելու այն: Ճաղերն ու կարտոնի այդ կտորը կոխտուելով, սկառուները դուրս թռան՝ վորը դռնից, վորը լուսամուտներից:

— Մինչև չգտնեք, չվերադառնաք, — լավեց Քիրազի ձայնը դրսից:

Ութսունինն արագ աչքով արավ ընկերներին.

— Այդ լավ ասեց: Ուրեմն հանգիստ կերպով կարող ենք ժողովը գումարել: Դեպի հեռախոսակայանը...

Նրանք լուսամուտից դուրս ցատկեցին յերեկոյան խավարի մեջ...

43. ՅԵՌԵՍԱԿԻ ԴԵՍ

Յերբ բջիջի անդամները մտան ներս, Վաղգենը թերթ էր կարդում:

— Այդ ի՞նչ է, — հարցրեց Ութսունիննը դռան մոտից և հարձակվեց թերթի վրա:

— Սա, — հպարտացավ Վաղգենը, — սա մի նոր ամսագիր է: Ահա նրա բանաստեղծությունը. — «Պոետ Տանգո»:

Սկառուներն իսկույն հափշտակեցին թերթը և սկսեցին կարդալ: Սակայն ժամանակ չկար: Հարկավոր է ժողովը սկսել:

— Այսոր, — շնչաց Ութսունիննը, մենք քննելու յենք միայն յեռյակի հարցը: Ի՞նչ կարծիք ունեք այդ մասին...

— Նրանք մեզ խայտառակեցին, — հառաչեց Սմբատը. — յուրաքանչյուր սկառու այժմ պատրաստ է բռնել նրանց և հանձնել պետին...

— Այո... Նրանք վատ են պայքարում: Արտաքնոցով, թքելով ու հայտնաբերելով գրեթե մարդկանց չի կարելի ազդեցությունը...

— Բոլորդ դժժ էք յեռյակին, — հարցրեց Ութսունինը:

— Դեմ ենք:

— Ի՞նչ էք առաջարկում...

— Գտնել մնացած յերկուսին և խրատել:

— Լավ, յենթադրե՞նք թե գտանք ու խրատեցինք, — համաձայնվեց Ութսունինը: — Իսկ ի՞նչ ասել մյուս սկառտներին...

— Այսօրն:

— Այսինքն ի՞նչ անել, յեռյակի թողած վատ տպավորությունը ցրելու համար...

Միհրանն առաջարկեց մի կոչ բաց թողնել՝ սկառտներին ուղղված: Գրել այնտեղ, վոր կոմսոմոլի բջիջը յեռյակի հետ համաձայն չէ, և դատապարտում է նրանց արածը:

Բոլորը միաբերան տվեցին իրենց համաձայնությունը և ժողովը փակվեց: Այժմ պետք էր կոչը գրել: Վորոշեցին, վոր կոչը թելադրի Միհրանը: Հրաչը վերցրեց գրիչն ու պատրաստվեց գրելու:

— Սպասե՛ք, — ընդհատեց Վազգենը, — կոչը քանի հատ պետք է գրել...

— Վորքան շատ, այնքան լավ:

— Ինչպես թե, — զարմացավ Հրաչը: — Խո չենք կարող մինչև լույս այստեղ նստել... Մանավանդ վոր հիմա կգան Վազգենին փոխարինելու...

Ճիշտ էր:

— Ա՛յ, յեթե մի գրամեքենա լիներ... յերազեց Ութսունինը:

— Կա:

Բջիջի անդամները զարմացած նայեցին:

— Կա, — կրկնեց Վազգենը. — հենց մեր կողքին: Գրասենյակում: Ինչպես գիտեք, այնտեղ գիշերն էլ բաց է լինում...


— Բա միլիցիոնները, — հետաքրքրվեց Հրաչը:

Սկսեցին մտածել: Միլիցիոնները... այո, այդ դժվար է: Կազաչի Պոստի միլիցիոնները ընդհանրապես վատ մարդիկ են: Յեթե Գիրազը նրանցից վորևէ մեկին մի քիչ փող տա, նա պատրաստ կլինի ամեն ինչ մատնել: Չի լինի... Պետք է զգուշ լինել և թույլ չտալ, վոր իրենց հետքը գտնեն...

Վազգենը հեռախոսի փողը դրեց ախանջին և զանգահարեց:

— Գրասենյակն է... Ո՞վ է լուռ: Միլիցիոնները: Խոսում է գլխավոր պոստի պահակը: Իսկույն ձեր պոստը կես ժամով հանձնեցե՛ք վորևէ սկառտի, իսկ ինքներդ վազ տվե՛ք այստեղ: Փախել է մի սկառտ: Հարկավոր է նրան բռնել, քանի դեռ նա դուրս չի յեկել Կազաչի Պոստից...

Սկառտները զարմացած լուռ էլին Վազգենին, հիանալով նրա հնարագիտության վրա: Իսկույն Հրաչը հեռախոսակայանից դուրս յեկավ և սկսեց գրասենյակի մոտ իբր թե միամիտ, անց



— Գրասենյակն է... Ո՞վ է լուռ... Միլիցիոնները...

ու դարձ անել: Քիչ հետո, գրասենյակից դուրս թռավ միլիցիոնները և տեսնելով Հրաչին, կանչեց իր մոտ.

— Ազատ ես:

— Ի՞նչ ազատ... տղաներից մեկը փախել է: Բոլորս նրան ենք փնտրում...

— Մի կես ժամով գրասենյակում չե՞ս մնա. — խնդրեց միլիցիոնները. — ինձ կանչել են: Իսկույն կգամ...

— Չեմ մնա: Ինչպես մնամ. յերեկ շատ կուշանաս:

— Չեմ ուշանա, սկառուտ: Կես ժամից այստեղ կլինեմ...

Հրաչը դժկամությամբ համաձայնվեց և մտավ գրասենյակ: Միլիցիոնները վազեց: Հենց վոր նա անհետացավ, հեռախոսակա-
յանից դուրս յեկան մյուս սկառուտները և լցվեցին գրասենյակ:

— Ենուտ, — շնչաց Հրաչը, — ժամանակ չկա:

Միհրանն իսկույն պատրաստեց գրամեքենան, դրեց նրա մեջ չորս թուղթ և սկսեց սպասել: Միհրանն սկսեց շտապ շտապ թեկադրել:

«Միրելի սկառուտներ: Մեր սկառուտանոցի կոմյերիտական բջիջը դատապարտում է քայքայող յեռյակի արարքները, վորոնցից յերկուսին մենք ևս ծանոթ չենք, շատ վատ միջոցներով են պայքարում մեր սկառուտանոցի այլանդակ միջավայրի դեմ: Կոմյերիտական բջիջը գտնում է, վոր վոչ արտաքնոցը, վոչ թուքը, վոչ նրանց թուուցիկների նման թուուցիկները չի կարելի համարել արժեքավոր աշխատանք: Ընդհակառակը, դրանցով նրանք նույնիսկ վարկաբեկում են մեր այն գաղափարները, վոր ուզում ենք տարածել ձեր մեջ: Իսկ մենք ցանկանում ենք, վոր դուք ծանոթանաք կոմունիստական մտքերի հետ և տեսնեք, թե ինչպես հակահեղափոխական Բիրազը, նրանից վոչ պակաս վարժապետները, նրա աշակերտ հայ արիները, փորձում են մոլորեցնել ձեզ: Նրանք ուզում են ձեզ այնպես դաստիարակել, վոր դուք մեծանաք իբրև դաշնակցականներ և կովեք խորհրդային իշխանության դեմ: Բայց հիշեցեք, սկառուտներ, վոր ձեր հայրերին, մայրերին, քույրերին ու յեղբայրներին կոտորել տվեցին այդ դաշնակցականները, վորպեսզի հայ հարուստները ավելի հարստանան, իսկ իրենք իրենց թալանն անեն: Մենք թույլ չենք տա, վոր սկառուտների կամ վորբուհիների մեջ այդպիսի մտքեր տարածվեն: Չե վոր ամերիկացիներն ու նրանց խնամքի տակ պատրաստված բոլոր դաստիարակները խոսք են տվել իշխանությանը, վոր նրանք մեր մտքերը չեն պղտորի: Բայց քանի վոր նրանք պղտորում են, մենք ել կպարզենք: Մենք կոչ ենք անում ձեզ չլսել Բիրազին ու մյուսներին, այլ կարդալ մեր թերթը, թուուցիկները, մեր բաժանած գրքույկները և տեսնել ճշմարտությունը: Մենք...»

— Բավական է, — ընդհատեց Սմբատը:

— Սպասիր, կիսատ մնաց:

— Կիսատ չի: Ենուտ գնանք...

— Թող վերջացնեմ...

Բայց Սմբատը թղթերը հանեց գրամեքենայից, կախեց իր գրպանը և բռնելով Ութսուներեսի ու Միհրանի թևերից, քաշեց դուրս: Հեովից, արագ քայլերով վերադառնում եր միլիցիոնները:

Սկառուտները թագնվեցին: Միլիցիոնները մտավ ներս և իսկույն այնտեղից դուրս յեկավ Հրաչը:

— Գնանք, — շնչաց նա, — ամեն ինչ լավ վերջացավ: Միլիցիոններն ինձ խնդրեց, վոր վոչ վոքի չասեմ, թե նա պոստից հեռացել է: Բանից դուրս է յեկել, վոր իրեն վոչ վոք չի կանչել... Սկառուտները ծիծաղեցին և դիմեցին դեպի իրենց շենքը:

44. ՍՄԲԱՏԻ ՊԱՏՄԱԾԸ

Հետևյալ որը, ճաշից հետո, Վահան Բիրազի սենյակում նորից տեղի ունեցավ հայ արիների հավաքույթը: Իսկ յերեկոյան, Սմբատը, բջիջի անդամներին պատմեց այդ հավաքույթում տեղի ունեցածը:

— Յերբ ներս մտա, — սկսեց նա, — համարյա բոլոր հայ արիներն այնտեղ էին: Այնտեղ եր նաև Բիրազը, իսկ Պիմենը չկար: Չորրորդ ջոկատապետ Մամիկոնն ինձ հաղորդեց, վոր Պիմենն անցյալ գիշեր գնացք է նստել և գնացել է Բաթում, այնտեղից գաղտնի կերպով Պոլիս գնալու համար: Բանից դուրս է գալիս, վոր իշխանությունն իմացել է ոլիմպիադայի որը նրա արտասանած ճառի մասին: Բացի դրանից, նա խորհրդային իշխանություն է մտել գաղտնի կերպով և անցագիր չի ունեցել...

Յերբ բոլորը հավաքվեցին, պարզվեց, վոր ոգնող և սև ջոկատապետները չկան: Բիրազն սկսեց խոսել:

— Տղաներ, այս վերջին ժամանակներս տարորինակ բաներ են տեղի ունենում Կազաչի Պոստում... Անցյալ որը, դպրոցներից մեկի պատին փակված է յեղել գաղտնի լքագիր: Հաստապարկարելի յե ասել, վոր դա արել են վոչ թե վորբուհիները, այլ մեր սկառուտները... Նույնպես մի քանի որ առաջ, Գասպարն իր սկառուտներից մեկի բարձի տակից մի կոմունիստական գիրք է գտել: Սկառուտ յերգվել եր, վոր չգիտե, թե ինչ ճանապարհներով է այդ գիրքն ընկել իր բարձի տակ: Նա հավատարիմ աղա յե և Գասպարն իրավունք չունեք նրան չհավատալու: Արդեն առանց այդ ել կարելի յե հաստատ ասել, վոր սրիկաներն իսկապես գրքերը գաղտնի ձևով են դնում սկառուտների բարձերի տակ... Բայց այնուամենայնիվ, մենք սկառուտին պատժեցինք, վորովհետև նա կարդացել եր գիրքը, փոխանակ մեզ հանձնելու...

Քիրազը հառաչեց և շարունակեց:
«Ցածրացիր — ցածրացուր»-ի դեպքն արդեն ձեզ հայտնի
յե... Իսկ այսօր, ննջարանում գտնվել են գրամեքենայի վրա տպ-
ված կոչերը... Բանից դուրս ե գալիս, վոր մեզ մոտ կան՝ վոչ
միայն կոմունիստական գաղափարների համար հիմար ձևով պայ-
քարող տաքարյուն միամիտներ, այլ մի ամբողջ կոմյերիտական
բջիջ... Նա ամենից վատն ե... Նրանք յերեկ իրենց ցուցմուն-
քներն ստանում են քաղաքից...

— Պարոն Քիրազ, — ընդհատեց Սիոնը. — մի անգամ յես
քաղաքում մի սկառուտ տեսա: Ուզեցի մոտենալ, բայց փախալ:
Անպայման թույլտվություն չունեիր...

— Չձանաչեցի՞ր, — հարցրին մի քանիսը:

— Կոչ... Անհետացալ:

— Տեսնում եք, — վրա բերեց Քիրազը: — Ահա թե ինչեր են
անում: Ափսոս, հազար ափսոս, վոր կոմունիստական թույնը
մեր սկառուտանոցն ել ե մուտք գործել... Ինչքան աշխատեցի քա-
ղաքից հեռու պահել, ամսական մի անգամից ավելի վոչ վոքի
քաղաք չթողնել, բան դուրս չեկալ: Իմ հույսը ձեզ վրա յե, հայ
արիներ: Դուք յերեսունհինգ հոգի յեք, նրանք յերկու հարյուր
հինգ... Չեզ վրա մեծ պարտք ե դրված. — նրանց բոլորին դարձ-
նել իսկական սկառուտներ, հայ արիներ... Յես ինձ կխփեմ, յեթե
իմ յերկուհարյուր հինգ զավակներս բայլչեկիներ դուրս գան...
Առանց այն ել մենք սակավաթիվ ենք... Լուրեր եմ ստանում,
վոր Յերևանի պատկոմները բոլորովին փչացրել են այնտեղի սկա-
ռուտներին: Մեր լավագույն ուսուցիչներն ու ջոկատապետներից
շատերը պետության պահանջով վճռված են Յերևանի, Ալեք-
սանդրապոլի և Պոլիզոնի շատ վորքանոցներից: Ստեփանավանի
ե Ռիլիջանի սկառուտները միշտ ել անպետք են յեղել վորովհետև
այդ տեղերում չկան վոչ լավ տղաներ և վոչ ել լավ դաստիա-
րակներ: Մենք, սիրելիներս, սկառուտական շարժման վերջին
հույսն ենք: Մեր հոչակը պարածված ե ամբողջ Հայաստանում:
Բայց յերկար կտեի արդյոք դա... Տղաներս, սիրելի զավակներս,
դուք իմ միակ հույսն եք: Կոմունիստները փչացնում են բոլոր
հայ պատանիներին, նրանք սովորեցնում են նրանց՝ սիրել մեր
դարավոր թշնամի թուրքերին, ատել հայ ազգի մի մասին, վորով-
հետև նրանք հարուստներ են և իբրև թե շահագործում են ժողո-
վուրդին: Տղաներս, սիրելի զավակներս, ձեզանից յուրաքանչյուրը
պիտի լինի մի ուսուցիչ, վոր դուրս գալով մեր սկառուտանոցից,

իր գաղափարները սովորեցնի բւ շահապար սլատանիներին ու
պատկոմներին... Բայց յերեսուն հինգ հոգին քիչ ե: Հարկավոր
են հարյուրներ, հազարներ... Ահա թե ինչու յես թանգ եմ գնա-
հատում իմ յուրաքանչյուր սկառուտին և չեմ ուզում, վոր նա
հեռանա մեր գաղափարներից: Բայց...

Նա անհույս կերպով ձեռները թափահարեց:

Հայ արիները հուզվեցին:

— Պարոն պետ, — բացականչեց առաջին ջոկատապետ Գաս-
պարը. — Ի՞նչ ե ուզում, վոր անենք: Ասա և կանենք... Մենք
պատրաստ են մեր կյանքը զոհել քո մի խոսքի համար:

Քիրազը զգացված, ձեռքը դրեց Գասպարի ուսին և հարցրեց.

— Ի՞նչ անել... Դու ավելի լավ պիտի գիտենաս, Գասպար...

Չե վոր ամբողջ որը դու նրանց հետ ես և ինձանից լավ գիտես
նրանց...

— Ախ, — հառաչեց յերկրորդ ջոկատապետ Լևոնը. — Յեթե
միայն գիտենայի, թե ովքեր են նրանք...

— Իմ կարծիքով, — յենթադրեց չորրորդ ջոկատապետ Մամի-
կոնը, նրանք պետք ե վոր սե ջոկատից լինեն. ամենաանկարգա-
պահ ջոկատը նրանք են...

— Յես ել եմ նրանց վրա կանխածում, — համաձայնվեց Քի-
րազը: — Հիշում եք Միհրանի դեպքը... Նրանից հայ արիական
կոչումը վերցնելուցս հետո ամբողջ ջոկատը լարվել ե իմ դեմ...
Տեսնում եք — չի յեկել նրանց ջոկատապետը...

— Ինչո՞ւ Միհրանին չվճնդեցիր, պարոն Քիրազ, — վրդովվեց
աղվես խմբակավար Տիգրանը:

— Յեթե հարցը միայն Միհրանին վերաբերվեր, յես նրան
կվճնդեյի, սիրելիս... Բայց ամբողջ վեցերորդ ջոկատն ե նրա
պես... Յեվ պատճառն այն ե, վոր նրանք ամբողջ որն արհես-
տանոցներում շփվում են բանվորների հետ... Ի սեր աստծո, յես
համաձայն եմ. — թող ամբողջ սե ջոկատին ոռճիկ տրվի, թող
նրանք հեռանան սկառուտանոցից և ապրեն իբրև բանվորներ:
Ինձ հարկավոր չե նրանց ջոկատը, սկսած ջոկատապետից մինչև
սկառուտ համար յերկուհարյուր քառասունը... Տեսնում եք, նրանք
սկսել են փչացնել նաև իրենց հետ ապրող ոգճող ջոկատին: Ո՞ր
ե նրանց պետը...

— Սե ջոկատը պիտի անջատել, — պնդեց Գարեգինը:

— Այո, լավ կլինի: Յեվ շուտով այդպես ել կանենք: Յես
միտք նոնսին բոլոր հանգամանքները պարզեցի և նա ինձ հետ

համաձայնվեց: Ամբողջ ամերիկական տունը համաձայն է: Շուտով նրանց կանչատենք...

Նա լռեց և հանկարծ դարձավ դեպի Սմբատը:

— Դու ինչո՞ւ չես խոսում, — սիրելիս...

— Ի՞նչ խոսեմ, պարոն պետ, — ժպտաց Սմբատը: — Դու իմ բնավորութունը լավ գիտես: Յես խոսքի վարպետ չեմ: Իմ գործս ծեծն է: Յես սպասում եմ, մինչև վոր նրանց հետքը գտնեմ: Այն ժամանակ կխոսի վոչ թե իմ լեզուն, այլ կխոսեն մկաններս...

— Ծեծն ել չոգնեց, զավակս: Յեվ ընդհանրապես, ծեծը դաստիարակելու լավ ձև չի: Նկատել եմ, վոր վերջերս դուք բոլորդ ել համարյա վոչ վոքի չեք ծեծում: Այդ լավ է: Պետք է ուրիշ կերպ դաստիարակել...

Գասպարն ուշադիր նայեց Սմբատին և ապա դարձավ դեպի Բիրազը:

— Պարոն պետ, յես Սմբատի խոսքերը մեջ մի հակասութուն նկատեցի... Նա լուռ է, պատճառաբանելով, վոր իր մասնագիտութունը ծեծն է: Բայց այդ ինչպե՞ս է, վոր ծեծը վերջացնող առաջին շոկատապետն ինքն էր...

Վահան Բիրազը զարմացած և հարցական նայեց Սմբատին:

Սմբատը միայն մի վարկյան կարկամեց, պատասխան փնտրելով: Ապա հպարտ նայեց իր մշտական հակառակորդ Գասպարին և ասաց.

— Յես վերջացրի ծեծն ամեն մի հասարակ հանցանքի համար... Բայց սուր ինձ թերթի կամ կոչի հեղինակին, յես նրան վտոջերիս տակ կսպանեմ և հանգիստ կերպով բանտ կնստեմ այդ բանի համար:

Գասպարը պարտված լռեց:

Նույն բուպեյին սենյակի դուռը բացվեց և ներս մտավ որիորդ Սիրանուշը, վոր սպիտակ մազերով, պառված մի կին էր: Իսկույն բոլոր հայ արիները վտոջի կանգնեցին և նրան պատիվ տվին, իբրև ամերիկական կոմիտեյի գլխավոր աշխատակցուհու:

Որիորդ Սիրանուշի փոքրիկ, սուր աչքերը դաժան փայլում էին, իսկ նրա սպիտակ մազերն ավելի էյին խտացնում դեմքի արտահայտութունը:

— Յես գտա կոչի հեղինակին, — հայտնեց նա:

Բոլորը մի մարդու պես վտոջի կանգնեցին, զարմանքից քարացած:

— Գամբ. — հարցրեց Բիրազը. — Դ՞ուք...

— Այո, յես անձամբ: Յերբ այս հայ արիներն անընդունակ են գործ կատարելու, նրանց փոխարեն պիտի աշխատեն կախայք: Վիրավորական է, բայց այդպես է...

Նրա բարձր շեշտակի ձայնն անսովոր ազդեցութուն էր թողնում: Նույնիսկ Բիրազը բառ չեր գտնում պատասխանելու:

— Յես այսոր ամբողջ որը թողեցի աշխատանքս գրասենյակում և հետևեցի այդ հիմար պատմությանը: Մի՞թե դուք ինքներդ չեյիք կարող անել այն, ինչ վոր յես արեցի...



— Յես գտա կոչի հեղինակին, — հայտնեց նա:

— Ո՞վ է կոչի հեղինակը, որիորդ Սիրանուշ — անվստահ հարցրեց Գարեգինը:

Սմբատն սկսեց սրտատրոփ սպասել:

— Լուսթյուն, — խիստ տոնով կարգադրեց Սիրանուշը. — Ո՞վ է կոչի հեղինակը... Այդ դուք պետք է իմանայիք առանց ինձ...

Նստելով և նոր միայն մի քիչ հանգստու՛նալով, նա սկսեց պատմել:

— Նախ պետք եր իմանալ, թե վոր գրամեքենայի վրա յեր տպվել կոչը... Կազաչի Պոստում միայն յերկու հայերեն գրամեքենա կա. — մեկը մեր գրասենյակում, մյուսը՝ վարչության մեջ: Յերկուսն ել քիչ են գործածվել, վորովհետև մեր գրագրությունները գլխավորապես լինում են անգլերեն լեզվով:

— Յես նախ սկսեցի զննել մեր մեքենան, — շարունակեց նա. — և այլևս առաջ գնալու կարիք չեղավ: Սրիկաներն ոգտագործել եյին հենց այդ մեքենան...

— Ի՞նչպես իմացաք, — այլևս չհամբերելով բացականչեց Քիրազը:

— Յես նկատեցի, վոր նրանք տատերը խփել են բավական ամուր և տատերը հետքեր են թողել գրամեքենայի ոեղինե փափուկ գլանի վրա, վորի շուրջը թուղթն և փաթաթված լինում...

— Հետո...

— Մի քանի տող կարելի յեր կարդալ շատ պարզ: Մյուս բոլոր տողերը, գլանի պտույտների ժամանակ իրար վրա եյին յեկել և աղավաղվել եյին: Բայց գլանի մի անկյունում, անաղարտ մնացել եր կոչի հեղինակի անունը, — Պոետ Տանգո...

— Պոետ Տանգո...

— Այո:

Տիրեց լուսթյուն:

— Իա ծածկանուն ե. — յեզրակացրեց Քիրազը:

— Ձեզ մոտ ովքեր են բանաստեղծություններ գրում:

Քիրազը ժպտաց.

— Ինձանից բացի, յերևի բոլորը: Բայց յես չեմ լսել Տանգո անունը:

— Պետք ե փնտրել:

— Ի՞նչպես:

— Այդ արդեն ձեր գործն ե, Վահան: Հույսով եմ, չես առաջարկի, վոր այդ ել յես անեմ...

— Իսկ ինչո՞ւ յեր իր անունն այնտեղ գրել, — հետաքրքրվեց Սմբատը:

Որիորդ Սիրանուշը բացատրեց:

— Յերևի նա սկզբում իր ծածանունն ել ե գրած յեղել կոչի վրա, բայց հետո նույնիսկ այդ բանը վտանգավոր ե գտել և հա-

նել ե... Յեվ հիմի, յերևի նա կարծում ե, վոր վոչ վոքի հայտնի չե պոետ Տանգո անունը: Հետևաբար և, յերևի շատ շուտով նա իր բանաստեղծությունների տակ կսկսի այդպես ստորագրել և ցույց տալ իր ընկերներին: Այդպիսով մենք կիմանանք նրա ով լինելը:

— Հիանալի միջոց ե, որիորդ Սիրանուշ, — ժպտաց Սիոնը:

— Հիանալին այն կլինի, վոր լեզուդ ատամներիդ տակ առնես և միայն լսես: Հենց վոր վորևե մեկից լսեցիք այդ ծածկանունը, նշանակում ե ամեն ինչ պատրաստ ե:

Սմբատը, վոր մտքում ծիծաղում եր այդ ամենի վրա, մի րոպե մտածեց հայտնել նրանց, վոր պոետ Տանգոն, — դա տպված բանաստեղծության վերնագիր ե, սակայն հետո վճռեց վոչինչ չասել: Թող փնտրեն: Լաջն այն ե, վոր նրանք ընկել են սխալ հետքի վրա...

Ժողովը վորոշեց սկառտներին քաղաք թողնել խումբ-խումբ և ըստ հնարավորի՝ գոնե մի հայ արու ընկերակցությամբ: Վորոշվեց նաև, խիստ հսկել սկառտների ամեն մի քայլը: Հայ արիներից ընտրվեց տաս հոգուց մի խումբ, վորը պետք ե շրջեր Կազաչի Պոստի ամեն մի ծակ ու ձեղքը, գտներ բլիջին՝ ժողովի կամ պարապմունքի ժամանակ...

Յերբ Սմբատն իր պատմությունը վերջացրեց, Հրաչն ու Միրանը զարմացած հարցրին.

— Իսկ ի՞նչպես պոետ Տանգոն տպվեց գլանի վրա...

Ութսունինը ժպտաց.

— Յես այդ որն առավոտյան թույլտվություն վերցրի գրասենյակի վարիչ պարոն Նշանից և Վազգենի յեղբոր գրվածքը արտատպեցի: Շատ լավ բանաստեղծություն ե: Հաճախ կարդում եմ...

— Լավ չես արել, — հանդիմանեց Սմբատը. — վատ բան դուրս կգա...

— Վոչինչ ել դուրս չի գա, — հանգստացրեց Ութսունինը: — Յեթե որիորդ Սիրանուշը պարոն Նշանի հետ այդ առթիվ խոսակցություն ունենա, Նշանը կասի նրան, վոր յես իր ներկայությամբ եմ արտատպել այդ բանաստեղծությունը:

Սմբատը խոսք ավեց, վոր հետևյալ որը, վորևե պատրվակով Ութսունինին կազատի պահակ կանգնելուց, վորպեսզի նա գնա քաղաք, կոմսոմոլի գավառային կոմիտե...

Նորից Ութսուներկն անցավ շուկայով. չնկատելով այնտեղ վոչ Միրոնին, վոչ ել մի այլ սկառուտի, նա համարձակություն ստացավ և սկսեց փնտոել Վաչիկին: Նա ուզում է հայտնել նրան, վոր նրա փոքրիկ, սիրելի Աչիկն ազատվել է հոգսերից ու կարոտից և այժմ քնած է հողի տակ... Սրբել Վաչիկի արցունքները նրա կեղտոտ այտերի վրայից և նրա ձեռքից բռնած՝ տանել պատկոմների մոտ: Ասել նրանց, վորպեսզի նրանք ընդունեն Վաչիկին և սիրեն: Յեթե սիրեն, Վաչիկը չի փախչի: Վաչիկը փախչում է ծեծից ու պատժից, բռնադատված ազատությունից...

Բայց Վաչիկը չկար... Մի խուժան ասաց, վոր նա մեռել է, մյուսը հայոյեց առաջինին և հայտնեց, վոր նա գնացել է Թիֆլիս, փող աշխատելու: Նա ուզում է վերադառնալ հարուստ մարդ դարձած և վորբանոցից ազատել իր քույր Աչիկին...

Իսկ քույր Աչիկը... Ո՛ւմ պատմի Ութսուներկնը, վոր Արի շանը թաղեցին նվազով, ծաղիկներ ցանեցին թմբի վրա և թումբը ցանկապատեցին, բայց վոչ վոք չի կարող ասել, թե ո՞ր է թաղված Աչիկը... Ա՛խ, յերանի Ութսուներկնը մի գիշեր հավաքեր բոլոր պատկոմներին, ծածուկ մտներ Կազաչի Պոստ և ավերել տար Արի շան դամբարանը...

Ութսուներկնը ձեռքը թափահարեց: Հիմար մտքեր են: Նա զարմանում էր, վոր յուրաքանչյուր անգամ քաղաք գալիս, կարծես վերադառնում է նրա մանկությունը: Նա նորից դառնում է այն փոքրիկ տղան, վորը կար մինչև մայիսի յերեքը: Բայց չե՞ վոր Կազաչի Պոստը նրան շատ է մեծացրել և այժմ նա կատարում է կարևոր գործեր:

Ութսուներկնը զարմացավ իր վճռականության վրա: Նա արագ անցավ իրենց դուռնի մոտով դեպի գավառային կոմիտե «Տուն հետո կգնամ», — մտածեց նա: Գործը վտազեցնում է նրան, իսկ ժամանակ չկա...

Գավկոմում նրան ընդունեցին հին ծանոթի պես: Լարված հեռազրբությունքով լսեցին նրա պատմությունը՝ Կազաչի Պոստի վերջին դեպքերի մասին:

— Ճիշտ է վարվել, — հայտնեց քարտուղարը. — քայքայող յեռակը, իսկապես վոր հիմարություն է արել: Այդ Վարդանն իզուր է մատնել իրեն...



— Յեռ պատկոմ եմ, միայն իմ հազուստներս են սկսուտական...

Վոչ, Ութսուներկնը չգիտեր:
— Ա՛յ, դուք պետք է նրանց հեռ կապ ունենաք...

Ութսուներկնը զավկոմից շուտ դուրս յեկավ: Գրքերը թևի տակ, նա իր քայլերն ուղղեց դեպի պատկոմական շտաբը: Յերբ ներս մտավ բակը, բակում գտնվող պատկոմները զարմացած նայեցին նրան: Ութսուներկնն էլ նրանց նայեց: Այժմ պատկոմների մեծ մասն արդեն համազգեստներ ունեւր և ամենուրեք ժպտում էին կարմիր փողկապները:

Մի քանի պատկոմներ մուտեցան Ութսուներկնին և նրանցից մեկը հարցրեց.

— Ու՛մ ես ուզում, սկառւտ...

— Վոչ վոքի, — ժպտաց սկառւտը, — յես յեկել եմ հենց այնպես դիտելու: Յես ել եմ պատկոմ...

Պատկոմները ծիծաղեցին:

— Դու սկառւտ ես: Մեծ տարբերություն կա այս յերկուսի միջև: Դու պատկոմ չես...

— Յես պատկոմ եմ... Միայն իմ հագուստներն են սկառւտական...

— Իսկ ինչո՞ւ յես հագել դրանք, — հետաքրքրվեցին պատկոմները:

Ութսունինը ժպտաց ու ներս մտավ շտաբ: Իսկույն բոլորը գլուխները վեր բարձրացրին ու նայեցին նրան:

Ութսունինը նրանց պատկոմական բարև տվեց, վորով ավելի մեծ զարմոնք պատճառեց: Հետո նստեց շտաբի պետի գրասեղանի մոտ:

— Ընկեր պատկոմապետ, թույլ տվե՞ք հայտնել. — Կազաչի Պոստի սկառւտանոցում շուտով կլինեն յերկուհարյուր պատկոմներ... Շտապի պետը նայեց սկառւտի համարին և բացականչեց.

— Ութսունինը... Յես գավկոմից լսել եմ ջո մասին...

— Ութսունինը... — բացականչեցին մյուս ներկա գտնվողները և հավաքվեցին նրա շուրջը: Հիացմունքով նայում էին նրան ու ժպտում:

— Ա՛յ թե ինչ...

— Բա ինչո՞ւ շուտ չեկար մեզ մոտ: Մենք ձեր բջիջի մասին արդեն լսել ենք: Ի՞նչ կա, ի՞նչ չկա, պատմիր տեսնենք...

Ութսունինը համառոտ գծերով պատմեց ամեն ինչի մասին: Նկարագրեց Կազաչի Պոստը, նրա մարդկանց, պատահած դեպքերը: Ի՞ր զայրութիւն արտահայտեց Բիրազի և մյուս դաստիարակների հանդեպ ու լոնց:

— Վոչինչ, Ութսունինը, — հանգստացրեց շտաբի պետը. — շատ չի մնացել: Շուտով մեր պետությունն այդ մարդկանց հաշիվը կտեսնի: Արդեն Յերևանում մի քանի վորբանոցներ հանձնվել են պետության և այժմ մեր մարդիկն են խնամք տալու: Նրանց վրա: Այժմ նրանք կոչվում են մանկատաներ և այնտեղի բոլոր տղաներն ու աղջիկները պատկոմներ են դարձել...

Ութսունինը այդ լուրը լսելով ուրախացավ: Նա պատկոմների ընթերցարանից ստացավ մի քանի թերթերի նոր համարներ և հրաժեշտ տալով դուրս յեկավ:

Սակայն դարբասի մոտ, նա ընդհարվեց ներս մտնող մի այլ սկառւտի հետ:

— Վարդան...

— Ութսունինը... Դու յէս... Ի՞նչ ես անում այստեղ...

— Իսկ դու ի՞նչ ես անում այստեղ:

— Յես յեկել եմ պատկոմ ընդունվելու: Դու յէ:

— Վոչ: Յես յեկել եմ նրանց հետ կապ ունենալու համար:

Դու ավելի լավ ե, ջո մասին պատմես, Վարդան:

— Ի՞նչ պատմեմ, — ժպտաց նա. — աչքովդ տեսար...

— Հիմար տղա յես, Վարդան:

— Ինչո՞ւ...

— Բա այդպես բան կանե՞ն... Ավելի լավ չեր լինի, վոր չմատնեյիր քեզ, մնայիր սկառւտանոցում և շարունակեյիր գաղտնի աշխատանքը: Վոր թքեցիր Նշանի վրա, ո՛ւմ քնաս տվեցիր:

— Դե լավ, — վիրավորվեց Վարդանը, — մի նեղանա, վոր ձեր նշանը կեղտոտել եմ...

— Այդ մեր նշանը չի: Յես սկառւտ չեմ:

— Ի՞նչ, չլինի իմ փոխարեն քեզ են ընդունել քայքայող յեռյակի մեջ:

— Վոչ: Իսկ վոքեր են յեռյակի մյուս անդամները:

— Ի՞նչ կարիք կա ասելու:

— Մի վախենա, չեմ մատնի, Վարդան:

— Չեմ կարող ասել, Ութսունինը...

— Ինչո՞ւ:

— Գաղտնիք ե:

— Յես սկառւտանոցի կոմյերիտական բջիջի քարտուղարն եմ: Հասկացար: Ուրեմն կարելի յե:

Վարդանը մտածեց:

— Չեմ կարող ասել, — կրկնեց նա քիչ հետո: — Ընկերներս դժգոհ կմնան:

— Չեր գործն ե, — ձեռները լվաց Ութսունինը. — սակայն իմացիր, վոր մեր բջիջից դուրս մնալով, ջո ընկերները շատ հիմար բաներ կարող են անել:

— Մենք հիմար չենք:

— Հիմար եք, Վարդան: Դուք ել նույն բանի համար եք պայքարում: Դոր մենք, բայց դուք սխալ ձևով եք պայքարում:

— Նրանով, վոր վախենում եք հանդես գալ:
 — Ձեռք վախենում, — վրդովվեց Ութսունիննը, — ավելորդ ենք համարում:

— Ավելորդ չի: Գաղտնի ձեռով աշխատելը վոչ մի ոգուտ չի բերի: Հարկավոր և յելույթներ ունենալ, խոսել, հակաճառել...

- Կվոնդեն:
- Թող վոնդեն:
- Իսկ հետո:
- Հետո այն, վոր որինակ կդառնաք մյուսներին:
- Վոր նրանց ել վոնդեն...
- Ե՛հ, Ութսունինն, մենք իրար չենք հասկանում, — ծիծաղեց Վարդանը: — Յեկ նյութը փոխենք:

Ութսունիննը լռեց: Վարդանը գրպանից հանեց մի ծալած թուղթ, բաց արեց ընկերոջ աչքերի առաջ:

- Գիտե՞ս ինչ ե սա, — հարցրեց նա:
- Ի՞նչ, — չգիտենալ ձեռքից Ութսունիննը:
- Գաղտնագրությունը...
- Վոնդեն:
- Գարեզինն եր կորցրել: Փնտրում եր: Գլխի ընկա, վոր մեկը գտել և ու չի տալիս: Գտա, արտագրեցի, նորից դրեցի տեղը: Հրաչի մոտ եր:
- Կարդացի՞ր:
- Ձկարողացա:
- Ինչո՞ւ յես ինձ ցույց տալիս:
- Վերցրու քեզ: Գուցե դու կարդաս:

Ութսունիննը վերցրեց: Հանկարծ հիշեց, վոր ինքն ու Հրաչը արտագրել էին թղթի միայն կեսը: Իսկ ի՞նչ և գրված մյուս մասում: Նա բառ առ բառ սկսեց կարդալ մաքում:

— ... Գաղտնի միություն... Բիրագի գլխավորությամբ... և դաշնակցականների ծրագրով... Արտասահմանի դաշնակցականների հետ կապ պահողը Պոլսի սկաուտապետ... Պիմենն և...

- Պիմենը, — բացականչեց Ութսունիննը:
- Ի՞նչ, — զարմացավ Վարդանը:
- Վոչինչ: Այս թուղթն անհնար և կարդալ:
- Այս ասելով, նա թուղթը դրեց գրպանը և հրաժեշտ տվեց Վարդանին:

Սկաուտ համար Ութսունինն իրենց տանից դուրս յեկավ ամենածանր տրամադրությամբ: Ճիշտ և, իր միջնակ յեղբայրն առողջանում և քաղաքի հիվանդանոցում, բայց Պոլիդոնում հիվանդացել և հինգ տարեկան Հարությունը: Մի առավոտ, հանկարծակի ուռել եր նրա կոկորդը և այժմ նա պառկած և հիվանդանոցում, համարյա կիսախեղդ: Որեցոր ծրա ուսուցիչը աճում և և յեթե այդպես շարունակվի, շուտով նա շնչահեղձ կմեռնի...



— Սկաուտ, բավական ե: Մի բաժակ ճանճ, կամ լություն:

Ամերիկական կոմիտեյի ամենալավ բժիշկները գտնվում են Կաղաչի Պոստում, իսկ նրանց մոտ ընկնելու համար հարկավոր և հատուկ միջնորդություն:

Ի՞նչ անել... Գնա՞լ նորից միտք Նոնսի մոտ... Նորից մտրկով չի՞ պատասխանի... Լավ, թող խփի, միայն թե ընդունի... Ի՞նչ դաժան մարդիկ են այդ ամերիկացիները և նրանց հետ աշխատող հայ քեռիները...

Այնուամենայնիվ, Կաղաչի Պոստ հասնելուն պես, Ութսունիննը քայլերն ուղղեց Նոնսի գրասենյակը: Այս անգամ նա վորոշեց բանավոր խնդրել: Ձե՛ վոր Նոնսը հայերեն հասկանում և...

Նա ներս մտավ վախով ու մոտեցավ Նոնսին, վորի տրամա-
դրութիւնը, բարեբախտաբար բարձր եր յերևի:

— Միտար Նոնս, — սկսեց Ութսունինը. — յեղբայրս Պոլի-
գոնում ծանր հիվանդ ե: Չե՞ք ընդունի ձեզ մոտ:

— Ի հարկե կընդունենք:

— Կընդունե՞ք, — միտար Նոնս...

— Այո, այո: Կընդունենք, կընդունենք:

Միտար Նոնսը ձեռքի հուսահատ շարժումով դեն քշեց մի
աներես ճանձ իր դեմքի վրայից ու մինչդեռ Ութսունինը շնոր-
կալական հայացքով նրան եր նայում, ավելացրեց:

— Բայց...

Ութսունինի սիրտը կարծես կանգ առավ:

— Բայց նախքան ընդունելը, դու ինձ համար պետք ե բռնես
մի բաժակ ճանձ...

— Մի բաժակ...

— Այո: Յեղբորդ կյանքի հետ համեմատած՝ թանգ չի:

— Այո. միտար Նոնս, բայց մինչև մի բաժակ ճանձ բռնեմ,
եղբայրս կմեռնի...

— Չի մեռնի մի որում...

— Մի որում պիտի բռնեմ մի բաժակ ճանձը...

— Անպայման:

— Միտար Նոնս, ընդունեցեք յեղբորս, հետո յես տասը բա-
ժակ կբռնեմ...

— Մի բարկացնիր ինձ, սկառտ: Յեթե հենց այսոր ինձ
համար մի բաժակ ճանձ բերես, յեղբորդ կընդունեմ: Վաղը՝ ուշ
կլինի...

— Լավ, միտար Նոնս: Բայց արդեն ձմռան մոտ ե և այն-
քան ել ճանձ չի ճարվում:

Նոնսը կանգնեց:

— Սկառտ, բավական ե: Կամ մի բաժակ ճանձ, կամ լուռ-
թյուն:

— Միտար Նոնս, ճանձերը ձեր շենքից պետք ե բռնել:

— Վոչ: Բռնիր վորտեղից վոր ուզում ես, միայն թե Կազաչի
Պոստից: Յտեսութիւն: Գնա:

Ութսունինը դառնացած դուրս յեկավ և գնաց սկառտա-
տանոց: Նա ինչպես բռնի մի բաժակ ճանձ, այն ել հենց այսոր,
յերբ մինչև մութն ընկնելը մի քանի ժամ ե մնացել... Իսկ բռնել
անհրաժեշտ ե...

Նա նստեց արլի շան յանկապատի շոտ և սկսեց յերկար,
շատ յերկար մտածել:

Սկառտը ճանձ բռնելիս... Ծաղր չե դմ... Ճանձ են բռնում
փոքրահասակ վորբուհիները, վորոնք յուրաքանչյուր լիքը բա-
ժակի համար հիվանդանոցի պահեստից ստանում են մի փոքրիկ
տիկնիկ կամ մի վորեկ ե այլ խաղալիք... Ճանձ եր բռնում նաև
Աչիկը, վորն իր մի ամսվա աշխատանքով հագիվ կարողացավ մի
ռետինե գնդակ վաստակել: Նա պատրաստվում եր նաև ձեռք բե-
րել մի կտոր կարմիր ժապավեն իր գլխի համար, բայց մեռավ և
նրա բաժակը մնաց կիսատ... Նրա մոտիկ ընկերուհիները հատ-
հատ հաշվելով՝ ճանձերը բաժանեցին իրար մեջ:

Մի ձեռք իջավ Ութսունինի ուսին:

Սմբատն եր:

— Ինչո՞ւ յես տխուր, — հարցրեց նա:

Միտար չկար պատմելու. Ութսունինը մի քանի խոսքով ասաց
բանի եյութիւնը: Սմբատի արնով լցված աչքերը սպառնազին
փայլեցին և նա բոռնցքը սեղմած մրմնջաց մի ծանր հայհոյանք,
— Ի՞նչ են ուզում նրանք մեզանից...

Սակայն վշտանալու ժամանակ չկար: Սմբատի նախաձեռ-
նությամբ իսկույն բջիջը հավաքվեց, բացի Միհրանից, վոր ար-
հեստանոցումն եր: Ի՞րորն սկսեցին ճանձեր բռնել, Ութսունինի
յեղբոր կյանքն ազատելու համար: Ճաշարանը, վորի սեղանների
վրա մնացել էին ուտելիքի մանր կտորներ, լավ բերք տվեց:
Բաժակի մեծ մասը լցվեց ճաշարանում:

Բջիջի անդամներից վոչ վոք դպրոց չգնաց: Մինչև ուշ յե-
րեկո նրանք հալածում էին այդ փոքրիկ արարածներին, ահա-
զին բաժակը նրանցով լցնելու համար: Յերբ Սմբատն ուրախ
ժպիտով լիքը բաժակը մեկնեց Ութսունինին, քիչ մնաց նա լաց
լինեք ուրախութիւնից:

Միտար Նոնսը, իրևի իսկական ամերիկացի, իր խոսքը պա-
հեց: Նա իսկույն զանգահարեց Պոլիգոն և մի քիչ հետո, Ութ-
սունինի յեղբայրը բերվեց Կազաչի Պոստ: Նա համարյա կիսա-
մեռ վիճակումն եր: Մի աչքանի բժիշկն իր սուր աչքով դիտեց
նրա կողորդի ուռուցքը և կարգադրեց քույր Սիրուշին՝ վերքի
վրա դեղ դնել: Իսկ յերեք որ անց՝ նա առողջացավ ու վերա-
դարձավ Պոլիգոն:

Այժմ արդեն Ութսունինը զգալիորեն հանգստացավ: Այժմ
արդեն, նա լիովին կարող ե զբաղվել բջիջի, սկառտանոցի, վոր-
բանոցների և նման այլ խնդիրներով...

Քիրազը Սմբատին նշանակեց իրեն ոգնական: Առաջին ջոկատապետ Գասպարն այդ լուրն ընդունեց կայծակի նման: Նա համարյա հավատացած էր, վոր ոգնականն ինքն է լինելու: Վերավորվեցին նաև մյուս ջոկատապետները, բայց փաստը կատարված էր: Մնում էր յենթարկվել...

Ինչքան ուրախացան բլիջի անդամները: Յեվ ինչքան ծիծաղեցին Քիրազի վրա: Սկառուտանոցի ամենալավ կոմյերիտականներից մեկը՝ պետի ոգնական... Իսկ միևնույն ժամանակ, հայ արիւններից կազմված հատուկ խումբը, մինչև ուշ գիշերը շրջում է փայտերով ու լապտերներով, բլիջը գտնելու համար:

Բլիջի անդամների միաձայն վորոշումով, առայժմ դադարեցվել էին պարապմունքներն ու ժողովները, մինչև վոր վորևե համապատասխան հավաքատեղի գտնվեր: Հիշելով գավկոմի քարտուղարի խորհուրդը, Ութսունինը գնաց բանվորական բլիջի հետ կապվելու:

Արհեստանոցում նա տեղեկացավ, վոր կուսակցական բլիջի քարտուղարը բանվոր Դամիրչյանն է: Ութսունինը ճանաչում էր նրան: Նա առանձնացավ նրա հետ և շուտով հայտնեց իրենց բլիջի մասին:

— Բլիջ... ձեզ մոտ. — հարցրեց Դամիրչյանը, շունչը պահած: — Ի՞նչ ես ասում: Բա ո՞ր էք չեք յերևում: Բանի՞ հոգի յեք, ո՞ր էք հավաքվում, ի՞նչ էք անում...

Ութսունինը պատմեց: Դամիրչյանը լսում էր լարված հետաքրքրությամբ: Իսկ յերբ Ութսունինը տեղեկացրեց, վոր մոտ յերեսդուն վորբուհիներ նույնպես մասնակցում են իրենց պարապմունքներին, Դամիրչյանը զարմացած բացականչեց և ամուր սեղմեց սկառուտի ձեռքը:

— Իսկ յես, Ութսունինն, — ժպտաց նա, — քեզ պիտի հաղորդեմ մի այլ բան, վոր ինքդ չգիտես... Ձեր սև ջոկատի Գրիգորը, Ոնիկը, Ռուբենը, Պետրոսը, Ասքանազը և Միհրդատը մեր բլիջի կոմյերիտականներն են: Չե՞լիք իմանում...

— Վո՞չ... — շտեց Ութսունինը: — Ուրեմն սև ջոկատն ամբողջովին մեքն է: Ընկեք Դամիրչյան, կեցցե սև ջոկատը, փոխիվ կոմյերիտականի խոսք... Գրիգորը... Ոնիկը... Ռուբենը... Պետրոսը... Յեվ ի՞նչպես չգիտեիք: Նույնիսկ Միհրանը չգիտեր... Այ քեզ գազանապահություն...

Դամիրչյանը հայտնեց, վոր կերակի որը մտի պահեստում տեղի յե ունենալու կոմյերիտական բանվորական բլիջի նիստը: Անպայման յեկեք: Հենց այնտեղ կհանդիպեք ձեր ընկերներին և հանկարծակի կբերեք նրանց...

Բայց Ութսունինը չսպասեց այդ հետաքրքիր հանդիպմանը և հենց նույն որը պարզվեց գաղտնիքը: Յերեկոյան, յերբ սև ջոկատը տուն էր վերադառնում, նա ճանապարհին հանդիպեց Ասքանազին ու Միհրանին և շնջաց.

— Կիրակի յերեկոյան... Մտի պահեստում...

— Վճրտեղից գիտես, — բացականչեց Միհրդատը:

— Յես ել եմ կոմյերիտական:

— Ե՛յ, — հզարտացավ Ութսունինը, — մեր սկառուտանոցում մի ամբողջ բլիջ կա, իսկ դուք տեղեկություն չունեք...

Մայր, աստիճան հետաքրքրված Ասքանազը յետ դարձավ և բղավեց հետևից յեկող ընկերներին.

— Ռուբեն, Գրիգոր, Պետրոս, — յեկեք... Հալա տեսեք Ութսունինն ի՞նչ է ասում...

Բոլորը մնացին ապշած: Իսկ յերբ տեղեկացան, վոր Սմբատն էլ է գտնվում բլիջում, նրանցից վո՞չ վոք չուզեց հավատար: Ութսունինը յերգվեց:

— Վաղձուց է Սմբատը ձեր բլիջում, — հարցրեց Գրիգորը:

— Այո, վաղուց:

— Յեվ ձեզ չի՞ մատնում...

— Նա հիանալի կոմյերիտական է, — վերավորվեց Ութսունինը:

Նրանք լուռ մտան սկառուտանոց: Փոքր ննջարանի մի անկյունում սև ջոկատի տղաները Սմբատի հետ ձեռք սեղմեցին և համբուրվեցին: Ներկայացան նաև Հրաչն ու Վազգենը: Իսկ յերբ լոք-լոք տալով հայտնվեց Միհրանը և Ութսունինը ներկայացրեց նրան, բոլորը բացականչություններով հարձակվեցին:

— Ոհ... Միհրան...

— Այ տղա... Մեր Միհրանն էլ...

— Այ ավագակ, բա ինչ՞ու մեզ չեյին ասում:

Մոսակցությունը տեղի յեր ունենում սև ջոկատի մյուս անդամների ներկայությամբ և վո՞չ վոք վոք յեք քաջվում: Միայն թե բոլորն էլ զգուշանում էին վոր ուրիշ մեկը ներս չմտնի, թեկուզ դա լինի ոգնող ջոկատից...

Հանկարծ սև շոկատի յերեք սկառտներ, — Սարգիսը, Մկրտիչը, Գեվորգը, վոր անկյունում կանգնած խոսակցում էյին, մի թուղթ ձեռներին բռնած, մոտեցան Գրիգորին:

— Վերցրու, Գրիգոր, դու բջիջի բյուրոյի անդամ ես: Մենք էլ ենք ուզում ընդունվել...

— Տասնչորս, — բացականչեց Ութսունինը: — Ձեզ հետ միասին կլինենք տասնչորս հոգի: Հիանալի յե, աղնիվ խոսք...

Դուռը բացվեց և ներս մտան մի քանի այլ սկառտներ:

Բոլորը լոցեցին և հետո սկսեցին խոսել ուրիշ նյութերի մասին:

— Գնացե՛ք կարդացե՛ք, — հայտնեց նոր մտնողներից մեկը. — Պատի վրա նորութունն է կպցրած...



— Մենք արդեն վարակվել ենք կոմունիստական «թուլնով»...

Բոլորը դուրս յեկան: Գրատախտակի վրա ամբացված էր թերթի կտրվածք, իսկ նրա վերևում Քիրազի մի քանի տողը: Պետք գրում էր:

— «Սկառտներ, կարդացե՛ք այս հոդվածը և ինքներդ դատեցե՛ք, թե ով է ճշմարիտը»: Վահան:

— Իսկ հոդվածը հետևյալն էր.

«Սկառտապետ Վահան Քիրազի նամակը պատկոմապետ Մանուկ Ստեփանյանին»:

«Մեր թերթի անցյալ համարներից մեկում ընկեր Ստեփանյանը գրել էր, վոր Հայաստանի բազմաթիվ վայրերում և հատկապես Կաղաչի Պոստում, հսկայական թվով պատանիներ զոհ են գնում սկառտական զզվելի հակա-աշխատավորական մտքերին: Ստեփանյանը հատկապես մեղադրել էր սկառտապետ Վահան Քիրազին, ուղղակի հակապետական ազիտացիայի մեջ: Այս հոդվածի առթիվ, Քիրազը Կաղաչի Պոստից մեզ ուղարկել է անամոթ համարձակությամբ գրված մի նամակ, վորը տպում ենք այստեղ»...

Այնուհետև գալիս էր Քիրազի նամակը, վորը թեև յերկար էր, բայց վորի ամբողջ միտքը կարելի յեր ամփոփել նրա վերջին նախադասութունների մեջ, վորտեղ նա գրում էր.

«Ծիշտ է, յես շատ աշխատեցի, վոր կոմունիստական մտքերը մուտք չգործեն սկառտանոց, բայց ցավոք սրտի պիտի խոստովանվեմ, վոր իմ սկառտների մի մասն արդեն վարակվել է այդ թուլնով»...

Սկառտները զարմացան այն անմիտ համարձակության վրա, վորով գրված էր պետի նամակը: Սմբատն ըստ իր սովորության թքեց ու ժրմնջաց.

— Ապահով ե գգում իրեն ամերիկական կոմիտեյի թևի տակ... Ձի վախենում...»

— Թող չվախենա, — ժպտաց Գրիգորը. — բայց չե՞ վոր մենք արդեն վարակվել ենք կոմունիստական թուլնով... Գնանք, տղաներ:

48. ՄՍԻ ՊԱՇԵՍԸ

Որորվում են մսերը, կախված պահեստի առջևում, ինչպես խանութում: Ներսում մի փոքրիկ սենյակ է, ուր նստել է պահեստապետն ու յերազում է: Բայց այդ սենյակում մի դուռ էր բացվում դեպի խորքի սենյակը: Նա մութն է և նրա միակ փոքրիկ լուսամուտը բացվում էր Կաղաչի Պոստից դուրս, նայում է դեպի գերեզմանոցը: Սենյակի կիսախավարի մեջ նստել են մի քանի հոգի: Մյուսները հավաքվում են: Դամիրչյանը հատկապես այդ տեղն է ընտրել ժողովի համար, վորպեսզի սկառտներն ու վորբուհիները կարողանան մասնակցել: Ահա ներս են մտնում նրանք, զգուշությամբ, մեկ առ մեկ, և նստում են աթոռների, նստարաններին և մի կոճղերի վրա: Ահա ներս մտավ Ութսունինը: Նա գալիս էր սկառտանոցից: Այնտեղ նկատել են մի շարք սկառտ-

ների կասկածելի բացակայութիւնը և այժմ հայ արիւնքի հատուկ խումբը վտար տակ և առել վողջ կազաչի Պոստը... Իբրև հաստատութիւն նրա խոսքերի, քիչ հետո ներսում հավաքվածները կախված մանրի արանքով տեսան պահեստի առջևով անցնող տասնյակը, վորոնց բոլորի գլխարկները վրա պսպղում էին արևով լուսավորված հայ արիական նշանները... Հիանալի տեղ եր ընտրել Դամիրչյանը: Ո՞ւմ մտքով կանցներ մտնել մի պահեստը...



Նա վողջունեց սկառտանոցի բլեշը...

Կիսախավար սենյակը հետզհետե ավելի և ավելի յեր լցվում մարդկանցով: Կազաչի Պոստում յերիտասարդ բանվորներ շատ քիչ կային և նրանցից ել միայն վեցն էին կոմյերիտական: Այժմ նրանք բոլորը յեկել էին: Նստած էին նաև սկառտանոցի տասնըմեկ կոմյերիտականները և յերեք դիմում տվողները: Յեկել էին քսանից ավելի աղջիկներ՝ տարբեր վորբանոցներից: Ներկա էին սև ջոկատի մի քանի այլ սկառտաներ:

Դամիրչյանը ժողովը բաց արեց: Նա նախ վողջունեց սկառտանոցի բլիջին, ապա ժամանակ չկորցնելու համար իսկույն անցավ գործնական աշխատանքներ: Հարկավոր եր վճռել կազմակերպչական խնդիրներ:

— Յես կարծում եմ, — ասաց նա, — վոր սև ջոկատի կոմյերիտականները պիտի շարունակեն մնալ արհեստանոցի բլիջում, ի հարկե սերտ կապ ունենալով սկառտանոցի բլիջի հետ: Իսկ սկառտանոցի բլիջը պիտի շարունակի մնալ իբրև ինքնուրույն բլիջ և իր մեջ գրավի բոլոր հուսալի սկառտաներին...

Այս հարցը վիճաբանութեան առիթ տվեց, — ձուլվել մի բլիջի մեջ թե՛ վողջ... Վոմանք գտնում էին, վոր միատեղ գործելու համար պետք է ձուլվել, իսկ մյուսները պնդում էին, վոր առանց ձուլվելու ել, կարելի յե միատեղ աշխատել, և վոր հիմք չունի արհեստանոցի կոմյերիտական բլիջը դատարկել սկառտ բանվորներից: Վերջում բոլորը յեկան այդ յեզրակացութեան և վորոշումը քվեարկեցին միաձայն:

Հետո ծագեց մի այլ հարց. — վոր բլիջում պիտի ընդունվեն Մկրտիչը, Սարգիսը, Գեվորգը և հետագայում դիմում տվող սկառտաները: Վորոշվեց, վոր նրանք ընդունվեն սկառտանոցի բլիջում: Ու քանի վոր արդեն խոսք եր յեղել նրանց մասին, քննեցին դիմումները և յերեքին ել ընդունեցին կոմյերիտութեան մեջ: Ամբողջ ժողովի ընթացքում աղջիկները լուռ լուռ էին: Ութսունինը նայեց նրանց: Նրանք իր ընկերուհիներն էին և իր զրույցների ու պարապմունքների հաճախողները: Նրան դուր չեկավ, վոր նրանք չեն խոսում և հարց տվեց.

— Իսկ դուք ի՞նչ կասեք, աղջիկներ...

Բոլորը նայեցին վորբուհիներին: Ու վեր կացավ Արշալույսը, — ահ, հիանալի աղջիկ ե նա, — և համարձակ շեշտով սկսեց խոսել.

— Մեր վորբանոցում յես կազմակերպել եմ կոմունիստական գրքեր կարդացող գաղտնի խմբակ...

Նրա խոսքերը ծածկվեցին ծափերի տակ: Դամիրչյանը վախեցած լոցերեց նրանց և դուրս նայեց: Սկառտաներն զգացին իրենց սխալը և լոցեցին: Արշալույսը շարունակեց խոսել.

— Խնդրում եմ, — յերևի այստեղ գտնվող բոլոր աղջիկներն ել նույնը կխնդրեն, — վոր մեզ ընդունեք ձեր բլիջի մեջ: Մեզանից ամեն մեկը կաշխատի իր վորբանոցի աղջիկներից կոմյերիտականներ դաստիարակել և հանձնել ձեզ...

Նրանցից հետո, խոսեցին մյուս վորբանոցներից աղջիկները: Բանից դուրս յեկավ, վոր համարյա բոլոր վորբանոցներում կազմակերպել էին խմբակներ: Նրանք սովորել էին Ութսունինից, թե ինչպես պիտի կազմակերպել, ինչպես պիտի հավաք-

վել և ինչի մասին պիտի խոսել. Ութսունինները... Նա շատ բան է սովորեցրել իր ընկերուհիներին...

Ութսունինները ամաչում էր, վոր իրեն գովում են: Նա վորևէ բան եր փնտրում, զբաղվելու համար: Նա պատից վար առավ զբամեքենայով ապված մի գրություն, վոր ամբացված էր կարտոնի վրա: Սկսեց կարդալ: Կանոնադրություն էր՝ բանվորներին համար:

Ութսունիններին հատկապես չզվարճացրեց կանոնադրության այն կետը, ուր ասված էր. «բանվորներն իրավունք չունեն կապուենալ սկաուտներին ու վորբուհիներին հետ և նրանց քարոզել զանազան մտքեր: Սույնը խախտելու դեպքում կվճռվեն»:

Մթնեց: Արդեն ուշ է: Պետք էր գնալ, կասկածներ չհարուցելու համար: Ժողովականներն սկսեցին մաս-մաս դուրս գնալ և հալվել խավարի մեջ:

Ութսունինները, Հրաչը, Սարգիսը, Գեվորգը, Վազգենն ու Միհրանը գնում էին միասին, սկաուտանոցի մոտերքում իրարից բաժանվելու համար: Բայց նախքան սկաուտանոց հասնելը, հանկարծ յերևացին մի քանի լապտերներ և հայ արիներին խումբը շրջապատեց նրանց:

— Վերտեղից եք գալիս, — հարցրեց Սիոնը:

Հանկարծ Ութսունինները զգաց, վոր ինքը ծնված չէ միայն զգուշանալու, թագնվելու և ձևացնելու համար: Զգաց, վոր նա-յած տեղին ու դեպքին, կարելի չէ և հարկավոր է համարձակ լինել: Նա ուժ զգաց վոչ միայն իր մեջ, այլև իր թիկունքի յետևում և Սիոնից ավելի խիստ տոնով պատասխանեց նրան.

— Քո ինչ գործն է, թե վորտեղից ենք գալիս:

— Ի՞նչպես թե... — ապշեցին հայ արիները:

— Բա ի՞նչ, — ավելի տաքացավ Ութսունինները. — ձեզ ով է նշանակել մեր գլխին տեր: Ուշացել ենք պոստից, — վոչ: Բացակայել ենք պարտականություններից. — վոչ: Մեր ազատ ժամանակն անց ենք կացրել այնպես, ինչպես քեֆներս է ուզեցել: Բա մենք ինչո՞ւ չենք հարցնում, թե դուք ո՞ւր ելիք...

Հայ արիներին խումբը լուռ լսեց նրան, իսկ յերբ նա վերջացրեց, Գասպարը, լապտերը ձեռքին առաջ յեկավ:

— Ուրեմն այդպես, Ութսունինները...

— Այո: Այդպես:

Գասպարը շուռ յեկավ դեպի հայ արիները:

— Գնանք տղաներ:

Սուսմբը շարժվեց: Բայց Գասպարը չհամբերեց: Նա յետ դարձավ և դեմքի կապտած յերակներով, սպառնաց.

— Սպասիր դու: Յես կգտնեմ ձեր բունը...

Ութսունինները փորձեց լռել, բայց չկարողացավ: Թեև զգաց, վոր անզգույշ բան է անում, բայց և այնպես մոտեցավ Գասպարին, արհամարհանքով ծիծաղեց նրա յերեսն ի վար և շեշտակի պատասխանեց.

— Ձեա գտնի:

Ու մինչդեռ հայ արիները սառած նայում էին, սկաուտները զվարթ յերգելով հեռացան:

49. ՊՈՒՏ ՏԱՆԳՈՆ

Գասպարի յենթադրությամբ, պոետ Տանգոն, դա՛ սկաուտ համար Ութսունինները: Մնում էր հաստատել ճշմարտությունը: Բայց նախ քան այդ, արդեն ամբողջ սկաուտանոցում տարածվեց, վոր սկաուտ Տանգոն՝ դա Ութսունինն է... Բազմաթիվ սկաուտներ գալիս դիտում էին նրան, ուշադիր գնում, կարծես նոր էին տեսնում: Ոհանը ջղայնությունից շրթունքներն էր կծում, վոր դեռ չբնի Ութսունինների Տանգո լինելու անժխտելի ապացույցը, թեև նա հավատացած է դրանում:

Քիրազը, վոր վերջին ժամանակներն իրեն շատ ճնշված էր զգում, մի անգամ հանդիպեց Ութսունիններին շենքի դիմաց, բայց վոչինչ չասաց: Նա միայն տխուր նայեց և գլուխն որորեց: Ութսունիններն անցավ, չտեսնել ձևացնելով:

Ամբողջ սկաուտանոցը խոսում էր բջիջի մասին: Արդեն ամեն մարդ գիտեր նրա գոյության մասին, բայց նրան չէր տեսել: Կոմյերիտականներն անփույթ ձևով շրջում էին շենքով, լսում էին խոսակցությունները, ճանաչելու համար թշնամիներին և նրանց, ովքեր կարող էին լինել բջիջի անդամ:

Մարգարանի լուսամուտի մոտ հավաքված, յերկրորդ ու չորրորդ ջոկատի մի քանի սկաուտներ, զրուցում էին.

— Խոսում եմ քեզ հետ, — ասում էր մեկն իր ընկերոջը, — և մտածում. — Ի՞նչ գիտենաս, — թե սա յեւ բջիջի անդամ չի... Ախր յեթե այդ բջիջը դու չես, սա չի, նա չի, բա ով է...

— Իսկ յես կասկածում եմ, վոր այդ դու յես և դիտմամբ ես այդպես խոսում, — պատասխանում էր ընկերը:

— Մի ըոպե յենթադրենք, թե յես ուզում եմ կոմյերիտական դառնալ: Ի՞նչպես և ո՞ւմ հայտնեմ իմ ցանկությունս, հարցնում եր յերրորդը:

— Հայտարարիր...

— Բղավիր...

— Բոլորին ասա...

— Վոչ վոքի յել մի ասա: Բջիջն ինքը կգտնի քեզ: Նա ամեն ինչ լսում և ու տեսնում...

— Տարրինակ ե...

— Այդպես ե:

Ութսունինը, Հրաչն ու մյուսներն իմացան, վոր Քիրազը դիտմամբ և Գասպարի հակառակորդ Սմբատին իրեն ողնական նշանալի, վորպեսզի դրանով վիրավորի Գասպարի ինքնասիրությունը և դրդի նրան՝ անպայման գտնել սկառտանոցի խոտվարարներին: Իսկ այժմ, յերբ բոլորը նրան ճանաչում էին վորպես պոետ Տանգո, նկատի ունենալով նրա յերրորդ Չոկատից լինելը՝ կասկածի տակ էին առնում նաև նրա Չոկատայետ Սմբատին: Գասպարն ամենայն յեռանդով աշխատում էր ապացուցել, վոր Սմբատը նույնպես կոմյերիտական է: Քիրազն իհարկե չէր հավատում այդ բանին և գիտեր, վոր այդ լուրերի պատճառը Գասպարի հակամարտությունն է Սմբատի հետ...

Իսկում եր վտանգավոր: Պետք է պոետ Տանգոյի հեքիաթը ցրել և դուրս գալ կասկածի տակից: Ութսունինը սպասում էր հարմար առիթի, հայտնելու համար, վոր պոետ Տանգոն սկառտի ծածկանունն չէ, այլ բանաստեղծության վերնագիր: Յեթե կասկածողը միայն մի հոգի լիներ, նա կըռներ նրա ոճիքից, կտաներ գրասենյակի վարիչի մոտ և կապացուցեր, վոր այդպես կոչվում է Վազգենի յեղբոր բանաստեղծությունը... Բայց հարկավոր էր ապացուցել վոչ թե մեկին, այլ յերկու հարյուր հոգու...

Շաբաթ յերեկոյան, սկառտները հավաքվել էին ըստ սովորականի տողանցք անելու համար: Բայց փոխանակ տողանցքի հրահանգի, իր սենյակից դուրս յեկավ Քիրազը և հայտնեց:

— Այստեղ պիտի գնանք Սևերսկի գորանոցները՝ Արփաչայի ափին: Մեր վորբուհի քույրերը մեզ հրավիրել են յերեկոյթի: Դուրս յեկեք բոլորդ առանց փայտերի...

Սևերսկի գորանոցները, ուր վորբուհիներ էին ապրում, այնքան էլ հեռու չէր: Հարկավոր էր կազաչի Պոստի բարձրավանդակից իջնել դեպի բոստանները, գնալ նրանց միջև ձգվող ճանա-



Սկառտներից վոմանք շրջապատել էին Քիրազին և նրա հետ էին քայլում:

պարհով, անցնել փոքրիկ առուն և մանգաղաձև պտույտ գործելով քաղաքի շուրջը, հասնել Արփաչային, վոր հոսում եր քաղաքի արևմտյան կողմում: Նրա ափին, մի քանի տասնյակ մեծ գորանոցներում տեղավորված էին հազարավոր աղջիկներ: Զորանոցները յերեք հարկանի էին և նրանց միջև անցնող փողոցները տնկված էին գեղեցիկ ծառերով: Շենքերի յետևում, արձակ դաշտով հոսում եր գեղեցիկ Արփաչայը, հանդարտ՝ վեհարար: Նրա մյուս ափը, ընդհակառակը, դաշտավայր չեր, այլ հետզհետե ավելի և ավելի բարձրացող բլրաշարք: Նրա լանջին, ուղիղ Սեվերսկիի դիմաց, գտնվում եր հայկական Ոջուղուլի գյուղը: Սեվերսկին քաղաքից հեռու յեր մեկ և կես կիլոմետր: Սևերսկիյի և քաղաքի միջև ընկած եր ևս մի լրացարք և քաղաքը չեր յերևում: Սևերսկին մենակ եր ու վորք՝ իր մեջ ապրող վորբերի նման...

Սկառուները գնում էին ազատ քայլերով, խումբ-խումբ, առանձին-առանձին: Նրանցից վոժանք շրջապատել էին Քիրազին և նրա հետ էին քայլում: Սկառուտապետն ուրախ տրամադրությամբ մեջ եր և կատակներ եր անում սկառուների հետ:

— Մեծացել ես, — ասաց նա տղաներից մեկի վզակոթին խփելով և զվարթ ծիծաղելով. — քեզ պետք է ամուսնացնել: Կընտրենք մի լավ վորբուհու: Ձեր արհեստանոցի վարպետը կդառնաս... Փող կվաստակես...

— Ե՛, ձեռ ես առնում, պարոն Քիրազ, — վիրավորվեց սկառուտը, — իսկ լուրջ կերպով մեր մասին վոչ վոք չի մտածում...

— Ինչո՞ւ, տղաս, — լրջացավ պետը:

— Բա ի՞նչ... Բանվորներին հավասար աշխատում ենք, բայց վոչ ոռճիկ եք տալիս, վոչ բնակարան: Իսկ վաղը կասեք. — արդեն մեծացել ես, դուրս յեկ սկառուտանոցից, ապրիր քեզ համար...

— Յեվ այն ժամանակ ել ոռճիկ կստանաս, տղաս: Հիմա փողն ինչի՞ք ե պետք: Դժգոհությունն ունես: Կարի՞ք ունես...

Սակայն նրա փոխարեն պատասխանեց մի այլ սկառու.

— Պարոն պետ, յերբ մեզ ուղարկեցիր արհեստանոցներում աշխատելու, պետությունը քեզանից և ամերիկական կոմիտեյից պահանջել եր, վոր մեզ ոռճիկ տան: Դուք ասել էյիք, վոր յերբ դուրս գանք սկառուտանոցից, մեր ամբողջ ոռճիկը միանգամից կստանանք: Ճիշտ է արդյոք: Կտմք...

— Վերադից գիտես այդ, — հարցրեց Քիրազը:

— Լսել եմ: Բռնավորներից:

— Իհարկե կտանք, տղաս: Շուտով կտանք:

— Ի՞նչպես թե շուտով...

— Այն: Շուտով ձեզ բնակարան ու փող կտանք, դուրս կգաք սկառուտանոցից, կմտնեք կյանքի մեջ, կսովորեք ապրել ինքնուրույն...

— Բա մե՞նք...

Քիրազը նայեց Հրաչին:

— Բա մե՞նք, — կրկնեց նա: — Միթե միշտ պիտի պահակություն անենք: Ախր ի՞նչ պիտի լինի մեր ապագան: Մեծանում ենք առանց արհեստի, առանց գիտությունի: Վաղը վոր դուրս գանք սկառուտանոցից, ի՞նչ պետք է լինի մեր վիճակը...

— Ճիշտ է ասում, պարոն պետ, — հաստատեց մի ուրիշը: — Քանի մտածում եմ այդ մասին սիրտս տխրում է: Վերջապես մի արհեստի յեկ մենք պետք է տիրանանք, թե վոչ:

Սկառուների մի ամբողջ խումբ հավաքվեց Քիրազի շուրջը, վորն սպասում եր պատասխանի:

— Ձեր մասին ել կմտածենք, — խոստացավ նա:

— Յեղձվ, պարոն պետ, — ժպտաց չորրորդ շոկատի մի սկառու: — Կմտածենք... Մինչև մտածեք, մենք կմեծանանք...

— Բա ի՞նչ անեմ այս ըոպեյիս, ջանիկս: Կարո՞ղ եմ ոգնել... Պիտի հարցը քննենք, ամերիկացիների հետ համաձայնություն գանք...

— Այն դեպքում, պարոն Քիրազ, — խոսակցություն խառնվեց փակամազործ Գրիգորը, — մի շտապի մեզ սկառուտանոցից հեռացնել: Մեր հարցը լուծեցեք մյուս շոկատների հետ միասին:

Քիրազը նայեց նրան, բայց վոչինչ չասաց:

— Վոչ, պարոն պետ, — պնդեց յերկրորդ շոկատի մի սկառու, — տղաները լավ են ասում: Յես գտնում եմ, վոր անպայման պետք է ամպտեք մեզ պահակ կանգնելուց: Բավական կանգնեցինք... Հերիք ե...

Քիրազը մռայլվեց: Նա հուսահատ աչքերով նայում եր շուրջը և կարծես իր հավատարիմ հայ արիներին եր վնասում: Բայց նույն ըոպեյին լսեց Արծիվ և Նապաստակ խմբակավարների, — յերկուսն ել հայ արիներ, — խոսակցությունը:

— Քիչ է մնում, թողնեմ սկառուտանոցը, — դժգոհում եր Արծիվ խմբակավարը:

— Յես ել, — համաձայնվում եր Նապաստակի խմբակավարը: — Վերջ ի վերջու վոչ մեր փողկապը մեզ հաց կտա, վոչ գլխարկի նշանը: Տխրում եմ, ազնիվ սկառուտական խոսք...

Քիրազը նայեց հեռու հորիզոնին, վորի յետևում մայր եր
մտել արեգակը: Այժմ թանձր խավարի մեջ մնացել էին նրա
վերջին տխուր շողերը: Մեռնում էր սկառտիզմը... Փրկել նրան,
հնարավոր չեր: Շատ լավ գիտեր Քիրազը, վոր յերբ յուրաքան-
չյուր սկառտ վար դնի իր փայտը և նրա փոխարեն վերցնի
մուրճ ու բրիչ, այլևս սկառտանոցից կմնա միայն նրա անուռը...

Նա նորից նայեց իր շուրջը, հաստատ բարեկամ գտնելու
հույսով: Յեւ դառը տխրությամբ նա տեսավ Գարեգինին, վոր
կարեկից հայացքով նայում էր իրեն:

Հասկանալով արեւի հայացքը, Գարեգինը մոտեցավ:

— Պարոն պետ, — ասաց նա նրան. — դու ամեն շարաթ
կարդում ես իմ հիշատակարանն ու քու նկատողություններն ես
գրում այնտեղ: Այս նկատողությունները մի-մի գոհար են ինձ
համար, բայց դու, պարոն պետ, անփուլթ ես վերաբերվում այդ
գոհարների հետ: Հիշում ես արդո՞ք, վոր գրել ես. — «Սկառտը
յերկու բանով կարող է փոխարինել իր փայտը, — զենքով կամ գոր-
ծիքով»... Դու զենքը չտվեցիր, ուստի և նա գործիք և վերցնում...

Քիրազը թեւ դրեց Գարեգինի ուսին, Գարեգինը գրկեց նրա
մեջքը և նրանք քայլեցին միասին: Սկառտապետը հառաչեց և
նրա առողջ կուրծքը ծանր բարձրացավ և իջավ ճնշող հոգսի տակ:

— Յես յերկրորդ լողորդն եմ յերկրագնդի վրա, — ասաց նա
մեղմ ձայնով: — Համաշխարհային յերեք ոլիմպիադաներում յես
յերկաթյա կամքով ճեղքեցի ջրերի տարերքը... Սակայն կոմու-
նիզմի ասարեքը, տղաս, յես ճեղքել չեմ կարող... Յես գիտեմ,
տղաս, վոր յերեսուն հինգ սկառտներ սիրում են ինձ և պատ-
րաստ են իրենց կյանքը զոհել գաղափարի համար... Բայց մեր
դիմաց միլիոններ կան, տղաս... Նրանք չեն ել ձգմի մեզ, վո-
րովհետեւ մենք չափազանք չնչին ենք: Նրանք մեզ կդատապար-
տեն խելագար անգործության... Խնչ կարող են անել յերեսուն
հինգ հոգի...

Յեւ խավարի մեջ Վահան Քիրազը լաց յեղավ իսկական ար-
ցունքներով...

— Նրանք իմ յերեսուն հինգին ել կխլեն... Վաղ թե ու՞
այսպես կլինի...

Գարեգինն ուժ չգտավ հակաճառելու և նույնպես ասաց.

— Այդպես կլինի...

Դիմացը, հանկարծակի յերևացին Սևերակի լույսերը: Զորա-
նոցները գտնվում էին մի քանի քայլի վրա...

Ապրում էին Սևերակիում նույնպիսի վորրուհիներ — ախուր
ու սիրելի: Ծանապարհի վրա կանգնած՝ նրանք այժմ նայում
էին իրենց բաղդակից յեղբայրներին, չհամարձակվելով մոտե-
նար: Սակայն սկառտներն իրենք էին մոտենում և խոսում
նրանց հետ: Կային այնպիսիները նրանց մեջ, վոր վաղուց ծանոթ
էին միմյանց: Նրանք հանդիպում էին բուռն բարևներով, վո-
րովհետեւ կազաչի Պոստից Սևերակի գնալ կարելի յեր տարեկան
միայն մի քանի անգամ... Խնչ դառն է, վոր նրանց պահում են
միմիանցից հեռու, միմյանցից կտրված...

Ութսունինը գտավ, վոր պոետ Տանգոյի ամենահարմար
առիթը արդեն հասել է: Յեւ յերբ յերեկոյթի բեմի վրայից,
Սևերակիի կառավարչուհին հրավիրեց սկառտներին՝ նույնպես
վորեն բան արտասանել, Ութսունինը բարձրացավ բեմ:

— Պոետ Տանգո... — ասաց նա:

Սկառտների շարքերում շուկներ, աղմուկ:

— Այս բանաստեղծությունը, — շարունակեց Ութսունինը, —
գրել է Գուրգեն Պարսկունին... Տպագրված է «Չաքուճ» ամսա-
գրում...

Սկառտների շարքերում զարմանք, բացականչություններ:

Ութսունինը բանաստեղծությունն արտասանեց և ծափա-
հարությունների տակ վար իջավ բեմից:

Այ թե կկատաղի որիորդ Սիրանուշը...

50. ԽՈՒԺԱՆ

Զմեռը սովորություն դարձավ, վոր սկառտները պահեստնե-
րից կարտոֆիլ էին վերցնում, վորը յերեկոյան տանում էին
զրասենյակ, խորովում վառարանի մեջ և ուտում: Մինչդեռ կար-
տոֆիլը կխորովվեր, նրանք նստում էին միլիցիոնների մոտ և
զրույց անում: Մենակությունից ձանձրացած միլիցիոններն ուրա-
խանում էր այդ այցելությունների համար և հաճախ ինքն եր
կանչում սկառտներին:

Հայ արիների հատուկ խմբի հալածանքներից ձանձրացած՝
բջիջը վորոշեց ոգտագործել զրասենյակը: Պայմանավորված որը,
բջիջի արդեն տասնութ անդամները մի քանի կարտոֆիլ ձեռք-
ներին մտան զրասենյակ: Բարևեցին միլիցիոններին, նստոտեցին
վառարանի շուրջը, կրակը թե՛ացրին: Սկսեցին զրուցել: Յերկար
զրուցեցին, բայց միլիցիոնները չեր հեռանում: Նրան հաճելի յեր
լինել սկառտների հետ:

Հանկարծ Սմբատը հարցրեց.
 — Դու կուսակցական ես...
 — Չե, ցանրմ...
 — Կոմյերիտական...
 — Չե,
 — Ուրեմն ամուսնացած ես, — յեզրակացրեց Սմբատը:
 Սկառտները ծիծաղեցին:
 — Ամուսնացած ել չեմ:
 — Ինչո՞ւ:
 — Ի՞նչ իմանամ: Հարմար ընկերուհի չեմ գտնում:
 — Մի՞թե, — զարմացավ Սմբատը: — դե ուրեմն յեկ այս կողմ,
 յեա քեզ մի խորհուրդ տամ...

Նա քաշեց միլիցիոներին մի անկյուն և սկսեց նրա հետ
 յերկար զրուցել:
 — Ժողովը հայտարարում եմ բացված, — հայտնեց Ութսուն-
 իննը: — Ներկա յեն բոլոր անդամները: Բացակայում ե Սմբատը՝
 հարգելի պատճառով և Վաղգենը՝ վոր հերթապահ ե հեռախոսա-
 կայանում...

Ժողովը ընդհատվում եր ներս մտնող սկառտներով, վորոնք
 ներս եյին մտնում կարտոֆիլը ձեռքներին, բայց տեսնելով, վոր
 վողջ վառարանը շրջապատված ե, մի քիչ տաքանում եյին ու
 դուրս գնում: Իսկ յեթե նրանցից վորևե մեկը մնում եր յերկար,
 Սմբատը նրան կանչում եր իր մոտ, հետաքրքիր խոսակցութեանը
 մասնակից դարձնելու համար:

Ութսունիննի, Միհրանի և Բջիջի մյուս անդամների համար
 քաղաք ծլկվելը սովորական բան եր դարձել: Այժմ նրանք այլևս
 չեյին վախենում ճանապարհին վորևե սկառտի հանդիպել, վոր-
 րովհետև ում ել վոր տեսնեյին, նա ևս առանց թույլտվութեան
 փախած եր լինում:

Հնարել եյին պոստից դուրս գալու հաղար ու մի ձևեր: Ութ-
 սունիննը, որինակ, այսպես եր անում: — Գնում եր գլխավոր
 պոստի մոտերքը, սահնակ խաղալու: Այնտեղ բազմաթիվ սկառտ-
 ներ եյին լինում, վորոնք նույնպես զվարճանում եյին սահնակով:
 Սառցապատ զառիվայրով սահնակները սլանում եյին դեպի
 ներքև, — բոստանների մոտ, տանելով իրենց վրա նստած սկա-
 տներին: Ութսունինն իր սահնակով մի քանի անգամ իջնում
 եր ներքև, ապա վեր բարձրանում: Հետո մի անգամ ել եր իջ-
 նում և այլևս չեր վերադառնում: Սահնակը թևի տակ դրած՝ նա

բռնում եր քաղաքի ճանապարհը: Այնտեղ վերադառնում եր
 առանց սահնակի, իսկ հետևյալ անգամ գնալիս, մի նոր սահնակ
 եր շինում...

Այժմ ևս, նա վերադարձել եր քաղաքից և Բջիջին հաղորդում
 եր իր նտացած հրահանգները: Սկառտները կարտոֆիլ եյին
 ուտում և լսում եյին նրան: Զգուշութեան համար, նրանք ար-
 ձանագրութեան չեյին կազմում:

Ժողովի ամենատաք կեսին, հանկարծ դուռը շրխկալով բաց-
 վեց և ներս մտավ հայ արիների տասնյակը, լապտերներով ու
 փայտերով:

— Քիրազի հրամանով, բոլորը ձերբակալված եք, — հայտնեց
 Գասպարը հենց դռան մոտից: — Գնանք...

— Ո՞ւմ եք ձերբակալում, — հարցրեց Ութսունիննը, —
 սկառտներին...

— Շատ մի խոսիր: Վեր կաց:

Բջիջը վեր կացավ:

Գասպարը նայեց միլիցիոների կողմը և կանչեց.

— Գնանք Սմբատ...

— Ո՞վ, — գոռաց Սմբատը, — յես... Իրավունք չունենա-

այդպես խոսելու պետի ոգնականի հետ...

Սակայն Գասպարը հանգիստ կերպով հանեց գրպանից մի

թուղթ և հանձնեց Սմբատին: Գրում եր Քիրազը. —

«Ձերբակալել և ինձ մոտ բերել հավաքութի կազմակերպող

բոլոր սկառտներին, թեկուզ դրանց մեջ լինի իմ ոգնականը

Վահան»:

Սմբատը հայեոյեց քթի տակ և միացավ ձերբակալվածներին:

Խումբը քայլեց:

Այժմ Ութսունիննը չեր վախենում: Այժմ նա մենակ չեր:

Նրանք գնում են տասնութ հոգով, իսկ նրանց հետևում կանգ-

նած ե ամբողջ սև շոկատը: Կանգնած են յերկու հարյուր սկառտ-

ներ՝ բոլոր շոկատներից:

Գասպարն անսահման ուրախ եր: Այժմ ինքը կլինի Քիրա-

զին ոգնական... Նա անհանրեր առաջ անցավ, բաց արեց սկառտա-

պետի դուռը և բացականչեց.

— Պարոն Քիրազ, յես բերում եմ նրանց բոլորին...

Քիրազը, գիշերային խալաթը հագին, նստել եր գրասեղանի

մոտ: Նա լուռ նայեց իր առջև կանգնած տասնութ ձերբակալված-

ներին ու ցնցվեց:

— Դձու յե՞ր, Սմբատ...

— Յես ել...։

— Սարգիս... Կարո՞... Իմ ամենալավ սկառուտները...

Պետը մի անգամ ել ընդհանուր հայացք գցեց նրանց վրա և հարցրեց.

— Ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու... Բջիջի՞ք...

— Վո՞չ, — պատասխանեց Ութսուներինը, — սովորական սկառուտների, վոր գնացել էյի կարտոֆիլ ուտելու...

— Ա՛... Այդ դձու յես, Ութսուներին... Բարև... Ի՞նչ է, դու նորից ուզում ես ծածկել...

— Ի՞նչ ենք արել, վոր ծածկեմ, — դարձացավ Ութսուներինը:

— Լո՛իր... Լո՛իր... Այդ դու յես հանցավորը... Յերեկ դու քաղաք էյիր գնացել... Ո՞ւմ թույլտվությամբ...

— Յես քաղաք չեմ գնացել...

— Գասպար, կանչիր Գարեգինն...

Յերբ Գարեգինն յեկավ, հաստատեց, վոր իրոք տեսել է նրան քաղաքի ճանապարհին. —

— Տուր տետրդ, — հառաչեց Քիրազը, կարծես զգալով, վոր անգոր են այդ բոլոր միջոցները:

Ութսուներինը իր սկառուտատետրը տվեց պետին: Իսկույն խճաղին առաջ յեկավ և հարցրեց.

— Պարոն Քիրազ, դուք ուզո՞ւմ եք յերկու հարյուր հոգու վոնդել...

Քիրազը հասկացավ, բայց չպատասխանեց:

Սմբատը շարունակեց.

— Թող գան յերկուհարյուր քառասուն սկառուտներն ու վեց ջոկատապետները և քվեարկեն: Այն ժամանակ Ութսուներինին կարելի յե վոնդել...

Քիրազը գրչակոթը գցեց սեղանին:

— Այդպե՛ս, Սմբատ... Իսկ յես քեզ Պիմենի աստիճանը տվեցի, քեզ դարձրի իմ ողնականը... Ե՛հ, Սմբատ... Ամոթ...

— Ամեն մարդ իր համոզմունքներն ունի, պատասխանեց Սմբատը:

— Վճրն է քո համոզմունքները:

— Վոչ թե իմ, այլ մեր բոլորի, — ուղղեց Սմբատը: — Մեր համոզմունքն այն է, վոր պետք է ջախջախել սկառուտական շարժումը և բոլոր վորբերին ու վորբուհիներին դարձնել պառասխ կոմունիստներ...

— Պատանի կոմունիստներ... — կրկնեց Քիրազը ցրված կերպով: — Իսկ յես կարծում էյի, թե դու իմ ամենահավատարիմ սկառուտն ես...

Ապա դառնալով ձերբակալվածներին, հայտնեց.

— Ազատ եք, տղաներ... Գնացե՛ք...



Իր համազգեստից մնացել էր միայն ութսուներին համարը:

Այնուամենայնիվ, նա բաց արեց Ութսուներինի սկառուտատետրը և սև եջում գրեց.

«Հակասկառուտական արարքների համար մի ամսով զրկել սկառուտական կոչումից, վերցնել փողկազը, համազգեստը և համարել խուժան»: Վահան:

Հետեյալ առավոտյան, Ութսունինն իր անկողնի մոտ գտավ մի յերկարափող շավար, մի սև բլուզ, մի կապույտ պինջակ և ամերիկական բանվորի կիսամաշ կեպի: Իր համազգեստից մնացել էր միայն ութսունինն համարը...

51. ՈՒՄ ՓԱՐՈՍՆ Ե ԴԱ

Ութսունիննի յեղբոր կոկորդը բոլորովին լավացել էր: Նրան արդեն պետք է դուրս գրեյին հիվանդանոցից, յերբ նա աչքացավ ընկավ: Ութսունինն ապշեց: Հիվանդանոցում պառկում են առողջանալու, թե՛ հիվանդանալու համար... Բայց յերբ աչքացավից հետո Հարությունը վարակվեց քոսով, վախեցած Ութսունիննը խնդրեց դուրս գրել իր յեղբորը, վորովհետև քոսը կարելի յեր բժշկել նաև Պոլիգոնում: Նրան դուրս գրեյին և Ութսունիննը, այդ հոգսից ազատված՝ իրեն ամբողջովին նվիրեց գաղտնի թերթի յերկրորդ համարի աշխատանքներին: Աշակերտներն սպասում էին, հարկավոր էր շտապել...

Յեղ ահա, մի որ, յերբ Ութսունիննը, իբրև թե բանից անտեղյակ գնաց դպրոց, այնտեղ, միջանցքի պատի վրա խփված էր յերկրորդ ձեռագիր թերթը: Մկառուները մի քանի անգամ արգելել էին հայ արիներին՝ վար առնել թերթը պատի վրայից: Անգոր էր գտնվել նաև հերթապահ ուսուցիչը, վորը չեր կարողացել նույնիսկ ձեռքել հավաքվածների խումբը և մոտենալ պատին:

Նորից ուսուցչանոցում խորհրդակցություն յեղավ, նորից ուշացավ դասի դանդը, բայց այս անգամ, փոխանակ դասերն սկսելու, բոլոր սկառուներին ու վորբուհիներին հավաքեցին ամենամեծ դասարանում, ժողովի:

— Աշակերտներ, — սկսեց խոսել ուսուցիչ Պոլսեցյանը — ահա յերկրորդ անգամն է, վոր մեր լավագույն աշակերտներից մի քանիսը, իրենց նախաձեռնությամբ թերթ են հրատարակում: Այդ, ի հարկե, վողջունելի քայլ է...

Ութսունիննը և հրաչը զարմացած իրար յերեսի նայեցին.

— Այդ քայլը մենք քաջալերում ենք, — շարունակեց Պոլսեցյանը: — Սակայն թերթ հրատարակելու նման մի դժվար գործ շարունակ թողնել մի քանի աշակերտների, — այդ մեծ անարդարություն կլիներ մեր կողմից...

Տեսուչը, ուսուցիչները և Գարեգինը գլուխները թափահարեցին, իբրև համաձայնության նշան:

— Բոլոր լավ գործերը փոքրից են սկսվում, — բացատրեց Պոլսեցյանը. — նույնը կարելի յե ասել նաև մեր թերթի մասին: Այժմ արդեն ժամանակ է, վոր այդ փոքր գործը մեծացվի...

Նա հազաց:

— Ընդառաջ դնալով աշակերտների և աշակերտուհիների ցանկությանը, մենք վորոշեցինք ոժտանդակել ձեզ, վոր ձեր թերթը լույս տեսնի ավելի կանոնավոր, ավելի հաճախ և մի քանի որինակով: Յերևի պատի լրագրից մենք նրան դարձնենք ամսագիր և փոխենք անունը: Բայց դրանից թերթը վոչ թե կտուժի, այլ կշահի... Այժմ, սիրելիներ, խնդրում եմ խոսեք այս մասին, ապա կանցնենք խմբագրական կոլլեգիայի ընտրությանը: Յես հատկապես խնդրում եմ, վոր խոսեն այսօրվա թերթի խմբագիրներն ու աշխատակիցները, իբրև արդեն վորոշ փորձ ձեռք բերած աշակերտներ...

Ութսունիննը լեզուն կծեց: Ահա թե ի՞նչ... Նա կամացուկ մոտեցավ Հրաչին և նստեց նրա մոտ: Նրանք սկսեցին սպասել դեպքերի վերջավորությանը:

Վեր կացան սկառուները, վորբուհիները և սկսեցին խոսել: Նրանք բոլորն էլ վողջունում էին ուսուցիչներին վորոշումը՝ աշակցել իրենց թերթին: Նաև նրանք զարմանում էին, թե այդ ինչ պատճառով թերթի առաջին համարը պատից պոկեցին...

Ութսունիննը զգաց, վոր հարկավոր է խոսել...

— Ինչպես յերևում է, — ասաց նա, — թերթի խմբագիրներն այստեղ չեն: Ապա թե վոչ՝ նրանք կխոսեյին և շատ արժեքավոր բաներ կհաղորդեին մեզ: Բայց փորձենք առանց նրանց քննել մի քանի կարևոր հարցեր և լուծել... Առաջին. — Ի՞նչ բնույթ պիտի ունենա նոր թերթը...

— Այդ խմբագրական կոլլեգիայի գործն է, — Ժպտալով ընդհատեց Պոլսեցյանը:

— Սխալվում եք, պարոն վարժապետ: Յես զարմանում եմ, թե ի՞նչպես եք այդպիսի միամիտ բաներ ասում... Թերթը մերն է և մենք էլ պիտի վորոշենք նրա բնույթը:

— Նա կլինի գրական-գեղարվեստական և աշակերտական...

— Ուրիշ...

— Ուրիշ էլ ի՞նչ է պետք...

— Իսկ քաղաքակմն...

— Պետք չի...

— Պետք է, — բղավեց Հրաչը:

— Պետք է, — միացան Արշալույսը, Իսկուհին, Նվարդը և շատ ուրիշ վորբուհիները:

— Պետք է, — կրկնեց Ութսունիննը: — Ուրեմն թերթը կլինի քաղաքական, հասարակական, աշակերտական և գրական...

— Յես քեզ պետք է ընդհատեմ, — հայտնեց վարիչը:

— Ինչո՞ւ...

Վորովհետև դու խոսում ես ընդունված կանոնների դեմ: Աշակերտը քաղաքականությամբ չպետք է դբաղվի...

— Այդ ի՞նչպես, — բացականչեց Ութսունիննը: — Իսկ այն, վոր դուք մեզ կրոն եք դասավանդում, դա քաղաքական խնդիր չէ...

— Դուք կրոն չեք սովորում:

— Սովորում ենք:

— Տրամաբանության մասին ե խոսքը, — հարցրեց Պուսեցյանը:

— Այո, խոսքը կրոնի մասին ե, վորին դուք տրամաբանություն եք անվանում, զգուշության համար...

— Լո՛ւր, — բղավեց վարիչը և ակնոցները թռան նրա աչքերից:

— Խոսիր, — ձայն տվեցին վորբուհիները:

— Այդ ի՞նչ տրամաբանություն ե, վոր սուրբ գրքից և աստվածաշնչից դենը չի գնում, — շարունակեց Ութսունիննը:

Պուսեցյանը զանգահարեց:

— Ութսունինն, դու նյութից շատ շեղվեցիր... Խոսիր թերթի մասին...

— Յես թերթի մասին արդեն ասացի, պարոն Պուսեցյան: Պետք է ավելացնեմ նաև այն, վոր մեզ հարկավոր ե շուտ-շուտ լույս տեսնող շաբաթաթերթ և վոչ թե ամսագիր, վորի մեջ չի կարելի գրել առոյս հոգսերի մասին:

— Ճիշտ ե, — բացականչեցին չորս կողմից:

— Ճիշտ ե:

— Համաձայն ենք...

— Չես սխալվում...


— Այժմ թող ուրիշները խոսեն այս խնդիրների մասին, — առաջարկեց Ութսունիննը, իր տեղը նստելով:

— Այդ խնդիրների մասին այլևս վոչ վոքի ձայն չի տրվի, — հայտնեց Պուսեցյանը: — Թերթը կլինի գրական-գեղարվեստական աշակերտական ամսագիր: Յես առաջարկում եմ «Փարոս» անունը: Ո՞վ ե համաձայն...

— Այդ ձեր փարոսն ե, վոչ թե մերը — բղավեց Ութսունիննը: — Մենք այդպիսի թերթ չենք ուզում:

Պուսեցյանը կանգնեց ամբողջովին կարմրատակած և կորցնելով իր հանգիստ տոնը, ձեռն ահարկու շարժումով խփեց սեղանին:

— Լո՛ւր, խանգարիչ խուժան: Մենք թույլ չենք տա, վոր պղտորեա աշակերտների մտքերը: Ուրիշ վոչ մի խոսք: Իսկ վիճաբանությունները փակված են: Անցնում ենք խմբագրական կոլլեգիայի



— Այդ ձեր փարոսն ե և վոչ թե մերը, — բղավեց Ութսունիննը:

ընտրությանը հինգ հոգուց: Ուսուցչական կազմից, ձեր աշխատանքներին աջակցելու համար պատրաստակամություն ենք հայտնել յես և պարոն վարիչը: Չեզ մնում ե ընտրել մնացած յերեքին:

— Այդ մեր փարոսը չէ, — նորից բացականչեց Ութսունիննը, տեղից վեր կենալով: — Գնանք, աշակերտներ: Մենք կխնդրենք հին խմբագիրներին, վոր շարունակեն հրատարակել իրենց պատի թերթը...

Դուրս գալով դպրոցից, Ութսունիննը, Հրաչն ու մի քանի սկաուտներ սկսեցին զրոսնել դպրոցի դիմացի բաց տարածության վրա:

Նրանց հետ միասին փողովից դուրս ելին յեկել նաև Արշալույսը, Իսկուհին ու Նվարդը: Նրանք բոլորը զայրացած ելին ուսուցիչներին վրա և մտածում ելին թերթի հետևյալ համարում մերկացնել նրանց արարքը:

Հանկարծ Նվարդը ձեռքով ցույց տվեց հեռուն.

— Աղջիկներ, այն ովքեր են գալիս...

Իսկուհին տեսողությունը լարեց:

— Մեկը միտար նոնան ե... Մյուսը՝ մեր վորբանոցներին ընդհանուր կառավարիչ Մորուքը... Մյուսներին չեմ ճանաչում...

— Հեռանանք, աղջիկներ, — առաջարկեց Արշալույսը:

— Ինչո՞ւ, կաց տեսնենք: Կարծես դեպի մեզ են գալիս:

Սկաուտներն ու վորբուհիներն սկսեցին սպասել:

Յերբ նրանք մոտեցան, Իսկուհին վախեցած նայեց ընկերուհիներին ու շնչաց.

— Աղջիկներ, խնամիներ են...


Բոլորը ցնցվեցին: Ութսունիննը տագնապով նայեց իր ընկերուհիներին: Նա լավ գիտեր, թե ինչ է նշանակում խնամի: Շատ հաճախ եր պատահում, վոր քաղաքից մարդիկ ելին գալիս, իրենց համար Կազաչի Պոստից կին ընտրելու: Այս անգամ յեկողները յերկու հաստափոր տղամարդիկ ելին, մի պառավ կին և մի յերիտասարդ, վորն ըստ յերևույթին նորափեսան էր:

— Այնպես վոր, — լավեց Մորուքի ձայնը, — սիրելի քաղաքացիներ, խնդրում եմ վատ կարծիք չհայտնել իմ վորբուհիներին մասին: Սևերսկի, հա՛ Սևերսկի... Մեռանք լսելով... Ի՞նչ կա Սևերսկում: Մեզ մոտ աղջիկներ չկան... Ա՛յ, որինակ սրանք... Ինչո՞ւ են պակաս... Ապա, Նվարդ, յեկ այստեղ... Նայիր, մայրիկ, լավը չի... Տես ինչ լավ աչքեր ունի: Պահ...

Արշալույսն ու Իսկուհին սարսափով նայում ելին, իսկ Նվարդը կարծես պատրաստ էր ուշաթափվելու:

— Ուզո՞ւմ եք՝ մյուսին վերցրեք, — առաջարկեց Մորուքը: — Ճիշտ է, նրա աչքերը սրա պես լավ (են), բայց մազերը հիանալի յեն... Մի խոսքով, վորին վոր կուզեք... Յերեք — չորս հազար հասած աղջիկ ունենք...

Պառավը բռնեց Իսկուհու թևերից, զննեց, քայլել տվեց, խոսեցրեց: Հետո՞ հավանեց:
— Իսկ նրան չի կարելի՞, — հարցրեց նորափեսան, ցույց տալով Արշալույսին:



Ապա դառնալով դեպի խնամիները, բացատրեց. — Նա սրանից լավ աղջիկ է. Մի՞ք անհանգստանա...

Արշալույսը ճչաց: Միտար նոնսը վրա հասավ և գրկեց նրան, վորպեսզի վայր չընկնի:

— Ինչու չի կարելի, — ժպտաց Մորուքը: — Վորին կամենաք...
— Ախր յես սովորում եմ, — լացեց Արշալույսը: — Յես չեմ ուզում ամուսնանալ: Ի՞նչ եք ուզում ինձանից...

— Սիրելիս, — ժպտաց Մորուքը, — մենք խո գոռով չենք կարող ամուսնացնել քեզ... Իհարկե, դա քու կամքով պիտի լինի... Դե, դու արդեն հասած աղջիկ ես: Ամերիկական կոմիտեն խո պարտավոր չի՞ շարունակ պահելու քեզ: Վորբուհի էյիր, մեծացար: Հիմա ի՞նչ ես ուզում...

— Յես դուրս կգամ վորբանոցից, կծառայեմ, կապրեմ, — հեկեկաց նա, միտար նոնսի գրկից դուրս դալով:

Մորուքը ներողամիտ ժպտաց.
— Ո՛ւր կծառայես: Դու դեռ լրիվ կրթություն ել չունես: Քեզ ո՞վ կընդունի ծառայության: Ամասնացիր, սիրելիս, ամուսնացիր... Նորից կշարունակես դպրոց հաճախել, կավարտես, աշխատանք կանես... Ուզում ես...

Բայց Արշալույսը, պատասխանի փոխարեն լաց ել լինում անսփոփ կերպով:

Սկառտները շրթունքներն էյին կրծոտում բարկությունից, բայց նոնսի ներկայությունը նրանց թույլ չէր տալիս խոսել: Սակայն վերջապես Ութսունիննը չհամբերեց և բացականչեց.

— Ի՞նչ եք ուզում խեղճ աղջկանից...
— Կորիր, — բղավեց միտար նոնսն ու հուժկու ձեռքով նրան շարժեց մի կողմ. — լավ, վորբուհի. մենք քեզ չենք ամուսնացնի: Դու կգաս իմ սենյակը, ինձ մոտ ծառայելու: Քո փոխարեն յես կամուսնացնեմ իմ նախկին ծառայող Սաթիկին...

Ապա դառնալով դեպի խնամիները, բացատրեց.
— Սրանից ավելի լավ աղջիկ ե... Միք անհանգստանա...

Սաթիկին... Ութսունիննի սիրաը ճմլվեց ցավից: Ախր Սաթիկը դեռ տասնհինգ տարեկան ել չկա: Ի՞նչպես թե Սաթիկին...

Միտար նոնսը կարգադրեց սկառտներից մեկին՝ գնալ Սաթիկին բերելու: Սկառտը գնաց և քիչ հետո վերադարձավ աղջկա հետ: Նա առաջվա պես գունատ եր ու տխուր:

— Ուզում ես ամուսնանալ, — հարցրեց միտար նոնսը նրան: Սաթիկն ատելութամբ լի աչքերով նայեց նոնսին և հանդարտ պատասխանեց.

— Ինձ համար միևնույն ե...
— Ինչպես թե միևնույն ե, Սաթիկ, — ճչաց Ութսունիննը:

Սաթիկը նոր միայն նկատեց Ութսունիննին: Նրա աչքերն արցունքով լցվեցին, բայց նա վռնեց չասաց: Նոնսը ծիծաղեց Ութսունիննի վրա և նույնիսկ չխփեց ել: Արհամարանքով նայեց նրան և դիմեց խնամիներին.

— Գնանք վարչություն, ձեռքերս քեզ... Իսկ դու, Արշալույս, վաղվանից կգաս իմ սենյակը:

Նրանք գնացին: Բավական հեռացել էյին, յերբ Սաթիկը յիտ նայեց և կանչեց.

— Մնաս բարև, Ութսունինն...
Ութսունիննի աչքերն արցունքով լցվեցին: Թրջված աչքերով նա տեսավ, թե ինչպես իր փոքրիկ ընկերուհին ձեռքը տարավ գրպանը և թաշկինակը հանեց:

Սաթիկը լալիս եր:
53. ԱՊՏԱԿ
Գարնան դեմ բոլոր սկառտներն ազատվեցին պահակ կանգնելուց և աշխատանք ստացան: Յուրաքանչյուրն ընտրեց իր սիրած արհեստը: Յեկավ Դամիրչյանը, հավաքեց սկառտներին, վողջունեց նրանց աշխատանքի անցնելը և պատմեց, թե ի՞նչքան ջանք են թափել կուսակցական կոմիտեն և արհեստակցական միությունների խորհուրդը՝ սկառտներին պահակությունից ազատելու և աշխատանք տալու համար...

Սկառտները Դամիրչյանին ճոճեցին ձեռքերի վրա և շնորհակալության խոսք ասելուց հետո ճանապարհ դրին: Վահան Քիրազը, վոր լուռ դիտում եր վողջ անց ու դարձը, միտինգից հետո գնաց ամերիկացիների տուն և հրաժարական ավեց: Միտար նոնսն ընդունեց նրա հրաժարականը, սակայն խնդրեց մի տասնհինգ քսան որ ևս մնալ իր պաշտոնում, մինչև նոր սկառտապետ ճարեն...
Բջիջն այդ մասին իմացավ Գարեգինից: Այժմ Գարեգինն առաջվա յեռանդով չէր փորձում թաղցնել Քիրազի գաղտնիքները և ամեն ինչ պատմում եր:

Յեթե առաջ, գոնե որը մի անգամ կարելի յեր տեսնել Քիրազին, այժմ նրան չէր կարելի տեսնել որեր շարունակ: Փակված իր սենյակում, նա տխուր նայում եր իր լուսամուտից դուրս: Մտածում եր նա արդյոք իր Արի շան մասին, թե ուրիշ վորևե բանի — վոչ վոք չէր կարող ասել:

Հայ արիներից քչերն էյին մնացել Քիրազին հավատարիմ: Նրանք կլինեյին մոտ քսան հոգի: Բայց չնայած իրենց սակավ
215

Թվին, նրանք մնացել էին նույն հայ արիները, Վահան Գիրազի մոլեռանդ աշակերտները: Նրանք յերբեք մենակ չէին թողնում իրենց պետին: Ու յեթե պատահում էր, վոր պետն ուզում էր մենակ մնալ, նրանք իրենք էին ներս մտնում առանց թույլ տվության, միասին կրելու համար Գիրազին կրծող վիշտը:

Ութսունինը ընտրեց կազմարարական արհեստը: Նրա հետ միասին, նույն արհեստն ընտրեց նաև Հրաչը: Այժմ նրանք կապույտ խալաթները հագած, կարում էին կազմվելիք գրքերի առանձին պրակները: Իսկ նրանց փոխարեն, այժմ պոստերի վրա հսկում էին միլիցիոներները:

Ընդհանրապես շատ բան էր փոխվել Կազաչի Պոստում: Այժմ վոչ վոք չէր ել ծածկում, վոր ինքը կոմյերիտական է, կամ համաժիտ է կոմունիստական գաղափարների հետ:

Գաղաքից գալիս էին կուսակցականներ, կոմյերիտականներ, վորոնք բանվորների համար զեկուցումներ էին տալիս, խորհրդակցություններ, ժողովներ կազմակերպում: Սկառտները մասնակցում էին այդ հավաքույթներին և Գասպարն անզոր էր վորևե բան անելու, թեև այժմ նա կրում էր սկառտապետի ոգնականի կոչում:

Մի որ, արհեստանոցներից մեկում մի դեպք պատահեց: Բանվորներից մեկը, չգիտես ինչ պատճառով, ընդհարվել էր միստր Նոնսի Թարգմանի հետ: Թարգմանն սպառնում էր նրան վռնդել տար, յեթե իրենից ներողություն չխնդրի, իսկ բանվորն ապացուցում էր, վոր ինքը մեղավոր չի և յեթե ներողության հարց է դրվում, ապա այդ պետք է խնդրի ինքը — Թարգմանը:

Հանկարծ արհեստանոցում յերևաց միստր Նոնսը, սովորականի պես ծխամորճը բերանին:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց նա հայերեն:


Թարգմանին անգլիերեն լեզվով ինչ վոր բան բացատրեց նրան, վորից հետո Նոնսը մոտեցավ բանվորին:

— Միստր Նոնս, — սկսեց խոսել բանվորը: Ահա այս բոլոր հավաքված մարդիկ վկա յեն ճշմարտությանը: Յես...

Սակայն Նոնսը թույլ չտվեց նրան շարունակել: Իր ահագին ձեռքով նա մի ուժգին ապտակ հասցրեց բանվորի դեմքին:

— Այդ ինչ էս անում, սրիկա, — գոռաց մի այլ բանվոր և թևերը վեր քաշելով ձեռքը տարավ բերեց, տարավ բերեց ու մի ծանր բուռնցք իջավ Նոնսի դեմքի մեջտեղը:

— Որը ցերեկով, խորհրդային իշխանության մեջ բանվորի յե ձեռում, հա՛, — գոռաց նա նորից:



27.

— Չհամարձակվե՞ք մեկ ձեռք տալ մեր իշխանության մեջ...

Իսկույն արհեստանոցներից դուրս թափվեցին հարյուրավոր բանվորներ և Նոնսին շրջապատեցին: Վոմանք սեղմած բուռնցք՝

ներով հարձակվեցին ամերիկացու վրա և ուժ գիտե թե ի՞նչ կանեյին նրան, յեթե հանկարծ չերևար Դամիրճյանը:

— Հանգստացե՛ք, տղաներ, — կանչեց նա և ձեղքելով բանվորների ողակը, մոտեցավ Նոնային:

Իսկ մինչ այդ, բանվորները հավաքվում էին ու հավաքվում...

— Կորչի՛ Նոնայը, — բղավում էին նրանք:

— Չհամարձակվե՛ք մեզ ձեռք տալ մեր իշխանութան մեջ, — բղավում էին նրանք:

— Կաղաչի Պոստն Ամերիկա չի՛:

— Չենք աշխատի՛:

— Տվե՛ք դրա դնչին...

Իսկույն մի սեղան բերեցին: Դամիրճյանը բարձրացավ սեղանի վրա և դիմեց բանվորութանը.

— Ընկերներ... կապիտալիստական սովորութուններով ուսուցված մի սրիկա ձեռք ե բարձրացնում բանվորի վրա, այն ել խորհրդային Հայաստանում... Չլսված բան ե սա: Յույց տանք այդ լիտիացածներին, վոր սա Ամերիկա չե...

Ու մինչդեռ ներքևում գաղազած զզրուում էին կանչերն ու աղմուկները, սեղան բարձրացան սկառու Դրիգորը և կոմբլիշի ու կոմյերիտական բլիշի բյուրոների մյուս անդամները: Յեկավ նաև արհմիութան քարտուղարը: Միայն մեկ բոպե խորհրդակցելուց հետո նրանք վորոշում կայացրին և Դամիրճյանը դիմեց բանվորական մասսային.

— Գործադու՛լ... Դադարեցնել աշխատանքը...

Նրա խոսքերը ծածկվեցին բուռն ծափահարութունների և ուռույթների տակ: Մի քանի բոպե շարունակ ձայները չեյին դադարում, իսկ յերբ նրանք լռեցին, լսելի դարձավ, թե ինչպե՞ս կաղաչի Պոստի վրա սուլում ե բողոքի և գործադուլի շահվում...

54. ՄԵՌԱԾ ՔԱՂԱՔԸ


Կաղաչի Պոստը մեռավ: Լռեցին բոլոր արհեստանոցները, փակվեցին պահեստները, կանգ առան ապրանքատար դնացքների չդատարկված վազոնները... Ամայացան փողոցներն ու ճանապարհները: Համատարած անշարժութան և անզորութան մեջ միայն վորբուհիներն էին, վոր հանդարտ սահում էին ճամբեքով և անհետանում իրենց վորբանոցների շենքերի մեջ...

Լուռ եր նաև սկառուանոցում: Յերբ սկառուները վերադարձան, Գիրազը բաց արեց իր սենյակի դուռը և հարցրեց.

— Դուք ե՛լ յեկաք...

— Այո, պարոն պետ, — պատասխանեց մի հայ արի.— յեթե գործադուլն ընդհանուր ե, ապա ուրեմն...

Բայց Գիրազն այլևս չլսեց: Նա անփույթ ներս մտավ իր սենյակը: Սակայն շատ չանցած, նորից դուռս յեկավ և վարդագույն կավիճը ձեռքին, զրեց տախտակի վրա.



Կաղաչի Պոստը մեռավ: Ամայացան փողոցներն ու ճանապարհները:

«Փուռը չի աշխատում: Անմիտ գործադուլի պատճառով վորբուհիները դատապարտված են սովի: Յեթե կան սկառուներ, վորոնք ցանկանում են կամավոր կերպով փուռում աշխատել, թող դիմեն ինձ: Վահան»:

Կոմյերիտական բլիշն անմիջապես գումարվեց: Աշխատե՛լ թե վոչ... Մի քանիսը, վորոնց թվում նաև Ութսուհիննը, պընդում էին, վոր փուռում, միայն փուռում պետք ե աշխատել: Իսկ մյուսները գտնում էին, վոր վոչ, պետք ե չաշխատել, վորպեսզի ամերիկացիներն ստիպված լինեն անմիջապես զիջելու գործադուլավորների պահանջներին...

Բոլորն զգում եյին, վոր խնդիրը չափազանց պատասխանատու
է: Բոլորը զգում եյին, վոր ճիշտ լուծել այդ խնդիրը — նշանա-
կում է կոմյերիտականի քննութեան բռնել: Յե՛վ վոր ամենա-
գլխավորն էր, հարցը պետք էր լուծել շտապ, իսկույն:

— Միևնույն է, ամերիկացիները չեն զիջի, իսկ վորբուհի-
ները սոված կմնան, — յենթադրում էր Միհրանը:

— Կզիջեն, — պնդում էր Հրաչը:

Յե՛վ այսպես, ժողովը յերկարում էր: Իսկ մինչ այդ, դուցե
սկառուտներից շատերն արդեն ցուցակագրվել էյին փուռ աշխա-
տելու համար...

Ութսուներկնը խոսք վերցրեց.

— Ինձ թվում է, — ասաց նա, — վոր փուռ անսպասման
հարկավոր է աշխատել: Յեթե ամերիկական կոմիտեն չուզենա
զիջել, միևնույն է՝ հաց չլինելու դեպքումս ել չի զիջի: Նա կարող
է բաց անել իր պահեստները, վորբուհիներին բաժանել միրգ ու
կաթ և այդպիսով հարցը փակել...

— Ճիշտ է, — համաձայնվեցին մի քանիսը:

— Յե՛վ այսպես, յես առաջարկում եմ հոգուտ աշխատելու...

Բոլորը միացան նրան և քվեարկեցին: Իսկ քիչ հետո, Քի-
րազը զարմանքով նկատեց, վոր թե՛ Սմբատը և թե՛ Ութսուներ-
կնը և թե՛ մյուս անբարեհույս սկառուտները հերթ են կանգնել,
փուռ աշխատողների ցուցակը մտնելու համար:

Ցուցակագրվելուց հետո, Ութսուներկնը վաղ տվեց հեռա-
խոսակայն: Կապվեց քաղաքի հետ և խնդրեց Դամիր շյանին:

— Ո՞վ է... Դամիր շյանը: Խոսում է համար Ութսուներկնը...
Բարև ձեզ: Քիչ առաջ մենք վորոշում հանեցինք՝ փուռ աշխա-
տել: Ի՞նչ է ձեր կարծիքը...

Խոսափող ճպճպաց.

— Ճիշտ եք արել: Սակայն մյուս արհեստանոցներում՝ վոչ
մի դեպքում: Թույլ չտաք վոչ մի դազոյան շարժվի...

— Շատ լավ... Ուրիշ...

— Մենք Կազաչի Պոստի շուրջը բանվորական պիկետներ
ենք կանգնեցրել, վորպեսզի շարեյկերեյսերները չմտնեն Կազաչի
Պոստ և գործադուլը վիժեցնեն: Իուք ել հետևեցեք...

— Շատ լավ: Ուրիշ...

Բայց նույն ընթացիկն զանգահարեցին: Վազգենը խոսափողը
խլեց և պատասխանեց.

— Կենտրոնը լուռ է...

— Տուր Պոլիգոնը, Վազգեն, — լավեց Քիրազի ձայնը:

Վազգենը միացրեց Պոլիգոնի հետ, բայց խոսափողը վայր
չդրեց: Յե՛վ նրա ականջներին լսելի դարձավ հետևյալ խոսակցու-
թյունը.

— Պոլիգոնն է...

— Այո:

— Ո՞վ է խոսում...

— Յես եմ, պարոն Քիրազ...

— Ա՛... Բարև... Լսել ես:

— Լսել եմ, այո:

— Բոլորը գնացին: Փուռն ել չի աշխատում: Ուղարկիր
խնդրեմ մի քանի հացթուխ վարպետներ: Մյուս աշխատողները
կլինեն իմ սկառուտներից:

— Շատ բարի:

— Կընտրես ամենայերիտասարդ վարպետներին: Կհագցնես
սկառուտական հագուստներ: Գլխներին թող դնեն Կազաչի Պոստի
գլխարկներից: Յեթե բանվորական պիկետները նկատեն, վոր
նրանք մեր սկառուտներից չեն, ներս չեն թողնի...

— Շատ բարի:

— Լսիր. — բացականչեց Քիրազը և հանկարծ լուց: Քիչ հետո
ձայն տվեց.

— Վազգեն...

Վազգենը ձայն չհանեց:

— Ձե՛ս լուռ, Վազգեն, — բարկացավ Քիրազը:

— Ի՞նչ Վազգեն, — լավեց Պոլիգոնից զարմացած ձայնը:

— Վոչինչ: Յես ստուգում եյի, թե մեզ ականջ դնող չկա:

Նիմա լսիր...

Քիրազի ձայնը ցածրացավ:

— Մոտ յերկուհարյուր հասակավոր տղաների, հայ արիներ
կհագցնես մեր սկառուտների նման հագուստներ ու դիտարկներ,
մեր համարները կկախես նրանց կրծքերից և կուղարկես այստեղ:
Ներս կմտնեն խումբ-խումբ, տարբեր պոստերից: Հարկավոր է
անմիջապես բռնաթափ անել ապրանքատար վագոնները...

— Շատ բարի...

— Ձգույշ յեղիր... Ձմռանաս մեր համարները, գունավոր
ժապավենները և գլխարկները...

Հազիվ Քիրազի ձայնը լուց, յերբ Վազգենն ամեն ինչ պատ-
մեց Ութսուներկնին: Նրանք զանգահարեցին քաղաք:

— Դամիրչյանն է...

— Այո:

— Սոսում ենք սկառուտական բջիջից: Ամբացրեք պիկետ-
ները: Պոլիգոնից սպասվում են մեծ թվով շտրեյկերիսերներ սկա-
ռուտական զգեստներով: Ներս չթողնեք վոչ վոքի...

— Շնորհակալութուն, Ութսունինն...

— Մեզ հետ կապվելու համար դանդահարեցեք ամեն որ այս
ժամերին. հեռախոսի կենտրոնի հերթապահը կոմյերիտական է...

— Շատ լավ, Ութսունինն:

— Մի ժամ հետո Ութսունիննը շտապեց դեպի այն սահմանա-
մասը, ուր չկար վոչ մի ճանապարհ և միայն սև քարերից շին-
ված պատն էր, վոր անջատել էր Կազաչի Պոստը դրսից: Այնտեղ,
պատի յետևում, իրենց պոստն էյին հսկում միլիցիոնները և
նրանցից մի քիչ հեռու՝ յերեք բանվորներ:

Ծառայողների շենքերի մոտի պոստում նորից նույնն էր:
Յերկաթե ճաղերով դարձասի մոտ, ուր նստել էր միլիցիոնները,
կանգնել էյին չորս բանվորներ: Ծառայողներն ու վարժապետ-
ներն առաջվա պես շրջում էյին իրենց հրապարակում և քննում
ստեղծված կացութունը: Կազաչի Պոստի բոլոր մասերից միայն
դա յեր, վոր մնացել էր իր նախկին յեռուղեով մեջ:

Բոլոր պոստերի վրա Ութսունիննը տեսավ միլիցիոններն էր
և բանվորական պիկետներ: Ամերիկական տան պոստի մոտից նա
աղմուկ լսեց ու մոտեցավ:

Յոթ-ութ սկառուտներ կանգել էյին այնտեղ և կռվում էյին
բանվորների հետ:

— Ինչո՞ւ չեք թողնում ներս գնանք, — բողոքում էր մեկը:

— Բա ո՞ւր գիշերենք...

— Ձեր վորբանոցում...

— Մեր վորբանոցն այստեղ է: Մենք Կազաչի Պոստի սկա-
ռուտներ ենք:

— Սուտ եք ասում:

Տեսնելո! Ութսունիննին, սկառուտները բացականչեցին.

— Ահա թող նա ասի: Սկահուտ, յեկ այստեղ...

Ութսունիննը ծանր ու հանդարտ քայլերով մոտեցավ.

— Ի՞նչ եք ուզում...

— Ներս չեն թողնում... Ասում են՝ դուք այստեղի սկառու-
տներից չեք:

— Ճիշտ են ասում:

— Ի՞նչպես թե ճիշտ են ասում: Ուրեմն դ՞ու՞ր յեկ ես ուրա-
նում մեզ: Ներս թողեք, մի՞ք հավատա նրան, նա լարված է
մեր դեմ: Նա սուտ է ասում:

Հանկարծ Ութսունիննն ինչ վոր բան նկատեց նրանցից մեկի
կրծքին և հարցրեց.

— Բոլորդ Կազաչի Պոստից եք:

— Ի հարկե... Բոլորս ել... Ձեք ճանաչում.

— Վո՞րն է քո համարը...

— Հարյուր մեկ:

— Քո՞նք:

— Քսան չորս:

— Տեսնեմ:

Ութսունիննը ստուգեց նրա համարը:

— Ճիշտե. — քսան չորս: Իսկ դ՞ու՞...

— Ութսունինն:

— Իսկ յե՞ս...

Ութսունիննը ցույց տվեց իր համարը:

Սկառուտները պապանձվեցին:

— Յերկու Ութսունինն...

Բանվորները ժպտացին:

— Ձե, կորեք. — վնդեց Ութսունիննը, — յես մեր բոլոր սկա-
ռուտներին անձամբ ճանաչում եմ...

— Լավ, — վճռեցին պոլիգոնիներն ու հեռացան: — Սպա-
սիր դու, սկառուտ համար Ութսունինն... Մենք դեռ քո հախից
կգանք:

55. ՎԵՐԱԴԱՐՁ

Գործադուրը տեղի յոթ ուր: Յոթ ուրվա լնթացքում Կազաչի
Պոստն ամայության դատապարտվեց: Կազաչի Պոստում տնդո-
րեն աշխատում էր միայն հեռախոսակայանը, վորի բարդ պատաս-
խանատու աշխատանքը ղեկավարվում էր բջիջի կողմից: Կայանի
մյուս հերթապահներն ուրախությամբ համաձայնվել էյին ազատ
մնալ և իրենց հերթը տալ Վազգենին: Ամբողջ որերով այնտեղ
նստած, նա իրար հետ էր կապում ու՞մ վոր հարկավոր էր,
«զբաղված ե», «նրա հեռախոսը փչացել է», — պատասխանում
էր վո՞մանց և լարված հետևում, վոր հանկարծ չբռնվի և դուրս
չնետվի այդ կարևոր պոստից:

որը շքերթի եյին դուրս դալիս բոլորն առանց բացառության, ուստի և սկաուտանոցի դուռը պետք է փակվեր մի մեծ կողպեքով: Քիրազն ուզում էր, վոր բոլոր սկաուտները մասնակցեն վերջին շքերթին...

Նա ինքը հագել էր իր կանաչավուն համազգեստը, գլխին դրել էր լայնեզր գլխարկ և գոտևորվել էր լայն գոտիով:

Հանկարծ լսվեց Գասպարի հրահանգը.

— Շարքի...

Մի րոպեյում յերկուհարյուր քառասուն սկաուտներ շարք կանգնեցին: Բայց վոչ յերկուհարյուր քառասուն: Քսանհինգ հայ արիներ մնացին Քիրազի մոտ, իբր առանձին ջոկատ: Նրանք պետք է գնային առջևից, — Քիրազի հետ միասին: Բոլոր ջոկատներում կոմյերիտականներն անհանգիստ ժպտում էյին և ինչ վոր բանի սպասում: Նրանք նայում էյին դեպի յերրորդ ջոկատի կողմը, ուր սակայն Ութսունիննը չկար:

Ջահերը վառեցին: Քիրազը բարձրացավ մի քարի վրա և անմիջապես լուռացան տիրեց:

— Մնաք բարև, սկաուտներ, — սկսեց նա: — Յես և դուք տեսնվում ենք վերջին անգամ: Ներեցեք ինձ, թե վատի համար և թե լավի...

Հայ արիները հառաչեցին:

— Վճր լավի, — լսելի ձայնով մրմնջաց մի սկաուտ:

— Իմ ճանապարհն ու ձերն իրարից անջատվեցին, — շարունակեց Քիրազը: — Ի՞նչ արած: Գնացեք ձեր ճանապարհով:

Նա նայեց դեպի իրեն ուղղված հարյուրավոր դեմքերին ու շարունակեց.

— Բայց յեթե մի որ հորից յետ դառնալ ուզենաք ձեր սխալ ուղիից, հիշեցեք ինձ... Մնաք բարև:

Նա վար իջավ: Արտասովալից հայ արիները ծափահարեցին, իսկ ջոկատներից չլսվեց վոչ մի ծպտուն: Նույնիսկ նվազախումբը լուռ մնաց:

Հանկարծ բոլորը շուռ յեկան դեպի սկաուտանոցի դուռը: Այնտեղից դուրս յեկավ սկաուտ համար Ութսունիննը կարմիր փողկապով և պատկոմական լայնեզր գլխարկով, վորի կապն ամբողջված նրա ծնոտի տակ՝ նրան տալիս էր հաղթական տեսք: Վորոտաց նվազախումբը, ծափերի և ուռանների ձայնը խլացրեց շրջապատը և տասնյակ ջահերի լույսով լուսավորված՝ Ութսունիննը բարձրացավ յերկաթե ձողի տակ դրված սեղանին: Բացա-



— Գասկոններ, պատրաստ:
— Մի՛շտ պատրաստ ենք:

կանչություններն ավելի սաստկացան, ողի մեջ սկսեցին թռչել հարյուրավոր գլխարկներ և համաչափ վեր ու վար ճոճվել փայտերը: Նվագը խլացավ պատանիների ձայներից:

Ութսունինը ձեռքը վեր բարձրացրեց, տիրեց լուսթյուն:

Ութսունինը հպարտ չափեց իր բանակը և վողջունեց.

— Պատկոմներ, պատրաստ!!!

— Միշտ!!!

— ... պատրաստ!!!

— ... ենք!!! — վորոտաց պատասխանը յերկուհարյուր բերաններից:

— Բանվոր դասակարգի շահերի համար...

— Պատկոմներ!

— Պատրաստ!!!

— Միշտ պատրաստ ենք!

— Սկսուտիզմը...

— ... ջախջախելու...

— ... համար...

— Պատկոմներ! պատրաստ!

— Միշտ!

— Պատրաստ!

— Ենք!

— Չգաստ!!!

Պատկոմները պատրաստ կանգնեցին:

Նվագախումբը պատրաստվեց նվագելու: Թմբակահարը վեր բարձրացրեց թակը, խփելու համար:

— Քայլ առաջ!!!

Յերկուհարյուր քսան հոգի պատրաստ սպասում էին վերջին բառին:

— Մարշ!

Վորոտաց նվագը: Մքանչելի շարքերով, մի մարդու պես շարժվեցին պատկոմական ջոկատները դեպի քաղաք: Ջահերը լուսավորում էին նրանց ճանապարհն ու նրանց շարքերը:

Քիրազն իր քսանհինգ արիների և սկառտապետ Գասպարի հետ մնացին կանգնած, մեծ կողպեքով փակված սկառտանոցի դռան մոտ:

Իսկ ճանապարհի վրայով գնում էր նոր պատկոմների բանակը, նվագով ու վստահ քայլերով:

Հանկարծ Հրաչը բղավեց.

— Կեցցե՛ Ութսունինը!!!


— Ուոա! ուոա! ուոա!!! — արձագանքեցին շարքերը:

— Կեցցե՛ պատկոմապետը! — կանչեց խմբակը:

— Ուոա! ուոա! ուոա!!!

Յեկ առաջին անգամ յերկար ժամանակից ի վեր սկառտ համար Ութսունինը լսեց իր իսկական անունը:

— Կեցցե՛ Արամ Գրիգորյանը!!!



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքում	5
2. Կազաչի Պոսում	9
3. Սկանուս համար ուրուցիցն	12
4. Առաջին սպավորություն	15
5. Առաջին պոս	17
6. Առաջին յերեկոն	21
7. Մարզանք	23
8. Աչիկը	26
9. Ի՞նչ է Կազաչի Պոսը	28
10. Դպրոց	30
11. Զանգակասանք	34
12. Սկանուսանոցում	39
13. Առույան	43
14. Գորս	48
15. Վահան Գիրազ	51
16. Համարձակ սկանուս	53
17. Խորամանկ սկանուս	56
18. Փնտրումներ	59
19. Քաղաքի կարոսը	61
20. Պոսերի վրա	65
21. Տրամաբանություն	71
22. Անձանօր լեզու	74
23. Սեյ ջոկաշի հայ արին	76
24. Դեպի Բաղաթ	79
25. Նորից դեպի յես	84
26. Տխուր որ	86
27. Խորհրդավոր գրությունը	92
28. Աղջիկներ	96
29. Լուծված գաղտնիք	102
30. Ամենայամ արին	108
31. Խոնարհված դրոշակ	112

32. Ժողով	117
33. Նորից խոսք գաղություն	119
34. Պիմեն	122
35. Սարիկ	129
36. Սոսկալի հայտարարություն	133
37. Աղջիկների համար	138
38. Կոմյերիսական բջիջ	143
39. Ֆուսթոլ	148
40. Ոլիմպիադա	154
41. Առաջին համարը	159
42. Յաճրացի՛ր, ցածրացո՛ւր	165
43. Յեռյակի դեմ	171
44. Սմբատի պատմածը	175
45. Քարմ յուրեր	182
46. Մի բաժակ հանն	187
47. Նոր հորձանք	190
48. Մսի պահեստում	193
49. Պոեթ Տանգոն	197
50. Խուժան	203
51. Ո՞ւմ փարոսն է դա	208
52. Հրածե՛տ	212
53. Ապսակ	215
54. Մեռած Բաղաթը	218
55. Վերադարձ	223
56. Շեքը	225

Պատանի ընթերցողներ.

Մկրտիչ Արմենի հետեվյալ վեպը ձեզ համար լինելու յե

Պ Ա Տ Կ Ո Մ, Պ Ա Տ Ր Ա Ս Ս !

Այստեղ հանդես են գալու «Սկանոս № 89» վեպի բոլոր դրա-
կան ու բացասական գլխավոր հերոսները, իրենց հետագա գործու-
նեյությունը:

Ձեր կարծիքը «Սկանոս № 89» վեպի մասին գրեցե՛ք յե՛վ ուղար-
կեցե՛ք Մկրտիչ Արմենին: Գրեցե՛ք նախ, թե ինչ արժեքներ ու բերու-
թյուններ գտա՞ք այդ վեպում: Հասկապես վո՞ր հերոսներին ե՛ք ուզում
հանդիպել «Պատանի, պատրաստ» վեպում յե՛վ այլև յե՛վ այլև:

Նամակներն ուղարկեցե՛ք հետեվյալ հասցեյով.

— Յերեվան, Պիոներական Կենտրոնական Բյուրո,

Մ կրտիչ Արմենին:

Լույս են տեսել Մկրտիչ Արմենի ինքնուրույն յե՛վ քարզմանական
հետեվյալ աշխատությունները մանուկների յե՛վ պատանիների համար.

ա. ԻՆՓՆՈՒՐՈՒՅՆ

1. Կ ի ն ո — Մանկական պատմվածք. 11 էջ. Յերևան, 1932 թ.,
գինը 50 կոպ.:

2. Ս կ ա ու տ № 89. պատանեկական վեպ:

բ. ԹԱՐԳՐԱՆԱԿԱՆ

3. Կ. Մ Ա Կ Ա Վ Ե Յ Ե Վ — Պ ի ո ն եր ա կ ա ն կ ե ն դ ա ն ի
լր ա գր եր. 68 էջ. Յերևան, 1927 թ., գինը 20 կոպ.:

4. Ֆ. Ն Ա Ն Ս Ե Ն — Գ ի շ եր վ ա խ ա վ ա ը ի և ս ա ո ո լ յ ց-
ն եր ի մ է ջ. I հատոր. 99 էջ, Յերևան, 1927 թ., գինը 60 կոպ.:

5. Ն. Մ Ի Ս Լ Ա Վ Ս Կ Ի Յ — Դ ն ե պ ը ո ս տ ը ո յ. պատմվածք.
32 էջ, Մոսկվա, 1931 թ., գինը 25 կոպ.:

6. Յ Ո Ի. Ո Լ Ե Շ Ա. — Յ եր եք հ ա ս տ լ ի կ ն եր:

գ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

7. Լ ե ն ի ն ը պ ա տ կ ա զ մ ու մ. դրական ժողովածու, նվիր-
ված Լենինի հիշատակին. 23 էջ, Լենինական, 1924 թ., գինը 20 կ.:

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Վ Ո Ւ Մ Ե Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

8. Պ ա տ կ ո մ, պ ա տ ը ո ս տ. պատանեկական վեպ:

Отвѣств. редактор Е. Чаренц Технич. редактор Т. Хачванкян

Сдана в набор 19/IX—1933 г. Подписана к печати 20/XI—1933 г.

Бумага 61×94. Печ. л. 141/2. В 1 п. л. 46.080 знаков.

Главлит № В—41873. Заказ № 920. Тираж 3.000.

Тип. Госиздата ССР Армении. Москва, Армянский, 2.

«Ազգային գրադարան»



NL0391708

ԳԻՆԸ 5 Ռ.

7345